

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՂԵՐԱՊԱՏՈՒՄ

ՀՏԴ 891.981 - 3 Պետրոսյան
ԳՄԴ 84 Հ 7-4
Պ 505

Գիտական խմբագիր՝
Պատմական գիտությունների դոկտոր
Լ. Ա. Բարսեղյան

Պետրոսյան Ա.
Պ 505 Եղերապատում: Վեպ /Աննա Պետրոսյան.-Եր.: Նահապետ, 2002, 280 էջ:

Գիրքը Հայոց Մեծ ողբերգության և Հայոց Հառնումի մասին է՝ հասցեագրված մոլորակի բոլոր ծիրերում ապրող, բոլոր ժամանակների հայ պատանիներին:

Պ $\frac{4702080201}{0076(01)\text{-}2002}$ 2002 ԳՄԴ 84 Հ.7- 4

ISBN 99930-958-0-X

2249

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

891.981-3

Ա 105932

ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՂԵՐԱՊԱՏՈՒՄ

Քեզ սիրելի Զատիկին,
անասելիության դողերիս ներքո
և խանդավառությամբ...
Սիրով...
Դու քեզ դեռ ես գտնելու...
Անահիտ

ԵՐԵՎԱՆ, 2002

23 դեկտեմբեր 2002թ

ԻՄ ԽՈՍՔԸ՝ ՔԵԶ

Իմ պատանի բարեկա՛մ, այս պատմությունը ես նվիրում եմ քեզ: Եթե զգայուն ես, այն քեզ շատ հաճախ ցավ է պատճառելու: Որովհետև նրա մի տողն անգամ հորինված չէ, մի տողն անգամ երևակայության արդյունք չէ:

Ուզում եմ այս եղեռնական պատմությունը պատմել քեզ, որովհետև ես քեզ ճանաչում եմ քո վաղ մանկությունից: Քո մանկությունն անցել է մոմի տարտամ լույսի տակ, որը փարատում էր սենյակի մութը ճիշտ այնքան, որքան հարկավոր էր, որ դու ճնշված չզգայիր ծանր խավարից: Քո մանկության տան քարացած սառնության մեջ նավթավառն է միայն իր խղճալի ներկայությամբ մխիթարել քեզ՝ չնչին տաքությամբ բուսող իր շնչով: Դու հաշտ ես եղել բոլոր այն անհարմարությունների հետ, որոնք շրջապատել են քո մանկությունը և որոնք, ի վերջո, կոփեցին հոգիդ... Ես այս պատմությունը նվիրում եմ քո մանկության՝ գրկանքներով լեցուն տարիներին, որովհետև, գիտեմ, վերջում, երբ ավարտես այն՝ պիտի հասկանաս, թե ինչու հատկապես քե՛զ ընտրեցի ինձ ունկնդիր:

Ես գիտեմ, կյանքի մեծ ճանապարհ մտնելուց հետո դու պետք է հավաքես քո ողջ արիությունը, որ կարողանաս շարունակել պայքարը ճակատագրի հետ: Որովհետև ես չեմ կարող քեզ ասել, թե քո ճանապարհը մշտապես վարդերով է ծածկված լինելու: Դու ավելի շատ փուշ ու տատասկի կհանդիպես... Բայց, տեսե՞լ ես, արդյոք, թե որքան գեղեցիկ է փշաթփի ծաղիկը... Ուրեմն, պետք չէ վիատվել... Ամենածանր, ողբերգական պահերին անգամ, դու ինքդ քեզ պիտի հրամայես ապրել և ստեղծել... Որովհետև, շատ հաճախ, ազնիվ ապրելն ու ինչոր բան ստեղծելն արդեն, մեծ թե փոքր կարևոր չէ, սխրանք է:

Եվ հետո, երբեք պետք չէ մոռանալ, որ մեզ հետ հավասար իրավունքով ապրում են մեր երազները: Երազները ծնվում են հոգսերի առատությունից՝ համընդհանուր կամ անհատական: Հոգս՝ որքան ասես, և ուրեմն, երազներ՝ որքան ասես: Բայց երբ երազը փոխակերպվում է երազանքի՝ ծնվում է այն իրականություն դարձնելու մեծ, անտարողունակ ցանկությունը, որն իր հերթին ծնում է նրա համար պայքարելու ուժը...

Քեզ՝ շքեղ, գունավոր, հարուստ, ազնիվ երազանք, իմ պատանի բարեկա՛մ: Քեզ՝ ՈԳՈՒ ուժ և հզոր ԿԱՄՔ քո կարևոր ու սքանչելի երազանքը իրականություն դարձնելու համար...

Նաև ՍԵ՛Ր, եզակի և անկրկնելի, որից փոխադարձություն չի պահանջվում երբեք և որն ապրում է քո էության ամենաթաքուն և սրբազան խորշերում: Սա այն մաքրամաքուր զգացումն է, որ դու ունես Երկիր Մոլորակի այն հատվածի հանդեպ, որ նախախնամության կամքով բաժին է ընկել քեզ և կոչվում է ՀԱՅՐԵՆԻՔ...

Ես այս պատմությունը գրելիս կպատկերացնեմ, որ դու նստած ես իմ դիմաց... Ես նայում եմ քո աչքերին և նրա պայծառ խորքերում ՑԱՎԻ ու ՍԻՐՈ առկայծումներ եմ տեսնում, որովհետև այս պատմությունը քո և իմ ՀԱՅՐԵՆԻՔԻ ամենաեղերական տարիների մասին է:

Մեր ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ծանր հիվանդ է ԿԱՐՈՏԱԽՏԻ տառապանքներից, որը մեզ հետ է միշտ երջանկության և դժբախտության պահերին՝ հյուսված նյարդերին, լուծված արյան ու ավիշների մեջ, սրտի խոռոչում, մտքի ծալքերում ապահովաբար ծածուկ պահված: ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՐՈՏԱԽՏԻ ցավագարությամբ հավիտյան փակված մեր մարմնի պինդ կաղապարում, մեզ հետ է ընդմիշտ:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ կորցրած ԵՐԿՐԻ ու ԿԱՐՈՏԱԽՏԸ՝ նրա ԿԵՐՊԱՐԻ:

Ա.

ՀԱՅՈՑ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԿԱՐՄԻՐ ՍՈՒԼԹԱՆԸ

(19-րդ դար, սկիզբ և ավարտ)

Մարդու արյունը առատությամբ հեղվել է բոլոր ժամանակներում և միայն մարդկության հավաքական ճակատագրին է հայտնի, թե դեռ որքան ևս պիտի հեղվի: Ադամի որդի Կայենի հարցը՝ «Մի՞թե ես պահապան եմ իմ եղբորը...», իր եղբայր Աբելին սպանելուց հետո, մինչև այսօր անպատասխան է մնացել:

Անքննելի է ՈՃՐԻ բուն էությունը: Փիլիսոփաների ու հոգեբանների ամենահանճարեղ կռահումներն անգամ չեն կարողացել ՈՃՐԻ սահմանումը տալ: Ի՞նչ է ՈՃԻՐԸ, երբ սառնասրտորեն իր դժոխային կերպարին է զոհաբերում անմեղությունը ոչ թե մեկի կամ մի քանիսի, այլ մի ողջ ժողովրդի... Ի՞նչ է ՈՃԻՐԸ, երբ դառնում է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ... Եղեռնի ՈՃԻՐ, որի կերակուրը ՀԱՅՈՑ ԿՅԱՆՔՆ էր լինելու:

... Միջինասիական անապատներից նախճիրի մոլուցքով մինչև Էգեյան ծովի ափերը և դեռ շատ ու շատ հեռու հասած թուրք վաչկատուն ցեղին էր վերապահված ցեղասպանություն կոչվող՝ եղեռն իրագործողի առաջին դերը: Թուրք ցեղը, որ կործանեց Բյուզանդիա պետությունը, իր մեջ կլանեց շատ ժողովուրդներ, տիրելով նրանց հայրենիքներին՝ դարձավ պետություն: Պետություն, որը ենթադրում էր օրենք և կանոն: Սակայն օրենքը ոչինչ էր նրա համար:

Այս ցեղը՝ իր արյան ժառանգությամբ, ասպատակող իր նախնիների զարհուրելի դաժանության որոմն ուներ էության ներսում, որը թելադրեց նրա աղճատված մտքին կատարելու զարհուրելի ոճիրը: Բոլոր ժամանակներում ապրած իր նախնիների նախճիրները, միասին վերցրած, այս ՈՃՐԻ դիմաց դարձան ոչինչ:

ՈՃԻՐՆ անարգել խրախճանում էր այն ողջ տարածքում, որն Օսմանյան կայսրությունն էր... Խրախճանում էր

չխնայելով հսկա տարածքում ապրող ժողովուրդների արժանապատվությունն ու կյանքը: Նաև հայ ժողովրդի կյանքն ու արժանապատվությունը՝ թերևս ավելի դաժանորեն, թերևս ավելի ատելությամբ:

Պատկերացրու սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդին, որը միահեծան տերն էր այդ Կայսրության... Լսիր նրա ձայնը. ընդհատ-ընդհատ, ատամների տակից, վայրենի, խռպոտ շշուկով, որն անկառավարելի զգայնության ազդեցությամբ դառնում է ահագնացող բղավոց՝ հեռու տարածվող արձագանքներով...

«Ես կփակեմ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ... Ես կջնջեմ ՀԱՅԱՍՏԱՆ բառը աշխարհի երեսից»:

1880թ. օգոստոսի 30-ին Բարձր Դռան հրամանով արգելվեց «ՀԱՅԱՍՏԱՆ» բառի պաշտոնական գործածությունը, որով և պիտի ի չիք դառնար *Հայկական Հարցը*:

Օսմանյան կայսրությունը կցանկանար փակել նաև *Արևելյան հարցը*, բայց անզոր գտնվեց: Հզոր և անխորտակ համարված Կայսրությունը դանդաղորեն փլվում էր: Ստրկացած ժողովուրդները այլևս անկարող էին տանել թուրքի պատճառած զարհուրանքը, քմահաճությունը, բռնությունը, կեղեքումը, անմեղության բռնաբարումը, օրենքի եղծումը, արյան մշտական բաղանիքը: Պայքարը, որն սկսվեց բոլոր կեղեքված ժողովուրդների և կայսրության միջև՝ օրհասական էր:

Առաջինը ոտքի ելան *Լիբանանը և Սիրիան*: Սակայն տապալվեցին: Թուրքերը ջարդի երախը նետեցին 40000 քրիստոնյաների: Ֆրանսիական, բրիտանական և ռուսական նավերն իրենց զինվորներին ափ իջեցրին Բեյրութում:

Լիբանանը հայտարարվեց ինքնավար պետություն... Ինչպիսի՞ բարեբախտություն:

Փարիզյան պայմանագիրը պարտադրում էր Օսմանյան կայսրությանը վերջ տալ քրիստոնյա ժողովուրդների հալածանքներին ու խտրականությանը: Օսմանյան կայսրությունը, առերես համաձայնելով, երբեք չփորձեց կատարել օտար երկրների պարտադրանքի մի կետն անգամ: Հակառակը. այդ պարտադրանքն ավելի խորշելի դարձրեց հպատակ ժողովուրդներին ճնշելու նրա միջոցները:



Հայկական լեռնաշխարհ:

Բայց միևնույն է, 19-րդ դարը Օսմանյան ստրկությունից շատ ժողովուրդների ազատագրության ժամանակն էր:

Ոտքի ելան *Բոսնիան*, *Հերցոգովինան*, *Չեռնոգորիան*, *Սերբիան*, *Ռումինիան*, *Բուլղարիան*, *Հունաստանը*:

Եվրոպական տերությունները նորից խառնվեցին, անհանգստացան... և միջամտեցին ոչ միայն համաձայնագրերով ու դիվանագիտական ասուլիսներով, այլև՝ զենք ու զրահով, բանակ-զինվորով:

Կնքվեցին «Բեռլինյան համաձայնագիրը», «Լոնդոնյան համաձայնագիրը», «Սան Ստեֆանոյի պայմանագիրը», իսկ 1878 թվականի հուլիսի 13-ին՝ «Բեռլինի պայմանագիրը»:

Մարտնչող ազգերը հավատակից երկրների հզոր հովանավորությամբ ստացան բաղձալի ազատությունը: Ո՛չ միանգամից, ո՛չ հեշտությամբ... Մշտապես հոսող արյունը դեռ կար... Հավերժության չափ երկար՝ գրեթե մեկ դար կռվեցին նրանք, և շատերը մեռան հանուն իրենց ժառանգների ազատության...

Այս երկրների բուն ճակատագիրը *«Արևելյան Հարց»* անվանումն ուներ:

Եվ սրա կողքին կար «*Հայկական Հարցը*»:

Իսկ ի՞նչ էր չարաբաստիկ, ողբերգական, անլուծելի *Հայոց հարցը... Հայոց կյանքը... Հայոց մահը...* «Բեռլինյան դաշնագրի» 61-րդ հոդվածը, որով պիտի եվրոպական տերությունների հսկողությամբ Օսմանյան կայսրության Բարձր Դուռը բուն Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ այլ գավառներում բարեփոխումներ կատարեր... Ծաղր չէ՞ր միթե, ՀԱՅՈՑ չարչրկված կյանքը նորից հանձնել Կարմիր Սուլթանի արյունոտ ձեռքը:

Իսկ ի՞նչ կարծիք ունեին այս հարցի շուրջը մարդասեր և գթասիրտ համարված, աշխարհին մշտապես իրենց կամքը թելադրող եվրոպական և ամերիկյան երկրների դիվանագետներն ու քաղաքագետները: Նրանցից ոմանք Թուրքիայում դեսպաններ ունեին, այսինքն՝ անմիջական ականատեսներ այն ճնշումների ու բարբարոս վերաբերմունքի, որ տածում էր Օսմանյան կայսրությունը հայերի նկատմամբ: Մյուսները՝ քաղաքական մեկնաբաններ, որոնց գործը տակնուվրա աշխարհի

ներքին ու արտաքին վիճակները, երբեմն սրտացավ, ավելի հաճախ անտարբեր, քննության առնելն էր: Նրանցից շատերի համար Հայկական Հարցը, և հենց իրենք՝ հայերը, անգամ թեթև մտահոգության առարկա չէին, նույնիսկ ավելին՝ հաճախ երբեկ ճանապարհի մեջտեղում ծանր քարի նման ընկած, մեծ տհաճություն պատճառող ավելորդություն:

... Փորձենք պատկերացնել նրանց՝ ապահով ու շքեղ այդ այրերին... Փորձենք լսել նրանց, որոնք պատմության համամարդկային մատյանի էջերում թողել են իրենց կարծիքները, որոնցից մի քանիսը, անգամ այսօր, շնորհակալության, իսկ մյուսները ծանր դառնության զգացումով են լցնում մեր սրտերը: Եվ որպեսզի դյուրին լինի պատկերացնել, թե ով ով է, նրանց փորձենք դնել ընդհանուր մի միջավայրում, միմյանց մոտ և լսենք նրանց... ասուլիսը:

ՓՈԼ ՔԵՄԲՈՆ (Ֆրանսիայի դեսպանը Թուրքիայում) – Մինչև 1881 թվականը հայերն անկախության մասին չեն խոսել: Նրանք միայն երազում էին բարելավել իրենց դրությունը Օսմանյան կայսրությունում: Նրանք սպասում էին բարեփոխումների և կբավարարվեին դրանցով: Բայց հակառակը տեղի ունեցավ. նրանց վիճակը չափազանց վատթարացավ: Մի բարձրաստիճան թուրք ինձ ասաց. «*Հայկական Հարց* գոյություն չունի, բայց մենք կստեղծենք»: Նրա խոսքը չարագուշակ հնչեց: *Հայկական Հարցում* տերությունները ձախողվեցին: Եթե հայերը այդքան խաղաղասեր չլինեին, ապա Օսմանյան մայրաքաղաքը վաղուց մոխրակույտերի վերածված կլիներ...

ՎԻԿՏՈՐ ԲԵՐԱՆԴ (Ֆրանսիացի քաղաքական մեկնաբան) – Տերությունները *Հայոց Հարցում* ձախողվեցին, ոչ որովհետև տկար էին, այլ որովհետև ամեն մեկն իր կարևոր խնդիրն ուներ: Դարավերջին Ֆրանսիան ահռելի ներդրումներ էր կատարել Թուրքիայում, որով Թուրքիո վիճակը անհամեմատ բարելավվեց: Ֆրանսիան կկորցներ իր ներդրումները, եթե Օսմանյան կայսրությունում իրականացվեին բարեփոխումների ծրագրերը: Սուրը երկսայր էր... Ֆրանսիան ներդրումներ էր կատարել իր սեփական շահույթի համար... Այսպե՞ս: Այն երկիրը, որ դարասկզբին պայքարում էր թուրքական բռնատի-

ության դեմ ի օգուտ սիրիացիների և լիբանանցիների՝ դարավերջին անտեսում էր հայերի ողբերգությունը...

ՓՈԼ ՔԵՄԲՈՆ – Բայց ֆրանսիական խորհրդարանի որոշ անդամներ գտնում էին, որ չպետք է անտեսել հայերի խնդիրը, քանի որ Ֆրանսիան տասնամյակներ շարունակ ազգային փոքրամասնությունների պաշտպանն է հանդիսացել, և հայերի խնդրում իրավունք չունի շեղվելու իր մարդասիրական առաքելությունից: Մենք բացեիբաց ասում ենք, որ Հայոց կոտորածները ոճիր են մարդկության հանդեպ ընդհանրապես... Ես մի քանի անգամ հանդիպել եմ սուլթանին՝ *Հայկական Հարցի* կարգավորման համար: Սակայն իզուր: Նա իրեն ուժեղ էր զգում Գերմանիայի հովանավորությամբ:

ԲԻՍՄԱՐԿ (Գերմանիայի կանցլեր) – Մենք անհանգստացած էինք Բալկանյան դեպքերից և մեր պարտքն էինք համարում օգնության ձեռք մեկնել սուլթանին: Գերմանիո կայսր Վիլհելմ 2-րդը երկու անգամ անձամբ այցելեց Թուրքիա և սուլթանի հետ, ուրիշ այլ խնդիրների կողքին, քննարկեց նաև *Հայկական Հարցը*. Գերմանիան սակայն *Հայկական Հարցի* շուրջը որևէ հետաքրքրություն չունի: Մեր հետաքրքրությունները պտտվում են Բեռլին-Բաղդադ երկաթգծի շուրջը:

ՄՈՐԳԵՆԹԱՈՒ (ԱՄՆ-ի դեսպանը Թուրքիայում) – Անշուշտ... Անշուշտ... Գերմանիան իր շատ գործնական երաշխիքներում փառատենչ դիտավորություններ ուներ Թուրքիայի և ծայրագույն *Արևելքի* նկատմամբ: Բալթիկ և Սև ծովերը պիտի դառնային գերմանական լճեր: Նա պիտի պարտադրեր իր տիրապետությունը Մերձավորային, Բուլղարիային, Ռումինիային, Թուրքիային: Նա պիտի իրագործեր Հյուսիսային ծովից մինչև Պարսկական ծոց տարածվող Գերմանական նոր կայսրության իր հղացումը:

ՖՐԻԴՐԻԽ ՆԱՈՒՄԱՆ (Գերմանացի աստվածաբան) – Ես ուղեկցում էի Վիլհելմ 2-րդին սուլթանին այցելելիս: Ես մի առիթով կայսերն ասել եմ, որ գերմանական բարձրագույն շահերը ստիպում եմ պահպանել քաղաքական անտարբերություն քրիստոնյա ժողովուրդների հանդեպ: Ինչ մնում է թուրքերի դաժանություններին, ես կարծում եմ, որ Թուրքիան իր ներքին հարցերը պիտի լուծի այնպես, ինչպես հարմար է գտնում: Եվ

ավելին. քրիստոնյա Գերմանիան պետք է թույլ տա, որպեսզի կոտորածներն ընթանան իրենց բնական հունով: Գերմանիայի հետագա պարտքը, որպես քրիստոնյա երկիր, պիտի լինի զոհերի վերքերն ամոքելը: Վիլհելմ 2-րդը միանգամայն համաձայն էր իմ մեկնաբանությանը, չնայած ժամանակ առ ժամանակ Բիսմարկի և Վիլհելմ 2-րդի մոտ արթնանում էր խիղճը: Այո՛: Դա շատ կարճ էր տևում, բայց նրանք հասցնում էին բացականչել. «Ամոթ մեզ, սուլթանը նողկալի արարած է...»:

ՍՈՒԼԻԴԵՍ (Հույն երեսփոխան Օսմանյան խորհրդարանում) – Հայերին տված խոստումները բոլորովին չէին տարբերվում Բալկաններում հույներին ու բուլղարացիներին տված խոստումներից: Հույներն ու բուլղարացիները, տառապելով թուրք իշխանավորների լծի տակ, ի վերջո իրենց տառապանքների լուրը կարողացան հասցնել եվրոպական տերությունների գիտակցությանը: Մինչդեռ հայերը լռությամբ են տարել թուրքերի դաժանությունները... Համբերատար ու հնազանդ հայերը մշտապես դաժանորեն հալածվել են ոչ միայն թուրքերի, այլև քրդերի կողմից: Մենք բոլորս էլ մանրամասն գիտենք, թե ինչ դաժանություններ են կատարվում Մուշում, Վանում, Էրզրումում և մյուս գավառներում թուրք պաշտոնյաների թելադրանքով և քուրդ զինված խմբավորումների ձեռքերով: Ինչո՞ւ քուրդ ոճրագործները չեն պատժվում: Իսկ այս վերջին օրե՞նքն էլ, որը հայերին զրկում է որևէ զենք կրելու իրավունքից... Զինազանդվողներին՝ դաժան դատաստան... Ինչո՞ւ օրենքը չի տարածվում քրդերի վրա...

ՆԵԼԻԴՈՎ (Ռուսաստանի դեսպանը Թուրքիայում) – Ես պարտավոր էի զեկուցել Ռուսիո արտաքին գործոց նախարար Լոբանովին Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի մասին: Հայերը սաստիկ բորբոքված են այն անարգել բանտարկություններից և հալածանքներից, որոնք գործադրվում են բոլոր նրանց նկատմամբ, ում կասկածում են, թե իբր անդամ են ենթադրյալ կոմիտեի: Գոյություն ունի՞ այստեղ նման կոմիտե՝ դժվար է իմանալ...

ՎԻԿՏՈՐ ԲԵՐԱՆԴ – Եթե ճնշումն անցնում է ամենն սահման, ապա ի հայտ են գալիս հեղափոխական կազմակերպություններ: Եթե կան այս կազմակերպությունները, ապա Թուր-

քիայում ստեղծված օրհասական վիճակի արդյունք են և ոչ թե պատճառ:

ՆԵԼԻԴՈՎ – Այդպես է. թուրքական իշխանությունները խելահեղ կասկածամտությամբ և խիստ միջոցների անտակտ գործադրությամբ հարուցում են ատելություն և թշնամանք... Հայերի հուզումն ու անբավականությունը սաստկանում է... Հայերը ձգտում են մեծ տերություններին, հատկապես Ռուսաստանին, հարկադրել՝ զբաղվելու *Հայկական Հարցով* և Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի բարենորոգումներով... «Մենք ոչինչ չենք խնդրում թուրքերից, – ասում են հայերը, – մեզ պետք չէ ոչ մի զիջում կամ ողորմություն: Մենք պահանջում ենք այն, ինչը պատկանում է մեզ՝ ըստ իրավունքի»:

ԼՈԲԱՆՈՎ (Ռուսաստանի արտաքին գործոց նախարար) – Ցարը չարագուշակ է համարում հայկական շարժումների ձևավորումը, քանի որ այն կարող է մեծապես վնասել Ռուսաստանի հեղինակությանը: Մենք այն կարծիքին ենք, որ բարեփոխումների անցկացումը միանգամայն բավարար է: Մյուս կողմից էլ սա այնքան էլ ցանկալի չէ Ռուսաստանի համար... Մենք ծրագրեր ունենք թուրքական որոշ տարածքների նկատմամբ: Բարեփոխումների անցկացումը կարող է այդ ծրագրերի խափանումը նշանակել: Ցարն այն կարծիքին է, որ հայերը մեր երկրի հանդեպ նույնքան անշնորհակալ կարող են լինել, որքան Հունաստանն ու Բուլղարիան: Ցարը ճիշտ է: Օրինակ՝ բուլղարացիները հիմա առաջնորդվում են *«Բուլղարիան՝ բուլղարացիներին»* կարգախոսով: Ռուսների ձեռքերով ազատագրվեցին և հրաժարվեցին ռուսներից՝ պատճառաբանելով, թե այլևս չեն ուզում գաղութաբնակ լինել... Բայց սա ապերախտություն է: Կարծում եմ, որ մենք պետք է հրաժարվենք *«մարդասիրական միջամտությունից»*: Այո՛: Ռուսաստանը *Հայկական Հարցում* առանձնապես հետաքրքրություն չունի: Կարսը, Արդահանը, Բաթումը Ռուսաստանի համար միայն ստրատեգիական նշանակություն ունեն: Ռուսաստանը հակված չէ իր տարածքներում մեծացնելու հայկական ազգաբնակչությունը:

ՆԻԿՈԼԱՅ ԱՌԱՋԻՆ (Ռուսիո ցար) – Երբեք համակրանք չեմ ունեցել հայերի նկատմամբ:

ՆԵԼԻԴՈՎ – Բայց ռուսական զորքերը Բալկաններում կռվում էին թուրքական բանակի դեմ՝ զարհուրելի տառապանքների մեջ ապրող քրիստոնյաներին պաշտպանելու մարդասիրական սկզբունքներից ելնելով:

ԲԻՍՄԱՐԿ – Ի՞նչ կարիք կա այդքան կեղծավորության:

ՎԻԿՏՈՐ ԲԵՐԱՆԴ – Լոբանովը համիդյան կոտորածների նախաշեմին միշտ էլ ժխտել է դեպքերի ողբերգական բնույթը: Այն կարծիքն է ստեղծվել, թե Լոբանովը, պաշտպանելով Համիդին, անձնական նկատառումներ է ունեցել:

ՓՈԼ ՔԵՄԲՈՆ – Ռուսիո դիվանագետների նման վերաբերմունքը թելադրված էր նաև Անգլիայի և Ռուսաստանի միջև սրվող հակամարտությունից:

ՎԻԿՏՈՐ ԲԵՐԱՆԴ – Իրավացի դիտողություն: Ռուսաստանի ջանքերը, ուղղված Անգլիայի դեմ, հասավ այնպիսի չափերի, որ հաստատվեց գաղտնի համաձայնագիր ցարի և սուլթանի միջև: Գեներալ Օբրուչևի և Միլյուտինի միջոցով ցարը հայտնեց սուլթանին իր պատրաստակամությունը՝ պաշտպանել Օսմանյան կայսրությունը ցանկացած ագրեսիայից: Հավերժական թշնամիները ժամանակի մի տարածքում դարձան բարեկամներ: Անգլիան նույնպես պաշտպանում էր Թուրքիային, որովհետև Սան Ստեֆանոյի պայմանագրով ուժեղացան Ռուսաստանի դիրքերը Բալկաններում: Ռուսաստանի դիրքերն ուժեղացան նաև Ասիայում՝ Բաթումի, Հայկական կարսի և Արդահանի նահանգների գրավումով: Այս պատճառով էլ Սան Ստեֆանոյի պայմանագիրն անընդունելի էր Եվրոպական երկրների, հատկապես Անգլիայի համար, որը Թուրքիայից իրավունք էր ստացել տիրել Կարսին, Արդահանին, Բաթումին և Կիպրոսին:

ՓՈԼ ՔԵՄԲՈՆ – Ճշմարտությունը դա է:

Մ. ՌԵՍՍԻԻ (Բրիտանացի ազգագրագետ) – Հայերն ու հույները շներ ու խոզեր են, որոնց վրա կարելի է միայն թքել: Հայերը անշնորհակալ ժողովուրդ են, որ չունենալով ոչինչ սեփական, ո՛չ տուն, ո՛չ հայրենիք, ո՛չ ունեցվածք, փորձում են չենթարկվել թուրքերին:

ՈՒ. ԳԼԱԴՍՈՆ (Անգլիական պետական գործիչ) – Ծառայել Հայաստանին՝ նշանակում է ծառայել քաղաքակրթությանը:

ԳՅՈՒՍՏԱՎ ՌՈՒԼԱՆ ԺԵԿՄԵ (Բելգիացի իրավաբան միջազգայնագետ) – Հայերի Հարցում ամեն ինչ սահմանափակվեց սոսկ դիվանագիտական կատակերգությամբ...

... Ահա այսպե՛ս: Խոշոր տերությունների համար կատակերգություն, հայոց համար՝ եղեռն:

Իրենց ազնվությամբ միամիտ ու հավատավոր հայերը երազում էին խոշոր տերությունների մարդասիրական վերաբերմունք իրենց տանջահար երկրի համար... Բայց նրանցից յուրաքանչյուրը հայոց կյանքը, նրա լինելու իրավունքը շահարկեց իր օգտին այնքան ու այնպես, որ ի վերջո թուրք ոճրագործի ուղեղը արտավիժեց մինչ այդ չեղած, չլսված ԵՂԵՌՆԻ կերպը, տեսակը, ձևը...

Վկաներն ո՞ւր են: Մի՞թե չտեսան ու չլսեցին: Մի՞թե ունեին սիրտ կրծքի ներքո, որ չտրոփեց անհուն սարսափից, թե մի օր եղեռնի հրեշավոր ուրվականը չոքելու է իրենց դռների մոտ:

Վկաներն ո՞ւր են:

... Դո՛ւ, որ լսում ես ինձ. զգում եմ արյանդ արագ վազքը երակներիդ մեջ, զգում եմ շնչահեղձ ես լինում զայրույթից և տարակուսանքով մտածում. իսկապես, ո՞ւր էին վկաները: Մի՞թե բոլոր նրանք չափ ու կշռի մեջ էին դրել ճշմարտությունը և կեղծում էին կշռաքարերը... հանուն իրենց շահերի:

Ո՛չ: Նրանք, որոնք իրենց անմիջական մասնակցությամբ կամ պարզապես անտարբերությամբ օգնեցին թուրքերին քառատել հայոց ճակատագիրը, չգիտեին, որ մշտապես եղել են ու կլինեն վկաները, որքան էլ նրանց մերժեն ու արհամարհեն աշխարհի հզորները:

Հայոց կյանքի ամենաահասարսուռ պահերին հայոց կողքին են եղել ազնիվ վկաներ, որոնք փորձել են աշխարհի խլացած լսողության մեջ պայթեցնել տառապող ժողովրդի համար օգնություն հայցող իրենց աղաղակները:

Նրանք տեսան ու լսեցին: Նրանց սրտերը տրոփեցին անհուն սարսափից և մարդկության երեսին նետեցին հայոց գլխին թափված, երբեք ուրիշ մի ժամանակ չեղած, դաժանության զարհուրանքը:

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

ԴԻԼՈՆ – Ես Հայաստանի էի եկել Անգլիայից, որպես լոնդոնյան *«Դեյլի Թելեգրաֆ»* թերթի թղթակից: Թուրքերն այդ մասին չգիտեին, կարծում էին խաղաղ ճանապարհորդ եմ: Սկսվել էր սուլթան Համիդի մեծ կոտորածը: Եվ նույնիսկ խաղաղ ճանապարհորդին դժվար էր հաղթահարել սուլթանական կառավարության և տեղական մեծ ու մանրիկ իշխանությունների հարուցած խոչընդոտները... Բայց, միևնույն է, ես պիտի անցնեի Հայաստանի բոլոր գավառներով, եթե նույնիսկ վտանգների մեջ կորցնեի կյանքս: Անցա՛, տեսա՛, լսեցի՛: Խոսեցի կոտորածների ականատեսների հետ, նրանց հետ, որ, չգիտես ինչ հրաշքով, փրկվել էին և նրանց հետ նաև, որոնք զգայական ոգևորությամբ պարծենում էին, թե հայերին որտեղ, ինչքան և ինչպես են կոտորել անձամբ: Մի քանի խոսք միայն կարող եմ ասել այն ամենից, ինչի մասին հարյուրավոր մանրամասն էջեր եմ գրել: Ես՝ Էմիլ Դիլոն լրագրողս:

Որտեղի՞ց սկսեմ: Սկիզբը ո՞րն է:

Օսմանյան կայսրության երկյո՞ւղը, որ թաղված էր Հայաստանում բարենորոգումներ կատարելու սեփական խոստումի խորքերում: Եվ ազատվելու համար այդ երկյուղից որոշեց մեկընդմիշտ ազատվել ատելի ազգից, կործանել նրան, ջնջել նրա անունը՝ խմելով նրա արյան վերջին կաթիլը...

Հրեշավոր իր գաղափարը իրագործելու առաջին գործը ռազմատենչ քրդերից հավաքագրված համիդիե կոչված հեծելազորի կազմակերպումն էր: Սրանց օգնությամբ թուրքերը հայերին դուրս պետք է մղեին նրանց սեփական հողերից, այնտեղ բնակեցնեին մահմեդականներ, որպեսզի հայերի թիվը սեփական հայրենիքում կրճատվեր, հասներ այնպիսի չափերի,

որ չքանար հայերի համար բարենորոգումներ կատարելու խնդիրը: Ոչնչացման այս բացահայտ քաղաքականությունը պիտի հանգեցներ *Հայկական Հարցի* վերջնական լուծմանը: Բայց սա մի՞թե խայտառակություն չէր քրիստոնեության համար և անարգ ծաղր քաղաքակրթության նկատմամբ: Բարձր Դռան գիտակցական ոճրագործ ծրագիրը խնամքով էր նախապատրաստված և անողոքաբար իրագործվում էր որպես կազմակերպված ավազակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն:

Որպես բնաջնջման ծրագրի իրականացման առաջին քայլ՝ տասնամյակներ շարունակ սնանկացվում էր ժողովուրդը: Հայերից հավաքվող հարկերը ահռելի չափերի էին հասնում: Կաշառքը, որով միշտ ուղեկցվում էին այդ գանձումները, ամենազզրելի ձևեր էր ընդունում: Ինքնին սա բավարար հիմք կարող էր դառնալ Հայաստանում Օսմանյան տիրապետությունը ոչնչացնելու համար:

Հարկահավաքները հարկերը հավաքելուց հետո իրենց ծառայությունների համար պահանջում էին գրեթե նույնքան գումար, որքան հարկն էր: Իսկ եթե աղքատության պատճառով գյուղացին չէր կարողանում հարկից բացի տալ նաև կաշառք, այդ ժամանակ հարկահավաքները պահանջում էին, որ իրենց մատուցեն ընտանիքի ջահել կանանց ու աղջիկներին՝ իրենց բռի հաճույքները բավարարելու համար: Մերժման հետևանքը լինում էր այնպիսի պատիժներ, որոնց նկարագրությունից անգամ մարդ խույս է տալիս՝ հանուն պատշաճության և մարդասիրական զգացումների: Ես տեսել եմ Բարձր Դռան այդ ներկայացուցիչների զոհերին և խոսել նրանց հետ: Ես գնել եմ նրանց վերքերը, հարցուփորձ եմ արել նրանց ընտանիքներին, դիմել եմ նրանց քահանաներին, նրանց հալածողներին ու բանտապահներին, որովհետև շատերը բանտ էին նետվել այն պատճառով, որ բողոքել են: Եվ ես առանց տատանվելու պընդում եմ, որ նման սարսափները ոչ միայն իրական փաստեր են, այլև հաճախակի տեղի ունեցող երևույթներ: Զափթիեներ կոչվող հարկահավաքները ոչ միայն կաշառք են հավաքում, այլև ուտում-խմում են գյուղացիների հաշվին և իրենց ձիերը կերակրում՝ չթաքցնելով, որ որոշված է հայերին ընչազրկու-

թյան հասցնել: Նրանք անարգում են քրիստոնեական կրոնը և անպատվում կանանց ու աղջիկներին: Տղամարդկանց այնպիսի կտտանքների ու չարչարանքների են ենթարկում, որ շատ քիչ ապրելով մնում են, եթե չեն մնում հենց տանջահարվելիս... Նրանցից ոմանք, որոնք ի վիճակի չեն տեղնուտեղը վճարել և կերակրել հարկահավաքներին, նետվում են բանտ, որտեղ և հարյուրներով զոհվում են: Իսկ նահանգապետները սովորություն ունեն բանտերում արգելափակել հայ հարուստներին, առանց որևէ բանի մեջ մեղադրելու հիմք կամ պատրվակ ունենալու: Նրանց առաջարկում են ազատություն այնպիսի խոշոր գումարով, որ երբեմն նրա ողջ ունեցվածքի գինն է: Վճարումներից հրաժարվելու հետևանքը ձերբակալվածների համար լինում է այնպիսի վերաբերմունք, որի համեմատ յուրաքանչյուր նկարագրություն չափազանց թույլ կլինի:

Հայերը բնականից խաղաղասեր են: Գյուղական շրջաններում նրանք եռանդագին նվիրված են հողագործությանը, իսկ քաղաքներում միանգամայն կլանված են արհեստներով ու առևտրով: Արյունահեղության հանդեպ նրանց բնածին խորշանքը հայտնի է: Սակայն պարտքի զգացումը և խոր կապվածությունը, որ նրանք ունեն իրենց մոտ ու թանկ հարազատների հանդեպ, ապա և ինքնապաշտպանության բնազդը նրանց ստիպում է զենքի դիմել:

Բայց չէ որ նրանց արգելված է զենք ունենալ:

Հայերին խստորեն մերժվում է արդարադատության ամեն մի ձև: Միայն այն, որ հայը համարձակվել է դիմել դատարանին որպես բողոքարկու կամ որպես հայցվոր քրդի կամ թուրքի դեմ, միշտ բավարար հիմք է, որպեսզի տեղի ունենա կերպարանափոխություն՝ բողոքարկուն, վերածվելով հանցապարտի, հայտնվի բանտում:

Որևէ մեկը ձեզանից գիտե՞, թե ինչ է իրենից ներկայացնում թուրքական բանտը: Դա բավարար հստակությամբ անհնար է նկարագրել... Եթե երևակայություն ունեք, պատկերացրեք Անգլիայի հին Աստեղային պալատի, իսպանական ինկվիզիցիայի, հաշիշածխման չինական քարանձավի, դեղնատենդի հիվանդանոցի ու դանթեական դժոխքի ամենամռայլ պարունակների միավորումը միասին, որ նոր միայն նմանվի

թուրքական բանտին: Կեղտ, գարշահոտություն, հիվանդություններ, այլանդակություններ, ամեն չափի ու տեսքի տանջանքներ, որ Եվրոպայում չեն էլ կարող պատկերացնել: Այդ սարսափելի զնդաններում մշտապես իրար են խառնվում դիվահնար կտտանքների աղաղակը՝ հակաբնական հաճույքների ճիչերին, կեղտոտ երգերը՝ սրտակեղեք հեծեծանքներին... Վաղուց արդեն կենսական ուժերից զրկված մարմնից դուրս են թռչում հոգիները, որոնց չի ողբում ոչ ոք, բացի խոնավ պատերից, որոնց վրա անասելի վերքերի և ահավոր հիվանդությունների գոլորշիները կուտակվում են մեծ կաթիլներով ու թափվում հատակի քարերին, այնտեղից վեր բարձրանալով՝ խտացնում են անտանելի գարշահոտությունը: Դա, հիրավի, հրեշավոր մի մղձավանջ է՝ վերածված իրականության: Մարդու մարմնից արտավիժող թափոններն ու կեղտը, որոնք պետք է այդ նպատակին հատկացված մի տեղում լցվեն, կուտակվում են հենց խցերում: Ջուր չի կարելի խմել: Կամ հայ բանտարկյալին ստիպում են խմել այն ջուրը, որով այդ նույն թասի մեջ, այդ նույն ջրով մահմեդականները լվացում են կատարել...

Որտե՞ղ եք դուք, քրիստոնյա Եվրոպա և Ամերիկա...

Ես անձամբ ծանոթ եմ բազմաթիվ մարդկանց, որոնք անցել են այս բանտերով... Պատմությունները, որոնք նրանք պատմում են իրենց փորձությունների մասին, այնքան սարսափելի են, որ դժվար կլինի հավատալ, եթե դրանք լիովին հաստատված չլինեին նրանց մթագնած բանականության, այլանդակված մարմինների, խոր սպիների, հրեշավոր հաշմության սարսափելի տեսարանով: Խեղումներ, որոնք չեն չքանա, քանի դեռ գերեզմանը կամ ցինները չեն կլլել նրանց դիակները: Կըտտանքների և բռնությունների մեջ, որ հնարում են թուրքական բանտապահներն ու տեղական իշխանությունները, կա այն աստիճան զազրելիորեն ֆանտաստիկ ու վայրենիորեն հրեշավոր մի բան, որ հասարակ ու անպաճույճ հաշվետվությունը նրանց մասին՝ պատկերացվում է իբրև հիվանդ սատանայի ցնորամտություն, որովհետև դրանք նաև այնպիսի բաներ են, որ անհնար է շարադրել բացեիբաց: Միայն եզրակացրեք. հայ մարդը Հայաստանում հեշտությամբ է ընկնում թուրքական

բանտ: Դրա համար բավական է ունենալ դրամ, անասուն, հաց, կին և դուստր: Այսինքն. պարզապես հայ լինել:

Ի՞նչ եք մտածում դուք, քրիստոնյա Եվրոպա և Ամերիկա... Դուք, որ Թուրքիային լիակատար հնարավորություն ընձեռեցիք հայոց հինգ գավառներում հաստատել մի նոր Դագոմնա... Հայերի համար կյանքը դարձնելով անհայտ անձավների հավերժական խավար...

Հայերը քրիստոնյա են: Հայերը հույսը կտրել են մարդկությունից և իրենց հայացքը ուղղել դեպի Աստված:

Վերջերս մի խումբ հայեր ինձ մի խնդրագիր տվեցին, որ հանձնեմ Բրիտանական կառավարությանը... Խնդրագիրը սկսվում էր այսպես. *«Անգլիայի մարդասեր և ազնիվ ժողովրդին...»*:

Այսպե՛ս: *Հայկական Հարցը* պիտի վերանար... Բոլոր միջոցներով... Հարկեր պահանջում էին ոչ միայն թուրք պաշտոնյաները, այլև քուրդ ցեղապետները, որն ավելի էր կյանքը անապահով դարձնում:

Անգլիայի մարդասեր և ազնիվ ժողովուրդ, դուք զարմանում եք, որ սասունցիները զենքի դիմեցին՝ գերադասելով մեռնե՞լ... Հպարտ Սասունը, որ լինելով հպատակ թուրքին, այնուամենայնիվ կարողանում էր պահել իր կիսանկախ վիճակը՝ անընդհատ պայքարելով քուրդ անկանոն զորքերի ու թուրք կանոնավոր բանակների դեմ:

Ժողովուրդն այլևս չի դիմանում սրին, հրին, մտրակին ու գնդանին: Չի դիմանում քրտինքով վաստակած դաշը հացի թալանին: Հեռանում է: Առնում է իր ընտանիքի վերջին մնացորդները և, թողնելով հողը, տունը, գործը, հայրենիքը, հարազատ եզերքը, հեռանում է դեպի օտարություն:

Բայց սա էլ փրկություն չէ... Միայն սրանով չի փակվի *Հայկական Հարցը*: Հասունանում էր ոճրագործության հաջորդ, սոսկալի փուլը: Չնչին առիթ էր պետք: Առիթը դարձան սասունցիները, երբ կառավարությանը հարկեր վճարելուց և հարկահավաքներին կաշառք տալուց հետո, նրանք հրաժարվեցին նույն հարկն ու կաշառքը տալ քրդերին:

...Սասունը ոտքի կանգնեց, երբ երևելի անձանց մի խումբ, քահանայի գլխավորությամբ գնաց թուրքական բանա-

կի հրամանատարների մոտ, որոնք եկել էին պատժելու հարկ տալուց հրաժարվող սասունցիներին... Այս երևելիները, ձեռքներին բռնած հարկերի վճարման ստացագրերն իբրև ապացույց, որ հարկերը վճարված են, որ...

Նրանք գնացին այդ հրամանատարներին հավաստելու, որ իրենք օրինապահ հպատակներ են, որ գթություն են խնդրում չգործած... չկատարած զանցանքի համար...

... Այս միամիտ պատվիրակներին սպանեցին...

Ոչ: Հոշոտեցին մինչև վերջին մարդը...

Աշխարհի մարդասեր և ազնիվ ժողովո՛ւրդ, սասունցիները այսպես ոտքի ելան: Նրանք առաջին անգամ չէր, որ դիմադրում էին թուրք կանոնավոր և քուրդ անկանոն զորքերին և ետ շպրտում: Թուրք կառավարությունը այս անգամ Սասունի շուրջը ստեղծեց ռազմական գոտի և հայտարարեց պատերազմական վիճակ: Սասուն արշավեց Անատոլիական 4-րդ բանակը՝ 12 հազար զինվորով և Զեքի փաշայի հրամանատարությամբ: Դիարբեքիրից հասավ Օսման փաշայի հետևակը՝ 3 հազար զինվորով: Երզնկայից և Մուշից՝ հեծելազորային երկու գունդ, Էրզրումից՝ 26-րդ հետևակային գունդը և տասնյակ հազարավոր քուրդ և թուրք բաշիբոզուկներ:

Թուրքերը հանդիպում էին կազմակերպված դիմադրության և, կորուստներ կրելով, ետ նահանջում: Օգոստոսին միահամուռ հարձակման անցան թուրք կանոնավոր զորքերը: Զորքերը խտանում էին լեռների ստորոտներում: Ռազմամթերքը սպառած սասունցիները հետզհետե բարձրանում էին լեռների բարձունքները: Թուրքական կանոնավոր բազմահազարանոց բանակին և քրդական նույնքան անկանոն զորքին վերջապես հաջողվեց սեղմել պաշարման օղակը:

...Անհավասար կռվում զոհվում էին սասունցիները: Տղամարդկանց կողքին կռվող կանայք, վերջին փամփուշտն արձակելուց հետո, թշնամու ձեռքը չընկնելու համար նետվում էին ժայռերից ներքև և նահատակվում: Սասունի քառասուն գյուղերի կոտորածը կատարվեց առանց որևէ խղճահարության: Օսման փաշան զորքերին կարդացել էր սուլթանի ֆիրմանը, որը պատվիրում էր անպատիժ չթողնել որևէ հայի, առանց տարիքի և սեռի խտրության...

Այսպես նրանց կոտորեցին մինչև վերջին մարդը: Երիտասարդների ձեռն ու ոտը կապեցին, շարեցին կողք կողքի, վրանները ցախ լցրեցին ու ողջ-ողջ այրեցին: Քահանաների պարանոցներին շղթա գցելով՝ քաշքշեցին, քաշքշեցին ու կիսախեղդ նետեցին գետնին ուղղահայաց տնկված սվինների վրա... Կանանց ու աղջիկներին լցրեցին եկեղեցիները և զինվորներին թույլ տվեցին նրանց հետ վարվել իրենց ուզածի նման, ապա սպանեցին: Ջոկեցին ամենագեղեցիկներին, առաջարկեցին մուսուլման դառնալ, ամուսնանալ թուրքերի հետ: Կանայք, բոլորն էլ մի մարդու նման հրաժարվեցին և մեռան՝ տանջահարվելով, գերադասելով մահը... Նրանք չսրբացա՞ն, արդյոք: Այդ մասին ի՞նչ է մտածում քրիստոնյա աշխարհը...

Հոլի կանանց փորը պատռելով, իր տաքուկ բնից հանելով դեռ չծնված մանկանը՝ մանրիկ-մանրիկ կտրատում էին:

Այն մանկահասակ աղջիկները և ջահել կանայք, որոնք կարողանում էին ներքևի գյուղերից ծածուկ բարձրանալ լեռների անմատչելի բարձր քարաժայռերին, ձեռք ձեռքի բռնած անդունդն էին նետվում, որ ազատվեն անպատվությունից:

Արդյոք եվրոպացի քրիստոնյա տիկնայք ի՞նչ են մտածում այս կանանց ոգու կորովի մասին...

Օգոստոսի վերջին օրը, այսինքն, սուլթանի գահակալության տարեդարձին, զինվորներին հորդորեցին արժանի լինել այդ օրվան և աչքի ընկնել...

Այդ օրը ամենահրեշավոր կոտորածն արվեց: Բիթլիսից բերված նավթը, որպես վերջաբան, լցրեցին տների վրա և այրեցին բնակիչներով հանդերձ:

...Ես ուզում եմ ներկայացնել մի հատված այն նամակից, որ սասունցիները իմ միջոցով ցանկացան ուղարկել Եվրոպա:

«... Անգլիայի մարդասեր և ազնիվ ժողովրդին:

Մենք հանդիսավորապես հավաստիացնում ենք ձեզ, որ Սասունում տեղի ունեցած կոտորածը միայն մի կաթիլն է հայերի արյան այն օվկիանոսում, որն աստիճանաբար և լռելյայն թափվում է կայսրությունով մեկ՝ ռուս-թուրքական պատերազմից հետո: Տարեցտարի, ամսեամիս, օրեցօր անմեղ մարդկանց, չբացառելով կանանց ու երեխաներին, գնդակահարում

են, խողխողում ու սպանում իրենց տներում ու դաշտերում, բարբարոսական միջոցներով խոշտանգում կեղտոտ բանտերում կամ կործանման դատապարտում աքսորավայրերում Արաբիայի կիզիչ արևի տակ: Սասունի կոտորածը սահմռկեցրեց ամենասառը սրտերն անգամ: Բայց այդ ջարդը երկնային ողորմածություն էր՝ համեմատած այն դժոխային արարքների հետ, որոնք կատարվում են տարվա յուրաքանչյուր շաբաթ և յուրաքանչյուր ժամ: Սովալլուկ երեխաների սրտակեղեք հեծեծանքներ, ծերունիների հառաչանքներ, որոնց վիճակվել է տեսնել այնպիսի բաներ, որ նկարագրել անհնար է. բռնաբարվող նրբին մանկիկների ու աղջիկների սարսափելի ճիչեր, մայրերի ողբ, որոնք իրենց զավակներից զրկվել են այնպիսի ոճրագործ եղանակներով, որոնց համեմատությամբ սպանությունը բարերարություն կլիներ: Կանանց անմարդկային ծղրտոցներ, որոնք գալարվում են վագրերի տակ... Դրանք անապատում մեռնողների արյան ու տանջանքների անգոր ու զուր ճիչերն են, որոնք արձագանք չեն գտնում ո՛չ երկրի վրա, ո՛չ երկնքում... Մինչ խաղարկվում է այս երկար ու սարսափելի ողբերգությունը, հանուն գթասրտության չհնչեց ոչ մի ձայն և չմեկնվեց մի ձեռք, որ օգներ մեզ: Այս ողբերգությունը շարունակվում է, և հայ ժողովուրդը գտնվում է վերջին շնչում:

Եվրոպայի մարդասեր և ազնիվ ժողովուրդ, մի՞թե եվրոպական կարեկցությունը պետք է արտահայտվի մեր գերեզմաններին տնկվող խաչերով միայն...»:

Գիտե՞ս, իմ պատանի բարեկամ, երբ հայոց եղեռնի արյունոտ դրվագները նորից հառնում են աչքերիս առջև, դաժանության բազում տեսարաններից հատկապես մեկը երկար ժամանակ իմ խաղաղ օրը դարձնում է ծանր մղձավանջ...

Երբ Բիթլիսից բերած նավթը լցրեցին տների վրա և այրեցին բնակիչներով հանդերձ, հզոր բոցերի միջով վազում էր 2-3 տարու մի փոքրիկ մանուկ... Թուրք զինվորը նետվեց նրան ընդառաջ... Ամեն անգամ մղձավանջի այդ միջոցին սիրտս հույսի ակնկալիքով դադարեցնում է ահից ու վշտից ահագնացած իր զարկը... Թուրք զինվորը հիմա փրկելու է մանկիկին...

ԹՈՒՐՔ ԴԱՀԻՃՆԵՐ

Սուլթան Աբդուլ Համիդ Բ՝
Կարմիր սուլթան։

Սաիդ Հալիմ փաշա,
նախկին վարչապետ։

Թուրք զինվորը հասնելով՝ սվինի ծայրով վերցնում է նրան ու նորից նետում կրակների մեջ: Փոքրիկ տղային: Բայց մղձավանջը սրանով դեռ չի ավարտվում: Հզոր, ոռնացող բոցերի միջով վազում է մի չքնաղ մանուկ՝ ձեռքերն առաջ պարզած... այնպես, կարծես ոչ թե այրվում, այլ խաղում է բոցերի հետ... Եվ նա մենակ չէ... Շատ են... կրակե շապիկներ հագած այդ մանուկները... Նրանք խաղում են... պարում բոցերի հետ... և ծիծաղո՛ւմ են:

Հարցնում ես, հետո ի՞նչ եղավ: Եղավ այն՝ ինչ պիտի լիներ: Ձեքի փաշան սուլթանից Ոսկե շքանշանով պարգևատրվեց իր անձնուրաց հավատարիմ ծառայության համար և ստացավ մարշալի կոչում:

Երեք հարյուր հազար բանող ու գործող, մշակող, վարող ու ցանող, կառուցող, բարիք ստեղծող, իմաստուն, ազնիվ ու հավատարիմ հայեր ելան չարչարանքի իրենց Գողգոթան: Իսկ քրիստոնյա աշխարհը թույլ էր տալիս, որ շարունակվի ողբերգությունը իր՝ իբր թե կույր աչքերի դիմաց, իր՝ իբր թե խուլ լսողության ներսում՝ ոչինչ չտեսնելով, ոչինչ չզգալով, նույնիսկ այն դեպքում, երբ ոչ թե եղեռնը իրենից հեռու էր և տեսանելի չէր, այլ հենց այնտեղ էր՝ ՈՃՐԻ քաղաքում, որն ապրում էր մի ողջ ժողովուրդ ոչնչացնելու զառանցանքներով:

Գիտես, Ստամբուլի չորս հազար հայեր, Հայոց եղեռնի զարհուրանքը իրենց հոգիներում, պատմության մեջ առաջին անգամ, բռնակալության դեմ բողոքի ելան՝ խաղաղ շարքերով անցնելով քաղաքի միջով, որ կոտորածների սոսկալի լուրը վերջապես հասնի ապարանքներում ապահով նստած դիվանագետ դեսպանների խուլ լսողությանը:

Խաղաղ երթն ավարտվեց մեծ կոտորածով: Չորս հազար հայեր պառկեցին Ստամբուլի փողոցներում սեփական արյան հեղեղների մեջ:

Չեմ ուզում, որ դու մտածես, թե ես քեզ պարտությունների մասին եմ միայն պատմում: Եվ չեմ ուզում մտածես նաև, թե ով ելնում է պայքարի՝ մեռնում է: Ո՛չ, այդպես չէ: Պայքարողն ապրում է... եթե նույնիսկ մեռնում է: Սասունի պայքարի ու պարտության պատմությունը հաղթանակի պատմություն է: Ժողովրդի սքանչելի բարոյականության, վսեմ ոգու, ազնիվ

առաքելության, նրա ամբողջական կերտվածքի հաղթանակն էր դա: Այդ պայքարում չկար դավաճանության ստորություն, չկար անձնասեր վախկոտություն, կար միայն արժանապատվության այնպիսի կատարյալ, անաղարտ զգացում, որ ակամա հիշում ես Եղիշե պատմիչի խոսքերը. *«Մահ իմացյալ անմահություն է»*:

Հավատա, իմացյա՛լ:

Անզեն, անպաշտպան, աշխարհի հզորներից մերժված մի բուռ ժողովուրդ, իմանալով, որ աշխարհի հզորներից փայփայված, զինված իր թշնամուն չի կարողանալու ֆիզիկապես հաղթել, միևնույն է, ելնում էր պայքարի՝ հանուն մարդկային վսեմ արժանապատվության հաղթանակի: Որովհետև մահով չի մեռնում արժանապատվությունը: Մահով այն դառնում է ոգեղեն խրատ՝ գալիքի համար:

Իսկ Զեյթունի հաղթանակը միայն բարոյական հաղթանակ չէր: Թուրքերը չկարողացան հաղթել Զեյթունին: Ութ հազարանոց թուրքական կանոնավոր բանակն ու երեսունհինգ հազարանոց քրդական համիդիեն հազար հինգ հարյուր դիմադրող զեյթունցի լեռնականներին չկարողացան հաղթել... Գիտես, թուրք հրամանատարները զեկույց էին ուղարկում սուլթանին, թե՝ Ալլահի սիրուն, հասեք, հայերը կոտորում են մուսուլման զինվորներին:

Սուլթանը ստիպված ետ քաշել տվեց զորքերը: Զեյթունցիները չկոտորվեցին: Քաջ լեռնականները զենք ունեին և կարողացան պաշտպանվել... Իսկ մյուս գավառները անզեն էին: Քիչ թե շատ զենք ունեին վանեցիները: Նրանք էլ պաշտպանվեցին այնքան, քանի դեռ չէին կրակել վերջին փամփուշտը... Ինչպես սասունցիները... Եվ նրանց նման էլ զոհվեցին... Քսան հազար մարդ ողջ Վասպուրական գավառից:

Բայց ես ինչպես կարող եմ մեկ-մեկ թվարկել Հայաստան աշխարհի բոլոր քաղաքներն ու գյուղերը... Ինչպե՞ս կարող եմ առանձին-առանձին հաշվել յուրաքանչյուր տեղի նահատակների թիվը... Բոլորը միասին՝ երեք հարյուր հազար, որոնց օգնության սրտակեղեք աղաղակներն ստիպեցին մի խումբ հայ երիտասարդների, հաշվի չառնելով իրենց կյանքի ապահովությունը, Ստամբուլում գրավել Բանկ Օտոմանը:

Ինչո՞ւ:

Որովհետև այդ բանկում էր կուտակված օտար երկրներից Թուրքիա եկած ներդրումները: Այդ քսանհինգ հայ երիտասարդները գիտեին, որ ինչ-ինչ, բայց հանուն իրենց հարստության՝ օտար տերությունները, ուզեն թե չուզեն, պիտի բացեն իրենց խլացած ականջները *Հայոց Հարցի* առաջ ու սուլթանին պիտի պարտադրեն վերջ տալ ջարդերին: Հայ քաջերը խոստացել էին, որ եթե չկատարվի իրենց պահանջը՝ պիտի պայթեցնեն բանկը և զոհվեն իրենք էլ:

Բայց նրանց խաբեցին:

Ռուս հյուպատոս Մաքսիմովը, որ գիտեր հայերեն, աշխարհի բոլոր դեսպանների անունից, որոնք ծառայում էին Թուրքիայում, եկավ նրանց մոտ և խոստացավ ազդել Բարձր Դռան վրա և կատարել տալ ջարդերը վերջացնելու նրանց պահանջը: Մինչ այդ, արդեն փոխհրաձգությունից քաջերից զոհվել էին տասը... Մնացածները խիստ հավատացած, որ օտար դիվանագետների միջնորդությամբ ժողովուրդը պիտի ազատվի կոտորածից, համաձայնվեցին հեռանալ բանկից: Մաքսիմովը նրանց հասցրեց ֆրանսիական շոգենավ և ուղարկեց կայսրության ափերից հեռու...

Նրանց ուղեկցող բժիշկ Ջիորդիին աշխարհին նրանց մասին այսպես վկայեց. *«Այս տղաներ մարդիկ, որոնք աչքի էին ընկնում անձնազոհությամբ, օրը ցերեկով գրավեցին Օսմանյան կայսրության ամենակարևոր նշանակության օբյեկտներից մեկը՝ բանկը: Նրանք ոչ գողեր էին և ոչ հանցագործներ: Նրանք ձեռք չէին տվել անգամ մի պենիի... Բանկը գրավելուց 13 ժամ հետո, նրանք թողեցին այն արժանապատվությամբ: Վեց օր շարունակ եղել եմ այդ հերոս մարդկանց ընկերակցության մեջ: Շոգենավի ողջ անձնակազմը հիացած էր նրանցով»:*

Օտարները հայ քաջերին հասցրին ապահով ափ և մոռացան կատարել իրենց խոստումը, կամ որոշեցին, որ չարժե կատարել այն: Մոռացան, կամ արժանի չհամարեցին հետևել Հայոց բարեփոխումներին...

...Դու այլևս չե՞ս ուզում լսել... Դու զայրացած պնդում ես, որ դա պարտություն էր... ինչպես պնդում ես, որ առհասա-

ռակ իմ պատմությունները պարտությունների անընդմեջ շարա՞ն է...

Այո՛: Համաձայն եմ: Բանկ Օտոմանի միջադեպը ավարտվեց պարտությամբ: Բայց դա անարժանապատիվ ստով զրահավորված հզոր պետությունների բարոյական պարտությունն էր: Նենգամի՛տ, անբարո՛, ոճրագո՛ծ: Երկերեսանի՛: Որովհետև, երբ նրանք մի քանի հայ երիտասարդների, որոնք պատրաստ էին զոհվել հանուն կոտորածների ավարտի, խաբեությամբ «փրկեցին», հենց այն նույն ժամանակ նրանց աչքերի առջև Ստամբուլ մայրաքաղաքում և նրա շրջակայքում...

...Մի՛ բղավիր, խնդրում եմ... Մի՛ բղավիր, թե չես ուզում այլևս լսել... Դու պարտավո՛ր ես լսել... Ինչո՞ւ ես պարտավոր... Մի՞թե չգիտես... Պարտավոր ես, որովհետև...

Որովհետև դու հա՛յ ես:

Ուրեմն, այսպե՛ս: Երբ մեծ, հզոր, բարգավաճ տերությունները շնորհավորում էին միմյանց, որ բարեհաջող փրկվել են Բանկ Օտոմանում կուտակված իրենց ներդրումները, մայրաքաղաքում, որտեղ նրանց դեսպաններն էին, և նրա շրջակայքում, երկու օրում կոտորվեց ճիշտ տասը հազար հայ:

Հետո կոտորածները, նոր թափ առած, շարունակվեցին Հայոց ողջ արյունաշաղախ երկրում... Բացի Ադանայից... Զեյթունցիները պաշտպանեցին Ադանան...

Ադանայի պատմությունը ուրի՛շ պատմություն է: Բայց այս կոտորածներին նա փրկվեց: Չփրկվեցին երեք հարյուր հազար հայեր... Քրիստոնյաներ...

Այնուհետև ականատես վկաների միջոցով Եվրոպան վերջապես հասկացավ, որ Թուրքիայում հայի ու մուսուլմանի հավատի մոլեռանդ կռիվ չէ: Որ հայ քրիստոնյաների դաժան կոտորածները կատարվում էին կանոնավոր զորքերի կողմից, քուրդ համիդիեի օգնությամբ՝ սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի հրամանով, որն իր հրամանատարներին Հայոց ջարդերի համար պարգևատրում էր *Ոսկե* շքանշանով... և որն իր հարազատ ժողովրդից կնքվել էր Արյունոտ Սուլթան, Կարմիր Սուլթան տիտղոսով:

Արյունոտ սուլթանը վերջապես, Եվրոպայի ճնշմամբ, ստիպված դադարեցրեց կոտորածները:

19-րդ դարն ավարտվում էր:

Ի՞նչ էր պահել իմ ժողովրդի համար 20-րդ դարը իր գաղտնի խորքերում:

Բ.

ՎՐԻԺԱՌՈՒ ՔԱՋՈՐԴԻՆԵՐ

(1895-1908)

Ո՛չ, եղեռնը չէր ավարտվել: Այն ընկղմվել էր ամենօրյա չարչարանքների խորքը և մշտապես այնտեղից էր թելադրում իր կամքը հուսահատ ժողովրդին: Եղեռնը՝ հոգևորի ու մարմնավորի, որը պիտի անցներ 19-րդ դարի վերջին սահմանը և իր կիզակետին հասներ 1915 թվականին: Բայց նախքան ա՛յս եղեռնի անդունդներով քայլելը՝ ես քեզ կպատմեմ ՔԱՋՈՐԴԻՆԵՐԻ մասին, որոնք իրենց թանկագին կյանքն էին դնում Օսմանյան կայսրության անզուսպ ու կատաղի բռնություններից ժողովրդի ազատության զոհասեղանին:

Միամի՞տ էին, արդյոք...

Միայնակ կամ մի փոքրիկ խմբով, ցրված լեռնաշխարհով մեկ, Հայոց վրիժառուները իրենց քաջությամբ ու անձնազոհությամբ կարողանում էին զսպել որևէ գավառ մշտապես արյան ու արցունքի մեջ ընկղմող թուրք կառավարիչներին, ոստիկանին, հարկահավաքին, իրենց տերերից խրախուսված մուսուլման ամբոխ-տականքին: Սրանք գիտեին հայ քաջորդիների զայրույթի ու ցասման ուժը և դողում էին նրանց անունը լսելիս: Նրանք գիտեին, որ խաղաղ բնավորության տեր հայը, երբ կորցնում է համբերությունը, կռվում դառնում է անպարտելի: Նրանք գիտեին, որ առանց բանակի այդ զինվորները իրենց կոչել են ֆիդայի, որովհետև այդ մի հատիկ բառով բացատրվում էր նրանց կռվի ողջ իմաստը:

Ֆիդայի արաբերեն բառ է, որը նշանակում է զոհ: Այս դեպքում՝ հայրենիքի ազատության խորանի դիմաց զոհաբերվող զինվոր:

Հայ ֆիդայի վրիժառուներն ունեին իրենց սրբազան երդումը և այդ երդումը պաշտպանող իրենց սկզբունքները. կյանքը զոհել հայրենիքի և ժողովրդի համար, լինել գաղտնապահ, ճշմարտախոս, բարոյապես բարձր, չհայհոյել, չօգտագործել ոգելից խմիչքներ, բավարարվել համեստ սննդով, չվի-

բավորել զինակից ընկերներին, հարգանքով վերաբերվել աշխատավոր ժողովրդին՝ անկախ ազգությունից, մարտերում լինել խիզախ, հնարամիտ և հաղթել զենքով ու քանակով գերակշռող թշնամուն:

Հաղթե՛լ:

Նա պատրաստ էր հանուն իր ժողովրդի և հայրենիքի ամեն վայրկյան զոհաբերվել: Նա չգիտեր, թե ե՞րբ է կնքելու իր մահկանացուն, սակայն նա պատրաստ էր: Վկա այն պատանք-սավանը, որը մշտապես նրա ուսապարկում էր, զինամթերքի հետ միասին:

ԱՐԱԲՈ: Հայ քաջամարտիկների ֆիդայական առաջին խմբերը կազմակերպվեցին Տարոնում, 1880-ական թվականներին Արաբո կամ Մխո Շահենի ղեկավարությամբ: Նրանց գործողությունների հիմնական վայրը Առաքելոց և Աղբերիկ վանքերի շրջակայքն էր: Նրանք հարձակվում էին թուրք պաշտոնյա և քուրդ աշիրապետ հրոսակների վրա, որոնք, ներխուժելով հայկական գյուղերը, թալանում ու կոտորում էին անմեղ, աշխատավոր ժողովրդին:

Նրանց քաջությամբ և արդարադատությամբ գործելու համբավը հետզհետե մեծանում էր՝ ահ ու սարսափ ներշնչելով Օսմանյան կառավարությանը, որն ամեն բան անում էր հայ քաջորդիների պայքարը ճնշելու համար: Նրանք երբեմն ձերբակալվում էին և փակվում բանտերում: Բայց քաջերը հնարամտությամբ կարողանում էին փախչել և շարունակել իրենց պայքարը:

Նրանք նաև սպանվում էին:

Քուրդ համիդիեի հետ մի անհավասար կռվի ժամանակ զոհվեց Արաբոն: Մի այլ կռվի ժամանակ զոհվեցին Հունոն ու Շերոն... Եվ էլի ուրիշները: Զոհվածների մասին հյուսվեցին առասպելներ, երգվեցին երգեր...

Զոհվածները հուսահատությամբ չէին լցնում նրանց սրտերը, ովքեր պայքարում էին: Այլ նոր վրիժառության սրբազան կրակով էին այրում հոգիները և պայքարի նորանոր

մարտիկներով լրանում էին նոսրացած շարքերը: Եվ ֆիդայական շարժումը ավելի ու ավելի էր ընդարձակվում:

Ես քեզ կպատմեմ չորսի մասին, բայց իմացիր, որ պատմում եմ բոլոր նրանց մասին, որոնք ժողովրդական պայքարի հուշամատյանում առանձին-առանձին սքանչելի էջեր թողեցին: Նրանք բոլորն էլ տարբեր էին բնավորությամբ, բայց նման էին քաջությամբ և հայրենիքի հանդեպ ունեցած իրենց գերազնիվ մղումներով:

ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲ: 1864թ. Խլաթի Սոխութ գյուղում 300 տարվա համբավ ունեցող Խչեի հարուստ գերդաստանում ծնվեց Սերոբ Վարդանյանը: Երբ դեռ նոր-նոր էր մանկության շեմից անցել, այնպիսի սիրով նվիրվեց հայրենի բնաշխարհին, որ դարձավ որսորդ: Սա հնարավորություն տվեց անընդհատ լինել բնության մեջ, թափառել խրոխտ լեռների լանջերին, իջնել խոր ձորերի հատակը, կորսվել թավուտ անտառների անանցանելի բավիղներում:

Որսորդությունը նրան սովորեցրեց դիպուկ և անվրեպ կրակել: Ահա՝ որսորդական թափառումներից մեկի ժամանակ էլ նա ենթարկվում է երկու ավազակ քրդերի հարձակման: Անհավասար կռվում վերջապես կարողանում է սպանել մեկին, մյուսը փախչում է:

Թուրք պաշտոնյաները, փախած քրդից իմանալով եղելությունը, փորձում են ձերբակալել պատանուն: Սակայն Սերոբի հորեղբայր Առաքելը նրան կարողանում է գաղտնի ուղարկել Ստամբուլ: Խլաթի պաշտոնյաները լուր են ուղարկում մայրաքաղաք, որ տեղի ոստիկանությունը գտնի և ձերբակալի քուրդ ավազակին սպանած հային: Սերոբին հաջողվում է այս վտանգից էլ խուսափել, անցնել Ռումինիա և Սուլինա քաղաքում սրճարան բացելով՝ ապահովել իր ապրուստը: Բայց մի՞թե ազատ լեռների ու անտառների զավակը, կարող էր հանդուրժել իր վիճակը՝ որպես օտար քաղաքի սրճարանատեր: Նա անընդհատ մտածում էր վերադարձի մասին: Եվ ահա սկսվում են համիդյան ջարդերը: Այլևս ոչ մի ուժ նրան չէր կարող պահել իր տաքուկ ու ապահով սրճարանում:

...Նա հասավ Երկիր, իր ծննդավայրը: Մի քանի երիտասարդների հետ բարձրացավ լեռները, որպեսզի այնտեղից իջնելով՝ ետ շպրտի թուրքական կանոնավոր բանակի և քրդական համիդիեի խաժամուժի ավազակաբարո հարձակումները հարազատ Խլաթի վրա և փրկի ժողովրդին կոտորածից:

Ժողովուրդը սիրեց Սերոբին և կնքեց նրան Աղբյուր մականունով: Աղբյուր Սերոբ, այսինքն կյանք պարգևող Սերոբ: Սերոբը Նեմրութի հսկան էր, Նեմրութի Առյուծը: Ժողովուրդը առասպելներ հյուսեց նրա մասին: Նա իր խմբով կայծակի արագությամբ հասնում էր այն գյուղերն ու ավանները, ուր ջարդերի համար հայտնվել էին թուրքերն ու քրդերը, հետապնդում նրանց, վրեժխնդիր լինում:

Սերոբն ամենուր էր, ուր կար անիրավություն: Եվ անզսպելի թուրքն ու քուրդը, որ չափազանց քաջ էին անզենի ու անպաշտպանի առջև, սարսափահար ընկրկում էին մի խումբ հայ ֆիդայիներից, որոնց առաջնորդում էր Աղբյուր Սերոբը:

Թուրքական վերին ատյաններում որոշվեց. պիտի բռնել Սերոբին կենդանի կամ մեռած: Լավ կլինի կենդանի, որ տանջահարելուց հետո, մեծ ճանապարհի ավազակի նման կախեն Ստամբուլի հրապարակում, որպես խրատ մյուս գյավուր ֆիդայիների:

Խլաթի թուրք պաշտոնյաները, անբավարար գտնելով իրենց զինված ուժերը և քրդերին, Բիթլիսից բերել տվեցին օգնական զորք թնդանոթների հետ միասին և խիտ օղակով պաշարեցին Բաբաշեն գյուղը, որտեղ իր զինակիցների հետ գտնվում էր Սերոբը: Զորքերին միացավ նաև թուրք և քուրդ խաժամուժը:

Գյուղի շուրջը հետզհետե սեղմվում էր պաշարման օղակը: Սերոբը, իր 16 զինակիցների հետ գյուղի բարձունքից մեկում դիրքավորված, դիմադրում էր:

Կռիվը տևեց մինչև գիշեր: Թուրքերից շատերն էին սպանվել, հայ կռվողներից՝ ոչ ոք: Թուրքերը դադարեցրին հարձակումը՝ սպասելով լուսաբացին: Իսկ Սերոբը, իր քաջ ընկերների հետ, օգտվելով գիշերվա թանձր խավարից, հեռացավ բարձունքից:

Այս հանգամանքը սարսափով էր լցրել թուրքերի սրտերը: Վախենալով վրիժառուների ցասումից՝ նրանք որոշեցին ձեռք չտալ գյուղին՝ հեռանալ...

Այս կռվից հետո Սերոբին սկսեցին նաև փաշա կոչել:

Թուրք իշխանությունները որոշում են Սերոբի վրեժը լուծել նրա հարազատներից: Ձերբակալում են նրա եղբայր Մխոյին և թալանում Խչե գերդաստանի ողջ ունեցվածքը:

Սոսեն՝ Սերոբի կինը, վերցնելով երեխաներին, ամուսնու մյուս եղբոր՝ Զաքարի հետ բարձրանալով լեռները, դառնում է ամուսնու զինվորներից մեկը: Քիչ ժամանակ անց Մխոյին հաջողվում է փախչել և միանալ Սերոբին:

Թուրքերը գիտեին, որ Սերոբին կռվով չեն կարող ձեռք գցել և իրենց բնավորության համաձայն դիմում են խարդախության: Իբր թե բանակցելու համար հրավիրում են հանդիպման: Սերոբը, լավ ճանաչելով թուրքերին, մերժում է գնալ: Այդ ժամանակ թուրքերը կաշառում են Սասունի Գեղաշեն գյուղի ռես Ավոյին և սա Բաբեշի հայտնի կռվից մեկ տարի անց Գելիեգուզանում թունավորում է Աղբյուր Սերոբին:

Մեռնող Սերոբին բռնելու համար Թիֆլիսի կուսակալը ուղարկում է բալաքցիների ցեղապետ Բշարե Խալիլին՝ 1500 զինվորներով: Գելիեգուզանը պաշարվում է: Մարտական ընկերները հազիվ են կարողանում մեռնող հրամանատարին դուրս բերել գյուղից, որն, այնուամենայնիվ այնքան ուժ և արիություն է ունենում, որ հրամայում է ընդունել թշնամու մարտը...

Կատաղի, անզիջում էր կռիվը: Մեկը մյուսի ետևից ընկնում էին թշնամու զինվորները, բայց զոհվում էին նաև հայ քաջամարտիկները: Զոհվում են Սերոբի երկու եղբայրները՝ Մխոն ու Զաքարը: Զոհվում է Սերոբի որդին՝ Հակոբը: Իսկ Սերոբը կռվում է այնքան և ղեկավարում մարտը այնքան, մինչև կորցնում է գիտակցությունը: Սոսեն, վերցնելով ամուսնու հրացանը, կռիվը շարունակում է ինքը:

Սոսեի այդ կռիվը մնաց մեր պատմության էջերում, որպես ատելության ու վրիժառության դասական օրինակ: Թե այդ օրը նա որքան թուրք տապալեց՝ հայտնի չէ: Հայտնի է միայն, որ նրանք՝ Սոսեի ձեռքով մեռածները, շատ էին: Նրա

հոգին բզկտվում էր մահամերձ ամուսնու, Մխոյի ու Զաքարի մահվան պատճառով, և վերջապես, իր հոգու հատոր, իր աչքի լույս զավակի սպանվելով: Նա տեսնում էր, որ մեկը մյուսի ետևից զոհվում են մարտական ընկերները... Նրա էությունը շիկացել էր այնպիսի մի ահարկու ցավից, որ թվում էր անհնար է պատկերացնել ուրիշ մի ողբ զոհվածների համար, քան կնոջ այդ կատաղի կռիվը ճիվաղների դեմ: Սոսեի հոգում պատեպատ էին զարնվում և աղաղակում բոլոր ժամանակների եղերամայրերը:

Բշարե Խալիլը, հաշվի չառնելով իր մեկը մյուսի ետևից տապալվող զինվորներին, նրանց դիակների վրայով սեղմում էր պաշարվածների օղակը:

Վերջապես Բշարե Խալիլը հասնում է մահամերձ Սերոբին և կտրում նրա գլուխը: Խալիլը գերում է Սոսեին, որը մինչև վերջ կատաղորեն պաշտպանում է մեռնող իր ամուսնուն, իսկ հետո էլ՝ նրա գլխատված դին...

Սերոբի մարտիկներից ինը զոհվեցին: Մյուս չորսը, կրակելով վերջին փամփուշտը, կարողացան հեռանալ:

Նրանք ընդամենը 17-ն էին Բշարե Խալիլի 1500-անոց զորքի դիմաց:

Սերոբի և Սոսեի երկու տարեկան որդուն կարողացավ փրկել և այդ թոհուբոհից հանել Մխոյի կին Տայոն:

Թուրքական կառավարությունը, ահաբեկելու համար հայերին, նրա պաշտելի հերոսի գլուխը ցուցադրեց Բիթլիսում, Մուշում, Խլաթում և այդ գավառների գյուղերում:

Բիթլիսի հայերի հոգևոր առաջնորդին հաջողվում է, մեծ կաշառք տալով, ազատել սրբացած մարտիկի գլուխը և թաղել Ս.Կարմրակ եկեղեցու բակում:

Սուլթանը Բշարե Խալիլին շնորհակալությամբ պարգևատրում է շքանշանով:

Սոսեն նետվում է բանտ:

Սերոբ Վարդանյանի մահը հայության գլխին պայթեց կայծակի նման: Համիդյան զարհուրելի եղեռնից դեռ չսթափված ժողովուրդը իր ֆիդայի զավակներով քիչ ավելի ապահով էր զգում: Նա գիտեր, որ ինչ էլ լինի, հասնելու է Սերոբը իր քաջարի ընկերների հետ և պաշտպանելու է իրեն կառավարա-

կան ու մասնավոր հարկահավաքների բռնություններից ու բռնապղծումներից: Ժողովուրդն իր զոհված զավակների հանդեպ իր անփարատելի վիշտը երգեց բազում երգերով՝ երբեք չմոռանալով Աղբյուր Սերոբի կոչը, որով ազատատենչ հայորդին դիմում էր հարստահարվածներին. *«...Պատիվ ունեցողը թող գա...»:*

Գերմանացի ճանապարհորդ Վալդմար Բելքը Հայաստանում ճամփորդելիս, երկրից և հատկապես Սերոբ Վարդանյանի սպանությունից ստացած իր տպավորություններն է գրել *«Ֆրանկֆուրտ ցայտունգ»* թերթի 1899թ. համարներից մեկում. *«Նա՝ Սերոբ Վարդանյանը, – գրում է Բելքը, – իսկապես հավատում էր և համոզված էր, որ իր գործով կարող է օգնել հայ ժողովրդին, նրան տաճկական կամ մանավանդ քրդական բռնակալներից ազատելուն: Նա հավատում էր նաև, որ իրականանալու է հայերի՝ ազատ Հայաստան ունենալու երազանքը: Սերոբն այնքան հմուտ ու վարպետորեն էր վարում իր կռիվները թուրքական զորամասերի դեմ, որ հիացնում էր անգամ իր հակառակորդներին: Սուլթանական զինվորներին այնքան էր քարշ տալիս իր ետևից, որ սրանք հոգնում ու թուլանում էին և անարդյունք վերադառնում: Սերոբը սքանչելի կերպով և զարմանալի արագությամբ իր հետախույզներից տեղեկանում էր սպառնացող վտանգի մասին և պատրաստվում էր կռվի: Նա սավառնում էր մերթ Նեմրութ լեռան կողերի վրա, մերթ Սասունում, մերթ Մոտկանում կամ Խութում: Տեղացիներն ասում էին, թե նրան ձերբակալելու մասին մտածելն անգամ ավելորդ է. Բայց, ահա, ընկավ ազատության աներկյուղ մարտիկը ստոր խարդախությամբ: Ընկավ՝ իր ժողովրդին սքանչացում ու թշնամուն սարսափ ներշնչող, ազատության գաղափարներով տոգորված Սերոբ փաշան: Իսկ ով տեսել էր նրա կնոջ քաջությունն ու խիզախությունը, որը շրջում էր տղամարդու շորերով, ոտից գլուխ սպառազինված և մասնակցում ամուսնու կռիվներին տղամարդու քաջությամբ, ստիպված էր խոստովանել, որ այդ կինը մի դյուցազուն էր»:*

Սերոբի սպանությունից հետո, թուրքական կառավարությունը մեծ ջանքերով փնտրում է նրա զինակիցներին, հատկա-

պես սպաղանցի Մակարին, Գեորգ Չավուշին, Քեռի Բարսեղին, Սեդրակին, Սարոյին, Անդրանիկին, Հրայրին:

ՀՐԱՅՐ: Սերոբի մահից հետո հայ ֆիդայական շարժման ղեկավար է դառնում Արմենակ Ղազարյանը, որի ծածկանուններն էին Հրայր, Ուրվական, Դժոխք:

Հրայրը սասունցի էր: Նա աշխատում էր շատերին ընդգրկել պայքարի մեջ և միասնության կոչ էր անում: Նրա հոգին ընդվզում էր, երբ տեսնում էր, թե ինչպես հայ կուսակցությունները միմյանց հետ ունեցած չնչին խնդիրներով պառակտվում էին: Իր նամակներից մեկում նա գրում է.

«Դուք՝ կուսակցություններդ, ի բաց թողած ժողովրդի դրական ուժերի կենտրոնացումը և նրա կենսական պետքերը, անձնական մանրակրկիտ հաշիվներով եք զբաղված: Կարծեմ անկեղծ գործողի մը խիղճը հանգիստ կլինի այն ժամանակ, երբ մինչև յուր կենաց վերջին կաթիլը, յուր ջանքը, քրտինքն ու արյունը նվիրած է հասարակության ընդհանուր շահերին և ոչ եսական ձգտմանց, անձնական հաշվույն»:

Հրայրը համոզված էր, որ հայ ժողովուրդը իր փրկության հույսը պետք է միայն ու միայն իր սեփական քաջության վրա դնի: Նա դեմ էր ֆիդայական առանձին կռիվներին և կոչ էր անում համախմբվել:

Հրայրի մասին իմ պատմությունը ես դեռ չավարտեցի: Նրան մենք դեռ կհանդիպենք:

Հիմա բացենք մեր պատմության այն էջերը, ուր Անդրանիկ Օզանյանի հերոսական կյանքի դրվագներն են գրանցված:

ԱՆԴՐԱՆԻԿ: Անդրանիկ Օզանյանի, ինչպես նաև մյուս քաջամարտիկների պայքարի մասին հնարավոր չէ այստեղ ամեն բան պատմել: Որովհետև յուրաքանչյուր քաջարի հայորդու պատմությունը, որն իր կյանքն էր դրել հայրենիքի ազատության խորանին՝ հաստափոր հատորի մեջ կարող է ամ-

փոփվել միայն: Իսկ այս մի քանի էջը հավաստում է միայն, որ նրանք եղել են:

Անդրանիկ Օզանյանը ծնվել է Շապին-Գարահիսարում, արհեստավորի ընտանիքում, 1865թ. փետրվարի 13-ին: Երբ ավարտում է տեղի Մուշեղյան վարժարանը, ձեռք է բերում հյուսնի արհեստ և սկսում աշխատել քաղաքի արհեստանոցներից մեկում: Դեռ մանկության տարիներին բազմաթիվ անգամ ականատես լինելով թուրք պաշտոնյաների ու քրդերի վայրագություններին՝ անսահման ատելությամբ է լցվում նրանց հանդեպ, մանավանդ, երբ մի օր տեսնում է, թե ինչպես թուրք մի պաշտոնյա ծեծում է իր անմեղ հորը... Թերևս առաջին անգամ, ամենայն սրությամբ զգում է իր ազգային արժանապատվությանը հասցված ցավագին վիրավորանքը: Նա նետվում է իր հորը ծեծող, մինչև ատամները զինված թուրքի վրա, տապալում նրան և բուռն զայրույթով ջարդուփշուր անում:

Այսպես 18 տարեկան Անդրանիկը հայտնվում է բանտում: 27 օր բանտում մնալուց հետո, հայրը նրան մեծ կաշառքով ազատում է և ուղարկում Ստամբուլ:

...Թոփխանեի գործարանը զինամթերք էր արտադրում: Անդրանիկին հաջողվում է Թոփխանե մտնել աշխատանքի: Բայց բացի թուրքերից, այնտեղ իրավունք չունեին աշխատել ուրիշները: Սուլթանի լրտեսները, այնուամենայնիվ, պարզում են, որ Թոփխանեում աշխատում են 75 հայեր, որոնք ավելի լավ մասնագետներ էին, քան թուրքերը: Սակայն սա չի խանգարում, որ նրանց բոլորին դուրս շպրտեն գործարանից:

Անդրանիկը մեկնում է Ռումինիա, սակայն լսելով համիդյան կոտորածների մասին, անցնում է Անդրկովկաս, ապա գնում Արևմտյան Հայաստան և միանում Սերոբ Վարդանյանի խմբին:

Համիդյան հալածանքները նրան ստիպում են նորից մեկնել Անդրկովկաս, և այս ու այն կողմ երկար թափառումներից հետո չհաշտվելով այն մտքի հետ, որ ինքը հեռու է պայքարի բուն միջավայրից, վերադառնում է և նորից միանում Սերոբին ու Հրայրին:

Երբ Աղբյուր Սերոբը խարդավանքով զոհվեց, Անդրանիկը նրա խմբի հետ չէր: Նա մի ուրիշ ջոկատի հետ, որի

խմբապետն էր, կռվում էր ուրիշ մի տեղ: Երբ լսեց Սերոբի եղերական մահվան մասին, ապրեց ահավոր, ծանր այն վիշտը, որ կարող է ապրել մարդը պայքարի իր սիրելի ընկերոջը կորցնելիս: Երդվեց վրեժխնդիր լինել Բշարե Խալիլից: Երկար հետապնդելով զգույշ ու խորամանկ Բշարե Խալիլին, վերջապես 1900թ. հոկտեմբերին մի կռվի մեջ հանդիպելով նրան՝ իր սակավ ընկերների հետ հաղթում է բազմաթիվ անգամ ուժեղ զորախմբին, բռնում Բշարե Խալիլին, գլխատում: Սրան մեջտեղից վերացնելուց հետո, Անդրանիկը կազմակերպում է սասունցիների պայքարը, որոնք կոտորածների ավարտից հետո էլ ենթարկվում էին թուրք կառավարության անտանելի շահագործումներին:

Երբ Անդրանիկը կռվում էր Սասունում, Հրայրը Մշո դաշտում փորձում էր կազմակերպել համընդհանուր ապստամբություն: Հրայրը գտնում էր, որ Սասունի կռիվները խանգարում են իր նպատակին, իսկ Անդրանիկը պնդում էր, որ ժողովրդին ամեն օր, ամեն վայրկյան պաշտպանել է պետք և Հրայրը պարտավոր է բարձրանալ Սասուն և միանալ պաշտպաններին:

Հրայրը Անդրանիկին իր մի խումբ զինակիցների հետ հրավիրեց Շենիք և... զինաթափել տվեց: Ապա Անդրանիկին զրկեց խմբապետությունից և ցրեց զինաթափված խումբը: Եվ նույնիսկ՝ Հրայրի կողմնակիցները, վեճի ընթացքում բավական բորբոքված, հարձակվեցին Անդրանիկի վրա և ծեծեցին...

Երբ վերլուծես այս բավականին տհաճ միջադեպը՝ չմոռանաս, որ Անդրանիկի և Հրայրի վեճը անձնական չէր, այլ սկզբունքային: Հրայրը ուզում էր կազմակերպել համընդհանուր ապստամբություն: Անդրանիկը չէր կարող թույլ տալ ժողովրդի հալածանքն ու խոշտանգումը մինչև անհայտ ժամանակ: Մանավանդ, որ ֆիդայիների առկայությունը, նրանց անձնազոհ կռիվները զսպում էին կառավարությանը և քրդերին:

Զորավար Սմբատը այդ օրերի մասին գրում է. *«Զարհուրելի էր տեսարանը: Զինյալ հսգսրավոր բարբարոսներու ամբոխը ազատորեն կհանձնվեր կրքին, կկոտորեր անպաշտ-*

պան ժողովրդին տան դռները, կխուժեր ներս, կկողոպտեր, կհալածեր ու կբռնաբարեր».

Այդպես էր: Ժողովուրդը ընկճված էր ու հուսահատ: Ամեն գնով, առանց հետաձգելու պետք էր զսպել կեղեքիչներին և ապացուցել, որ հայ ազգը կենսունակ է և կարող է պաշտպանել իր արժանապատվությունը: Սա էր Անդրանիկի սկզբունքը: Անդրանիկը չէր կարող անձնական վիրավորանքի պատճառով դավաճանել իր սկզբունքները և դադարեր պաշտպանել իր ժողովրդին, որն իր և իր ընկերների օգնության կարիքն ուներ:

Մուշից արևելք էր գտնվում հայտնի Առաքելոց վանքը, որն ուներ հարմար դիրք, բարձր պարիսպներ: 1901 թվականի հոկտեմբերի վերջին երեսուն զինակիցներով Անդրանիկը բարձրացավ Առաքելոց վանք, այնտեղից պաշտպանելու համար Մուշի և Սասունի ժողովրդին:

Թուրքական կանոնավոր ջոկատների բազմաթիվ հարձակումները արդյունք չտվեցին: Թուրքերը, զոհեր տալով, պարտված հեռանում էին: Թուրքական հրամանատարությունը ստիպված հարցագիր ուղարկեց Անդրանիկին. «Ի՞նչ կուզեք, ի՞նչ է ձեր պահանջը և նպատակը»:

Անդրանիկը պատասխանեց. *«Ֆերիդ ու Ալի փաշաները Պիթլիսի կուսակալին հետ հոս թող գան և այն ատեն բերանացի կըսեմ իմ ըսելիքներս».*

Պարզ է, որ նման մի պահանջ չպետք է կատարվեր: Թուրքերը նորից ձեռնարկեցին մի քանի հարձակումներ, սակայն պարտվեցին: Ստիպված նոյեմբերի 23-ին թուրքական հրամանատարությունը, երեք թուրք երևելիների հետ, Մուշի առաջնորդ Խոսրով և Ս. Կարապետ վանքի վանահայր Հովհաննես վարդապետներին նույն հարցումով ուղարկեց Անդրանիկի մոտ:

Անդրանիկը պատգամավորներին ներկայացրեց իր պահանջները ոչ միայն բանավոր, այլ նաև գրավոր: Ներել բոլոր հայ քաղաքական բանտարկյալներին, պետական տասանորդի հավաքման իրավունքը տալ իրենց գյուղացիներին, պաշտպանել հայերի անձը և գույքը, ազատել հայկական գյու-

ղերը քրդական աշիրաթների լծից, վերացնել պարհակները տեղի աղաների ու աշիրապետների օգտին և հայ գյուղացիների թալանը, ֆիդայիներին չանվանել ավազակներ, քանի որ նրանք թալանով երբեք չեն զբաղվում, այլ միայն պատժում են ժողովրդին նախճիրի տվողներին և ժողովրդին թալանողներին:

Կարևոր պահանջներից մեկն էլ համիդիե քրդական գնդերի ցրումն էր, որոնք կազմվել էին միայն ու միայն հայերին պատուհասելու համար:

Նահանգապետը, ստանալով Անդրանիկի պահանջները, հայտարարեց, թե բոլորն ընդունված են: Մեծ վեզիրն իբր թե դիմել է սուլթանին, և սուլթանը համաձայն է այդ պահանջներին, այնպես որ, թող Անդրանիկը անձնատուր լինի, որովհետև նրան ներում է շնորհված:

Խաբեությունն այնքան ակնհայտ էր, որ Անդրանիկը հայտարարեց՝ եթե չկան իրական երաշխիքներ, նորից է կռվելու:

Նոյեմբերի 24-ին թուրքերը վերսկսեցին իրենց հարձակումները: Ֆիդայիները կռվում էին քաջությամբ և հընձում թշնամու զինվորներին: Այնքան՝ մինչև վերջացավ նրանց զինապաշարը:

Անդրանիկը կարողացավ իր մարտիկներին դուրս բերել թշնամու օղակումից և հասցնել Սասուն: Սասունցիները նրանց դիմավորեցին մեծ խանդավառությամբ:

Անդրանիկը, վռնդելով սուլթանական հարկահավաքներին, պատժելով Բշարե Խալիլին, Առաքելոց վանքի կռիվներում միշտ հաղթելով և ապա պաշարումից հաջողությամբ դուրս գալով, դարձավ իր ժողովրդի սիրելի հերոսը և նրա հռչակը տարածվեց ոչ միայն Տարոնում ու Վասպուրականում, այլև ողջ Հայաստանում: Նրա մասին երգեր հյուսեցին և նա դարձավ հպարտության, արժանապատվության, քաջության սքանչելի խորհրդանիշ իր ժողովրդի համար:

Սակայն թուրքական կառավարությունը չէր դադարեցնում իր նոր ոճիրները: Համիդյան եղեռնը թվում էր, թե դադարել էր, սակայն այդպես միայն թվում էր: Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Սկրյաբինը 1903թ. հուլիսին գրում է Ստամբուլի իր դեսպանին.

«Էրզրումի կուսակալի հետ զրուցելիս ես համոզվեցի, որ անխուսափելի է արյունոտ դատաստանը հայերի հանդեպ: Ֆրանսիական և անգլիական կոլեգաները, նրա հետ խոսելով, նույնպես եկան այդ համոզման և իրենց տպավորությունների մասին հեռագրեցին Կոստանդնուպոլիս: Ամեն բանից երևում է, որ սուլթանը որոշել է գլխովին բնաջնջել հայերին»:

...Սասունը նորից պաշարման մեջ է: Զորքեր են լցվել նաև Շատախ: Նորանոր կոտորածների սարսափը տարածվում է ամենուրեք: Թուրքերը հայտարարում էին, թե հայերն ապըստամբել են կառավարության դեմ: Ինչպե՞ս: Կոտորածներից սարսափահար, արյունաքամ եղած ժողովուրդը ինչպե՞ս էր ապստամբելու: Նա միայն ինքնապաշտպանության կարող էր դիմել:

Բազմաթիվ կռիվներ եղան Տարոնում: Քաջերը պաշտպանում էին, կռվում, զոհվում... Արդեն ասել եմ քեզ, նրանցից ամեն մեկը մի կյանք էր, որի մասին կարելի էր հաստափոր գրքեր գրել: Նրանք, իրենց երիտասարդ կյանքն առած, իրենց զենքի ու պատանքի հետ գնում էին՝ պաշտպանելու հալածված ժողովրդին: Գնում էին՝ պաշտպանելու հայրենիքում ապրելու իրենց ազգի հին արյան իրավունքը:

Սասունցիները օրհասական վիճակի մեջ էին, և Դաշտի բնակիչները, պարեն, հաց, զինամթերք հավաքելով, ուղարկում էին Սասուն: Այս օգնությանը նույնիսկ կարիքավորներն էին մասնակցում:

Թողնելով հերոսության ու քաջության բազում նկարագրություններ՝ պատմեմ մի աննշան թվացող դեպքի մասին: Բայց մի՞թե աննշան՝ ինքդ որոշիր:

Հանգանակության ժամանակ Խարս գյուղում մի մուրացիկ կույր աղջիկ, դիմելով Սմբատ զորավարին, ասում է. «Մի մերժեք, եղբայրս, այս ալ իմ նվերս թող ըլլա» ու սեղանին է դնում հինգ դուրուշ մանրուք, մի զույգ գուլպա, տոպրակով մի մաս ցորեն և գարի: Ներկաները, մարտերի մեծ թրծված, մահվանը միշտ բաց աչքերով նայող քաջորդիներն էին, որոնք այս տեսարանի առջև չկարողացան զսպել իրենց հուզմունքն ու արցունքը: Կույր աղջկա նվերը նրանք երբեք չմոռացան իրենց կռիվներում...

Ֆիդայիներ:

Գեորգ Չաուշ։

Անդրանիկ Օզանյան՝ ֆիդայի։

Տարոնի բնակիչները չբավարարվեցին միայն նվիրատվությամբ: Նրանցից շատերը զինվորագրվեցին և համալրեցին մարտնչողների շարքերը: Բոլոր պատրաստություններով հանդերձ, ֆիդայական զինվորական խորհուրդը աշխատում էր, որ կառավարությանը առիթ չտա Սասունի վրա հարձակվելու: Դա գրեթե անհնար էր: Որովհետև թուրքերը ոչ միայն իրենք էին ստեղծում այդ առիթը, այլ խրախուսում էին նաև քրդերին:

Հերոսամարտերի բազմաթիվ էջեր բաց թողնելով՝ ուզում եմ պատմել Գելիեգուզանի կռվի մասին:

Պաշարելով ամբողջ Սասունը՝ 1904թ. ապրիլի 13-ին թուրքական բանակը Քեոսե Բինբաշու գլխավորությամբ հարձակվեց Շենիքի վրա, որպեսզի Շենիքի հաշիվը մաքրելուց հետո շարժվի Սեմալ և Ալիանք, որոնց պաշտպանությունը հանձնն էր առել Հրայր Դժոխքը, Տափըկինինը՝ Անդրանիկը, Իշխանաձորինը՝ Գևորգ Չավուշը, Գելիգուզանինը՝ Վահանը:

Հրանոթային ուժեղ կրակով թուրքերը գրավեցին Շենիքը: Հրայրը, անկարող լինելով կանգնեցնել թշնամուն, վերցրեց Սեմալի ու Ալիանքի բնակիչներին և կռվելով նահանջեց Գելիեգուզան: Ճանապարհին Հրայրը զոհվեց, նրա հետ նաև մի քանի քաջորդիներ:

Սասունցիները, կորցնելով իրենց ղեկավարին, այնուամենայնիվ, կանգնեցրին թշնամու առաջխաղացումը: Սպաղանքցի Մակարի խումբը, խուճապի մատնելով հրանոթներով զինված թուրքերին, ստիպեց նահանջել: Ահռելի կորուստներ տալով՝ Քեոսե Բինբաշին ուղղվեց դեպի Գելիեգուզան: Բայց սասունցիները անսպասելի կրակով այնպիսի խուճապ առաջացրին, որ Քեոսե Բինբաշին չկարողացավ կանգնեցնել գլխապատառ փախչող իր զինվորներին: Թուրքերը նահանջեցին մինչև Շենիք:

Կռիվն ավարտվեց հայերի հաղթանակով:

Հարձակվող զորքերի թիվը կրկնապատկվեց: Իրենց հերթին թուրքական կանոնավոր զորքերին օգնելու համար Սասուն էին հասնում քուրդ ցեղերը իրենց ցեղապետներով: Սասունի 42 գյուղերի վրա են արշավում կառավարական 20 վաշտ և 20 հազար քուրդ:

Սասունցիները հնարավորություն չունեին լայն ճակատով կռվելու և այդ պատճառով իրենց ուժերը կենտրոնացրին Գելիեգուզանում:

Ապրիլի 20-ի լուսաբացին թուրքական 40 հազարանոց զորամասերը քրդերի հետ միասին նետվեցին Գելիեգուզանի վրա:

Անդրանիկին, այնուամենայնիվ, հաջողվեց 10–15 կմ երկարությամբ ինքնապաշտպանական մի գիծ ստեղծել Սասնո գետի ափից մինչև Անդոկի բարձունքները: Կռիվը սկսվեց արևածագին և ավարտվեց ուշ գիշերին: Սասնեցի քաջամարտիկներին հաջողվում է ետ մղել թշնամու կատաղի հարձակումները և նույնիսկ իրենց հրացաններով լռեցնել հրանոթները: Թշնամուն, մեծ կորուստներ պատճառելով, ստիպում են նահանջել:

Մի քանի օր տևեց թուրքերի կատաղի գրոհները և սասունցիները նրանց ետ շպրտեցին այնքան, մինչև սպառվեց զինամթերքը: Հայերի կռիվները դադարեցնելու մշտական պատճառը:

Թուրքերը գրավեցին Գելիեգուզանը:

Ի՞նչ անել: Թողնել երկիրն ու հեռանա՞լ: Անդրանիկը պահանջում էր կազմակերպվել և շարունակել պայքարը:

Մինչ ֆիդայիների նոսրացած խմբերը, որոնց մոտ սպառվել էր ռազմամթերքը, որոշում էին իրենց հետագա անելիքը, թուրքերը նորից կոտորածի երախը նետեցին Սասունը: Այդ ժամանակների հայ և օտար մամուլը լի է այդ կոտորածների սարսափելի նկարագրություններով: Ես այդ մասին քեզ չեմ պատմի, քանի որ պիտի լինի կրկնությունների շարան:

Ես այս էջերում ուզում եմ պատմել միայն գլխից ձեռք վերցրած մահապարտների մասին, որոնք մի քանի հոգով կռվում էին ու փախուստի մատնում թշնամու կանոնավոր զորքերին: Կռիվն ավարտվում էր թշնամու հաղթությամբ միայն այն ժամանակ, երբ վերջանում էր զինամթերքը կամ դիրքերի վրա մեկիկ-մեկիկ զոհվում էին քաջերը: Եվ երբ թուրք հրամանատարները իրենց հաղթանակի մասին զեկուցագիր էին ուղարկում Ստամբուլ, անշուշտ չէին գրում, թե 1500 զինվորով և մի քանի հրանոթով կռվել են մեկ-երկու տասնյակ ֆիդայիների

դեմ և պարտվել են, քանի դեռ... Մի խոսքո՛վ:

Մի դրվագ կռիվներից:

...Ալայ բեյը տեսնում է դաշտում ընկած վիրավոր Գրիգորին: Ձին կանգնեցնում է նրա գլխավերևում, հանում ատրճանակը և սպառնում, որ կսպանի, եթե կյանք չաղերսի: *«Կոտսն Ալայ բեյ,* – պատասխանում է ֆիդային, – *դու իգիթ լինելու անարժան մարդ ես, կնիկներին ու կիսամեռներին ատրճանակ քաշելու ու հայհոյելու ընդունակ մարդ ես»:* Կատաղած Ալայ բեյը, իջնելով ձիուց, ոտքը դնում է վիրավորի կրծքին. *«Աղաչիր,* – ասում է, – *որ կյանքդ խնայեմ»:* Ֆիդային ժպտում է իր արյունոտ շուրթերով. *«Ողորմելի բեյ, ո՞ւր ես տեսել, որ ֆիդային թշնամուց շնորհ խնդրի»:* Երիտասարդ հայի պատասխանից ցնցված բեյը հրամայում է կապել նրա վերքերը. *«Շուն, Սասունի արյունը կուզես իմ արյունով մաքրել: Իմ վերքերը մի կապի: Ոտքի կանգնեմ, պիտի քեզ ու քեզ նման արնախում գազաններին սատկեցնեմ»:*

...Գրիգորին Ալայ բեյը սպանում է:

Ցնորքցի մի աղջիկ՝ Շուշանիկը, երբ լսում է, որ իրենց գյուղում քիչ հանգիստ առնելու համար պատսպարված ֆիդայիները մատնվել են, և գյուղը պաշարվել է ոստիկաններով՝ վերցնում է հրացանը ու այնքան գնդակոծում ոստիկաններին, մինչև ֆիդայիները կարողանում են դուրս գալ պաշարումից և կռվել:

Եվ նման որքա՜ն դեպքեր...

Օրհասական այս կռիվը չէր կարող շարունակություն ունենալ: Անդրանիկը համոզվել էր, որ իր և ֆիդայիների կռիվը վնասում է գյուղացիներին: Ֆիդայիներ փնտրելու պատրվակով թուրքերը ներխուժում էին հայկական գյուղեր, և նրանց ետևից միայն համատարած ավերակներ էին մնում... և բաց գերեզմանոցներ...

Անդրանիկը իր 19 զինակիցների հետ փորձում է հեռանալ դեպի Վան: Ճանապարհին, Նեմրութ լեռան ստորոտին

Անդրանիկը լուր է ստանում, որ Ալայ բեյը 400 զինվորով, 3000 ժանդարմներով և բազմաթիվ համիդիեի քրդերով պաշարել է իրենց:

Անդրանիկը իր խմբի հետ դիրք է գրավում Նեմրութի բարձունքներում: Սկսվում է անհավասար, կյանքի ու մահու գոտեմարտը:

Թշնամին հայ մարտիկների դիրքերը գնդակոծում է թնդանոթներով, բայց, միևնույն է, հայերը անխոցելի են մնում: Թուրք զինվորները ընկնում են մեկը մյուսի ետևից: Սպանվում է նաև հրամանատարներից մեկը՝ Իբրահիմ փաշան:

Հետո թուրքական բանակի ընդհանուր զինվորական հրամանատար Սաիդ փաշան դառնությամբ պիտի խոստովանի. *«Այս ստահակները առյուծի պես կկռվին... մեզ կզարնեն անվրեպ»:*

Այս կռիվը ևս տևում է ամբողջ օրը և ավարտվում ուշ երեկոյան: Գիշերը ֆիդայիները ճեղքում են թշնամու շրջապատումը և հեռանում:

Անդրանիկին վերջապես հաջողվում է իր խմբի հետ հասնել Աղթամար: Նրանց գրկաբաց ընդունում է Դանիել վարդապետը և լուր ուղարկում Վանի դաշնակցության կոմիտեի ղեկավար Վահան Փափազյանին: Փափազյանը մեկ ուրիշ դաշնակցական գործչի՝ Իշխանի հետ անմիջապես գալիս է Աղթամար:

Ի՞նչ վիճակի մեջ է Փափազյանը տեսնում նրանց... Նրանք կռիվների թոհուբոհից հասել էին այստեղ և չէին կարողանում հանգստանալ... Նրանք անընդհատ խոսում էին՝ մեկը մյուսին ընդհատելով, գրգռված... Նրանց աչքերից կրակ էր ժայթքում... Նրանց վիշտն ահավոր էր, նրանց կատաղությունն անզսպելի... Նրանք չէին կարողանում հաշտվել պարտության հետ, չնայած գիտեին, որ պարտությունը պարտություն չէր, այլ՝ անհրաժեշտ դադար:

Ի՞նչ անել: Թողնել Տարոնը, թողնել խոշտանգվող երկիրն ու ժողովրդին՝ հեռանալ... Թե՞ վերադառնալ... Վերադառնալ անմիջապես... Վերցնել վանեցի ընկերներից զինամթերք և վերադառնալ ու շարունակել կռիվը: Մշեցի ու սասունցի ֆիդայիները պնդում էին, որ պետք է վերադառնալ, Փա-

փազյանը և Իշխանը համոզում էին, որ ժամանակավորապես հարկավոր է հեռանալ Տարոնից... որ անիմաստ է շարունակել պայքարը և նոր զոհերի առիթ դառնալ: Բայց հարկավոր է մի փոքր խումբ ուղարկել Սասուն ոչ թե կռվելու, այլ ժողովրդին մոտ լինելու, հնարավորին չափ պաշտպանելու, զենք հավաքելու և թաքցնելու համար:

Ովքե՞ր պետք է վերադառնային:

Վահան Փափազյանը իր հուշերում գրում է.

«Բոլորը լուռ ու գլխիկոր էին: Առաջինը Չավուշը խախտեց լռությունը և, բարձրացնելով գլուխը, նայեց ընկերներին ու ասաց մեղմ, բայց վճռական ձայնով. «Ես կդառնամ... ո՞ւր պիտի երթամ, չըխո դուրանն է զիմ երկիր, հոն ծնվեր, հոն պըտի մեռնիմ...»:

Գիշերը Գևորգ Չավուշը և նրա 17 զինակից ընկերները, առագաստանավով լճի ջրերի թանձր խավարը ճեղքելով, հասան Տարոն:

Նախքան Գևորգ Չավուշի մասին քիչ ավելի հանգամանորեն քեզ պատմելը՝ ավարտեմ Աղթամարում կատարված դեպքերի մասին իմ խոսքը:

Լուսաբացին, երբ դեռ Անդրանիկը իր մի քանի մարտիկներով չէր հեռացել Աղթամարից, թուրքական մի քանի զորաջոկատներ պաշարեցին Աղթամարը և սկսեցին գնդակոծել ափից և խորտակել հայերի նավերը, որպեսզի հնարավորություն չտան ֆիդայիներին հեռանալ կղզուց:

Ֆիդայիները, որոնք առանց այն էլ կատաղի և հուսահատ վիճակում էին գտնվում հայրենիքից ստիպված հեռանալու պատճառով, որոշեցին թանկ ծախել իրենց կյանքը՝ կռվել մինչև վերջ, թշնամուց, որքան հնարավոր է, շատ զոհեր խլելով: Նրանք սպասեցին այնքան, առանց մի գնդակ արձակելու, մինչև որ թուրք զինվորներով լեցուն շոգենավը ընդհուպ մոտեցավ կղզու ափին և սկսեց թնդանոթներից գնդակոծել: ...Ֆիդայիները դիպուկ կրակով մեկը մյուսի ետևից տապալում էին շոգենավում գտնվող զինվորներին: Այնպիսի մի խուճապ է սկսվում, որ թուրքերը, ետ շրջելով շոգենավը, հեռանում են:

Առավոտյան այս մարտն ավարտվեց թուրքերի խայտառակ փախուստով:

Կեսօրին մի քանի նավերով վերադարձան թուրքերը և նորից սկսեցին ռմբակոծել պաշարվածների դիրքերը:

Անդրանիկը պարզել տվեց Սասունի գոյամարտի դրոշը և ընդունեց ծովամարտը: Նրա մարտիկները թուրքերի հրանոթների դեմ կռվում էին մոսիներով և այնպես դիպուկ էին կրակում, որ թուրքերը նորից փախուստի դիմեցին:

Թուրքերը, քիչ սթափվելով, նորից հարձակվեցին... և նորից ետ շպրտվեցին:

Զոհվել էր մեկ հայ մարտիկ: Թշնամին բազմաթիվ սպանվածներ ուներ:

Թշնամին նորից պետք է գար, այս անգամ անթիվ, անհաշիվ զորքերով, նավերով, թնդանոթներով և պիտի քարուքանդ աներ Աղթամարը...

Նորից ապավինած գիշերային խավարին՝ Անդրանիկը իր խմբին կարողացավ հանել Աղթամարից և հասցնել Վան:

Թափառումները Անդրանիկին հետո տարան Պարսկաստան, Թավրիզ, Սալմաստ, ապա Բաքու, Թիֆլիս և վերջապես Ժնև, որտեղ հույս ուներ *Հայկական Հարցի* վերաբերյալ հետաքրքրություն տեսնել:

Սակայն՝

«Բախտ ունեցանք Եվրոպա տեսնելու: Բայց ավելի լավ կիամարեի չտեսնել... Ինքնասեր, իրենց հանգստությունը սիրող մարդիկ են, որոնք չեն օգներ իրենց եղբորը, ո՞ւր մնաց մեզի օգնեն հեռվից».

Ժնևից Անդրանիկը մեկնեց Բուլղարիա: Մենք դեռ նրան կհանդիպենք հայոց տառապանքի խաչուղիներում: Իսկ այժմ նրա թափառումների պատմությունը անավարտ թողնելով՝ վերադառնանք Հայաստան:

ԳԵՎՈՐԳ ՉԱՎՈՒԾ: Խոսքի անիվը մի քանի տարով ետ շրջենք, որ պատմենք բասենցի Գևորգ Ադամյան քաջի մասին:

Դեռ պատանի՝ լսում է Արաբոյի կռիվների մասին և, թողնելով Առաքելոց վանքի դպրոցի իր դասերը, գնում է Հալեպ,

վեց ամիս աշխատում, վաստակած գումարով գնում է մի հրացան և վերադառնում Տարոն:

Նա ընդամենը 21 տարեկան էր, որ Փրխվա գյուղի քահանայի հետ միասին թալանից և մահից փրկում է 700 հայ ընտանիք՝ հետ շպրտելով քրդերի հարձակումը, որոնք անպատիժ թալանում էին Տալվորիկի գյուղերը:

Մի քանի տարի նա իր ընկերների հետ կյանքի ու մահու կռիվ է մղում թուրքերի ու քրդերի դեմ:

Իշխանությունները որոշում են, որ ամեն գնով պետք է նրան վերացնեն: Եվ մի օր մեծ ուժերով շրջապատում են այն քարանձավը, որտեղ Գևորգն էր իր ութ ընկերների հետ միասին: Նրանք դիմադրում են մինչև վերջին փամփուշտը, փորձում ճեղքել թշնամու պաշարման օղակը, բայց գերի են ընկնում:

Օսմանյան դատարանը Գևորգին և իր ընկերներին դատապարտում է 15 տարվա բանտարկության: Բայց գտնելով մի երկաթի կտոր՝ Գևորգը կարողանում է բանտի պատի մեջ երեք տարվա ընթացքում անցք փորել և փախչել ընկերների հետ:

Նրանք հասնում են Առաքելոց վանք՝ իրենց հայտնվելով մեծ ուրախություն պատճառելով Հովհաննես վարդապետին: Վարդապետը երկար ժամանակ փախստականներին պահում է վանքի նկուղներում, ապա հրացաններ տալով՝ ուղարկում Աղբյուր Սերոբի մոտ:

Աղբյուր Սերոբի եղերական մահից հետո Գևորգը դառնում է Անդրանիկի զինակիցն ու մարտական ընկերը:

Բերդակի, Մազրայի, Նորաշենի կռիվներին նրա հրամանատարությամբ քաջամարտիկների տարած հաղթանակները Գևորգ Ադամյանին դարձրին ազգային հերոս: Նա նաև Անդրանիկի մղած մարտերի մասնակիցն էր, հատկապես Բշարե Խալիլի սպանության և Առաքելոց վանքի կռիվների ժամանակ:

Գևորգ Ադամյանը, Մուրադ Խրիմյանը, Սմբատ Բորոյանը և մյուս քաջամարտիկները ինքնապաշտպանական անհավասար ծանր մարտերում բազմաթիվ անգամ իրենց խիզախության ու անձնազոհության ապացույցներն էին տվել

մինչև այն ճակատագրական գիշերը, երբ մթամած ջրերի վրայով լռությամբ սահող նավակը նրանց տանում էր դեպի հանդիպակաց ափ, դեպի Տարոն:

...Դեռ նոր էին ափ դուրս եկել քաջերը, երբ Կծվակ գյուղում դարանակալած թուրքական զինվորական մի քանի ջոկատներ կրակ տեղացին նրանց վրա: Երբ թվում էր, թե քաջորդիների պարտությունն անխուսափելի է և մահը պարտադիր՝ նրանք հաղթում են: Ետ մղելով թուրքերին՝ Գևորգը իր ընկերների հետ դուրս է գալիս պաշարումից և բարձրանում Մարնիկա սարը:

Կառավարությունը լուրեր է տարածում, թե ֆիդայիները լրիվ ջախջախված են: Թուրքերն ու քրդերը, իրենց միանգամայն ազատ զգալով ֆիդայիների հանդեպ ունեցած սարսափից, ավելի կատաղի են դարձնում հայ գյուղերի թալան-ավերը:

Որպեսզի ցույց տա, թե պայքարող ֆիդայիները դեռ կան և կարող են շարունակել կռիվը, Գևորգը մենակ իջնում էր լեռներից, որ բոլորը տեսնեին՝ ինքը ողջ է և որևէ մեկից ահ չունի: Նա հանկարծակի հայտնվում էր որևէ քրդական գյուղում, մտնում ավազակությամբ ու դաժանությամբ հռչակված որևէ աշիրապետի վրանից ներս և... անհետանում: Կամ ձիով հայտնվում էր թուրքական կամ քրդական զինված ջոկատի դիմաց, շփոթություն առաջացնելով նրանց շարքերում՝ վարգում էր հեռու...

Քրդերը նրան կնքեցին «Գիշերային գայլ» անունով:

Գևորգը սակայն չի բավարարվում տեսիլքի նման երևալով ու անհետանալով: Նա դաժանորեն պատժում է նրանց, ովքեր կեղեքել ու դեռ շարունակում էին կեղեքել ժողովրդին: Այդպես իր արժանի պատիժը ստացավ քրդական Քոթանենց ցեղի աշիրապետ Յուսուֆը, որը իբր Օսմանյան դատարանի վճռով հայկական Փեթար գյուղը տիրել էր որպես իր կալվածքը և ստիպում էր գյուղացիներին վճարել իբր թե տասնյակ տարիների չվճարած տուրքը: Նա նույնիսկ ստիպեց, որ Փեթարում գյուղացիները իր համար դղյակ կառուցեն:

Չտանելով փեթարացիների արյուն-արցունքը՝ մի անձրևոտ, մութ գիշեր Գևորգը ընկերների հետ գնում է Մուշ, որ-

տեղ ապրում էր Յուսուֆը, մտնում է նրա տուն, սպանում նրան՝ ընտանիքի չորս անդամների հետ, թողնելով՝ «Զուլումիդ համար դու պիտի մեռնես քո սերունդով» գրությունը: Նրանք հեռանում են՝ չմոռանալով իրենց անունները գրել Յուսուֆի կըրծքի վրա թողած թղթի վրա:

Նույն պատմությունը կրկնվում է Ալվառինջ գյուղում, որն իր կալվածքն է հայտարարում բոզկանքցի բեգերից մեկը և ստիպում գյուղացիներին կառավարությանը հարկ տալուց բացի հարկատու լինեն նաև իրեն:

Գևորգը իր երկու ընկերների հետ մտնում է նրա տուն և սպանում: Ալվառինջի հայերը ևս ազատվում են ճորտությունից:

Ճիպրանցի Մեհմեդ Ալիին, որը մեծ ճանապարհների ավազակ էր և գտնվում էր Մանազկերտի բանտում, թուրք իշխանավորներն ազատում են և ուղարկում հայկական Գոմես գյուղը, որպեսզի իր ավազակներով և համիդիեներով դուրս քշեն հայերին և գյուղը բնակեցնեն քրդերով և թուրքերով:

Գևորգը հրամայում է հեռանալ ավազակին Գոմեսից, եթե ոչ... Մեհմեդ Ալին, որն ավազակների ավազակն էր և չգիտեր՝ ինչ բան է վախը, ահաբեկված հեռանում է գյուղից:

Եվ Ալաջան գյուղը գրաված Քեարիմ բեյն է արժանանում դաժան պատժի:

Չավուշը, առանց երկար-բարակ մտածելու, նետվում է վրեժխնդիր լինելու նաև կռիվներում զոհված իր ընկերների համար:

Գևորգ Ադամյանը համիդյան իշխանությունների համար մի իսկական պատիժ էր: Եվ նրանք որոշում են ամեն գնով հաշվեհարդար տեսնել նրա հետ:

Գևորգը զոհվում է Սուլուխ գյուղում Քեոսե Բինբաշու հրամանատարությամբ մեծաթիվ զինվորների հետ կռվելիս:

Սուլուխի կռվի մասին շատ է գրվել: Գրվել է նաև Գևորգի զոհվելու մանրամասները... Ընկերներն իրենց վիրավոր հրամանատարին հանում են կռվի գծից և տանում մինչև գետափ, որտեղ էլ նա կնքում է իր մահկանացուն:

Երբ զոհվեց, 36 տարեկան էր: Բիթլիսի ռուսական հյուպատոս Վ. Շիրկովը նրա մահվան առիթով գրեց.

«Այդ ֆիդային իր համարձակ գործունեությամբ ապշեցնում էր բոլորին»:

Իսկ բրիտանական դիվանագիտական ծառայության անդամներից՝ Հերդը գրել է.

«Գևորգը շատերի սիրելին էր: Գյուղացիները նրա օգնությամբ ազատվում էին բռնություններից ու կեղեքումներից».

Իսկ Արշակ Սաֆրաստյանը իր հուշերում այս տողերն է նվիրել նրան.

«Ընկավ անմահ հերոս քաջամարտիկ Գևորգ Չավուշը: Նա պահապան հրեշտակն էր Մշո դաշտին: Բոլոր հարստահարող, կեղեքիչ, բռնարար քուրդերը կտրկային նրա վրիժառությունից, և հայ գյուղացին կապրեր նրա վեհապանծ հովանիին տակ: Գևորգի մահով Տարոնը զրկվեցավ իր առյուծասիրտ զավակի ազատ հմայքի բարիքներից... Նա գնաց՝ իր սրին շաչող եղբայրների բողոքի ու վշտի բեռը վերցրած»:

...Ես ուզում եմ պատմել նաև Գևորգ Ադամյանի սիրո մասին: Նա անշուշտ սրբությամբ պահում էր ֆիդայական երդման բոլոր կետերը: Նա նվիրվել էր ժողովրդին և սեփական անձի հուզումները միայն ու միայն կարող էին ներհյուսված լինել ժողովրդի տառապանքը թեթևացնելու գաղափարին:

Բայց, ահա, մարդը սիրահարվում է: Գուցեև նա կարողանար հաղթահարել իր զգացմունքները, եթե Մշո դաշտի Հեղին գյուղի բնակիչ Վարդանի աղջիկ գեղեցկուհի Եղիսաբեթն ինքը նույնպես խենթի նման սիրահարված չլիներ Գևորգ ֆիդայուն: Բայց սրբազան ու անխախտ օրենք էր, որ եթե մարդը մինչև ֆիդայի դառնալը և երդում տալը ամուսնացած չէ, ուրեմն հավիտյան պիտի ամուրի մնա:

Գևորգը պիտի արժանի լիներ իր երդմանը: Նա ամեն գնով պիտի սպաներ իր էությունը տակնուվրա անող սերը: Նա թողնում է Սասունը և ժամանակավոր տեղափոխվում Վասպուրական, որպեսզի գայթակղություն չունենա հանդիպելու գեղեցկուհի Եղիսաբեթին:

Եղիսաբեթի հայրը ուզում է աղջկան պսակել ուրիշ մի երիտասարդի հետ, որը ոչ մի կապ չուներ ֆիդայության հետ: Եղիսաբեթը հրաժարվում է ամուսնանալ և գնում է Ս. Հովհաննու վանքի վանահայր Մկրտիչ վարդապետի մոտ, որն իր մոր-

եղբայրն էր: Աղջիկը վարդապետին խոստովանում է իր սերը և նաև հայտնում, որ որևէ ուրիշ մեկի հետ չպետք է ամուսնանա, իսկ եթե ստիպեն՝ ինքնասպան կլինի: Բայց նախքան մեռնելը, ինչ գնով էլ լինի, պիտի տեսնվի Գևորգի հետ:

Վարդապետը, տեսնելով, որ չի կարողանում համոզել աղջկան տուն վերադառնալ և ամուսնանալ հոր ընտրած փեսացուի հետ, նաև ազդվում է նրա վշտից, լուր է ուղարկում Գևորգ Չավուշին, թե այս ամենի մասին ի՞նչ է մտածում:

«Արեք, ինչ կուզեք, ինչո՞ւ ինձի կհարցնեք, ես պսակված եմ իմ հրացանիս հետ», – այս պատասխանը տալուց և լրաբերին ետ ճամփելուց հետո՝ քաշվում է մի անկյուն և... լալիս:

Քաջազուն հոգին իր մեծ սիրո առջև՝ անզոր և լալագին...

Մանուկն ու Գալեն, չդիմանալով ընկերոջ տառապանքներին, բերում են Եղիսաբեթին, հրավիրում Ս. Կարապետ վանքից Ստեփան վարդապետին և անտառի խիտ թավուտում կատարում երկուսի պսակադրությունը: Գալեն դառնում է քավոր, Մանուկը՝ հարսնեղբայր:

...Երբ Գևորգը զոհվում է Սուլուխի կռվի ժամանակ, նրա կինը և փոքրիկ որդին՝ Վարդգեսը, գտնվում էին Դաշտի գյուղերից մեկում: Գևորգի մարտընկերներին հաջողվում է փրկել նրա կնոջն ու երեխային, հասցնել Վան, այնտեղից Պարսկաստան և ապա ուրիշ գաղթականների հետ Կովկաս: Ճանապարհին երեխան մահանում է: Եղիսաբեթը երիտթուրքերի հեղաշրջումից հետո վերադառնում է հարազատների մոտ, իսկ 1915 թվականի կոտորածների ժամանակ առևանգվում է քրդերից: Այսպես կորսվում է նրա հետքը: Մեռե՞լ էր գեղեցկուհի Եղիսաբեթը, թե՞ ծվարել էր ինչ-որ մի կեղտոտ քրդի կեղտոտ վրանի տակ և համակերպվել իր վիճակին, հայտնի չէ:

Կորած, անհետացած մարդկային մի ճակատագիր... Որքաննե՜րն այդպես:

Երբ քրդերը թուրք կառավարողների խրախուսանքով գալիս էին գրավելու հայկական հողերը, գրավված գյուղերը

դարձնելով կրկնակի հարկատուներ, գյուղացիներն էլ էին ելնում՝ պաշտպանելու իրենց ազատությունը թուրք կառավարության և քուրդ աշիրապետների կրկնակի ստրկությունից: Եղել են դեպքեր, որ 50–60 հրացանով գյուղացիք կռվել են 2000 քրդերի դեմ և կարողացել են դուրս վռնդել նրանց իրենց գյուղի սահմաններից: Նրանց զենքն այնքան չնչին էր և իրենք թվով համեմատած թշնամու հետ այնքան քիչ էին, բայց, արի ու տես, որ հաղթում էին: Շատերը զոհվում էին, բայց կարողանում էին պաշտպանվել այնքան, մինչև լեռներից իջնում էին քաջորդիները:

Ի դեպ. արևելահայերը, ցանկանալով օգնել սասունցիներին, խմբեր կազմելով՝ գալիս էին Արևմտահայաստան: Նրանք մեծ մասամբ համալսարանավարտ երիտասարդներ էին, բժիշկներ, ճարտարապետներ, նույնիսկ մեծահարուստների զավակներ:

Գոյամարտը շարունակվում էր և տարածվում ողջ Հայաստանով:

Իսկ հայ ժողովրդի մտավորական զավակները չէին դադարում *Հայկական Հարցը* հասցնել եվրոպական բարձր ատյաններ...

Սակայն ապարդյո՛ւն:

Ես դեռ քեզ կպատմեմ քաջերի մասին, որ հանկարծ երբևէ չմտածես, թե քո ժողովուրդը միայն հնազանդ, անմռունչ մորթվել է...

Ների՛ր: Ես քեզ միայն հպանցիկ, ցաք ու ցրիվ պատմեցի Հայոց Գոյամարտի մասին, որն հերոսներ ծնեց՝ արժանի հարգանքի ու խնկարկման, հիացմունքի ու սիրո: Նրանցից ընդամենը մի քանիսի անունները ես տվեցի, բայց հավատա, որ նրանք անչափ շատ էին... Ես դեռ առիթ կունենամ պատմելու նրանց մասին և դու նորից առիթ կունենաս հիանալու նրանցով ու հոգուդ խորքում պահելու նրանց հիշատակը...

Նրանց մասին հիշողությունը դու պիտի կտակես հաջորդ սերունդներին և պիտի առավել քան հպարտ լինես, քան-

զի նրանք գեղարվեստական գրքերի էջերից հառնող երևակայական հերոսներ չեն, այլ պայքարի թոհուբոհի մեջ թրծված քաջամարտիկներ, որոնցից այսօր կարող ենք ստանալ արժանապատվության, ազգասիրության, հայրենասիրության սքանչելի հավատամքը:

Դո՛ւ և ե՛ս:

Հայ ժողովրդի պատմությունը լի է արժանավորների ճշմարիտ կերպարներով: Սակայն, այսօր, ես քեզ պատմեցի միայն պատմական որոշակի հատվածում եղեռնի երախը նետված ժողովրդի ծոցից ելած քաջորդիների մասին: Եվ դեռ կպատմեմ:

Քիչ համբերի՛ր:

Գ.

ՆՐԱՆՔ, ՈՐ ԵԿԱՆ...

(1908 – 1910)

Նրանք, որ եկան, երգում էին Մարսելյոզ և կոկորդ պատռելով՝ ճչում էին *«Ազատություն, հավասարություն, եղբայրություն»* կարգախոսը: Հավատի խորանի դիմաց միշտ խնկարկող հայերը հավատացին, թե, ահա, սրանք, որ եկան, իրենց չարչրկված հոգիների դիմաց բացելու են ազատության լայն դարպասները: Օսմանյան փլուզվող կայսրությանը պակասում էին հենց սրանք, որ եկան՝ կոչելով իրենց *Երիտասարդ թուրքեր*: Եկան, որ հաստատեն *«Իթթիհաթ վե թերագգը»* *«Միություն և Առաջադիմություն»*, առաջադիմության հետ ոչ մի կապ չունեցող, կուսակցության զարհուրելի ուժը: Եկան և հեղափոխական էին: Ատում էին սուլթան Համիդին և, չնչին արյուն թափելով, հասան իշխանության: Սահմանադրությունը, որ մերժել էր սուլթանի բռնակալ վարչակարգը 1877 թվականի ռուս-թուրքական պատերազմի ընթացքին՝ նորից հաստատվեց: Նրանք եկան, որ սահմանադրության ետևում թաքնված՝ հեղափոխական իրենց մոլուցքով, ընդհատակում գործող դավադրական գաղտնի խմբերով, հավատարմության իրենց երդումներով, միաձույլ և հուժկու ոճրագործ ձեռքերի մեջ պահած, տեսանելի ու անտեսանելի երկսայրի սուրը իջեցնեն իրենց եղեռնածին գաղափարների ճամփին հայտնված մի ազգի գլխին, որը միամիտ ու հավատավոր բնավորությամբ՝ զբրկաբաց ելավ նրանց ընդառաջ: Պատրանքների ու հույսերի միջև մշտապես օրորվող հայը չսթափվեց նույնիսկ այն ժամանակ, երբ...

...«Իթթիհաթ վե Թերագգը» *«Թանին»* թերթում Հյուսեին Ջահիդ անունով կատաղի մի կուսակցական գրեց *«Միլլեթը հաքիմե»*՝ տիրապետող ժողովուրդ տեսության բարբաջանքը, ըստ որի՝ Օսմանյան պետության բոլոր ազգերը պիտի անվերապահորեն ենթարկվեն տիրապետող թուրք ազգին, ապա թե ոչ...

Մեկը մյուսի ետևից գումարվում էին *«Իթթիհաթ վե Թերաքզզի»* համագումարները, որտեղ վերջնականապես ճշտվում էր նրանց գաղափարների կիզակետը հանդիսացող ազգային հարցը. *«Թուրքիան՝ թուրքերին... Մենք տիրապետող ազգ ենք և միշտ կմնանք տիրապետող....»:*

«Թանին» թերթի մշտական բարբաջանքները վերջապես հայերին և հույներին կարողացան սթափեցնել իրենց թըմբիրից և հասկացնել, թե երիտթուրքերի նետած խայծը կուլ էին տվել մեծ ախորժակով, և հարց էր, թե կոկորդներն արյունոտելու գնով անգամ՝ կկարողանայի՞ն ազատվել... Երեսփոխանական ժողովի նիստերի ժամանա՞կ պիտի ապացուցեին, թե *«Միլեթը հաքիմեի»* գաղափարը հակառակ է սահմանադրությանը և առավել հակառակ *«Ազատություն, հավասարություն, եղբայրություն»* հեղափոխական կարգախոսին, որով երիտթուրքերը, կոկորդ պատռելով, ասպարեզ իջան...

Բայց ովքե՞ր էին թուրք մեջլիսի երեսփոխանները: Նորից նրանք՝ երիտթուրքերը... Եվ ընդամենը մի քանի հույն, արաբ, հայ պատգամավորների ձայները անլսելի շշուկի նման անկարևոր էին ու չնչին...

Որովհետև...

Նրանք, որ եկան, ունեին իրենց հիվանդ մտասևեռումը: Նրանք սիրում էին երգել իրենց կատաղի երգերից մեկը՝ ընկնելով զգայական հիվանդագին հափշտակվածության մեջ. *«Ելե՛ք, արշավանքը սկսվեց, տղերք, Կովկասի վրա ենք հարձակվում մենք, Թուրանն է սպասում մեզ: Մի կողմից Կահիրեն է, մյուսից՝ Բաքում, Կարս... Մի կողմից՝ Հինդ, Աֆղանստան, մյուսից՝ Մարոկկոն է սպասում մեզ»:*

...Երբ ես մտածում եմ նրանց գաղտնի կուսակցական ժողովների մասին, որտեղ նրանք որոշում էին իրենց ճանապարհին հայտնված ազգերի ճակատագրերը, տեսնում եմ կիսախավար մի միջավայր, որի կենտրոնում կլոր մեծ սեղանն է կանաչ ծածկոցով՝ բանված արծաթագույն կիսալուսնով ու աստղով:

Սեղանի շուրջը նստած են միմյանց կողքի ուս-ուսի տված կարմիր թասակավորներ և ճերմակ չալմայավորներ: Սեղանի կանաչ հարթության վրա նրանց ձեռքերն են: Ոմանք

հանգիստ են թվում, բայց զգացվում է նրանց ներքին լարվածությունը: Ոմանք կատաղի գալարումների մեջ են: Ոմանք սողում են, և ոմանք բռունցք են դարձել ու ջղաձիգ են: Սակայն սեղանի կանաչ տարածքի վրա բոլորն էլ անգույն, անարյուն ու նուրբ մտավորական մարդու ձեռքեր են... Դրանք Թալեաթի, Էնվերի, Ջեմալի, Նազըմի, Շաքրիի, Շյուքրիի և մյուս դահիճների ձեռքերն են... Երիտթուրքերի պարագլուխների ձեռքերն են...

Ուշադիր լսիր, թե ինչ են խոսում նրանք: Հավաքիր քո ողջ կամքը և լսիր, որ հասկանաս անհասկանալին, որ ըմբռնես անըմբռնելին: Ոչինչ հորինված չէ: Ժողովի մանրամասն սղագրությունը մինչև հիմա թուրքական արխիվներում է:

Ժողովը բացում է բոլոր ժամանակների ամենանողկալի դահիճներից մեկը...

ԹԱԼԵԱԹ – Հեղափոխությունը հաջողությամբ իրագործելուց հետո, իշխանությունը գրավելուց հետո, սահմանադրությունը վերականգնելուց հետո այսօր մեր *«Իթթիհատ վե թերաքզի»* կուսակցության սրբազան խնդիրը պիտի լինի խմբագրել սահմանադրության այն կետերը, որոնք վերաբերում են ազգային հարցին: Այսօր մեր ժողովի նյութը այս է: Սա պարզաբանել վստահենք մեր եղբայր, մեծ մտավորական, մեր ազգի պարծանք Զիա Գեոք Ալփին:

ԶԻԱ ԳԵՈՔ ԱԼՓ – Մեր գլխավոր նպատակը այսօր Կովկասյան լեռնաշղթայից մինչև Պարսից ծոց, Ալթայան լեռներից անդին մինչև Խաղաղ օվկիանոսի ափերը և դեպի արևմուտք, մինչև Միջերկրական ծովն ընկած տարածությունները միավորել և ստեղծել Թուրքական մի ամբողջական պետություն: Վոլգայի, Թաթարստանի, Սիբիրի, Թուրքստանի գրավումը մեր հաղթանակների պսակը պիտի լինի... Սակայն թուրքերի հայրենիքը ոչ Թուրքստանն է և ոչ էլ Թուրքիան: Այլ մի հավերժական երկիր է այդ հայրենիքը, որը կոչվում է Թուրան... և այնտեղից եկել են մեր նախահայրերը: Սակայն պիտի խոստովանենք. Թուրքիայում իսկական, մաքուր թուրքերիս թիվը, համեմատած կայսրության մեջ բնակվող մյուս ցեղերի հետ, քիչ է: Ընդամենը տասը տոկոս: Մեր կուսակցության առաջնահերթ խնդիրն է միավորել բոլոր թուրքերին մի հզոր համայնքի մեջ: Մենք հին

աշխարհակալների հետնորդներ ենք, սակայն դառնությամբ տեսնում ենք, որ Թուրքիո արևմտյան մասում իսկական թուրք գրեթե չկա: Ասիական Թուրքիայում դրությունն ավելի վատ է, վասնզի քրդերը, հայերը, հույները, արաբները, սիրիացիները, քաղդեացիները և ուրիշ շներ կազմում են բոլորի երկու երրորդը: Մեր ոգևորության աղբյուրը պիտի լինեն Աթիլլայի, Չինգիզ խանի, Օղուզ խանի սխրանքները: Մենք չպիտի մոռանանք, թե որտեղից եկան նրանք և ուր հասան: Վերջապես հասկանալ է պետք, որ թուրք ազգը ավելի կարևոր է, քան իսլամը: Գլխավորը ռասայական հպարտությունն է: Մեր նախնիները թուրքերին հասցրեցին Ալթայից մինչև Մարմարայի ափերը և դեռ անդին... Չպիտի՞ երազենք արժանի լինել նրանց:

ՋԵԼԱԼ ՆՈՒՐԻ – Իրաքը, Եմենը լրիվ թուրքական պետք է դառնան: Այնտեղ պետք է տիրապետի միայն թուրքերեն լեզուն: Թուրքերի գոյության համար անհրաժեշտ է թուրքացնել արաբական հողերը: Պիտի արաբների արթնացած ազգասիրական ելույթներին վերջ տալ: Արաբները դժբախտություն են Թուրքիայի համար: Թուրքական պատերազմական նվաճող ձին ավելի արժե, քան մի այլ ազգի մարգարե: Մեր խնդիրն է ոչ թուրքի դեմ՝ թուրքին պաշտպանել:

ԹԱԼԵԱԹ – Միայն արաբները չեն, հայերն էլ են սեպի նման խրված մեր գաղափարների իրագործման ճանապարհի կենտրոնում: Մենք դեռ որքա՞ն պիտի հանդուրժենք *«Հայկական հարցը»*: Լավ մտածենք սրա մասին, եղբայրներ: Աբդուլ Համիդից մենք առաջ չպե՞տք է անցնենք: Մենք լիակատար հաղթության կհասնենք, եթե մեր կայսրությունը դարձնենք զուտ թուրքական՝ քրիստոնյա ազգերին վերացնելով: Անատոլիան մեր երկրի կենտրոնն է, իսկ այնտեղ հայերն են:

ԱՀՄԵԴ ՌԻԶԱ – Արդար է: Ես այնքան եմ սիրում արդարությունը, որ պատրաստ եմ սեփական ձեռքերով կոտորել բոլոր հայերին:

ԹԱԼԵԱԹ – Մենք հայերին, որոնք իրենց մեզ նման հեղափոխական են համարում, պիտի ասենք. մենք ձեզ չենք ճանաչում հայ հեղափոխականներ, այդ պատճառով այսուհետև մենք հեղափոխական ենք համարելու 15–70 տարեկան արական սեռի ամեն մի հայի ու անխնա կոտորելու ենք: Ամբողջ

երկրագնդի երեսին որտեղ մի հայ պատահի մահմեդականի՝ պիտի սատկի:

ՋԵՄԱԼ – Ես համաձայն եմ *«Մեշվերեթի»* թերթի խմբագրի հետ, որ գրեց ու ապացուցեց, թե հայկական մշակույթ առհասարակ գոյություն չունի: Համաձայն եմ նաև *«Միրզա»* թերթի հարգարժան խմբագիր Մուրադ բեյի կարծիքին, որն իր թերթի անցյալ համարում գրել էր, թե *«բացի թուրքերին ծառայելուց՝ հայը այլ առավելություն ունենալ չի կարող»*:

ԹԱԼԵԱԹ – Հայկական հարցը լուծելու համար պետք է ոչնչացնել հայերին: Ոչ թե հարկավոր է նրանց թուրքացնել, իսլամի հավատին բերել, այլ ընդհանրապես բնաջնջել մինչև վերջին անհատը: Հանուն Թուրանի՝ հայ անունը պիտի մոռացվի: Մենք նրանց պիտի ասենք . *«Եթե դուք՝ հայերդ, բարենորոգումներից ձեռք չքաշեք, մի բան կկատարվի, որի համեմատությամբ Աբդուլ Համիդի ջարդերը երեխայական խաղ կերևան»*:

ԷՆՎԵՐ – Այսօր մենք հավաքվել ենք, որպեսզի երիտթուրքական կենտրոնի մեր կոչը հրապարակենք ողջ մուսուլմանության մեջ: Ահա խսեք. *«Մահմեդականներ, բարձրացնենք մեր ձայնը և թուրը աջ ձեռքում, հրացանը ձախ ձեռքում, ռումբերը գրպանում ու ալլահի անունը մեր շուրթերին՝ հոչակենք «Իթթիհատ վե թերաքգրի» պահանջը. Օսմանյան կայսրությունը՝ օսման մահմեդականներին, Եգիպտոսը՝ Եգիպտոսի մահմեդականներին, Պարսկաստանը՝ Պարսկաստանի մահմեդականներին, Կովկասը՝ Կովկասի մահմեդականներին... Մեկ հայրենիք, մեկ ժողովուրդ, մեկ մշակույթ անծայրածիր Թուրանում»*:

ԹԱԼԵԱԹ – Մահմեդականների ու քրիստոնյաների միջև հավասարությունն անհնար է, որովհետև դա անիրականանալի գաղափար է: Վկա Շարիաթը, մեր անցյալի ամբողջ պատմությունը: Քրիստոնյաներին օրինական օսմանցի, իսլամի հավատավոր դարձնելու անհաջող փորձ կատարել ենք: Ուրեմն հավասարություն չի կարող լինել:

ՋԵՄԱԼ – Թուրքիան պիտի լինի արևելքում: Սա է մեր նշանաբանը: Պիտի ստեղծվի մեծ Թուրանը, որտեղից եկել են մեր նախահայրերը: Այսօր Անդրկովկասի, ինչպես և Կասպից ծովից դեպի արևելք տարածվող ընդարձակ հողերի վրա թուրք

ցեղեր են ապրում, ավաղ, դեռ Ռուսիո լծի տակ: Մեր քաղաքական հորիզոնը դեռ բաց է մնում այդ ուղղությամբ: Ուրեմն մեր սրբազան պարտքն է իրականացնել թուրք ցեղերի ազատագրումը Ռուսաստանից և աջակցել նրանց միասնությանը, որպես Թուրանի նույն ժողովուրդ:

ԷՆՎԵՐ – Այս ծրագրի իրականացման նախապայմանը *Հայկական Հարցի* արմատական լուծումն է:

ԶԻԱ ԳԵՈՔ ԱԼՓ – Թուրան ստեղծելու մեր գաղափարը ժամանակավոր և անցողիկ նպատակադրում չէ, այլ ստրատեգիական նշանակություն ունեցող դիրքորոշում: Մեր գաղափարը՝ հանուն Թուրանի, հանուն թուրքիզմի, մարտնչող գաղափար է:

ԹԱԼԵԱԹ – Այսօր մենք պետք է ընդունենք մեր վճիռները իրագործելու հիմնական բանաձևերը, որոնք կներկայացնի դոկտոր Նազիմը:

ՆԱԶԻՄ – Համաձայն բնության օրենքների, ստորադաս ցեղերը պետք է գերադաս ցեղերին կեր դառնան: Կոտորելը ազնվականության ցասումն է ստորագույն ցեղերի դեմ, որոնք դիտվել են որպես անարգ թշնամի: Եթե որոշվել է ջարդերի ծրագիրը, այն պետք է գործադրել ամբողջությամբ՝ առանց տարվելու զգացմունքային ազդեցություններով: Սա անգթություն չէ, այլ գերադաս տարրի ոգու արտահայտություն: Ռազմական անհրաժեշտություն է ժողովուրդների կոտորածը՝ առանց տարիքի ու սեռի խտրության: Թշնամի ցեղի երեխաներին կոտորելը ազգային պաշտպանության կանխարգելիչ միջոց է: Իրենց մայրերի արգանդներում իսկ՝ այդ երեխաները ապրելու անարժան են, որպես աստվածամերժ շառավիղներ: Կայսրության գոյությունը կախված է երիտթուրք կուսակցության ուժից և բոլոր ուրիշ հակամարտ գաղափարների ճնշումից: Թուրքիան՝ միայն թուրքերին: Շատ արագ արյան ու սրի միջոցով պիտի որոշվի հայերի ճակատագիրը: Քրիստոնյաները պիտի զինաթափվեն, իսկ մահմեդականները պետք է միշտ զինված լինեն: Պետք է կասկածելիները տեղահանվեն և ոստիկանությանն ու բանակին ազատություն տրվի: Կովկասից ու Քրդստանից պետք է քաջալերել ներգաղթը և նրանց տալ քրիստոնյաների հողերը: Պետք է արգելել քրիստոնյաների եկա-

մուտները: Պետք է արգելել ազատագրական գաղափարների տարածումը: Կրոնական ամեն տեսակ քարոզչություն, բացի իսլամից, նույնպես պետք է արգելվի: Կայսրության լեզուն թուրքերենն է: Փոքրամասնությունների լեզուն պետք է պարտադիր թուրքերենը լինի: Սա թուրքացման գլխավոր պատվիրանն է: Իսկ ամբողջ պատվիրանն՝ այսպես. թուրքացրու ընտանիքիդ անդամների անունները, խոսի՛ր թուրքերեն, աղոթի՛ր թուրքերեն, երեխաներիդ թուրքական դպրոց ուղարկիր, բարեկամություն արա միայն թուրքերի հետ: Մահմեդականության գլխավոր ուժը, գլխավոր պաշտպանը, գլխավոր ներկայացուցիչը Օսմանյան Թուրքիան է, որը պիտի պաշտպանել միայն թուրքիզմի միջոցով: Այս նպատակով էլ մահմեդական արաբներին, մահմեդական պարսիկներին, մահմեդական քրդերին, կովկասյան տարբեր մահմեդական ցեղերի և թաթարներին շուտափույթ թուրքացնել: Իսկ քրիստոնյա հայատակներին՝ շուտափույթ ոչնչացնել: Կեցցե՛ թուրք ցեղի միությունը: Մենք հեղափոխականներ ենք: Հեղափոխությունը չգիտե ինչ է կարեկցանքը: Մենք պարտավոր ենք արմատախիլ անել անհարազատ ազգերին և մաքրել մեր հայրենիքը: Սա է նշանաբանն ու նպատակը մեր հեղափոխության: Կեցցե՛ մեր նպատակը:

ԲՈԼՈՐԸ – Կեցցե՛:

ԷՆՎԵՐ – Մեր նախնիները 400 ձիավորով կարողացան հիմնել աշխարհածավալ կայսրություն, մի՞թե մենք չենք կարողանալու Մեծ Թուրան ստեղծել մեր հզոր բանակների հրով ու սրով: Մեր ազգի նույնիսկ ամենաանշան բարօրության համար հարկավոր է զոհել ամբողջ աշխարհի շահերը: Չպիտի մտածենք երբեք մարդկության մասին: Մեզ ինչ, թե նա ինչ կլինի: Պարզապես մենք երկարատև պատերազմ պիտի մղենք հանուն մեր նպատակի: Եվ սրա համար փորձաքար է պետք, որի վրա մեր սրի զարկը ստուգվի ու Թուրան տանող մեր մեծ ճանապարհի արահետը բացվի: Ես կարծում եմ դա Ադանան պիտի լինի: Ադանան Համիդի կոտորածներից ազատվեց: Այնտեղ մեծ հարստություն կա կուտակված հայերի ձեռքում: Հայ վաճառականների նավերը, Միջերկրականի լայնքն ու երկայնքը, իսկ քարավանները աշխարհի չորս ծայրերը չափելով, երկ-

ռագնդի հարստությունն են լցրել իրենց պիղծ տները: Ադանան:

ԲՈԼՈՐԸ – Ադանան:

ՋԻԱ ԳԵՈՔ ԱԼՓ – Ահա իմ երդումը. *«Ուր որ դաջվեն իմ բայլերը՝ արյուն պիտի ժայթքի այնտեղից: Երկարած թաթիս տակ գարունները՝ աշնան և աշունները զնդանի պիտի վերածվեն: Եթե քարը քարի վրա թողնեմ՝ թող քանդվի ու ավերվի իմ սեփական օջախը: Մահը պիտի լինի գթություն, զենքս՝ իմաստություն, ավերումները՝ քաղաքակրթություն: Արդարությունը պիտի կապեմ սրիս ծայրին, քաղաքակրթությունը՝ ձիուս պայտին: Պիտի կործանեմ ամեն բան Թուրան տանող իմ ճանապարհին: Այնպիսի ավերակներ պիտի կերտեմ, որ տեսնողներն ասեն. այստեղով թուրքեր են անցել»:*

...Իմ պատանի բարեկամ, երբևէ լսե՞լ ես նման արտահայտություն. *«ավերակներ պիտի կերտեմ»*... Ինքդ դատիր այն ահարկու վտանգի անխուսափելիության մասին, որ օվկիանոսի փոթորկածին իններորդ ալիքի նման շուտով պիտի պայթեր հայոց գլխին և հազարամյակներով սրբագործված նրա կյանքը հիմնահատակ կործաներ:

* * *

... 1909 թվական, 14 ապրիլի: *«Կիլիկիայի գիշեր»*: Ադանայի երեսուն հազար հայության սպանդ:

Նախ բացվեցին բանտի դռները և մարդասպան ոճրագործների հարյուրավոր ոհմակներ դուրս մղվեցին եղեռնագործության զարհուրելի ասպարեզ: Կազմակերպվեցին տեղի հավատարիմ և անդրդվելի հանձնառու կազմակերպիչները: Կրոնավորների մոլեռանդ բազմությունները, որոնք, շարիաթի ու Ղուրանի դոգմաները բղավելով, գնում էին լողալու անմեղ ժողովրդի թափած արյան հեղեղներում... Զենք բաժանվեց թուրք

ազգաբնակչությանը, մահմեդական խուժանին... Ադանա հասցրվեցին կառավարական զորքերը...

Եվ սկսվե՛ց:

Բոլոր մուսուլմանները, ամենաբարձր պաշտոնյայից մինչև ամենահետին հանցագործն ու գռեհը, կրում էին ճերմակ չալմաներ, որ կրելու իրավունք ունեին միայն իսլամի գիտնական աստվածաբանները, որպես հավատի խորհրդանիշ, որպես խորհրդանիշ նաև բարձրագույն առաքինության... Եվ ահա այդ խորհրդանիշը՝ բոլոր մուսուլմանների գլխին՝ աստվածաբան մոլլաներից մինչև վերջին ոճրագործը, որին հանել էին բանտից:

Ջիհադը՝ մուսուլմանների սրբազան պատերազմը, հայտարարված էր: Ճերմակ չալմայավորները կատաղությամբ նետվեցին՝ կատարելու իրենց ազգային մեծ խնդիրը: Թուրքական մամուլը իր էջերը տրամադրեց՝ ոգևորելու ջիհադի ճերմակ չալմայավոր մարտիկներին:

Թող հիմա խոսեն օտար ականատեսները, որոնք պատմության մատյանում թողեցին Ադանայի կոտորածի իրենց ծանր հիշողության էջերը:

Ա. ԱԴՈՍՍԻԴԻԱ (Ֆրանսիական լրագրող, հույն) – Փողոցները գտնվում էին զինված թուրքերի իշխանության տակ... Հայերը սարսափահար թաքնվել էին իրենց թաղամասերում, որոնց դիմաց հավաքվել էին թուրքերը՝ կազմած կատաղի, անանցանելի պատնեշ... Ամեն կողմից լսվում էին կրակոցների ահռելի դղրդյուններ, որոնք հաճախ խլանում էին *«Մորթե՛ք... մորթե՛ք գյավուրներին...»* ամբոխի զարհուրելի բղավոցներից...

ՄԱՐԻԱ ՍՈՖԻԱ (Գթության քույր, կաթոլիկ միսիոներ) – Ամբողջ քաղաքով մեկ ճերմակ չալմայավորները հետապընդում էին սարսափից խելագարված ժողովրդին... Տղամարդիկ, կանայք, երեխաներ էին վազում ամեն կողմից, առանց որևէ նպատակի, շվարած, իրենց կորցրած՝ խփվում էին պատերին, ընկնում՝ կարծես կայծակնահար եղած... Նրանց սպանում էին հրացանազարկերով, ծանր փայտերով, մահակներով, կացիններով, քարերով...

ՈՒԻԼԻԱՄ ՉԵՄԲԵՐՍ (Ադանայում ամերիկյան միսիոներների ղեկավար) – Զինվորները հավասարապես գործում էին տականքի ու մոլլաների հետ... Սպանելուց, ոչնչացնելուց հետո տներին՝ տներն ու խանութները այրում էին, երբ ավարտում էին թալանը...կոտորածը շարունակվեց 15-ին և 16-ին... Ապա մի փոքր դադարից հետո նորից սկսվեց: Սա ամենից ահավորներից մեկը եղավ Հայոց տանջահար մարտիրոսության մեջ... Կոտորածը շարունակվեց նոր թափով... Ողջ քաղաքը՝ սպանդի, սարսափի, թալանի, հրդեհի, տոփոտ ցանկասիրության եռացող քուրա... որի նկարագրությունը ամենավառ երևակայությունն անգամ անկարող է պատկերել... Եղեռնի հզոր արյունաշաղախ ճահճի մեջ ընկղմված քաղաք, որը գրտնըվում էր տիրապետության տակ մարդկանց, որոնք այլևս ոչինչ չունեին մարդկային...

ՀԵՐԲԵՐՏ ԱԴԱՄՍ ԳԻԲՍՈՆ (Քահանա, Տարսոնի ամերիկյան դպրոցի ուսուցիչ, *«Նյու Յորք Հերալդի»* թղթակից) – Նրանք սլանում էին արյան բաղանիքով, սպանում էին, այրում էին՝ շնչահեղձ լինելով, ոտից-գլուխ արյան ու քրտինքի մեջ թաթախված ու ոռնալով գազանների նման... Արյան շմոլքից խելագարված գազանները լցվում էին տները, եկեղեցիները, դպրոցները, որոնք լիքն էին փախստականներով... Զոհերը, որոնց հաջողվում էր դուրս պրծնել փակ շենքերից, ընկնում էին նեղ փողոցների բավիղները՝ փնտրելով փախչելու ելք, բայց նրանց հանկարծ կանգնեցնում էին երկինք հասնող հրդեհի բոցերը կամ վիրավորների ու դիակների միմյանց վրա դիզված բլուրները... որոնք բարիկադների նման փակում էին ճանապարհը...

Ա. ԱԴՈՍՍԻԴԻԱ – Ապշեցնողը աննկարագրելի դաժանությունն էր, անբնական, անիրական ցինիզմը, որով թուրքերը ոչնչացնում էին մի ողջ ժողովուրդ... Նրանք չէին բավարարվում միայն սպանելով... Մարդուն նրանք ենթարկում էին հրեշավոր կտտանքների, որ լսեն դժբախտների աղեկեզ բղավոցները, աննկարագրելի ցավերի ոռնոցը... Ով երբևէ տեսել է ջիհադը, անցել նրա միջով և պատահաբար ողջ մնացել, պիտի մինչև օրերի վերջը քարշ տա իր կյանքի մղձավանջային գոյու-

թյունը... Ջիհադը՝ քրեական օրենսգրքի մեջ հիշված և չհիշված բոլոր ոճիրների կենդանի մղձավանջային գոյությունը...

...Հարցնում ես, թե ինչպե՞ս այս ականատեսները ողջ մնացին մահվան ու զարհուրանքի եռացող քուրայում: Նրանք պաշտպանված էին իրենց շենքերի տանիքներին փողփողացող օտար, հզոր պետությունների դրոշներով: Նրանք քաղաքի տարբեր մասերում գտնվող այդ շենքերի պատուհաններից էին դիտում կոտորածը... Նրանք ամեն բան տեսնում էին... Նրանք օգնել չէին կարողանում:

Բայց նախքան օտարների այս սրտացավ պատմությունն ավարտվելը, չարաշահելով քո համբերությունը, իրական մի դրվագ ևս հանձնեմ քո ունկնդրումին:

Հիշո՞ւմ ես, ականատեսներից մեկը ասաց, որ 15-ի և 16-ի կոտորածներից հետո՝ դադար եղավ... Այդ դադարի մասին պիտի քեզ պատմեմ հիմա:

Առաջին կոտորածից հետո դադար եղավ, որովհետև ադանացի հայերը կռվում էին: Նրանք ամեն կողմից պաշարված էին զինվորներով, ոճրագործ տականքով, գրգռված մոլլաների ու գռեհի կատաղի խմբերով, հրդեհների բոցերով, բայց նրանք կռվում էին, պաշտպանվում էին և փախուստի էին մատնում հրոսակախմբերին... Նույնիսկ չորս-հինգ հոգով կարողանում էին հաղթել մի մեծ զինվորական ջոկատի՝ դուրս պրծնելով շրջապատումից, օգնության էին հասնում անպաշտպան հայրենակիցներին... Հակառակ իրենց գեր-գերազանց ուժերի՝ թուրք բանակն ու խուժանը չկարողացան խորտակել հայոց թաղերը պաշտպանող նրանց դիմադրությունը: Կյանքի ու մահվան կռիվ էր, ու հաղթողը մահվան պիղծ աչքերի մեջ նայող մահապարտներն էին:

Թուրքերը պարտվում էին: Նրանք դիմեցին խորամանկության: Հայերը, ինչպես միշտ, այդ խորամանկությունը հալած յուղի տեղ ընդունեցին: Որովհետև անգլիացի փոխհյուպատոսի միջնորդությանը չէին կարող չհավատալ...Չէի՞ն կարող: Որովհետև հայ ժողովուրդը հազար անգամ խաբվելուց հետո

խաբվում է հազարմեկերորդ անգամ օտարի տված *«Ազնիվ խոսքի»* դիմաց:

Թուրքերը, տեսնելով հայերի դիմադրությունը, տեսնելով իրենց խայտառակ պարտությունը, դիմեցին անգլիացի այդ հյուպատոսին, որ միջնորդ լինի՝ քրիստոնյաների և մուսուլմանների միջև խաղաղություն հաստատելու, խոստանալով անվտանգություն:

Խոստանալով զինաթափվել:

Միայն թե՝ թող առաջինը զինաթափվեն հայերը:

Զինաթափվեցի՛ն: Միայն հայե՛րը:

Վրեժի ահարկու խելագարությամբ բռնված թուրք բանակը, ահռելի խուժանը, նույն օրն իսկ հարձակվեց այլևս անպաշտպան մնացած հայոց թաղերի վրա՝ ենթարկելով դժոխային նախճիրի:

...Իմ պատանի բարեկամ, ես տեսնում եմ, որ դու զայրացած ես ավելի՝ քան ահաբեկված: Ես քո ծանր սեղմված շուրթերին կարդում եմ ճակատագրական հարցը, ուղղված զոհվածների անհանգիստ հոգիներին. «Ինչպե՞ս հավատացիք, որ անմեղի արյամբ զինովցած մուսուլմանի հարբածությունը կանցներ հեշտ ու հանգիստ...»:

Մի դրվագ ևս՝ և կփակեմ Ադանայի եղեռնական պատմության էջը նույնպես:

Մի հայ երիտասարդի, որի անունը անհայտ է, հաջողվեց նետվել գետը և լողալ դեպի Մերսինի նավահանգիստը, դեպի Միջերկրական ծով...

Քաղաքը, մի հզոր կրակե օվկիանոսի վերածված, քրքջում էր երիտասարդի ջանքերի վրա... Բայց նա լողում էր դեպի փրկություն... Ո՛չ իր փրկությունը... Ո՛չ...

Այն ժամանակ, երբ երեսուն հազար հայ զոհվեց Ադանայի ու նրա գավառի բոլոր գյուղերում, նավահանգիստ Մերսինի առջև խարիսխ նետած վեց եվրոպական պետությունների տասնյոթ ռազմական հածանավեր ու զրահանավեր՝ հինգ անգլիական, չորս ֆրանսիական, երկու գերմանական, երկու իտալական, մեկ ավստրիական, մեկ ռուսական, երկու ամերիկյան, հետևում էին, թե ինչպես իրենց աչքերի առջև սպանդա-

նոցի էր վերածվում Ադանան և կատաղի բոցերի մեջ մոխրի էր վերածվում Հայոց բարգավաճ Տունը:

Ադանացի այդ երիտասարդին հաջողվեց լողալով հասնել նրանց... Նա խնդրում-աղաչում էր՝ մի նավից մյուսը անցնելով... որ նրանք դեպի ափ արձակեին թնդանոթային գոնե մի քանի կրակոց... որ թուրքերը այդ կրակոցները...

Հզոր ռազմանավերի հզոր տերերը պատասխանեցին, թե միջազգային միջամտություն ի նպաստ հայերի՝ չի թույլատրված... Պատկերացնո՞ւմ ես. թուրք դահիճների վայրագ մոլուցքի դիմաց՝ նման սառնասիրտ պատասխան...

«Իսկ այս ջարդը, – աղաղակում է տղան, – *այս ջարդը թույլատրված է»....*

Նրանք պարզապես թոթվում են ուսերը:

Հասկանո՞ւմ ես դու... Երեսուն հազար մահերի դիմաց նրանք քաղաքավարի թոթվում են ուսերը: Եվ որովհետև իսկապե՛ս քաղաքակիրթ էին, նրանք երիտասարդին առաջարկում են, քանի որ այդքան քաջ է և այդքան լավ լողորդ է, կարողացել է հասնել իրենց նավերին՝ կփրկեն իր կյանքը:

Իսկ այդ տղան, որի անունը այդպես էլ ոչ ոք չիմացավ, թքեց նրանց քաղաքակրթության ու բարության վրա և, պառկելով Միջերկրականի ջրերին, ալիքների հետ հասավ հեռու-հեռու մի տեղ և դանդաղ իջավ նրա խորքերը...

...Մնաք բարով, սիրելի՛ներս... Շուտով կմիանամ ձեզ հավերժական ձեր ճանապարհին...

Իսկ ծովը զգում էր արդեն. հավաքվում էին շնաձկները իր ջրերի բոլոր խորքերից... Նրանք մեծ վտառներով լողում էին դեպի *Հայոց Ծոց...* Գալիս էին նրանք խրախճանքի... Նրանք առել էին մահվան ծանր գարշահոտը ու շտապում էին... Հոշոտված անթիվ, անհամար դիակներ՝ տրված գետի արյունոտ ալիքներին, գալիս էին ու գալիս, լցվում *Հայոց Ծոց,* որ շարունակվի խրախճանքը շնաձկների...

Ծովը, դուրս մղելով իր ընդերքներից շնաձկներին, օրորում ու փայփայում էր տղային, որը չուզեց փրկել իր կյանքն ու ապրել անտարբերության, ստորության եղկելի աշխարհում...

«Ազնիվ պատանի, ես քեզ կտանեմ հեռու իմ խորքերը, կթաղեմ հստակիս ծանր տիղմի մեջ... որ կեր չդառնաս շնածկներին...»:

Այսպե՛ս: Նրանք, որ իրենց կոչում էին երիտասարդ թուրքեր, տեսան և համոզվեցին, որ մեծ պետությունների հայկական ջարդերի նկատմամբ անտարբեր կեցվածքը շարունակվում է: Ինչպես համիդյան ջարդերի ժամանակ՝ հիմա նույնպես Ադանայի ոճրի հզոր, ամեհի տարողությունը իր ետևից չբերեց ոճրագործներին դատաստանի ենթարկելու անհրաժեշտություն:

Ուրեմն, պատեհ առիթ էր պետք, որ կրկնվի Ադանայի ոճիրը, այս անգամ արդեն ողջ Հայաստանով, որպեսզի մեկընդմիշտ վերանա ՀԱՅԱՍՏԱՆԸ և նրա հետ նաև *«Հայկական Հարցը»*:

Վերանա հայությունն ինքը:

Դ.

ՄԵՆՔ ԹՈՒՐՔ ԵՆՔ...

Նրանք, որ եկան, թուրքեր էին: Նրանք եկան՝ բացելու նույնիսկ համիդյան օրերին չտեսնված եղեռնի հզոր խորքերը՝ Ադանայի փորձաքարի վրա սրելով իրենց արյունածոր խիղճը: Նրանք, որ եկան, թուրքեր էին: Բայց ոչ միայն թուրքեր: Նրանք հեղափոխական էին, նրանք կուսակցական էին, նրանք առավել քան՝ թուրք էին:

Ես ուզում եմ, որ դու լսես, թե ինչ է պատմում նրանց մասին ՄԵՎԼԱՆ ԶԱԴԵ ՐԻՖԱԹԸ, նրանց ընկերը, իթթիհաթ կուսակցության հավատավոր, իրենց պես թունդ հեղափոխականը, որի հոգին, սահմռկած պաշտելի կուսակցության արյունարբու էությունից, ընդվզեց և նա՝ ճշմարիտ լրագրողի անկաշառությամբ, հեռացավ նրանցից: Այս արարքի համար նա անգթորեն հալածվեց, բայց կարողացավ մահից ազատվել՝ ժամանակին թողնելով մայրաքաղաքը: Հետո նա պատմեց իր հին ընկերների մասին: Ճշմարտության պարտադրանքով նա գրեց նրանց սև գործերի մասին և այն անփարատելի ողբերգության մասին, որ ապրեց բարի ու աշխատասեր մի ժողովուրդ, որի ճակատագրի անիվը անզսպելի թափով սկսեց հակառակը պտտվել երիտթուրք պարագլուխների զարհուրելի գաղափարները իրագործելու կատաղի ջանքերի շնորհիվ: Ոչինչ ավելի և ոչինչ պակաս չգրվեց նրա գրքի էջերում: Իր սրտի սրբազան պարտքն էր գրել ճշմարտությունը, և գրեց: Բայց շատ հաճախ, ինչպես ինքն է խոստովանում, նրա գրիչը սահմռկած դողաց իր ձեռքի մեջ և նա ստիպված վայր դրեց այն:

ՄԵՎԼԱՆ ԶԱԴԵ ՐԻՖԱԹԻ գրքի վերնագիրն է. «*ՕՍՄԱՆՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄՈՒԹ ԾԱԼՔԵՐԸ ԵՎ ԻԹԹԻՀԱԹԻ ՀԱՅԱՋԻՆՋ ԾՐԱԳՐԵՐԸ*»:

Երկար մի վերնագիր, երկա՞ր...

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

ՍԵՎԼԱՆ ՋԱԴԵ ՐԻՖԱԹ – 1914 թվական, հունիսի 28: Սարաևո: Մի սերբ ուսանող, իր ձեռքի ատրճանակի ավերիչ ուժը փորձելու մեծ փափագ զգալով, այն պարպեց ավստրիական գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի և իր դքսուհի տիկնոջ վրա:

Այս գնդակները, որոնք սպանեցին պայծառափայլ զույգին, իրենց կայծերը տարածեցին տարիներ շարունակ զենք ամբարած աշխարհի զինանոցներում. Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի, Օվկիանիայի, զույգ Ամերիկաների՝ բոլոր ազգերին հանելով ոտքի՝ միմյանց բզկտելու համար: Միլիոնների հասնող բանակներ բախվեցին միմյանց՝ քանդելու, ոչնչացնելու համար շարժուն և անշարժ ամեն բան:

Նախ իբրև գահաժառանգի սպանության հետևանք՝ Ավստրո-Հունգարիան պատերազմ հայտարարեց Սերբիային, իսկ նրա զինակից Գերմանիան նախ՝ Ռուսաստանին, ապա Ֆրանսիային և Բելգիային: Անգլիան, Բելգիայի պատրվակով, պատերազմ հայտարարեց Գերմանիային և Ավստրո-Հունգարիային:

1914թ. օգոստոսի 1-ին սկսվեց ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ:

Գերմանական բանակը շատ արագ Բելգիական ամրոցները քանդելուց հետո՝ մտավ Ֆրանսիա, ուղղություն վերցնելով դեպի Փարիզ: Սակայն գերմարդկային ճիգով Ֆրանսիան կարողացավ Մառնի ճակատամարտում կասեցնել գերմանական առաջխաղացող բանակը և հետզհետե նահանջի մատնել: Այս պարտությունն ու նահանջը Գերմանիայի պարտության սկիզբը եղավ: Սակայն Գերմանիան չհուսահատվեց: Նա փնտրում էր նոր զինակիցներ, որը շատ դյուրությամբ գտավ: Իր երկու ռազմանավերը, որոնք դատապարտված էին կործանման Միջերկրական ծովում անգլո-ֆրանսիական և ռուսական նավատորմիղներից, Գերմանիան նվիրեց Թուրքիային

փաստորեն նրան ներքաշելով պատերազմի մեջ: Թուրքիային նվեր տրված ռազմանավերի սպաներին և նավաստիներին հրամայվեց փոխել իրենց համազգեստները թուրքականով և գլուխները զարդարել թուրքական ավանդական ֆեսերով:

Նրանք, *«Իթթիհաթ վե Թերաքգիի»* պարագլուխները, մղձավանջով լցրեցին Թուրքիո պատմության էջերը:

ԹԱԼԵԱԹ՝ ավազակների ռոմակի խմբապետը: Ծագումը այնքան մթին, որ բազմապիսի պատմություններ են շրջում նրա ազգային պատկանելիության մասին: Թալեաթը հոգին էր այն ակումբի, որը գտնվում էր Ամերիկյան դեսպանատան մոտերքում և որի հավաքույթները ավարտվում էին բաքոսյան խրախճանքներով: Թալեաթը որպես պարզ ընչազուրկ հայտնվեց քաղաքականության մեջ: Ցրիչ, ապա հեռագրիչ, իսկ հետո Օսման կայսրության ամենաազդեցիկ մարդը, որը ծայրահեղորեն հպարտ էր իր խոնարհ ծագման համար: Նա, իրոք, բնածին արտասովոր կարողություններ ուներ: Ուրիշի շարժառիթները բացահայտելու, գուշակելու գերբնական հատկություն, որը քիչ քաղաքագետների էր տրված: *«Պետք է, որ մեկը կառավարի Թուրքիան, ինչու՞ մենք չլինենք»*, – ասում էր նա՝ վստահ, որ կարող էր կառավարել: Բայց նա բախտախնդիր էր, որ հասել էր բարձր դիրքի՝ սպանություններով ու դավերով: Երբ պայթեց Առաջին աշխարհամարտը, Թալեաթը ներքին գործերի նախարար էր:

ԷՆՎԵՐԸ աշխարհամարտի նախօրեին Պատերազմական նախարար եղավ: Երեսուներկու տարեկան էր: Նույնպես համեստ ծագում ուներ և *«Հեղափոխության դյուցազուն»* պատվանունն էր շահել այն գործուն մասնակցության համար, որ քսանվեց տարեկան հասակում ունեցավ Աբդուլ Համիդ սուլթանին գահընկեց անող հեղափոխության ժամանակ: Նա հանդուգն էր, արագ որոշումներ ընդունող, միշտ պատրաստ՝ իր կյանքը և ապագան պարզ բախտախնդրության խաղին ենթարկելու: Բնավորությամբ վայրագ, անգութ, անընկճելի կամքով: Նրա կանոնավոր, հաճելի, գրեթե կանացի դիմագծերը, փոքր, բայց կորովի մարմինը երբեք չէին մատնում նրա իսկական բնավորությունը, նրա անսանձ փառասիրությունը: Նա սիրում էր, երբ նրան բարեկամները Նապոլեոնի հետ էին

համեմատում: Խորապես հավատում էր, թե ինքը ճակատագրի կողմից կոչված է մեծ ապագայի համար և երկնային առաքելություն է ստացել վերակենդանացնելու Թուրքիայի փառքը: Էնվերը իր սեփական անձը դիտում էր՝ որպես Նապոլեոն Բոնապարտի և Ֆրիդրիխ Մեծի թուրքական միաձուլում:

ՋԵՄԱԼ փաշան 1914 թվականին թուրք կայսրության երեք հզորագույն մարդկանցից մեկն էր: Նա Ծովային նախարար և Չորրորդ բանակի հրամանատարն էր: Նրա ներքին կյանքը չափազանց անբարոյական էր: Հաճույքի ժամերը հյուրանոցների մեջ էր առնում, կյանքն անցկացնում թղթախաղի սեղանի մոտ: Ահավոր սնափառ էր, արժանի իր երկու՝ Թալեաթ և Էնվեր ընկերներին, որոնք նրան այնքան էլ չէին սիրում: Նա ուղարկվեց Պաղեստին, ապա Սիրիա, որպես Չորրորդ բանակի հրամանատար և այդ երկրներում հայտնի դարձավ իր զարհուրելի դաժանությամբ: Միշտ անխնա կողոպտեց, կոտորեց, հալածեց իր լծի տակ ընկած քրիստոնյա ժողովուրդներին: Թալեաթը և Էնվերը գոհ էին, որ նա իր գոռոզ ու բիրտ վարքը գործադրում էր սիրիացիների, արաբների, հայերի և հրեաների դեմ: Եթե Էնվերը կարողանում էր իր արյունածարավ, նենգավոր բնավորությունը ծածկել մեղմ դիմակի տակ, եթե Թալեաթը իր հումորով, զվարճախոսությամբ կարողանում էր ճշմարտությունից շեղել իրեն լսողներին, ապա Ջեմալի հակումները, նրա նողկալի բնավորությունը դաջված էին նրա դեմքին, որը նրա հոգու ճշմարիտ հայելին էր:

ՍԱԻԴ ՀԱԼԻՄ փաշա: Օսմանյան կայսրության Վարչապետ, հարուստ եգիպտացի իշխան, որը երիտթուրքերին դրամ հայթայթեց իրենց քաղաքական պայքարի համար և նրանց հաղթանակից հետո, իբրև վարձատրություն ստացավ իր ներկա պաշտոնը: Ճշմարտությունը սակայն այն էր, որ նա որևէ իրական իշխանություն չուներ: Ամեն ինչ որոշվում էր եռյակի միջոցով, իսկ Սաիդ Հալիմ փաշային խոստացել էին Եգիպտոսի իշխանապետություն, երբ հաջողությամբ այնտեղից վտարվի Անգլիան:

ՄՅՈՒՄՆԵՐԸ նույնպես ոչնչով չէին տարբերվում միմյանցից. սնափառ, քինախնդիր, նենգամիտ, թալանչի, արյունար-

բու դահիճներ. «Միություն և Առաջադիմություն» կուսակցության պարագլուխներ...

Ֆինանսների նախարար ՋԱՎԻԴ բեյ, ազգությամբ հրեա, կրոնով՝ մահմեդական:

Զազրելի արարած մոլլա ՀԱՍԱՆ ֆեհմի:

Կրթության նախարար ՇՅՈՒՔՐԻ, որը ԲԵՀԱԵԴԴԻՆ ՇԱՔԻՐԻ և դոկտոր ՆԱԶԸՍԻ հետ կազմեցին «Երեքի գործադիր կոմիտեն»: Սրա մասին դեռ կպատմեմ:

ԽԱԼԻԼ բեյ՝ թուրքական խորհրդարանի նախագահ:

Կառավարության և խորհրդարանի անդամներ, զինվորական բարձրաստիճան հրամանատարներ, որոնք Թուրքիան քաշեցին պատերազմի թոհուբոհի մեջ Գերմանիայի դեսպան ՎԱՆԳԵՆՀԱՅՄԻ հետ ձեռք-ձեռքի տված: Գերմանիոն կայսրը նրան նշանակել էր դեսպան Թուրքիայում, որպեսզի նա կարողանա երկու երկրները մերձեցնել և մոտալուտ պատերազմում Թուրքիային զինակից դարձնել: Նա մեծ հաջողությամբ կարողացավ այս արկածախնդիրների խմբին գործիք դարձնել Գերմանիային: Վանգենհայմը Գերմանիայի դիվանագիտությունը ներկայացնում էր իր ամենաանպատկառ ձևի մեջ:

Երբ Թուրքիո կառավարության պարագլուխները անկեղծ շնորհակալությամբ նվեր ստացան գերմանական երկու նավերը՝ Ընդհանուր Կենտրոնում նրանք խորհրդակցություն հրավիրեցին:

ԷՆՎԵՐ – Այլևս հավատում եմ. Մակեդոնիայի կորուստը կրկնակի օգուտով պիտի ետ բերենք: Պողպատե բանակների տեր հզոր Գերմանիան կանգնած է մեր թիկունքին, ուրեմն ոչ միայն Մակեդոնիան, այլև Կովկասն ու Եգիպտոսը պիտի առնենք *«Իթթիհատ վե Թերաքքի»* իշխանության տակ: Աշխարհի ամենահզոր կայսրությունը պիտի դարձնենք Թուրքիան:

ՋԱՎԻԴ – Ընկեր Էնվեր, մի տարվեք այդ աստիճանի երևակայությամբ: Կառավարությունը սնանկացած է: Ես զինվոր չեմ և պատերազմից ոչինչ չեմ հասկանում: Բայց Նապոլեոնը նշանավոր մի խոսք ունի, որը հիշում եմ պարզապես իմ պաշտոնի բերումով: Նապոլեոնն ասել է. *«Պատերազմը երեք բանի կարիք ունի՝ դրամի, դրամի և դրամի»:* Առանց դրամի

ոչինչ չի կարելի անել, ճի՞շտ է: Դուք էլ Նապոլեոնի նման այդ կարծիքին եք, չէ՞:

ԷՆՎԵՐ – Անտարակույս: Բայց Գերմանիան պիտի հոգա մեր պատերազմական ծախսերը:

ԹԱԼԵԱԹ – Գերման դեսպանը հայտարարում է, թե երկու զրահանավերը իրենց ողջ կազմով մեր տրամադրության տակ են դրված: Սակայն հայտարարությունը երկդիմի է: Ջեմալը, որպես ծովային նախարար, ուզում է, որ նավերի ղեկերը ուղղակի մեզ հանձնվեն: Անկասկած սա շատ ավելի լավ տարբերակ է, բայց միաժամանակ, պետք չէ առաջացնել գերման դեսպանի դժգոհությունը:

ԷՆՎԵՐ – Նավերը ղեկավարելու համար ծովային սպաների պակաս ունենք, մնացածներն էլ իրենց գիտելիքներով շատ ետ են մնում գերման ծովայիններից:

ՋԵՄԱԼ – Պետք չէ ինքներս մեզ այդ աստիճան նվաստացնենք: Եթե մեր ղեկը անմիջապես գերմանացիների ձեռքը հանձնենք, չգիտեմ, թե վերջում ինչ կլինի:

ՀԱԼԻՄ փաշա – Պարոնայք, տերության և հայրենիքի կենաց և մահու խնդիր է, պետք է զգույշ լինել: Մեր դեմ կանգնած թշնամիները հսկաներ են: Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի զորությունները անտեսել չի կարելի... Պիտի կարողանանք սրանց և իրենց դաշնակիցների ավերումների դեմ պաշտպանվել: Բալկանյան պատերազմի ցավերը դեռ չեն մոռացվել: Ըստ անձնական համոզումիս և դեսպաններից ստացած լուրերից՝ գտնում եմ, որ մեզ համար ամենից ապահովը զինյալ չեզոքությունն է:

ԷՆՎԵՐ – Փաշա, ի՞նչ եք ասում, խենթացա՞ք... Ինչպե՞ս կարելի է զինյալ չեզոքություն պահել, երբ Պոլիսը մեր դարավոր թշնամուն՝ Ռուսաստանին է խոստացված:

ՀԱԼԻՄ փաշա – Սա ընդամենը մի լուր է, որը կարող է չհամապատասխանել իրականությանը:

ԹԱԼԵԱԹ – Մեր արտաքին տեղեկությունները սխալ չեն կարող լինել:

Սակայն Վանգենհայմը իր ունեցած դիրքի բարձունքից կարողանում էր իշխել Թուրքիո բախտախնդիրների մտքերին:

ՎԱՆԳԵՆՀԱՅՄ – Ես Գերմանիո դեսպանն եմ Թուրքիայում և շատ լավ գիտեմ ձեր գործերի մասին: Բալկանյան պատերազմի ժամանակ ձեր բոլոր միջոցները վատնել եք: Սպառել եք ձեր բոլոր ուժերը և ֆինանսները: Բայց անկախ այդ բոլորից՝ մենք ուզում ենք ձեզ վերցնել մեր գինակցության մեջ: Սև ծովում գտնվող ռուսական նավատորմիղը մեկ հարձակումով ոչնչացնելու կարողությամբ օժտված գերամանական երկու ռազմանավերը, որոնք կարողացան անգլիական և ֆրանսիական տորմիղներից խուսանավելով հասնել ձեր նավահանգիստը, ձեզ ենք հանձնում մեր ծովային ամենաճարպիկ սպաներով հանդերձ և ավելին, խոստանում ենք տալ ձեզ հարկավոր դրամը, ռազմամթերքը, նաև տրամադրել գինական ուժ... Եվ դեռ կասկածում եք ու դժգոհ եք... Ինչու՞ ձեզ վրա թափվող այս բարիքները չեք կարողանում գնահատանքով ընդունել: Մեր խնդիրն ի՞նչ է. ապահովել Բեռլին-Պոլիս գիծը: Նեղուցները գինելով՝ Ռուսիան արտաքին օժանդակություններից զրկել և ձեր ու մեր միացյալ ուժերով այն ճզմել: Կովկասը ձեզ տալով՝ ուզում ենք ձեր առջև Թուրանի ճանապարհը բացել: Թուրքիո ամբողջականությանը սպառնացող ժողովուրդներին պիտի ոչնչացնենք: Պարսկաստանը պիտի գրավենք: Բալկանյան պատերազմի պարտության արատը պատվով ու հաղթանակով պիտի սրբենք: Պարոնայք, արդյոք ուրիշ էլ ի՞նչ եք ուզում: Դուք, նորին Վսեմություն, հոչակավոր Էնվեր փաշա, մեծ զորավար, քաջ զինվոր, որին բոլորս գնահատում ենք, որպես մի նոր Նապոլեոն, ձեր կասկածամիտ ընկերներին լուսաբանեք այս ամենը: Իմացեք, եթե մեկ շաբաթվա ընթացքում սույն զինակցությունը չկնքվի, այլևս որևէ բարիք չպետք է ակնկալեք Գերմանիո հզոր կայսրությունից և նորին կայսերական բարձրություն Վիլհելմ 2-րդից...

ԹՈՒՐՔ ԴԱՀԻՃՆԵՐ

Թալեաթ, Թուրքիո վարչապետ:

Էնվեր, Թուրքիո ռազմական նախարար:

Ջեմալ, Թուրքիո ծովային նախարար:

Վիլհելմ Բ՝ Գերմանիայի կայսր, որը խրախուսեց հայոց եղեռնը:

Վանգենհայմ, Գերմանիայի դեսպանը Թուրքիայում՝ նրա «մեծ և անկեղծ» բարեկամը:

* * *

Վանգենհայմի հետ ունեցած այս հանդիպումից հետո Էնվերը տրամադրված էր շատ մարտական և կառավարության անդամների հետ նոր հանդիպման ժամանակ ասաց.

ԷՆՎԵՐ – Եվրոպական տերությունները բաժանված են երկու թշնամի բանակների: Մի կողմի հաղթանակի դեպքում կործանվում է մյուս կողմը: Կողմերից մեկին՝ Անգլիան և մյուսին Գերմանիան է առաջնորդում: Անգլիայի և նրա դաշնակիցների հետ բանակցություններ վարել չենք կարող, որովհետև Անգլիո հզոր դաշնակիցներից մեկը մեր դարավոր թշնամի Ռուսաստանն է: Պոլիսն իսկապես նրան է խոստացված: Թալեաթ փաշայի նախարարության պաշտոնական լրատվությունն է սա հաստատել: Իսկ Գերմանիան, առանց մեր կողմից դիմում ներկայացնելու, մեզ զինակցել է առաջարկում չափազանց մեղմ պայմաններով: Հակառակ այս ամենին՝ շաբաթներ շարունակ ի՞նչ է մեր բռնած դիրքը: Մենք պարտավո՛ր ենք ընդունել Գերմանիայի առաջարկները, որպես մեծ բարիք, որպես անակնկալ երախտիք: Դա մեր ազգային շահն է պահանջում: Գերմանիո բանակը պողպատե ամրոց է Թուրքիո համար, որով պիտի բացենք *Մեծ Թուրանի* ճանապարհը: Ընկերներ, Թուրանի՝ մեր մեծ հայրենիքի սիրույն աղերսում եմ այս պատեհությունը ձեռքից բաց չթողնել...

ԲԵՀԱԵԴԴԻՆ ՇԱՔԻՐ – Թուրքիո հաղթության ճանապարհը Էնվեր փաշայի ցույց տված ճանապարհն է:

ԴՈԿՏՈՐ ՆԱԶԸՄ – Ո՞վ թուրք, տեսնում եմ, որ պիտի ծագի բախտիդ արևը:

ՀԱԼԻՄ փաշա – Պարոնայք, խնդրում եմ լրջացեք, կրկնում եմ, նպաստավորը զինյալ չեզոքությունն է:

ԷՆՎԵՐ (Ջղային) – Սաիդ Հալիմ փաշան վախենում է անգլիացիներից, որովհետև եգիպտացի է և այնտեղ մեծ կալվածքներ ունի: Զկորցնի՞ հանկարծ...

ՀԱԼԻՄ փաշա (Գրգռված ոտքի ելնելով) – Հանձնարարում եմ, որ ձեր խոսքերին ուշադրություն դարձնեք: Հիշեք, որ

այս պահիս ես գործնականորեն Օսմանյան կայսրության վարչապետն եմ:

ԷՆՎԵՐ (Նույնպես ոտքի կանգնելով՝ հանում է ատրճանակը և պտտում մատների մեջ) – Ես էլ այսօր, այս պահիս, *«Իթթիհաթ վե Թերաքզի»* իշխանության գործնականորեն պատերազմական նախարարն եմ, հետո ի՞նչ: Բայց, փաշա, մեր միջև շատ կարևոր տարբերություն կա: Ես քեզ նման Եգիպտոսում կալվածատեր չեմ և այդ մտավախությամբ ստիպված չեմ Անգլիայի ձեռքը համբուրել:

ՀԱԼԻՄ փաշա (Ցավով) – Եթե ցանկանաք, հենց հիմա հրաժարական կտամ...

ԹԱԼԵԱԹ – Թողնենք ավելորդ խոսքերը և սառնասիրտ լինենք: Հայրենիքը ռուսական վտանգի տակ է:

ՀԱԼԻՄ փաշա – Ես հայրենիքի ու տերության շահերից ելնելով եմ խոսում:

ԷՆՎԵՐ (Մեղմանալով) – Խնդրեմ, ավելի պարզ և հասկանալի ներկայացնեմ: Ինչպիսի՞ն է պատերազմող երկու կողմերի դիրքորոշումը: Դաշնակից պետություններից Անգլիան ուզում է Եգիպտոսը, Միջագետքը, Պաղեստինը վերցնել իր իշխանության տակ և իր ազդեցությունը տարածել ողջ Արաբական թերակղզու վրա: Ֆրանսիան շատ է ուզում գրավել Սիրիան, իսկ Ռուսաստանի մասին հարկ կա՞ նորից խոսել: Գալով Եռյակ զինակցության պետություններին՝ Ավստրո-Հունգարիան և Իտալիան Թուրքիայից որևէ պահանջ չունեն: Իսկ Գերմանիա՞ն... Ով ինչ ուզում է, թող ասի, Գերմանիան ուզում է Թուրքիայի զորացումը: Ինչո՞ւ: Գերմանիան չի կարող Թուրքիան գաղութի վերածել: Ո՛չ նրա աշխարհագրական դիրքը և ո՛չ նրա միջոցները թույլ չեն տա այդ: Բայց Թուրքիան Գերմանիայի ամենամեծ շուկան է և նա չի ցանկանա այդ շուկան բաժանել որևէ տերության հետ...

ԹԱԼԵԱԹ – Գերմանիո առաջարկած զինակցության պայմանները նույնությամբ ընդունելու և ստորագրելու համար տվեք ձեր քվեները:

Գերմանիոն առաջարկած պայմանները ընդունվեց միաձայն: Գերմանիան իր մեծ հաղթանակը տարավ Իթթիհաթի կենտրոնում: Գերմանիան Թուրքիային կարողացավ քաշել պատերազմի մեջ: Գերմանական երկու ռազմանավերը՝ *«Կոպենը»* և *«Բրեսլաուը»* վերանվանվեցին *«Եսավուզ»* և *«Միտիլլի»*: Որոշվեց նաև, որ թուրք ծովայինների և գերման հրամանատարների փոխհարաբերությունները ճշտելու համար՝ Մարմարայում ռազմափորձ կատարել ծովային նախարար Ջեմալ փաշայի հրամանատարությամբ:

Մարմարա ծովում ռազմափորձերը հաջողությամբ ավարտելուց հետո *«Եսավուզը»* և *«Միտիլլին»* դուրս եկան Սև ծով և ռմբակոծեցին Օդեսայի նավահանգիստը՝ խորտակելով ռուսական մի քանի նավ: Օսմանյան տորմիղը անվնաս վերադարձավ Պոլիս:

«Կեցցե՛ Եսավուզը, կեցցե՛ Միտիլլին, թող կորչե՛ն ռուսները, թող կորչի՛ Ռուսաստանը...»:

1914 թվականի հոկտեմբերի 19-ինն էր: Թուրքերի և ռուսների միջև պատերազմը սկսված էր: Նոյեմբերի 5-ին Թուրքիան պատերազմ հայտարարեց Անգլիային, նոյեմբերի 6-ին՝ Ֆրանսիային:

Առիթից օգտվելով ՍՈՒՀԱՄՄԵԴ ՐԵՇԱՏ Ե սուլթանը, որը սուլթան լինելուց բացի խալիֆ էր, Ալլահի տեղապահը երկրի վրա, կրոնական ամենամեծ անձը, Սրբազան պատերազմ՝ ՋԻՀԱԴ հայտարարեց: Այս առթիվ Երեսփոխանական ժողովը գահակալին հայտնեց իր գոհունակությունը: Իսկ իսլամի, բոլոր մահմեդականների առաջնորդը, Շեյխ-Ուլ-Իսլամը իր կոչը ուղղեց Ալլահի ճշմարիտ հավատացյալներին:

ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ – Ալլահը մեծ է, միայն մեկ աստված կա, և Մուհամմեդը նրա մարգարեն է: Ո՞վ մուսուլմաններ, խմբվեցեք կայսերական գահի շուրջը, հնազանդվեցեք Ամենակարողի պատվիրաններին, որը Կորանի մեջ մեզ խոստանում է երանություն այս և հանդերձյալ կյանքում: Խոնարհվեցեք և համբուրեք խալիֆի գահի ոտքը և գիտցեք, թե պետությունը

պատերազմի մեջ է իսլամի թշնամիների հետ: Հավատացյալների առաջնորդ խալիֆը բոլոր մուսուլմաններին հրավիրում է Սրբազան Պատերազմի: Բոլոր մահմեդականները՝ երիտասարդ և ծեր, այր, կին կամ պատանի, պետք է կատարեն իրենց պարտքը: Գործելու ժամանակը հասել է: Մենք պետք է մեր բովանդակ ուժով, մեր ողջ հոգով, մեր ատամներով և եղունգներով, մեր մարմնի և մտքի ամբողջ կարողությամբ կռվենք: Եթե կռվենք՝ մահմեդականի փրկությունը կապահովենք և ողջույններ կհղենք մահիկին: Ալլահը մեր օգնականն է, և Մարգարեն՝ մեր ապավենը: Ո՞վ հավատացյալ ժողովուրդ, ով սիրեցյալ իսլամի հավատացյալներ, իսլամական աշխարհի ներկա վիճակը խառնակ է... Այս վիշտը այրում է մեզ... Հնդկաստանի, Ճավայի, Եգիպտոսի, Մարոկկոյի, Թունիսի, Ալժիրի, Սուդանի, Թուրքեստանի, Բուխարայի, Կովկասի, Ղրիմի, Կազանի, Խուժիստանի, աշխարհի բոլոր իսլամ ժողովուրդները մի փափագ ունեն՝ միանալ: Նույնպես և Պարսկաստանի իսլամ ժողովուրդը՝ միանալ: Ճշմարիտ մեր կրոնի թշնամիները՝ քրիստոնյաները, ուզում են ճզմել իսլամությունը: Անկարող ենք թվել այն անարգանքները, որ ստանում ենք քրիստոնյա երկրներից: Նրանց բռնակալությունը անցել է բոլոր սահմանները: Մեր համբերության բաժակը լցված է... Անհավատը վայելում է: Իսլամը քաղցած է և տառապում է, մինչդեռ անհավատ քրիստոնյան հղփացած պերճանքի մեջ է ապրում: Իսլամական աշխարհը քանի գնում՝ գահավիժում է և հետադիմում, մինչդեռ քրիստոնյա աշխարհը առաջադիմում է և բարգավաճում: Այս բոլորը այն պատճառով, որ իսլամի հավատացյալները լքեցին Ղուրանի օրենքը և մոռացան Սրբազան պատերազմի նրա հրամանը: Բայց հիմա Սրբազան պատերազմի ժամանակը եկել է, և նրա միջոցով իսլամության համայն հայրենիքը պիտի փրկվի նրան ճնշող անհավատ քրիստոնյաների իշխանությունից: Սրբազան պատերազմը նվիրական պարտականություն է ամեն մի մահմեդականի համար: Յուրաքանչյուր քրիստոնյա անձի սպանությունը՝ սրբազան պարտք: Ղուրանը հրամայում է. *«Բռնեցեք նրանց և սպանեք»*: Նա, ով թեկուզ մի քրիստոնյա սպանի, Ալլահից պիտի վարձատրվի: Այն մուսուլմանը, որը կսպանի, կոչնչացնի քրիստոնյաներին, փրկված կլի-

նի դատաստանի օրվա սարսափներից: Առա՛ջ դնպի սրբազան նպատակ... Գոյություն ունի *«Փոքր սրբազան պատերազմ»* և *«Մեծ սրբազան պատերազմ»*: Առաջինն այն պայքարն է, որ յուրաքանչյուր մահմեդական պարտավոր է մղել իր գտնված հասարակության մեջ, ամեն դրացի հարևանի հանդեպ: Երկրորդը համաշխարհային մեծ պայքարն է, որի ժամանակ միավորվում են բոլոր երկրների մահմեդականները և մարզված բանակները... Երեք հարյուր միլիոն մահմեդականներ, աշխարհի բոլոր երկրների մեջ ապրող երեք հարյուր միլիոն մահմեդականներ, սկսված է Իսլամի *«Սրբազան Պատերազմը»՝* Ջիհադը... Մեր հոգիների մեջ ապրող անսահման ատելությունը, որն ունենք անհավատ շների՝ քրիստոնյաների հանդեպ, մեզ առաջնորդում է նրանց ջարդելու և աշխարհի երեսից նրանց սրբելու: Խոսքը բոլոր քրիստոնյաների մասին է, բայց առավելապես հայերի: Ալլահը մեծ է, Ալլահը միակն է, և Մուհամմեդը նրա մարգարեն է: Կատարեք Ալլահի ու նրա մարգարեի կամքը... Ո՞վ մուսուլմաններ:

Այսպես: 1915 թվականին արդեն ափերից ելած պատերազմը բոլոր ռազմաճակատներում դժոխային կրակ էր տեղում: Ի՞նչ էր նրա ուզածը, ոչ ոք չգիտեր: Ո՞ր արդար դատի պաշտպանության, ո՞ր մարդասիրական նպատակի համար էր ժողովուրդների արյունը հոսում, գյուղեր, քաղաքներ բնաջնջվում: Ավստրո-Հունգարական գահաժառանգն էր սպանվել, արդյո՞ք նրա հուղարկավորության պատվին էին պայթում միլիոնավոր ռումբեր... Իսկ թուրքե՞րը... *«Իթթիհաթ վե Թերաքզը»*... Ջիհադը... 1915 թվականի հունվարին Էնվեր փաշան Կովկասյան ռուսական ճակատում հարձակման գնաց ռուսների դեմ և Սարիղամիշում թողեց թուրքական ամենալավ մարզված բանակի յոթանասուն հազար զինվորի դիակ: Ռուսները, օգտվելով Օսմանյան բանակի այս ահռելի պարտությունից և նրա տկարացումից՝ հարձակման անցան երեք ուղղությամբ...

Եվ այս պատերազմական ողջ թոհուբոհի մեջ ի՞նչ էին անում հայերը, որոնց դեմ Սրբազան պատերազմ էր հայտա-

բարված և որոնք դեռ չէին մոռացել համիդյան ջարդերի, Ադանայի ջարդերի ապրած սարսափները:

Ոճիրը, որ կատարվեց հայերի հանդեպ, շատ վայրագ քաղաքական ոճիր էր: Հարևանցի ակնարկը չի կարող այս ոճրի ահավորությունը պատկերացնել տալ: Եթե *«Իթթիհաթ վե Թերագգըի»* այն ոճրափորձ և պատմական գաղտնի նիստը կարողանամ մոտավորապես նկարագրել, որին ես անձամբ ներկա եմ եղել, եթե գործող անձանց առաջարկները և վիճաբանությունները, գիտական կարողությունները, քաղաքական և հասարակական ըմբռնումները կարողանամ պարզել՝ պատմությանը ծառայություն մատուցած կլինեմ:

...Թալեաթի նախագահությամբ անցկացվող այս գաղտնի խորհրդակցությունում առաջինը ձայն տրվեց դոկտոր Նազըմին:

ՆԱԶԸՍ – Խոսքով փլավ չեն եփում: Պետք է գործել արագ և վճռական: Հայերը վտանգավոր են, ինչպես թարախապալարը. սկզբում այդ թունավոր վերքը թվում է անվտանգ, բայց եթե այն ժամանակին չվիրահատվի փորձված վիրաբույժի կողմից, ապա անպայման կհանգեցնի մահվան: Անհրաժեշտ է գործել և գործել արագ: Եթե բավարարվենք մասնակի կոտորածներով, ինչպես եղավ 1909թ. Ադանայում, ապա դա օգուտի փոխարեն վնաս կբերի, քանի որ վտանգ կստեղծենք արթնացնելու այն տարրերին, որոնց նույնպես մտադիր ենք վերացնել ճանապարհից՝ արաբներին և քրդերին: Ես մի քանի անգամ մեր ժողովներում ասել եմ և այժմ էլ կրկնում եմ. եթե մաքրագործումը համընդհանուր ու վերջնական չլինի, ապա օգուտի փոխարեն վնասն անխուսափելի է: Հայերին պետք է հիմքից արմատախիլ անել այնպես, որ նույնիսկ մեկը չմնա մեր հողում և ընդմիշտ մոռացվի բուն հայ անունը: Հիմա պատերազմ է. այսպիսի հարմար առիթ այլևս չի լինի: Մեծ տերությունների միջամտությունն ու համաշխարհային մամուլի աղմկոտ բողոքները կմնան աննկատ, իսկ եթե իմանան էլ կկանգնեն կատարված փաստի առաջ, և դրանով իսկ հարցը կսպառվի: Այս անգամ մեր գործողությունները պետք է հայերի համընդհանուր բնաջնջման բնույթ կրեն: Անհրաժեշտ է ոչընչացնել բոլորին՝ մինչև վերջին մարդը: Հնարավոր է, որ ձեզա-

նից մեկը դա գազանություն համարի, ասի՝ ի՞նչ վնաս կարող են պատճառել ծերունիները, երեխաները, տկարները, որ հարկ լինի նրանց ոչնչացնել: Թող պատժվեն միայն նրանք, ովքեր մեղավոր են: Իսկ տանը նստած կանանց ու կրծքի երեխաների, ծերունիների վրա հարձակվելը բարբարոսություն է ու վայրենություն և հակասում է քաղաքակրթության ու մարդասիրության օրենքներին: Թե իբր դոկտոր Նազըմը չափազանցնում է ու դատում անխոհեմ: Խնդրում եմ, մի եղեք այդքան փափկանկատ ու գթասիրտ, դա վտանգավոր հիվանդություն է: Հիմա պատերազմ է: Ես ձեզ հարցնում եմ՝ մի՞թե պատերազմը բարբարոսություն չէ: Ինչով է մեղավոր հողագործը, որը գնացել է հայրենի գյուղից ու սպանվել ռազմաճակատում կամ վաճառականը, որը թողել է իր կրպակը, որ զոհվի արկի պայթյունից: Նրանք ի՞նչ հանցագործություն են կատարել, որ զոհվում են այդպիսի ահավոր մահով: Դաժանությունը բնության օրենքն է, այն կարելի է ընդունել կամ մերժել միայն դատողություններում: Մի՞թե կենդանի էակները, նույնիսկ բույսերը չեն ապրում ուտելով ու ոչնչացնելով միմյանց: Միգուցե դուք ասեք. *«Արգելեցեք դա նրանց, չէ որ դա բարբարոսություն է»*:

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ – Այո, էֆենդի, ես էլ եմ ծանոթ ուժեղի կողմից թույլին խժռելու այդ օրենքին, որը հայտնի է կենսաբանության մեջ:

ՆԱԶԸՄ – Լավ խորհեք, թե ինչու հեղափոխություն արեցինք: Ես չեմ ուզում մտածել, թե մեր նպատակն էր վերացնել սուլթան Համիդի մարդկանց և գրավել նրանց տեղը: Ես ձեր ընկերը, զինակիցը, եղբայրն եմ դարձել, որ վերածենք թրքությունը: Ես ուզում եմ, որ այս հողի վրա ապրի ու լիակատար տեր ու տնօրեն լինի թուրքն ու միայն թուրքը: Թող անհետանան բոլոր ոչ թուրք տարրերը, ինչ ազգության և կրոնի էլ որ նրանք պատկանելիս լինեն: Կրոնն ինձ համար իմաստ ու նշանակություն չունի: Իմ կրոնը *Թուրանն* է:

ԲԵՀԱԵԴԴԻՆ ՇԱՔԻՐ (Շեշտված) – Եթե այնպիսի մի խեղճի մեկը, ինչպիսին Մովսեսն էր, մի այնպիսի հալածական, ինչպիսին Հիսուսը, և մի այնպիսի որբ, ինչպիսին Մուհամմեդը, կարողացան աշխարհում ստեղծել առանձին մեծագույն կրոններ, ապա ինչո՞ւ մենք՝ ուժեղ կամքի ու մտքի տեր մարդիկս

չենք կարող ստեղծել և տարածել Թուրանի կրոնն ու գաղափարը:

ՆԱԶԸՄ – Վայ մեզ, եթե այդ մաքրագործումը վերջնական չլինի, եթե նրանց չոչնչացնենք լիովին, այդ դեպքում վաղը նրանք մեզ դուրս կշպրտեն այստեղից կամ ընդհանրապես կսպանեն բոլորիս: Հեղափոխությունը խղճահարություն չի ճանաչում: Նա հետամուտ է իր նպատակին և փշրում է իր ճանապարհին եղած բոլոր խոչընդոտները:

ՇԱՔԻՐ – Մենք՝ հեղափոխականներս, հանուն թուրք ազգի առաջնորդվելով Օսմանյան պետության ազգայնականության սկզբունքներով, ստեղծեցինք *«Իթթիհատ վե Թերաքգի»* իշխանությունը: Մեր ազգային մշակույթում մենք կարող ենք թույլ տալ միայն թուրքական հունդի ծաղկումը: Մենք պարտավոր ենք մեր հայրենիքը մաքրել օտար ժողովուրդներից, արմատախիլ անել նրանց որպես մոլախոտ: Սա մեր հեղափոխության նպատակն ու նշանաբանն է: Այդ պատճառով Իթթիհատի իշխանությանը մենք տվեցինք *«Նոր Թուրքիայի կառավարություն»* անվանումը՝ զրոյի հավասարեցնելով *«օսմանցի»* անվանումը: Բաղկացած լինելով այլազան ազգերից՝ օսմանյան խառնուրդը չունի իր ազգային դեմքը: Այն նման է տարբեր կենդանիների կուտակմանը մի տնտեսության մեջ: Հայերը, հույները, բուլղարները, բոսնիացիները, պոմակները, սերբերը, ալբանացիները, քրդերը, չերքեզները, արաբները, լազերը, վրացիները իբր թե կազմում են մի ամբողջություն օսմանցի անվամբ: Ինչպես որ ագարակում սագը, բադը, հավը, ոչխարը, կովը, այծը, եզը, ձին, գոմեշը ապրում են իրար կողքի և չեն տեսակափոխվում, ճիշտ այդպես էլ մեր հողի վրա մնացել են այդ ազգությունները՝ չփոխելով իրենց ազգությունն ու լեզուն: Բարենպաստ հանգամանքների դեպքում նույնիսկ նեղում են թուրքերին և անջատվում՝ գավթելով նրանց հողերը, ինչպես արեցին ռումինները, սերբերը, բուլղարները, իսկ դրանից առաջ՝ հույները:

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ – Ձերդ բարձրության բարեհաճ թույլտվությամբ և աստծո օգնությամբ, ես նույնպես, ինչպես որ իմ դոկտոր եղբայրները, կցանկանայի մի քանի խոսք ասել, բայց ո՛չ արևմտյան գիտության տեսանկյունից, այլ հենվելով արևել-

յան գիտության և սուրբ օրենքի՝ շարիաթի վրա, որի համաձայն այն ամենը, ինչ վնասակար է, պիտի կործանվի: Ճշտիվ ապացուցված է, որ հայերը վնասակար են: Առանց տատանվելու պետք է կոտորել նրանց բոլորին մինչև վերջին մարդը: Ես կտամ սրբազան վճիռը՝ ֆերվան: Ես խոջա եմ, մեդրեսների հիսուն հազար սաների հոգևոր ուսուցիչը: Իրավաբանական սկզբունքի համաձայն նկատի չեն առնվելու ծերունիները, երեխաները, կանայք, հաշմանդամները, տկարները. բոլորը սպանվելու են և բնաջինջ են լինելու: Գլխումս միտք ծագեց բնաջնջման դյուրին եղանակի մասին: Ձեր թույլտվությամբ հիմա կշարադրեմ: Հիմա պատերազմի մեջ ենք, գենք կրելու ընդունակ բոլոր հայերին կուղարկենք կրակի առաջավոր գիծ՝ կռվելու ռուսների դեմ, իսկ հետևից նրանց կրակի տակ կառնեն մեր զինվորները և բոլորին կբնաջնջեն: Տանը մնացածներին անմիջապես մեր հրամանով, Ջիհադի օրենքով կվերացնեն մեր հավատացյալները, որոնք կկողոպտեն նրանց ունեցվածքը ու կառնեն, կտանեն նրանց աղջիկներին: Իմ այս նկատառումը կընդունվի՞ արդյոք:

ԷՆՎԵՐ – Բնաջնջման եղանակի մշակումը գործադիր մարմնի պարտականությունն է:

ՋԱՎԻԴ – Եզրափակենք: Դոկտորներ Նազրմի, Բեհաեդդին Շաքիրի և խոջա Հասան Ֆեհմիի բացատրությունները բավականաչափ լույս սփռեցին հարցի վրա: Մինչև վերջին մարդը հայերի բնաջնջումը որչափ որ անհրաժեշտ է մեր ազգային քաղաքականության համար, նույնչափ էլ կարևոր է թուրքերի տնտեսական իշխանությունը հիմնելու համար: Անցնենք քվեարկության:

ԹԱԼԵԱԹ – *«Միություն և առաջադիմություն»* կոմիտեն, ինչ էլ որ պատահի, որևէ հաշտության սեղանի վրա, որևէ ձևով *«Հայկական հարցի»* առաջ քաշվելը կանխելու համար, օգտվելով պատերազմի՝ մեզ ընձեռած անկախությունից, որոշեցինք վերջնական հաշվեհարդարի ենթարկել՝ բնաջնջելով այդ ազգը և քշելով նրանց Արաբիո անապատները:

ԷՆՎԵՐ – Հայ ազգը արմատախիլ պիտի լինի: Հայ անունը պիտի մոռացվի:

ՋԵՍԱԼ – Թուրանի ճանապարհը պետք է բացել՝ աշխարհիս երեսից ջնջելով հայերին:

ԲՈԼՈՐԸ (Կատաղի զգայնությամբ) – Բնաջնջել հայերին, բնաջնջել խոզ անհավատներին, բնաջնջել...

ԹԱԼԵԱԹ (Երբ կրքերը քիչ հանդարտվել էին) – Դոկտոր Բենհանդին Շաքիր, դոկտոր Նազըմ և կրթության նախարար Ցյուքրի, դուք, որպես *«Եռյակ գործադիր կոմիտե»*, պիտի հոգաք այս մեծ գործը կատարելու համար ծրագիր առաջադրել:

ՇԱՔԻՐ – Հիմա, ամեն բանից առաջ, անհրաժեշտ է, որ տրամադրության տակ ունենանք զինյալ անկախ մի ուժ, որովհետև հայերի բնաջնջման գործը չենք կարող հանձնել բանակին ու ոստիկանությանը: Գործը չենք կարող կատարել տալ միայն ժողովրդին, որովհետև զինելով ամբոխին՝ հնարավորություն ենք տալիս նրան այդ զենքը մեր դեմ ուղղել: Մեզ պետք է մի առանձին մասնավոր ուժ, որով կարողանանք պաշտպանել մեր գործունեության անկախությունն ու ազատությունը: Այս ուժը ուզած կողմը ուղարկելը մեր՝ երեքիս իրավունքը պիտի լինի, որպես Եռյակ գործադիր կոմիտե: Բոլորը պիտի գործադրեն երեքիս հրամանները, իսկ մենք պիտի ենթարկվենք Կենտրոնական կառավարությանը Թալեաթ փաշայի գլխավորությամբ: Իսկ որտե՞ղ է մեր պատկերացրած ուժը: Բանտերում: Ոճրագործ, մարդասպան մարդիկ: Եթե սրանց արձակել տալով՝ մեզ ենթարկենք և խմբերի բաժանենք, կարծում եմ շատ լավ *«Մասնավոր կազմակերպություն»* ստեղծած կլինենք:

ՆԱԶԸՄ (Ոգևորված) – *«Մասնավոր կազմակերպություն»*, ի՜նչ գեղեցիկ անուն, ի՜նչ արդիական անուն... Կեցցե՛ս:

ՇԱՔԻՐ – Ես ձեզ վստահեցնում եմ, առանց բանակին ձեռք տալու, մեկ ամսվա ընթացքում 10–12 հազար ընտրյալ ուժի տեր կդառնանք: Նրանց կբաժանենք նվազագույնը տասը, առավելագույնը հիսուն հոգուց բաղկացած ջոկատների, բոլոր ջոկատների վրա չեթեներից վստահելի խմբապետներ կնշանակենք մեր հրամանին ենթակա:

ՆԱԶԸՄ – Սա ընդունեցինք: Մնաց գործադրության ծրագիրը պատրաստենք:

ՇԱՔԻՐ – Ներքին գոծերի նախարար Թալեաթ փաշան կորոշի, թե որ գավառի հայերը պիտի առաջինը բնաջնջվեն, իսկ մենք այնտեղ կուղարկենք *«Մասնավոր կազմակերպության»* ուժերից որքան հարկավոր է: Սրանք մեր որոշած տեղերում, հարմար վայրերում կոչնչացնեն հայերի քարավանները: Մինչև այդ Թալեաթը փաշան այդ քաղաքների, գավառների վարչական պաշտոնյաներին հրահանգ կտա, որ այնտեղ գտնվող բոլոր հայերին, պատերազմական դրությունը հաշվի առնելով, խմբերով, ոստիկանների հսկողության տակ այսինչ տեղը ուղարկեն, որտեղ չեթեները սպասում են նրանց: Ոստիկանները խմբերը կհանձնեն չեթեներին և կվերադառնան: Չեթեներն էլ բոլոր հայերին մինչև վերջին մարդը կսպանեն և որպեսզի հանրային առողջությունը չվնասվի, դիակները կթաղվեն նախապես պատրաստված փոսերի մեջ: Հայերի գույքը, դրամը, գոհարեղենը իբրև ավար կբաժանվի չեթեներին: Կանանց և աղջիկներին սպանելուց առաջ կարող են լկել որքան կամենան:

ԲՈԼՈՐԸ (Ծափահարում են, ճչում են դաժան ուրախությունից աղվաղված դեմքերով և գալարվող ձեռքերով):

ԹԱԼԵԱԹ (Տիրական բարձրացնում է ձեռքը: Լռություն է տիրում) – Ահա իմ հրամանը. «Հայերին հանել իրենց բնակավայրերից և ուղարկել ուրիշ վայրեր, որպեսզի նրանք չկարողանան սպառնալ բանակին և երկրի խաղաղությանը: Քաղաքային և զինվորական իշխանությունները պարտավոր են անվերապահորեն և շուտափույթ ի կատար ածել կառավարության այս որոշումը: Եթե կառավարության հրամանների հանդեպ զենքով դիմադրություն նկատվի՝ բանակի և զորաբաժանումների հրամանատարները և նրանց տեղակալները սույն հրամանով արտոնվում են իրենց հրամանների տակ գտնվող զինվորական ուժերով անմիջապես հիմնովին բնաջնջել դիմադրության բոլոր մասնակիցներին: Արդ, կառավարությունն ու Իթթիհաթի Մեծ Կոմիտեն կոչ են անում բոլոր տրամադրելի ուժերով աջակցել *«Միություն և առաջադիմություն»* տեղական մարմիններին, որոնք 24 ապրիլի 1915 թվականի արևածագից սկսած, գաղտնի ծրագրի համաձայն, գործադրեն այս հրամանը: Որևէ պաշտոնյա կամ անհատ, որ կհակառակվի այս սրբազան, հայրենասիրական գործին ու չի կատարի իրեն հանձնա-

բարված պարտականությունը և որևէ ձևով այս կամ այն հայը պաշտպանելու, պահելու փորձ կանի՝ հայրենիքի և կրոնի թշնամի կհամարվի և ըստ այդմ կպատժվի»: Սույն օրենքը գործադրության մեջ է մտնում հրապարակման պահից սկսյալ, ապրիլի 24-ից:

Ապրիլի 24-ի՞ն...

«Կոտորածը վաղուց էր սկսվել: 60 հազար հայ զինվոր վաղուց ոչնչացված էր: Վաղուց չկային նրանք, որ զենք վերցնելով՝ կարող էին պաշտպանել իրենց տունը: Հիմա արդեն մնացած ժողովրդի հաշիվը հեշտությամբ կարելի էր փակել: Նրանց որոշված ճանապարհներով խումբ առ խումբ տարագրում էին հատուկ ընտրված վայրեր և հանձնելով Եոյակ գործադիր կոմիտեին ենթակա *«Մասնավոր կազմակերպության»* չեթեներին՝ վերադառնում էին: Իսկ սրանք, գիշանգլուխների նման հարձակվելով, հոշոտում էին դատապարտվածներին առանց խնայելու: Ճանապարհների նեղություններից հոգեպես ու բարոյապես հուսալքված, հարազատ տուն ու տեղից բաժանվելու վշտից ընկճված այս խմբերը, իրենց զավակներով սպանդանոց առաջնորդվող ոչխարի նման *«Մասնավոր կազմակերպություն»* անունով հրեշների ձեռքն ընկնելով, երևակայությունից ու նկարագրություններից վեր խժդժությունների և տանջանքների էին ենթարկվում: *«Մասնավոր կազմակերպության»* այս կատաղի դահիճները, միայն հայ լինելու պատճառով ոչնչացնելով և ունեցվածքը հափշտակելով, չէին կարողանում իրենց ներսում ամբարած վայրագությունն ու քինախնդրությունը հագեցնել: Այս ոճրագործ ոհմակների գործադրած վայրագությունները նկարագրելիս մարդու ձեռքին սարսափից դողում է գրիչը... Տակավին աշխարհին անտեղյակ, գթության և սիրո կարոտ, մոր գրկի մեջ քնած կամ հրեշտակային անմեղությամբ ժպտացող և անուշ նայվածքով հոգին հրճվանքով լցնող ձագուկին մոր գրկից խլելով՝ արցունքի տեղ արյուն թափող մոր աչքերի առջև մանր-մանր կացնահարել, ապա այս վայրագությունը հռհռոցով ծափահարել և ստիպել, որ

մահվան սպասող մյուսները նույնպես հոհոռան և ծափահարեն... Խենթացնող այս վայրագություններն ու քստմնելի ոճիրները նկարագրելիս՝ ինչպե՞ս մարդու ձեռքին սարսափից չդողա գրիչը... Տակավին 7–8 տարեկան աղջնակներին ծեծի տակ լլկել չամաչող, սարսափի դողին մատնված խեղճերի վրա իրենց անասնական կիրքը գոհացնող այդ հրեշների ոճիրները նկարագրելիս, ինչպե՞ս մարդու ձեռքին սարսափից չդողա գրիչը... Եռյակ գործադիր կոմիտեին ենթակա այս ոճրագործների երևակայությունից դուրս ահավոր բարբարոսության «հանճարեղ» հնդինակների գործերը քննելիս՝ ինչպե՞ս մարդու ձեռքին սարսափից չդողա գրիչը...»:

Սա գրեց թուրք լրագրող, իթթիհաթ կուսակցության նախկին հավատավոր ՄԵՎԼԱՆ ԶԱԴԵ ՐԻՖԱԹԸ:

Իմ պատանի բարեկամ, ես տեսնում եմ, որ դու հոգնել ես արդեն ոճիրների մասին լսելուց, որ կատարվեց քո բնիկ հայրենիքում, ոճիրների մասին, որին ենթարկվեց քո բարի, աշխատասեր ու իմաստուն ժողովուրդը... Բայց ես տեսնում եմ նաև՝ դու չես ուզում, որ ես դադարեցնեմ իմ պատմությունը... Չես ուզում, որ դադարեցնեմ վկաներին ասպարեզ կանչել... որպեսզի նրանք մենախոսեն ճշմարտության պարտադրանքով իրենց գրքերի էջերից: Որովհետև դու ուզում ես մինչև վերջ հասկանալ «Ի՞նչ է ՈՃԻՐԸ» անվերջ հոլովվող ճակատագրական հարցը, որ կարողանաս պայքարել նրա դեմ քո բոլոր ունակություններով.... Դու ուզում ես պարզել քեզ համար նաև մյուս հարցը. իսկ արդյո՞ք հնարավոր է...

Ես անզոր եմ պատասխանել, որովհետև չգիտեմ:

Թող նորից խոսեն վկաները: Ականատե՛ս վկաները:

ՄՈՐԳԵՆԹԱՈՒՆ՝ որպես Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպան, Թուրքիայում դեռ պատերազմը սկսվելուց առաջ, ականատես եղավ այն բոլոր ոճիրներին, որոնք կատար-

վեցին հայերի հանդեպ: Նա իր տեսածի ու ապրածի մի չնչին մասը միայն կարողացավ զետեղել իր հուշերի գրքում, որովհետև անհնար էր խոսել *ԱՄԲՈՂՋԻ* մասին, որ տեղի ունեցավ: Նա իր գիրքը կոչեց *«ԱՄԵՐԻԿՅԱՆ ԴԵՍՊԱՆ ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒԻ ՀՈՒՇԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՂԵՌՆԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ»:*

Սա նույնպես երկար մի վերնագիր, ինչպես *Մելան Զադե Ռիֆաթի* գրքի վերնագիրը... Սա նույնպես

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

ՄՈՐԳԵՆԹԱՈՒ – «Երբ թուրքերը մտան ընդհանուր պատերազմի մեջ և հայտարարեցին Ջիհադ, հայերը գիտեին, թե ինչ է սպասվում իրենց: Համիդյան կոտորածների ժամանակ հայերին և ընդհանրապես քրիստոնյաներին, արտոնված չէր ծառայել թուրքական բանակում և զենք ունենալ: Բայց 1908թ. իշխանությունը գրավեցին երիտթուրքերը՝ ազատություն, հավասարություն, եղբայրություն կարգախոսով և հենց այս կարգախոսից ելնելով՝ հատուկ օրենք ընդունեցին քրիստոնյաներին զինվորագրելու մասին: 1909թ. նրանք կազմակերպեցին Ադանայի եղեռնը, իսկ 1914թ. Առաջին աշխարհամարտի ժամանակ, երիտթուրքերը կանգնեցին փաստի առաջ: Նրանք հասկացան, որ Թուրան տանող ճանապարհը հայերից մաքրելիս հանդիպելու են դիմադրության... որ բանակում ծառայող հայ զինվորը չի հանդուրժելու իր անմեղ ընտանիքի կոտորածը: Եվ 1914 թվականի վերջերին արդեն, բոլոր հայ զինվորները զինաթափվեցին և վերածվեցին ճանապարհաշինարար բանվորների կամ բեռներ կրող անասունների, որոնք թուրքերի ավիների և խարազանների հարվածների տակ, ահռելի ծանրություն ուսերին առած, հոգնած մարմիններն էին քարշ տալիս Կովկասյան լեռների բավիղներում, ճանապարհ բացելով բանակի համար, մինչև գոտկատեղը խրվելով ձյան մեջ, օրեր և գիշերներ շարունակ, առանց հանգստանալու, անսնունդ, քաղցից նվաղելով և

այդ դաժան ճանապարհներին հարյուրներով մեռնելով: Իսկ նրանց, որոնք ի վերջո տեղ էին հասցնում բեռները, խմբով տանում էին հեռու մի տեղ և սպանում՝ նախօրոք նրանց ստիպելով փորել իրենց գերեզմանները: Քաղցից ու ծեծից հյուծված, ծայրաստիճան անկարող դարձած՝ նրանք ոչ ուժ ունեին դիմադրելու և ոչ էլ փախչելու... Հաճախ թուրք սպաները լուր էին ուղարկում քուրդ աշիրաթներին և նրանց հանձնում սովալլուկ և ուժասպառ հայ զինվորներին: Քուրդ տղամարդկանց միշտ միանում էին քուրդ կանայք մսագործի սրած դանակներով, որպեսզի Ալլահից ստանան նրա խոստացած նվերը քրիստոնյա անհավատի արյունը թափելու համար:

Առաջին աշխարհամարտի սկզբին հայերի գլխին պայթեց մի այլ հրաման եւ. որևէ մեկին չի արտոնվում զենք պահել տանը, ինքնապաշտպանության համար, մինչդեռ մուսուլման դրացիները պետք է ունենային իրենց զենքերը: Շատ հայեր զենքերը հանձնեցին հնազանդության իրենց վաղեմի սովորությամբ: Շատերն էլ զգալով դավադրության մահաբեր շունչը, պահեցին իրենց զենքերը, ոչ թե ապստամբություն բարձրացնելու համար, այլ որ կոտորածների ժամանակ կարողանան պաշտպանել իրենց ընտանիքները: Թուրք ոստիկան զինվորները պահած զենքեր փնտրելու պատրվակով կողոպտում էին եկեղեցիները, ամենաածայրահեղ սրբապղծությունների ենթարկելով խորաններն ու նվիրական առարկաները: Քահանաները գանահարվում էին զգայազուրկ լինելու աստիճան այն պատճառով, որ եկեղեցիները համարում էին խռովության օջախներ: Եկեղեցիներում զենք չգտնելու դեպքում եպիսկոպոսներին ու քահանաներին զինում էին հրացաններով, ատրճանակներով, սրերով, տանում պատերազմական ատյաններ որպես օրենքին հակառակ զենք կրողներ: Նրանց այդպես զինելով՝ շրջել էին տալիս փողոցներում՝ գրգռելու համար մոլեռանդ ամբոխի կատաղությունը: Ոստիկան զինվորները կանանց հետ վարվում էին նույն կերպ: Կանայք մերկացվում էին և դաժանորեն գանակոծվում: Զենքի փնտրտուքները ուղեկցվում էին բռնաբարություններով... Իսկ քաղաքներում և գյուղերում դեռևս մնացած տղամարդիկ ձերբակալվում էին և նետվում բանտերը: Եվ խոշտանգման ամեն դիվային միջոց գործադրե-

լով՝ ջանում էին խոստովանեցնել տալ, թե հեղափոխական են և զենք ունեն պահած:

Մի օր այս դաժանությունների մասին խոսեցի Պոլիսի ոստիկանապետ Պետրիի հետ: Սա երիտթուրքերի պարագլուխներից մեկն էր, Թալեաթի մտերիմ բարեկամը: Արյունարբու, ինչպես իր մյուս ընկերները, որ կարողանում էր մեծ ախորժակով և ըմբոշխնումով պատմել այն խոշտանգումների մասին, որոնց ենթարկվում էին հայերը: Նա բոլոր թուրքերի պես խանդավառությամբ ցուցադրում էր ատելի ժողովրդի հանդեպ գործադրված տանջանքի միջոցները և պարծենալով ինձ պատմում այն մասին, որ երիտասարդ թուրքերի պարագլուխները գիշերային գաղտնի նիստերում յուրաքանչյուրը չարչրկում էր իր միտքը՝ հայերի համար նոր տանջանքներ հորինելով: Որ նույնիսկ այդ գաղտնի ժողովների ժամանակ ուսումնասիրվել են իսպանական *Հավատաքննության* արձանագրությունները և չարչարանքի ուրիշ պատմական հիշատակարաններ, որպեսզի կարողանան այդ ասպարեզում կատարելության հասնել:

Պատերազմը սկսված էր, այո: Թուրքերը ազատորեն կարող էին իրենց ազգային կյանքն ապրել իրենց սեփական հակումների համաձայն: Թուրքերը տեսնում էին իրենց կործանված կայսրության ամբողջական հարության ցնորքները: Էապես թուրքը սնապարծ և երկչոտ է: Նա առյուծի պես քաջ է, երբ գտնվում է նպաստավոր իրավիճակի մեջ: Բայց քծնող, գծուծ և կորովազուրկ է, երբ ձախորդությունները ճնշում են նրան: Վարանոտ ու վախկոտ օսմանցին, որ եվրոպական դիվանագիտության լաբիրինթոսից դուրս գալու իր ճանապարհն էր հետազոտում և եվրոպական տերությունների պառակտված գաղափարների մեջ իր շահը գտնելու պատեհությունն էր փնտրում, հիմա իր ցեղային հոգեբանության մյուս կողմն էր ի ցույց դնում: Հոգեբանություն, որով 14-րդ և 15-րդ դարերում շատ զորավոր ժողովուրդների ստրկացրեց՝ գոռոզությամբ ցուցաբերելով այն խոր արհամարհանքը, որ ուներ քրիստոնյա ժողովուրդների հանդեպ: Լսել եմ, թե ինչպես մի ծերունի թուրք ասում էր իր որդուն. *«Զավակս, տեսնո՞ւմ ես խոզերի այս բոլուկը: Ոմանք ճերմակ են, ոմանք սև են, ոմանք մեծ են, ոմանք պզտիկ են, ինչ-որ բանով իրարից տարբերվում են: Բայց բոլորն էլ խոզ են:*

Այդպես էլ քրիստոնյաներն են: Մի խաբվիր, գավակս: Այդ քրիստոնյաները կարող են գեղեցիկ զգեստ հագնել, նրանց կանայք շատ գեղեցիկ կարող են լինել, ճերմակամաշկ և հիանալի... Նրանցից շատերը շատ խելացի են և հրաշալի քաղաքներ են կառուցել և ստեղծել են մեծ պետություններ. Բայց հիշիր, որ այս ամբողջ շլացուցիչ արտաքինի տակ նրանք բոլորն էլ նույնն են: Նրանք բոլորն էլ խոզ են».

ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒՆ դեռ կմենախոսի ճշմարտության պարտադրանքով: Այստեղ միայն այսքանը:

Ուժ ու կորով քեզ այս եղերական պատմության շարունակությունը լսելու համար:

Ե.

ԹՈՒՐՔ ԵՐԴՈՒՄԻ ԳԻՆԸ

(1915 – 1918)

Նրանք մեռնում էին: Նրանք, որ ծնվել էին ապրելու համար: Ես հիմա պիտի թերթեմ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ էջերը, որ հայտնի դառնա քեզ, թե ինչպես մեռան: Չարչարանքների մասին չէ խոսքը... Այլ թե ինչպես հանճարեղ կատարելությամբ բացվեց ՉԱՐԻ պիղծ որովայնը կուլ տալու համար անմեղ զոհերին: Մարդկությունը վաղուց հաշտվել է զոհերի քարավաններին, որոնք անցնում են կյանքի մութ բավիղներով... Իսկ մե՞նք... Հաշտվելով չարի հետ՝ չենք կարողանում հաշտվել, երբ բռնաբարվում է ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ: Սպանե՛ք, կերե՛ք, հագեցե՛ք... բայց ճշմարտության լուսեղեն ոգին մի պղծեք ստով... ՈՃԻՐԸ ոճիր է, անբացատրելի, անընկալելի: Խեղդվելով նրա գարշահոտ շնչից՝ հաշտված ապրում ենք ՈՃՐԻ ճահիճների մեջ... Բայց բավական է, որ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ զոհաբերվի չարագործների պիղծ ուղեղներում, դառնում ենք անհաշտ: Թուրքը Թուրանի ճամփան էր բացում, բայց մինչև հիմա ՍՏԻ ամրոցի աշտարակներից լրծունք է թափում, թե ՁՈՀՎԱԾԸ զոհեց թուրքի արդարությունը:

Լսի՛ր Թալեաթին:

ԹԱԼԵԱԹ – Թեև հայ տարրը բնաջնջելու հարցը, որը դարեր շարունակ ջանում էր ավերել մեր Կայսրության ամբակուռ հիմքը, իսկ ներկայումս իրական վտանգ է դարձել, վճռվել է ավելի վաղ, սակայն հանգամանքները թույլ չէին տալիս իրագործել այդ սրբազան գործը: Այժմ, երբ բոլոր արգելքները վերացված են, և հասել է մեր հայրենիքը այդ վտանգավոր տարրից ազատելու ժամանակը, հաստատակամորեն խորհուրդ է տրվում չենթարկվել կարեկցանքի զգացմունքին՝ ի տես նրանց թշվառ վիճակի, այլ վերջ տալ բոլորին և ամեն կերպ ջանալ ոչնչացնել բուն ՀԱՅԱՍՏԱՆ անվանումը Թուրքիայում: Հետևեք, որ նրանք, ում կվստահվի այդ խնդրի իրագործումը, հայրենասեր և հուսալի մարդիկ լինեն:

...Պատանի բարեկամ, ես խոնավացած հայացքիդ խորքում նորից կարդում եմ քո ծանր հարցը. *«Վկաներն ո՞ւր են»*:

Պատկերացրու նրանց՝ հավաքված քո շուրջը, և լսիր, թե ի՞նչ են ասում նորից ճշմարտության պարտադրանքով:

ՄՈՐԳԵՆԹԱՈՒ – ...Մենք թողել ենք մեր վավերագրերը...

ԼԵՓՍԻՈՒՍ – Մենք նվազագույն չափով միայն կարողացանք նկարագրել այն, ինչ տեսանք անձամբ ու լսեցինք ուրիշ ականատեսներից, որովհետև մարդկայնորեն անհնար է երկու միլիոն զոհի մարտիրոսագրությունը ներկայացնել մանրամասնորեն...

ԲԱՐԲԻ – Այն, ինչ վիճակվեց երկու միլիոն հայի, անգթության և վայրագության այնպիսի պատկեր է ներկայացնում, որ կարելի է կարծել, թե հազարամյակների խտացած խելագարությունը մեկ անգամ ևս անիծված աշխարհի այս հողամասի վրա, ճիվաղային հսկա անասունի կերպարանքով հայտնվեց և հունիսյան կիզիչ արևի ներքևն ի վեր հաղթականորեն բղավեց, թե բոլոր մշակույթները լոկ դիմակներ են, որոնք ամեն օր կարող են պատռվել:

ՆԱՅԻՄԲԵՅ – Իմ հուշերը լի են հայերի աքսորի ու կոտորածների, իրենց հավասարը չունեցող, անմարդկային արարքների մասին պատմություններով...

ՖԱՅԵԶ ԷԼ ՂՈՍԵՅՆ – Ո՞վ կարող է նկարագրել այն զգացումները, որ ճմլում են ականատեսի սիրտը, երբ նա մտածում է այդ դժբախտ ու հերոսական ազգի մասին, որն աշխարհին զարմացրել է իր քաջությամբ և խիզախությամբ, որը դեռ երեկ ամենակենսունակն ու առաջավորն էր Օսմանյան կայսրությունում ապրող բոլոր ժողովուրդներից:

ՍԱՐԻԱ ՅԱԿՈԲՍՈՆ – Այն, ինչ տեսանք, դժվար էր դրանից հետո ապրել... Սակայն ապրեցինք, որ պատմենք...

ԱՐՍԻՆ ՎԵԳՆԵՐ – Ես սկզբից ենթ ականատես եմ եղել Անատոլիայի ծաղկուն քաղաքներում, բերքաշատ դաշտերում հայ ժողովրդի զարհուրելի բնաջնջմանը... Եփրատի ափերին, Միջագետքի անապատներում նրա խղճուկ մնացորդների ոչնչացմանը... Թշվառության ու սարսափների այն պատկեր-

ները, որոնք տեսել եմ սեփական աչքերով, երբեք չեն ջնջվի իմ հիշողությունից:

ՔԱՐԵ ԵՓՓԵ – Բոլոր ամենավայրի, ամենանողկալի մարդկային կրքերը հագուրդ ստացան երկու միլիոն անմեղ ժողովրդի հաշվին:

...Մինչ այս և մյուս վկաներին խոսք տալը՝ լսենք ԷՆՎԵՐ փաշային:

ԷՆՎԵՐ – «Ներկա կացության բերմամբ, կայսերական հրամանով որոշված է հայ ցեղի ամբողջական ոչնչացումը: Այդ մասին պիտի կատարվեն հետևյալ գործողությունները.

1. Մինչև 5 տարեկան մանուկներից բացի օսմանյան հպատակ համարվող և երկրում գտնվող հայ անունը կրող բոլոր բաշիբոզուկները (ողջ զինվորականները), քաղաքից դուրս հանելով, պիտի սպանվեն:

2. Կայսերական բանակների մեջ ծառայող բոլոր հայերին զատել իրենց զորաբաժիններից, ընդհանուրի աչքերից հեռու, ծածուկ վայրերում գնդակահարել:

3. Բանակում գտնվող հայ սպաներն իրենց զորախմբերի բանակատեղիներում պիտի բանտարկվեն՝ մինչև իրենց մասին նոր հրաման ստանալը:

Բանակի հրամանատարությունները 48 ժամ հետո, այս երեք կետերի գործադրության մասին հատուկ զեկույցներ պիտի հղեն մեզ: Սրա համար անհրաժեշտ նախապատրաստություններից զատ, որևէ ուրիշ գործողություններ չպետք է ձեռնարկել:

Ընդհանուր հրամանատարի փոխանորդ
և պատերազմական նախարար Էնվեր»:

ՍԵՆՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ
ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

ԼԵՓՍԻՈՒՍ – Յոհան Լեփսիուս, գերմանացի բողոքական քահանա, «Գերմանա-հայկական ընկերության» նախագահ: Ես երկար տարիներ ապրեցի Թուրքիայում և ուսումնասիրեցի հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում: 1896թ. լույս ընծայեցի իմ առաջին գիրքը. *«ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԵՎՐՈՊԱՆ»*, որն անմիջապես թարգմանվեց ֆրանսերեն, անգլերեն և ուրիշ լեզուներով: 1915թ. ես ստիպված էի նորից այցելել Թուրքիա, որպեսզի իմ սեփական աչքերով տեսնեի հայոց տանջահարված կյանքի հոգեվարքը: Եվ թուրքական կառավարության զարհուրելի ոճիրները մերկացնող բազում վկայություններ հավաքելով՝ գետնեղեի *«ՏԵՂԵԿԱԳԻՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ»*, ապա և՝ *«ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԸ»* գրքում: 1919թ. ես հրատարակեցի *«ԳԵՐՄԱՆԻԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ»* անհերքելի փաստաթղթերի նոր ժողովածուն:

Ես ճանաչում եմ հայ ժողովրդին: Ճանաչում եմ նրա տառապանքը: Հայոց եղեռնի սկիզբը համարվում է 1915 թվականի ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը, երբ ձերբակալվեց Կոստանդնուպոլսի հայ մտավորականությունը: Սակայն ներքին բոլոր գավառներում հայ մտավորականության ձերբակալությունը կատարվել էր մի քանի օր առաջ: Ընդհանուր կարգադրություն կար նախ հայ ժողովրդին զրկել իր մտավորական որդիներից, որպեսզի հնարավոր լինի կոտորածն ու տարագրությունը կատարել առանց աղմուկի ու ընդդիմության, որպեսզի թուրքերի ոճիրների լուրերը ներքին գավառներից չհասնեն Եվրոպա: Հայ ժողովրդի մտավոր ողջ սերուցքը, հարգված և ուսյալ հազարավոր հայեր, երեսփոխաններ, հրապարակագիրներ, բանաստեղծներ, իրավագետներ, փաստաբաններ, բժիշկներ, բանկիրներ, խոշոր վաճառականներ, ճարտարագետներ, ուսուցիչներ, երաժիշտներ, հոգևորականներ, բոլոր ունևոր և ազդեցիկ մարդիկ մի քանի օրվա ընթացքում ձերբակալվեցին, նետվեցին բանտերը, աքսորվեցին, դաժանորեն սպանվեցին: Նպատակը մեկն էր. նախ ժողովրդին գլխատել, ապա մարմնի անդամները միմյանցից անջատել: Անխնա և անխտիր բանտերում հավաքվեցին հայ ժողովրդի մտքի ներկայացուցիչները և ցեղի հույսերը:

Ցեղի հույսերը... Գրիգոր Զոհրապ, Դանիել Վարուժան, Սիամանթո, Ռուբեն Զարդարյան, Ռուբեն Սևակ, Արտաշես Հարությունյան, Թլկատինցի, Երուխան, Տիգրան Չյոկյուրյան, Սմբատ Բյուրատ, Կոմիտաս, Նազարեթ Տաղավարյան, Տիրան Քեչեկյան, Գազիկ Օզանյան... Թող ներեն զոհերը, որ չեմ կարող տալ նրանց բոլորի անունները: Իմ հոգին՝ նրանց հիշատակների առջև մշտապես վառվող կերոն... Բոլոր զոհերի, որոնք իրենց միտքն ու տաղանդն աշխարհի համալսարաններում էին կրթել ու ապա վերադարձել հայրենիք, որ ծառայեն իրենց ժողովրդին անմնացորդ նվիրումով... Նրանցից յուրաքանչյուրը որևէ մարդաշատ ազգի դարակազմիկ քաղաքակրթության ռահվիրան կարող էր լինել... Նրանք՝ այս եղեռնորեն զոհվածները, Հայոց Ոգեղենի ընդերքից պարտադրեցին իրենց տաղանդը այնքան առատորեն ՇԱՏ: Այդ ՇԱՏԸ հոշոտվեց մարդակերպ բորենիների ճիրանների մեջ, որովհետև թուրքը չպիտի հանդուրժեր նրանց... Որովհետև թուրքի ամայի մտքի անդաստանում իշխում էր ՀԱՅՈՑ ՏԱՂԱՆԴԸ: Նրանց մեջլիսներում, մեծ մասամբ, հայերի ձեռքերով էին շտկվում ու մշակվում օրենքները, նրանց դպրոցներում ու համալսարաններում հայ ուսուցիչներն էին թուրքերին սովորեցնում իրենց իսկ ազգային լեզուն, հայ ճարտարապետ-ճարտարագետներն էին կառուցում նրանց պալատներն ու ճանապարհները, նրանց բուժում ու փրկում էին մահից հայ բժիշկները, առևտուրն ու արդյունագործությունը կազմակերպում և երկիրն ամեն իմաստով հարստացնում էին հայերը:

Վաչկատուն, վրանաբնակ ցեղի հոգեբանությունից չազատագրված թուրքը պիտի վայրագորեն դատաստան տեսներ, ամենաքստմնելի ձևեր պիտի ընտրեր քինախնդիր ատելությամբ վրեժ լուծելու համար ՀԱՅՈՑ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԻՑ: Որովհետև հավատացած էր. եթե մեռնի հայությունը, այլևս առանց ջանքի տեր պիտի լինի նրա հանճարին, ինչպես մշտապես թալանով տեր էր լինում նրա ստեղծած հարստությանը: Որ իր ոճրածին արգանդից պիտի դուրս նետի քաղաքակրթություն դարբնող թուրքին: Եվ երբ Թուրան տանող

ճանապարհը ազատի, մահվան երախը նետելով տաղանդավոր, իմաստուն աշխատասեր ժողովրդին, նրա Հայրենիքի հետ ժառանգություն պիտի ստանա մեռած ժողովրդի ՀԱՆՃԱՐԸ:

Ինչպե՞ս, եթե թուրքի երդումի կարևոր խոսքերն են. *«Այնպիսի ԱՎԵՐԱԿՆԵՐ ՊԻՏԻ ԿԵՐՏԵՍ, որ տեսնողներն ասեն. այստեղով թուրքեր են անցել»:*

Իմ պատանի բարեկամ, խնդրում եմ, բաց արա նահատակված գրողների գրքերը, նայիր նրանց լուսավոր դեմքերին պատճենված գրքի առաջին էջում: Նայիր երկար-երկար, ու կարդա նրանց արձակը, նրանց բանաստեղծությունները: Լսիր Կոմիտասի՝ ճշմարիտ, ոգեղեն հայի ճշմարիտ մեղեդիները: Աշխարհը լի է հանճարների մեղեդիներով, որոնց առաջ բաց են մեր հոգիները, բայց մեր ՈԳՈՒ հիմնը եղեռնի ճանապարհներին խելագարված Կոմիտասի արյան ու ավիշների ներսում մաքրագտված մեր ժողովրդի մեղեդիներն են:

Կարդա՛ ու լսի՛ր, սիրելիս...

ԼԵՓՍԻՈՒՍ – Սակայն մտավորականությանը ոչնչացնելուց առաջ, տարագրությունն ու ընդհանուր կոտորածը սկսելուց առաջ, ժողովրդի արական մասը, որ վաղուց զինվորագրված էր և, ըստ պատերազմի նախարար Էնվեր փաշայի վկայության, Դարդանելի և Կովկասի ռազմաճակատներում քաջությամբ էին կռվել հանուն Օսմանյան կայսրության, զինաթափվեց: Նախ օգտագործվեց որպես բեռնակիր և ճանապարհներ նորոգող, ապա դաժանորեն սպանվեց: Երբեք հնարավոր չի լինելու վերականգնել տասնյակ հազարավոր զոհված հայ զինվորների քանակը: Իսկ 16–60 տարեկան տղամարդկանց, որոնք դեռ մնում էին իրենց գավառներում, որովհետև վճարել էին զինվորական ծառայություններից ազատ մնալու հարկը, տարան լեռները և ոչնչացրին, ինչպես ոչնչացրին մտավորականներին և զինվորներին: Զենքերը հանձնելու իշխանության տված հրամանը կատարելու պատրվակով ոստիկանները մտան գյուղերն ու շենները՝ պահանջելով այնքան զենք, որքան երբեք և ոչ մի ժամանակ չեն ունեցել հայերը: Եթե նրանց պահանջածի չափով զենք չէր հանձնվում, բանտ էին նետում մարդկանց և

ենթարկում սոսկալի տանջանքների: Հայերը շատ անգամ ստիպված թուրքերին ու քրդերին էին տալիս իրենց անասունները, զենք ձեռք բերում, որ հանձնեն զենքեր հավաքող ոստիկաններին:

Գյուղերից մեկում քահանային հինգ անգամ գանահարելուց հետո, նրան և մի քանի գյուղացիների, մինչև ատամները գինելով ու ավազակների նմանեցնելով, տարան մահմեդական թաղերը, որպեսզի գրգռեն նրանց գինված հայերի տեսքով: Մահմեդական տականքը դաժանորեն հաշվեհարդար տեսավ նրանց հետ: Իսկ հիմնական նրանց զվարճությունն այն էր, որ քահանաների բերանները, վառոդ լցնելով, լուցկիով կրակ էին տալիս:

ՍԱՐԻԱ ՅԱԿՈԲՍՈՆ – Դանիայի միսիոներների Հայաստանի Խարբերդ քաղաքի միսիոներական կազմակերպության գթության քույր եմ, որ 1907 թվականին եկել եմ Խարբերդ ծառայելու համիդյան կոտորածներից որբացած հայ մանուկներին: Ես իմ *«ՕՐԱԳՐՈՒԹՅԱՆ»* էջերում պատմել եմ այն սարսափների մասին, որ տեսան հայերի մտավորական զավակները:

Խարբերդի տղաների դպրոցի պրոֆեսոր, սիրված ու հարգված բոլորի կողմից մեր սքանչելի բարեկամ Որբերյանին տարան քաղաքի Կարմիր Ղոնախ բանտը և պահանջեցին ասել զենքերի տեղերը: Բայց նա չգիտեր որևէ զենքի տեղ: Նա գիտեր, որ բոլոր զենքերը հանձնված են և այդպես էլ պնդում էր... Նրան այնքան ծեծեցին, որ խելագարվեց: Հետո, այդպես, մի շապիկով, դուրս նետեցին բանտից՝ զվարճանալով նրա զարհուրելի վիճակով: Երբ ձանձրացան այդ զվարճությունից ևս, սպանեցին՝ սպանությունը նույնպես դարձնելով զվարճություն:

Մարդկանց ձերբակալում էին փողոցներում, իրենց վաճառատներում, եկեղեցիներում, դպրոցներում, հիվանդանոցներում և նետում Կարմիր Ղոնախ զարհուրելի բանտը: Սոսկալի էին այդ սքանչելի մարդկանց չարչարանքները... Մեր սիրելի բժիշկ Միքայելին, որն իր գիտությամբ բուժել էր ավելի շատ թուրքերի և նույնիսկ բազմաթիվ անգամ հրավիրվել Ստամբուլ բուժելու երիտթուրքերի պարագլուխներին, ձեռքերը փաթաթե-

ցին քարյուղով թաթախված լաթերով և վառեցին... Վառեցին այն ձեռքերը, որոնք այդքան թուրքի կյանք էին խլել մահվան ճիրաններից... Այդ ձեռքերը... երկու վառվող ջահեր պարզված երկինք...

Մենք՝ դանիացի միսիոներներս, տեսանք, թե ինչպես Կարմիր Ղոնախ բանտից հանեցին նրանց. ուսուցիչներին, բժիշկներին, քահանաներին, վաճառականներին, բոլոր անմեղներին... Նրանց չարտոնեցին նույնիսկ վերջին անգամ հանդիպել հարազատներին... Նրանց թույլ չտվեցին որևէ բան վերցնել իրենց հետ, դրա կարիքը չկար... Նրանց բոլորին տարան լեռները և սպանեցին... Իսկ Մեզրեի բանտը, որը լի էր միայն հայերով, այրեցին... Այրվողների մեջ էին մեր անչափ սիրելի դեղագործ Թորոսը և բժիշկ Նշանը...

Ես տեսա նաև նրանց՝ հայ զինվորներին, որոնց զինաթափել էին, շղթայել միմյանց՝ պարանոցներին գցված երկաթյա ծանր օղակներով: Այդ օղակների տակ անմիջապես նրանց մաշկն էր, նույնիսկ փալասի մի կտոր չկար... Նրանք տանջահար, մեռած հայացքներով, այդպես շղթայված, բանակի բեռներն էին տեղափոխում կամ աշխատում էին ճանապարհների շինարարության վրա... Ես տեսա նրանց... Եվ, ահա, ասում եմ. երանի թե նրանք, որոնք ապրում են պալատներում և պահանջում են, որ պատերազմը շարունակվի՝ այս դժբախտ հայ զինվորների տեղը լինեն...

ԼԵՓՍԻՈՒՍ – Հետո, Անատոլիայի ամայացած հովիտների միջով ձգվեցին տարագրվածների քարավանները: *Կիլիկիայից* դատարկվեցին Սիսի, Ադանայի, Զեյթունի, Մարաշի, Հաճընի, Պայասի, Անտիոքի, Սուեդիայի, Քեսաբի, Այնթապի, Ալեքսանդրետի, Քիլիսի, Այնթապի, Ուրֆայի, Հալեպի գավառները...

Բնակչության ընդհանուր թիվը 242950 մարդ: Հաջողվեց փրկվել 4000-ին:

Արևելյան Անատոլիայի յոթ գավառներից Տրապիզոնից, Սեբաստիայից, Էրզրումից, Խարբերդից, Դիարբեքիրից, Վանից, Բիթլիսից, զոհվեցին 817600 մարդ:

Արևմտյան Անատոլիայի Իզմիթի, Բրուսայի, Կաստամոնուի, Անգորայի, Կոնիայի գավառներից՝ 339800 մարդ:

Որքա՞ն էր Կոստանդնուպոլսի ու Ադրիանապոլսի զոհված հայերի թիվը...

Ինձ չհաջողվեց հաշվել այն տասնյակ հազարները, որոնք զոհվեցին զինվորության մեջ և որոնք բռնի մահմեդականացվեցին... Հավատացեք, դժվար է պատմել եղեռնի պատմությունը ... Բայց ես պիտի պատմեմ, որովհետև ես վկան եմ այն ահարկու տառապանքի, որին ենթարկվեց ամեն բանով գերազանց հայ ժողովուրդը:

Գուցե սկսեմ *Զեյթունի* ողբերգությունից: Ես հիշում եմ, թե ինչպես պաշտպանվեց Զեյթունը համիդյան ջարդերի ժամանակ:

Քաջ ու անպարտ, հպարտ Զեյթունը հիմա չպաշտպանվեց: Ինչո՞ւ: Ըստ երևույթին, նույնիսկ Ադանայի փորձը բացառելով՝ նա հավատում էր դեռ երիտթուրքական կառավարության ազատության, հավասարության, եղբայրության մասին բարբաջող պարագլուխներին: Եվ երբ, 1914թ. դեկտեմբերին կառավարության խիստ հրամանով պետք է հանձնվեին զենքերը՝ հանձնվեցին: Իրենք իրենց զինաթափելուց հետո, եթե ցանկանային էլ՝ չէին կարող դիմել ինքնապաշտպանության: Եվ երբ Զեյթունը պաշարվեց թուրքական բազմաթիվ զորագնդերով, զեյթունցիները ամենուրեք բազմաթիվ ճերմակ դրոշներ բարձրացրին... Զարմանալի բան. նրանք նույնիսկ ոչինչ չկասկածեցին, երբ թուրքական զորքերի ընդհանուր հրամանատարը, իբր խորհրդակցելու համար, տեսակցության հրավիրեց գավառի երեք հարյուր երևելիներին: Նրանք գնացին և չվերադարձան: Նրանց հետևեց 20 հազար մարդ: Այրերին զատեցին կանանցից և երեխաներից և դեպի մահվան երախը քշեցին: Ողջ գավառում մնց հայ թողեցին՝ յուրաքանչյուր արհեստի մեկ արհեստավոր...

Զեյթունից դուրս եկած քարավանները անցան Մարաշից, Ադանայից, մի խոսքով ողջ Կիլիկիո մարզերով՝ իրենց շարքերն ընդունելով բոլոր քաղաքների, գյուղերի ու շենների հայ բնակչությանը:

Ժանդարմները թափորը, որտեղ տղամարդիկ չկային այլևս, առաջ էին քշում գավազանի հարվածներով: Թվում էր, թե մարդիկ քայլելու փոխարեն քաշկռտում էին իրենք իրենց...



Զոհեր



Դահիճներ և զոհեր:

Քարավանը դուրս է բերվում քաղաքից։

Թուրք դահիճ և սովահար երեխաներ։

Բաց գերեզմաններ:

Գավազանն անխնա իջնում էր թե ծեր, թե երիտասարդ կանանց մեջքին, որոնք քշվում էին էգ էշերի խմբերի նման: Ընկածները գանահարվում էին այնքան, որ այլևս մեռած մնում էին ցեխի մեջ: Տարագրյալները ոչինչ չէին կարողացել իրենց հետ վերցնել: Նախ ժամանակ չէին տվել հավաքվելու, և հետո, նրանց ստիպել էին ողջ ունեցվածքը թողնել, որպեսզի բոսնիացի իսլամ գաղթականներին բնակեցնեն հայերի ամեն բանով առատ ու լի բարեշեն տներում: Արդեն միայն Զեյթունում 20–25 հազար թուրք էին տեղավորել:

Թուրքերը կատարյալ զառանցանքի մեջ էին: Անկարելի է նկարագրել այն տառապանքները, որով անցնում էին տարագրրյալները: Բռնապոծումները, կանանց և երիտասարդ աղջիկների առևանգումները, բռնադատյալ կրոնափոխությունը, վայրագ կատաղությունն ընդդեմ մանուկների, կանանց ու ծերերի... Նույնիսկ ծննդաբերելու մոտ կանայք անասունների պես քշվում էին խարազանների հարվածներով... Կանայք շալակած, գրկած, փեշերից կախ ընկած երեխաներին քաշկոտում էին իրենց հետ մահվան ճանապարհներով դեպի վերջնակետ՝ Արաբիո անապատը:

Իսկ ինչպե՞ս էին նրանք, այնուամենայնիվ, ապրում: Որոշ տեղերում կառավարությունը հացի չնչին կտորով պահում էր նրանց, որ մի կերպ հասնեն անապատ: Որոշ տեղեր էլ, այնտեղից, որտեղից անցնում էին քարավանները, տեղացի մահմեդականներին թույլ էր տրվում ուտելիք վաճառել սովյալներին: Ոմանք կարողացել էին իրենց հետ ոսկի ու զարդեղեն վերցնել և, որպես կանոն, օգնում էին չունևորներին: Բայց դա ընդամենը մի կաթիլ էր տառապանքի օվկիանոսում: Քարավանները շատ արագ վերածվեցին ցնցոտիապատ, փոշու և կեղտի կույտ դարձած տարաբախտների: Երեխաները քարշ էին գալիս բոբիկ ոտքերով, միայն մի պատառոտուն գոգնոց ունենալով վրանները, ցրտից ու քաղցից դողդողալով, մաշկի տակից դուրս պրծած ոսկորներով: Նրանք հազարներով պառկում էին ճանապարհների եզրերին և համակերպված մեռնում:

Երեխանե՛րը:

...Մի պահ փակիր աչքերդ և թող քո կոպերի տակից սահեն ու անցնեն այդ երեխաները... Սքանչելի երեխաներ, առողջ, լի կյանքով, ապա տարագրված մանուկների սոսկալի խմբեր... Մեռած ու վերապրող մանուկներ... Սքանչելի գեղեցկություն և դրան հաջորդող զարհուրելի պատկերներ... Իրար խառնվող, իրար ձուլվող... Մշուշներից հառնող ու մշուշների մեջ անհետացող... Եվ ճանապարհներ, ճանապարհներ, էլի ճանապարհներ, որոնք տեսել են մանուկների անլուր տառապանքները...

ԼԵՓՍԻՈՒՍ – Հունիսի 28-ին Տրապիզոնում ստացվեց հրաման. *«Հինգ օրվա ընթացքում ողջ հայությունը պիտի հեռանա քաղաքից»:*

Նախ ձերբակալեցին քաղաքի 600 մտավորականներին, որոնք լցվեցին նավը՝ իբր Սամսոն տանելու համար: Սակայն Տրապիզոնի նավահանգստից քիչ հեռու, բաց ծովում նրանց դիմավորեց ժանդարմներով և չեթեներով լի նավը: Բոլորը սպանվեցին և ծով թափվեցին: Մտավորականներով լեցուն նավը իր բեռից դատարկվելուց հետո վերադարձավ Տրապիզոն: Ապա նորից նավերը հայերով լցվեցին և ծովի խորքերում բեռնաթափվեցին: Հուլիսի 6-ին Տրապիզոնի բոլոր հայերի տները դատարկվեցին: Չի հաստատվել, որ նրանցից որևէ մեկը կառավարության դեմ ուղղված որևէ շարժման մասնակցած լինի: Եթե մեկը հայ է, դա բավական է, որ նա համարվի ոճրագործ: Հայերի տները շատ արագ թալանվում էին ոստիկանության կողմից: Թուրք ամբոխը անգղների երամի նման հետևում էր ոստիկանությանը, սպասելով, որ նա տներից դատարկի արժեքավոր իրերը, որպեսզի մնացածը թալանեն իրենք:

Այս դեպքից 15 օր հետո Տրապիզոնի դիմացի ծովը ապառաժների վրա էր նետում մերկ դիակներ, որոնք երկար կոճղերի նման ջրերի վրա ծփալով ափ էին նետվում՝ տարածելով սահավոր դիահոտ: Կոհակները Տրապիզոնի իտալական վանքի պարիսպների ստորոտին, ավազոտ ծովեզերք էին նետել

անհաշիվ կանանց ու երեխաների դիակներ... Տեղացի հույն կանայք նրանց բոլորին թաղեցին:

Տրապիզոն քաղաքի, շրջակա գյուղերի ու շենների 32 700 հայ ծովը թափվեց, գետերը լցվեց, տարագրվեց:

ԱՆՐԻ ԲԱՐԲԻ – Տարագրվեցին, բայց տեղ չհասան... Ես՝ Անրի Բարբի ֆրանսիացի լրագրող, որպես թղթակից եղա պատերազմական գործողությունների ասիական թատերաբեմում, Արևմտյան Հայաստանում և Միջագետքում... Ինձ վիճակվեց դառնալ հայոց ողբերգական անցուդարձի ականատեսը... Ես գրեցի իմ գիրքը և անվանեցի *«ՍԱՐՍԱՓԻ ԵՐԿՐՈՒՄ»:*

Այո, Տրապիզոնից և շրջակա գյուղերից 32 700 հայ ծովը թափվեց, գետերը լցվեց, տարագրվեց... Տարագրվեց, բայց տեղ չհասավ: Չնայած այս պարագային դժվար է ասել, թե որտեղ էր տեղը, ուր պիտի հասնեին աքսորյալները: Նրանց բաժանել էին խմբերի, որոնց քաղաքից դուրս հանեցին քրդերով ու չեթե հրասակներով շրջապատված և ճանապարհի առաջին անկյունադարձին սկսվեցին սպանությունները և առևանգումները, անպատմելի սարսափի տեսարանները... Այրերին բաժանեցին իրենց կանանցից ու երեխաներից և սրի, դանակի, հրացանի կոթերի հարվածներով, անգթության հազար նրբություններով սպանեցին նրանց: Հողը, խոտը թաթախված էր արյամբ: Այլևս ոչ մի տղամարդ չկար: Դժխեմ գործը շուտով ավարտվեց: Երբեմն-երբեմն դեռ հեռվից լսվում էր հրացանի կրակոցի արձագանք... Մի ոճրագործ իր հրացանն էր պարպում վիրավոր մեկի վրա, որն համառում էր մեռնել:

Տղամարդկանց ոչնչացնելուց հետո՝ դահիճները հարձակվում են կանանց և երեխաների ողբալի երամի վրա: Սարսափից խելագարված մայրերը, մանուկներին իրենց կրծքին սեղմելով, նայում էին մոտեցող թուրքերին, որոնք ոտից գլուխ իրենց ամուսինների, որդիների, հայրերի արյան մեջ էին թաթախված: Կանանց մարտիրոսությունը, որոնք քիչ առաջ տեսել էին իրենց այրերի մորթվելը, դեռ չէր ավարտվել:

Բարբարոսները խլում էին նրանց գրկից մանուկներին, մոտակա ժայռերի վրա նրանց գլուխները ջախջախելով, ծովն էին նետում: Կատաղորեն կոտրատում էին մայրական բազուկ-

ները, որոնք հուսահատորեն մանուկներին սեղմել էին կրծքերին: Շատերն իրենց գրկի մեջ խեղդում էին փոքրիկներին, որ ազատեն նրանց թուրքի չարչարանքներից: Դեպի երկինք էին բարձրանում աղիողորմ ճիչերը, սարսափի և ցավի աղաղակները, բուռն աղերսները, խելագարության և հոգեվարքի գոչյունները...

Մանուկները իրար ետևից, ոչ միայն ապառաժներին զարնվելով, ջախջախվում էին, այլ նաև բարբարոսները, զարկելով իրենց ծնկներին, կոտրատում էին նրանց մեջքը և նետում ծով: Երևակայությունն ընդունա՞կ է, արդյոք, պատկերացնել այս տեսարանը. երկու թուրք, սպանդից գինովցած, բռնել են մանկան ոտքերից ու թևերից, ողջ ուժով քաշում են ու հռհռում, մինչև մանկան թևը, պոկվելով մարմնից, մնում է մեկի ձեռքում: Տառապանքի ահավոր աղաղակով, որը խլացնում էր բոլոր մյուս մարդկային ոռնոցները, խելագարված մայրը խոյանում է ճիվաղների վրա, որոնց ձեռքին է դեռ իր հոշոտված զավակի անկենդան մարմինը, բայց չհասած նրանց՝ դագանակի շեշտակի հարվածից սպանված ընկնում է: Եվ սա նույնպես դահիճների համար զվարճալի խաղ է դառնում: Նրանք արդեն հարբել են դաժանությունից... Նրանք հիմա հեգ մանուկներին կենդանի-կենդանի անդամահատում են, կտրատում, կտորները չորս կողմ նետում: Երեխաների հետ հաշիվները մաքրելուց հետո՝ նրանք նետվում են կանանց վրա, բռնաբարում, հետո թափում նրանց փորոտիքը:

Զոհերի զարհուրելի ոռնոցը հասնում է մինչև Տրապիզոն:

Սարսափի այս տեսարաններից հույն բժիշկ Մեդաքսան խելագարվեց: Ես տեսա նրան:

...Դու ահաբեկված ես... Դու շփոթված ես ոճրի վայրապար ուժից, հոգուդ մեջ անզոր պատեպատ զարնվող կարեկցանքից... Ես նույնպես ահաբեկված եմ, որովհետև մինչ հիմա վամպիրների զարհուրելի խրախճանքին գինու փոխարեն արյուն է մատուցվում... Ես լսում եմ հարցը, որն ուզում ես տալ. *«Մի՞թե Հայոց եղեռնի մութ ընդերքներում մեր արյունը չենք*

կարողացել թանկ ծախել վամպիրներին...»: Եղել է և այդպես, հավատա... Բայց թող այդ մասին էլ խոսեն ականատեսները:

ՄՐԳԵՆԹԱՈՒ – Վանի նահանգը գտնվում է Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում: Նա Օսմանյան կայսրության ամենագեղեցիկ ու ամենաբերրի հատվածներից մեկն է, որ հարուստ է նաև պատմական սքանչելի հիշատակներով:

Վանի նահանգի գլխավոր քաղաքը Վանն է հոծ հայությամբ: Թեև Վանը Հայաստանի մյուս նահանգների նման կեղեքումի և ջարդի ժամանակներ է ապրել, սակայն համեմատած Հայոց մյուս գավառների հետ ավելի խաղաղ ու բարգավաճ էր: Կրթված և աշխատասեր հայերը ապրում էին քաղաքի լավագույն մասերում և տանելի հարաբերություններով կապված էին իսլամական թաղերի տղմոտ հյուղակներում ապրող թուրքերի ու քրդերի հետ: Սակայն նահանգի դիրքը շատ անգամներ է այն թատերաբեմ դարձրել պատերազմի համար: Եվ, ահա, հիմա էլ, եթե Ռուսաստանը արշավեր Թուրքիա, ամենադյուրանցելի ճանապարհներից մեկը այս նահանգով պիտի անցներ: Պատերազմը նոր էր սկսվել և բանակի պարենավորման համար կատարվող գրավումները Վանում ևս, ինչպես և մնացած գավառներում, ծանրացան առավելապես հայերի ուսերին: Հայերը լռությամբ տարան այն թալանը, որ բանակի պարենավորման պատրվակով կատարեցին թուրքերը: Թուրք սպաների հրամաններով բռնագրավվեցին հայերի բոլոր ընտանի կենդանիները, ցորենի մինչև վերջին հատիկը և նաև ուրիշ այնպիսի ապրանքներ, որոնք ոչ մի կապ չունեին բանակի պարենավորման հետ: Բայց ընդհանուր զորահավաքը արթնացրեց հայերի վախը, որը սաստկացավ, երբ եկավ հասավ այն լուրը, թե ինչպես են թուրքերը զինաթափել և խոշտանգելով սպանել իրենց իսկ բանակում ծառայող հայ զինվորներին: Վախն ավելանում է նաև այն պատճառով, որ թուրքերը տարածում էին լուրեր, թե Կովկասյան ռազմաճակատում թուրքական բանակի պարտությունների պատճառը հայերն են, որովհետև ռուսական ուժերի կարևոր մասը կազմված է նրանցից: Իսկապես հայերի

մոտավոր կենը ապրում էր Ռուսաստանում և ցարի հպատակներ էին: Նրանք բոլոր Ռուսիո քաղաքացիների նման ենթարկվում էին զինվորական ծառայության: Թուրքերի կատաղությունը բխում էր այն իրողությունից, որ երբ պատերազմի սկզբին *«Միություն և առաջադիմություն»* կուսակցության պարագլուխները Կարինի և Վանի հայ ղեկավարներին կոչ արեցին Ռուսական Հայաստան գնալ, Ռուսական կառավարության դեմ հեղափոխություն բարձրացնելու համար, որ թուլանան նրանց պատերազմական դիրքերը՝ օսմանցի հայերը բնականաբար մերժեցին: Դավադրությամբ գնալ մի երկրի դեմ, որտեղ ապրում էին իրենց եղբայրները, նրանք պարզապես անկարող էին: Սա էլ սաստիկ գրգռեց թուրքերին: Հայերի մերժումը համարվեց դավաճանություն և հայ ժողովրդին ջարդի ենթարկելու իրենց ողջ ոճրագործ արարքի հիմնական արդարացումը: Երեսուն տարիներից ի վեր հայերը ենթարկվում էին ամենանողկալի կեղեքումի և սպանդի, սակայն թուրքերը, չգիտես բարոյական ինչ իրավունքով, հայերից պահանջում էին, որ նրանք զենք բարձրացնեն սեփական ժողովրդի զավակների դեմ:

Ոչ մեկի համար գաղտնիք չէր, որ հայերը համակիր էին Ռուսաստանին. *«Եթե ուզում եք իմանալ, թե ինչպիսին է պատերազմի ընթացքը,* – գրում է թուրք երգիծական թերթերից մեկը, – *նայեցեք որևէ հայի դեմքին: Եթե նա ժպտում է, որևէմ ռուսները հաղթում են, եթե մռայլ է, նշանակում է գերմանացիներն են հաղթում»:*

Սակայն 1914թ. աշնանը և 1915թ. ձմռան ողջ ընթացքում, թեև մթնոլորտը լցված էր խռովությունների կանխանշաններով, թեև հայերը գիտեին արդեն բանակում կատարվող իրենց երիտասարդների մասսայական ոչնչացման մասին, սակայն նրանց ինքնազսպումը միայն հիացմունք կարող էր առաջացնել: Թուրքերի քաղաքականությունը հայերի հանդեպ ոչ մեկի համար գաղտնիք չէր: Նրանք ամեն կերպ փորձում էին զանազան սադրանքներով հայերին ստիպել կատարել այնպիսի արարքներ, որ պատճառ դառնան նոր ջարդերի: Հայ եկեղեցական և քաղաքական առաջնորդները գիտեին թուրքերի սադրանքների մասին և ժողովրդի մեջ մտնելով՝ նախազգուշաց-

նում էին և խնդրում համբերությամբ հանդուրժել ամեն անարգանք, նույնիսկ ծայրահեղություններ, որպեսզի առիթ չտան թուրքերին՝ ընդհանուր կոտորած սկսելու: Որովհետև *«...եթե նույնիսկ թուրքերը մեր մի քանի գյուղեր կրակի տան, մի դիմեք փոխարեժի, որովհետև ավելի լավ է մի քանի գյուղ ոչնչանա, քան ամբողջ ազգը կոտորվի»,* – ասում էին նրանք:

Երբ պատերազմը սկսվեց, Վանի կուսակալը Զևդեդն էր՝ Էնվերի փեսան: Կենդանավոր, դավող, վայրագ, արյունարբու՝ համաձայն իր ցեղի հոռեգույն ավանդներին, նա ատում էր հայերին և սրտով համակիր էր հայկական խնդիրը լուծելու վաղեմի թուրքական ծրագրին:

Քանի դեռ ռուսները մոտենում էին Վանին, թուրքերը զգուշանում էին մի հարվածով վերջ տալու Վանի հայությանը: Բայց ռուսները ժամանակավոր նահանջեցին: Թուրքերը, փոխանակ նահանջող ռուսներին հետապնդելու և վերջնական հարված տալով տևական հաղթանակ շահելու, իրենց զենքերն ուղղեցին Վանի գյուղերում բնակվող կանանց, երեխաների և ծերերի դեմ: Երեք օրվա ընթացքում 24 հազար հայ սպանվեց: Այս ջարդերից հետո Զևդեդը Վան քաղաքից պահանջեց չորս հազար զինվոր: Հայերը հրաժարվեցին կատարել նրա պահանջը՝ իմանալով, թե ինչ է սպասվում իր վերջին կռվող զավակներին: Հայերը, սակայն, առաջարկեցին փրկագին վճարել, որպեսզի կարողանան ժամանակ շահել: Զևդեդը հայտարարեց, որ Վանը ըմբոստացել է, և ինքը պիտի ճգմի այդ ըմբոստությունը:

Ապրիլի 20-ին թուրքերը հրետանու կրակ տեղացին պաշարված քաղաքի վրա: Քաղաքի մի մասն անմիջապես կրակի մատնվեց: Հայերի ողջ կռվող ուժը 1500 մարդուց էր բաղկացած, որոնք ընդամենը 300 հրացան և ռազմամթերքի անբավարար պաշար ունեին: Զևդեդի կատարելապես սպառազինված և պարենավորված 5000-ոց բանակի հետ, մի բուռ հայերի դեմ, կռվում էին նաև հազարավոր քրդեր...

Հայերը կռվում էին ծայրահեղ քաջությամբ և հնարագիտությամբ: Ես պաշարումների կռիվների պատմություն չեմ գրում, հետևաբար չեմ կարող մանրամասնորեն նկարագրել անհատական դյուցազնության բազմաթիվ դեպքեր, հայ կա-

նանց քաջաբար կռվելը տղամարդկանց կողքին, հայ պատանիների եռանդը և կորովը, ամերիկացի բժիշկ միսիոներների անձնազոհությունը և շատ ուրիշ պարագաներ, որոնք այդ զարհուրելի ամիսը դարձրեցին ժամանակակից հայոց պատմության ամենից փառավոր էջերից մեկը: Այս պատմությունը անչափ սիրելի է նաև այն պատճառով, որ հայերը հաղթեցին: Հինգ շաբաթ գիշեր-ցերեկ անընդհատ կռիվներից հետո նրանք հաղթականորեն դիմավորեցին ռուսական բանակին, որը, վերջապես հասնելով Վան, ստիպեց Զևդեդին փախուստի դիմել: Զևդեդը իր *«քաջարի»* բանակի ողջ կատաղությունը թափել տվեց շրջակա անպաշտպան գյուղերի վրա: Դոկտոր Աշերը՝ ամերիկացի միսիոներ բժիշկը, վկայում է, թե այդ կոտորածից հետո ռուսները հավաքեցին և դիակիզեցին 55 հազար զոհված հայերի դիակներ:

Ես Վանի այս պատմությունը պատմեցի ոչ միայն այն բանի համար, որ սա ողջ մի ժողովրդի կազմակերպված բնաջնջելու քայլերից մեկն էր, այլ նաև այն բանի համար, որ թուրքերի կողմից որպես արդարացում իրենց բոլոր ոճիրների՝ այդ դեպքերը առաջ են քաշվում որպես կոտորածները սկսելու պատճառ, անկախ այն բանից, թե երբ են տեղի ունեցել դրանք, Վանի պաշտպանությունից առա՞ջ, թե՞ հետո:

Երբ ամեն անգամ հայերին պաշտպանելով դիմում էի Թալեաթին, Էնվերին և նրանց նմաններին, նրանք անփոփոխ հիշում էին Վանի *«հեղափոխությունն ու դավադրությունը»*: Բայց ահա այս պատմությունը ցույց տվեց, որ այդ համբավավոր *«հեղափոխությունը»* ուրիշ բան չէր, եթե ոչ միայն հայերի կազմակերպված պաշտպանությունը հանուն իրենց կանանց և երեխաների, հանուն իրենց արժանապատվության: Որովհետև գիտեին. չպաշտպանվելու, չկռվելու դեպքում պիտի ենթարկվեին սպանդի, ինչպես ենթարկվում էին առհասարակ անպաշտպանները:

Ուրեմն սա՛ է ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ:

Ճշմարտություն է նաև ռուս դիպլոմատ, իրավաբան և պատմաբան ԱՆԴՐԵՅ ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻ պատմությունը՝ զետեղված նրա գրքերում, որը գրված է հսկայական քանակու-

թյամբ փաստաթղթերի, թուրքական աղբյուրների, ականատեսների և սեփական դիտարկումների հիման վրա: Հայ ժողովրդի համար ամենաողբերգական ժամանակահատվածում, համիդյան կոտորածներից մինչև երիտթուրքերի եղեռնագործությունը, Մանդելշտամը եղել է Թուրքիայում և աշխատել է ռուսական դեսպանատանը: Նրա *«ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ»* գիրքը նույնպես

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Է ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

ՄԱՆԴԵԼՇՏԱՄ – Թուրքական կառավարության ստահոդ հայտարարություններին հակառակ, ոչ մի հայկական խռովություն կամ հեղափոխություն չէր եղել: Հայերը զենքի դիմեցին միայն այն ժամանակ, երբ տեսան կոտորածի սպառնալիքը՝ ենթարկվելով իրենց կյանքը հնարավորին չափ թանկ վաճառելու բնական ցանկությանը:

Վանում նրանք զենքի դիմեցին միայն շրջակա գյուղերի բնակչության մեծ մասի կոտորածից և վալիի՝ Զևդեդ բեյի հրամանով նրանց անվանի շատ քաղաքացիների դավաճանական սպանությունից հետո: Ռազմական գործողությունները սկսել էին թուրքերը, որոնք սակայն, չէին կարողացել գրավել հայկական դիրքերը: Վանից վռնդված Զևդեդ բեյը իր մսագործների գումարտակներով, ինչպես անվանում էին նրանց, սկզբում շարժվեց *Սորբի*, սրի քաշեց բնակիչներին, հետո *Բիթլիս*, որտեղ կոտորեց 15 000 հայ: Այս ընթացքում Հայոց Աշխարհի ամեն անկյունում կոտորածներ էին... Այնտեղ, որտեղ, հակառակ կատարված խուզարկությունների, հայերը կարողացել էին զենքեր պահել, իրենց դահիճներից պաշտպանվում էին, բայց երբեք առաջինը չէին հարձակվում:

Եվ այսպես, զինված դիմադրության ժամանակ տեսնում ենք ոչ թե հեղափոխականների, այլ դժբախտների, որոնք գերադասում էին կռվել մինչ ի մահ, քան դանդաղ տառա-

պանքներ կամ աքսորի թշվառություններ կրել: Հայերին չի կարելի նախատել այն բանի համար, որ նրանք պաշտպանում էին իրենց կյանքը: Սակայն դժբախտաբար միայն աննշան փոքրամասնությունը կարողացավ դա անել: Այդ փոքրամասնությունից էր նաև *Շատախը*...

Ի դեպ Էնվեր փաշայի պատվարժան փեսան՝ արյունախում Զևդեդը, իր առաջին հարվածը ուղղեց Շատախին: Շատախը որոշեց թանկ տալ իր կյանքը: Դեռ ապրիլի 4-ին թուրքերը կրակ բացեցին հայկական թաղամասերի վրա: Բայց թշնամու բոլոր հարձակումները ձախողվեցին: Տղամարդկանց հետ կռվում էին կանայք: 12 տարեկան Սրբուհին և 50 տարեկան Ասմարը ճարպիկ, խիզախ սուրհանդակներ էին, որոնք հասնելով մինչև թշնամու դիրքերը՝ վերադառնում էին լուրերով... Հավաքում էին սպանված թուրքերի զենքերը, բերում, հասցնում էին հայոց դիրքերը:

Թուրքերից բացի մոլեգնում էին քուրդ հրոսակները, որոնք ավերեցին, հրի մատնեցին շատ գյուղեր՝ մինչև վերջին մարդը կոտորելով բնակիչներին: Բայց *Փեսանդաշտում* հավաքված հալածական վեց հազարանոց հայերի խումբը, ունենալով ընդամենը 150 հրացան և 70 ատրճանակ, սահմանափակ քանակությամբ փամփուշտներով, կարողացավ ետ մղել թուրքերի ու քրդերի բազմահազարանոց, մինչև ատամները զինված զորքը՝ թնդանոթների հետ միասին:

Շատախի զինվորական առաջնորդները այսպես դիմեցին ժողովրդին. *«Հուսահատվելու կարիք չկա: Մենք չպետք է մոռանանք, որ ամեն օր մենք մեր պատմական կռվի էջերն ենք գարդարում: Աշխատենք, ուրեմն, մեր սերնդին փառավոր պատմության էջեր թողնելու»:*

42 օր պաշտպանվելուց հետո Շատախն ազատագրվեց, երբ մոտեցող ռուսական զորքերից ահաբեկված՝ թուրքերը փախան:

ԼԵՓՍԻՈՒՍ – Մշեցիները նույնպես կարողացան կազմակերպվել և դիմել անձնվեր գոյամարտի:

Եթե թուրքերը Տրապիզոնի հայության հաշվեհարդարը տեսան՝ նրանց նետելով ամենակուլ ծովի խորքերը և ջախջախելով ժայռերի վրա, ապա Մուշ քաղաքի, նրա սքանչելի դաշ-

տի 300 գյուղերի բնակիչների հաշիվը հիմնականում կրակով մաքրվեց:

Բիթլիսում բոլոր հայերին կոտորելուց հետո հուլիսի կեսերին թուրքական 20 հազարանոց բանակը տասնմեկ թնդանոթով պաշարեց Մուշը: Հրաման տրվեց հայերին երեքօրյա ժամկետում թողնել քաղաքը, բայց հրամանից երկու ժամ հետո զինվորները ներխուժեցին տները, ձերբակալեցին շատերին և բանտ տարան: Միաժամանակ սկսեցին կրակել թնդանոթները: Հրի էին մատնում տները: Եվ այնտեղ ողջ-ողջ այրվողների հոգեցունց աղաղակները երկինք էին հասնում: Բայց միևնույն է. մշեցիները կարողացան կազմակերպվել և դիմել անձնվեր գոյամարտի: Դրությունը չափազանց ծանր էր, որովհետև թուրքերն արդեն գրավել էին քաղաքի բարձունքները:

Թնդանոթների կրակին ուղղություն էին տալիս գերմանացի սպաները...

Հայերի լավագույն զենքը հրացաններն ու ատրճանակներն էին, որոնք չափազանց սահմանափակ էին: Կանայք կռվում էին տղամարդկանց հետ կողք կողքի: Երեխաներն ու ծերերը, ինչպես Վանում, պարեն էին հայթայթում կռվողներին: Հայերը կենաց ու մահու գոտեմարտ էին մղում ամեն տան համար: Մարտերն ավելի կատաղի էին Վերին և Ձորի թաղերում: Վերին թաղում բանը հասավ ձեռնամարտի, որտեղ թվով քիչ հայեր մեծ կորուստներ պատճառեցին թուրքերին: Ապա հայերը ստիպված եղան կենտրոնանալ միայն Ձորի թաղում, ուր և տեղի ունեցավ մշեցիների վերջին գոյամարտը: Թուրքական զորքերին օգնում էին քաղաքի թուրք բնակիչները: Հայերի վիճակն անհուսալի էր: Եվ, երբ շատերը տեսան, որ պարտությունն անխուսափելի է, հրազենով կամ թույնով սպանեցին իրենց հարազատներին, փակեցին իրենց տների դռներն ու պատուհանները և իրենք էլ ներսում կրակ տվեցին: Այսպես զոհվեց Տիգրան Սիմոնյանի ողջ գերդաստանը՝ 70 մարդ: Ընտանիքների նահապետները այսպես ազատում էին իրենց սիրելիներին բռնապղծվելուց և տանջահարվելուց:

Ձորի թաղում պատսպարվածները տասնյակ հազարներով արյունռուշտ հրոսակների կողմից հոշոտվեցին, մորթվեցին,

այրվեցին... Միայն 700 մարդ կարողացավ ճեղքել շրջապատումը և հասնել Սասուն:

Մուշի ողջ գավառի դահճապետներն էին՝ կատաղի իթթիհաթական Մուստաֆա Աբդուլ Խալգը, Մուշի երեսփոխան խոջա Իլիասը, Սերֆեթ բեյը, Վանից փախած «դասաբ-վալի» Զևդեդը, քրդերի առաջնորդ Հաջի Մուսա բեկը, որը, սպանելով հնձվորներին, հովիվներին ու ջրվորներին, նրանց գերդաստանների բոլոր անդամներին, ալան-թալանով տանում էր նրանց ամբողջ ունեցվածքը, մինչև անգամ ավելները... Մուսա բեկը շտապում էր ոչնչացնել դաշտավայրի գյուղերի բնակիչներին. *«Հրաման կա, ով օսմանների հողում տա Հիսուս Քրիստոսի անունը, կենդանի չպետք է մնա»*.

Բայց Մշո դաշտի շատ գյուղեր նույնպես պաշտպանվեցին մինչև իրենց մահկանացուն կնքելը:

Մշո դաշտը, որտեղ հազարավոր դարեր ապրել ու աշխատել էր հայ հողագործը, Էնվերի ու Թալեաթի հրամանով վերածվեց անապատի: Զարհուրելի կոտորածի հետևանքով ամայացավ 300 գյուղ, զոհվեց 75 000 հայ:

Մուշից հետո հերթը Սասունինն էր:

Մի՞թե հնարավոր է նոր խոսքեր գտնել սասունցիների նոր գոյամարտի մասին պատմելիս: Դեռ Համիդի օրերից սկսած՝ թուրքերը չէին հանդուրժում միշտ ազատ ապրելու երազանքով սնվող սասունցիներին: Սկսվել էր Հայոց ահռելի Եղեռնը, ուրեմն հայոց մյուս գավառների նման պիտի կործանվեր, հոշոտվեր, ջարդվեր, հայաթափ լիներ Սասունը:

1915 թվականի մարտին, երբ դեռ չէր եկել հասել Ապրիլի 24-ը, թուրքական զորքերն ու քրդական հրոսակախմբերը հյուսիսից ու հարավից ներխուժեցին Սասուն: Առաջին թեժ մարտերը տեղի ունեցան ապրիլ-մայիսին: Թուրքական թնդանոթները որոտում էին ամեն կողմից: Հայերը թուրքերին մեծ կորուստներ պատճառելով, իրենց մարտական ուժերը հավաքեցին *Անդոկ* սարի վրա: Անդոկի ու Տալվորիկի կռիվները սասունցիների քաջության արժանի հերոսամարտեր էին:

Մշո կոտորածից հետո թուրքական 30 հազարանոց կանոնավոր բանակը, քրդերի հազարավոր զինված ջարդարարները, մարդկային նկարագիրը կորցրած ոստիկանների ու չեթեների խմբերը ամեն կողմից հարձակվեցին զինամթերքը պարպած սասունցիների վրա:

Ծանր մարտեր էին լեռների ծերպերի, քարափների, ձորերի ու անդունդների եզրերին... Լեռները ներկված էին ազնիվ հայորդիների արյունով... Բազմաչարչար ժողովրդի հազարավոր զավակներ կռվեցին դիրքերում մինչև զոհվելը և չմտածեցին երբեք լքել՝ իրենց սև ճակատագիրը փրկելու համար... Նրանք կռվեցին մինչև խեղդվեցին շրջապատման օղակում: Իսկ սասունցի կանայք, որոնց հաջողվել էր հասնել բարձրաբերձ լեռներին, զավակներին գրկած նետվեցին իրենց հպարտ լեռների խորխորատները...

Գիտե՞ս, սասունցիներից մի քանի հազարը, այնուամենայնիվ փրկվեց... Նրանց հաջողվեց դուրս գալ շրջապատումից՝ վերջին գնդակը կրակելուց հետո: Նրանք գնացին, գնացին, մինչև հասան Արագած լեռանը, որովհետև նրանք առանց լեռ ապրել չէին կարող... Իրենց հիմնած գյուղերով փաթաթվեցին Արագած լեռանը ու մնացին, որ մի օր գնացած ճանապարհով ետ գան... Ետ գան ու հասնեն Սասնա լեռներին... Բարձրանան նրանց գագաթները և երկինքն ի վեր աղաղակեն. եկա՜նք...

Գիտե՞ս. *Շապինգարահիսարցիները* նույնպես կռվեցին: Նրանք ասացին. *«Մեռնելու երկու ձև կա. պատվավոր ու անպատիվ... Թող աշխարհն ասի, թե՝ շապինգարահիսարցիները պատվով մեռան...»*. Ես քեզ կպատմեմ Շապին-Գարահիսարի մասին:

Թուրքերը շրջապատեցին քաղաքը և պահանջեցին, որ տեղահանվեն: Ասացին ու տեղնուտեղը գերմանական սպանների հրամանատարությամբ թնդանոթների դիպուկ կրակով հրդեհեցին 3000 տուն: 20 25 հազար հայեր ամրացան քաղա-

քի ամրոցում: Ընդամենը 500 մարդ զենք ուներ և կարող էին կռվել: Նրանք կարողացան ամրոցի պարիսպներից ետ մղել թուրքերին: Թուրքերը Սեբաստիայից համալրում և նոր թնդանոթներ ստացան... Սակայն գարահիսարցիներն անընկճելի էին: Նրանց դրությունը օրավուր ծանրանում էր. սպառվում էր պարենը, զինամթերքը, ջուրը:

Երբ վիճակը դարձավ անհուսալի, պաշտպանության 27-րդ օրը, հունիսի 25-ին որոշվեց գիշերային հարձակումով ճեղքել թշնամու պաշտպանական գիծը և դուրս գալով հարևան շրջանները՝ օգնություն ստանալ բերդում գտնվողներին փրկելու համար: Նրանք կարողացան դուրս գալ մահվան օղակից, բայց չկարողացան վերադառնալ: Ամրոցում մնացած կանայք, ծերերը, երեխաները թույն ընդունեցին ու մեռան:

Ամրոցը լռել էր: Բայց թուրքերը չէին համարձակվում մոտենալ... Իսկ երբ հունիսի 29-ին ներխուժեցին ամրոց և տեսան թունավորված, արդեն մեռնող, բայց դեռ կենդանի մարդկանց՝ սկսեցին նրանց գազանաբար կոտորել... Սա զարմանալի չէր: Թուրքի ոչ մի բարբարոսության վրա չի կարելի զարմանալ...

Զարմանալի՞ն... Հոգեվարքի մեջ գտնվող թույն ընդունած կանայք, երեխաները, ծերերը գրկախառնվում էին թուրքերի հետ և նրանց իրենց հետ առած՝ նետվում էին ժայռերից ներքև...

...Ես հիմա կլռեմ, որ իմ խոսքը տամ ՔԱՐԵ ԵՓՓԵԻՆ, որի պատմությունը նունպես

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Է ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

ՔԱՐԵ ԵՓՓԵ – Ես դանիացի միսիոներուհի եմ, որ ականջալուր լինելով համիդյան հայկական ջարդերի ողբերգությանը՝ քսանյոթ տարեկան եկա Հայաստան՝ ծառայելու դոկտոր Յոհաննես Լեփսիուսի ՈՒՐՖԱ քաղաքում հիմնած որբանոցում: Եկա՝ ծառայելու հայ մանուկներին, որոնք որբացել էին

արյունոտ սուլթանի ջարդերի ժամանակ: Ես ականատեսն ու վկան եմ ավելի սոսկալի մի ժամանակի, որը կոչվում է 1915 թվական:

Ուրֆա քաղաքում նույնպես ամեն բան նույնությամբ սկսվեց: Ձերբակալվեցին քաղաքի մտավորականներն ու երևելիները, որոնց մեջ էր մեր կողմից չափազանց հարգված ու սիրված Ուրֆայի հայ թեմի առաջնորդ ԱՐՏԱՎԱԶԴ վարդապետ ԳԱԼԵՆՏԵՐՅԱՆԸ: Պարտադրվեց զենքերի հանձնում և ապա ոչնչացվեցին 1500 ուրֆացի զորակոչված երիտասարդներ:

Ուրֆան գիտեր, թե հաջորդ արյունոտ արարքը ինչ է լինելու: Եվ ՄԿՐՏԻՉ ՅՈԹՆԵՂԲԱՅՐՅԱՆԻ գլխավորությամբ ուրֆացիները որոշեցին՝ մնռնել իրենց տուն ու տեղը, իրենց գերդաստանը, իրենց պատիվը պաշտպանելով: Նրանք այնքան կազմակերպվեցին, որ նույնիսկ զինարհեստանոց և հիվանդանոց ունեին վիրավորների համար:

Սեպտեմբերի 29-ին և 30-ին թուրք հրոսակախմբերն ու ոստիկանները հարձակվեցին հայկական թաղամասերի վրա, բայց նահանջեցին՝ թողնելով 400 դիակ:

– *Թուրքեր*, – գոչում էին հայերը՝ հարվածելով թշնամուն, – *թուրքեր, դուք մեզ հուսահատության մղեցիք... Դուք ամեն, ամեն կողմ մահ ու ապականություն եք տարածում... Բայց մենք պատրաստ ենք մնռնել՝ զենքը մեր ձեռքին.*

Ուրֆա ուղարկվեց վեց հազար զինվորով և թնդանոթներով կանոնավոր զորք, որին միացավ 12 հազար հրոսակ... Անընդհատ, առանց դադարի՝ գնդացիրների, թնդանոթների հրաձգություն էր, բայց թուրքերին չհաջողվեց գրավել հայոց դիրքերը, որոնք պաշտպանում էին ընդամենը 800 հայ մարտիկներ:

Հոկտեմբերի 9-ից թուրքական զորքերին, որոնց առաջնորդում էր Ֆախրի փաշան, սկսեցին ղեկավարել Ուրֆա հասած գերմանացի բարձրաստիճան զինվորականները Ֆախրի փաշայի տեղակալ գնդապետ Վոլֆիսկանի հրամանատարությամբ: Բայց հայերը չընկճվեցին: Զինված խիզախ աղջիկների երեք ջոկատ էր առասպելական հերոսությամբ կռվում տղամարդկանց ջոկատների կողքին: Եվ որքան պատանիներ... գրեթե երեխաներ... Սակայն օրեցօր նոսրանում էին կռվողների

շարքերը: Թնդանոթները դիպուկ էին խփում՝ խաչաձև կրակով, մեծ հմտությամբ... Գերմանացի սպաները քաջատեղյակ էին իրենց գործին... Իսկ հայերի ռազմամթերքն ու պարենը սպառվում էին... Բայց հայերը որոշել էին մեռնել՝ զենքը ձեռքներին... Ծանր վիրավոր Մկրտիչ Յոթնեղբայրյանը պատգարակով դիրքից դիրք էր գնում ու ոգևորում իր մարտիկներին... Իսկ հետո Ֆախրի փաշան նրա մոտ ուղարկեց Ուրֆայի գորգագործարանի տեր, գերմանացի Էքարդին, որը պիտի պահանջեր նրանցից դադարեցնել կռիվը, հանձնվել՝ խոստանալով կյանքը...

Մկրտիչ Յոթնեղբայրյանը պատասխանեց. *«Եթե ձեր մեջ քաղաքակիրթ և քրիստոնյա մարդու զգացում կա. փրկեցեք անապատների մեջ կոտորվող անմեղ հայ ժողովրդին»*:

Հայկական թաղի ինքնապաշտպանությունը չէր կարող ավելի երկար դիմադրել թշնամու գերազանց ուժին: Իրար ետևից ոմբակոծվում էին դիրքերը, հրամանատարները սպանվում էին: Վիրավորվում է նաև հայերի վերջին հրամանատարը, որն արյունաքամվելով, իր վերջին ուժերը հավաքելով, աղաղակում է. *«Տոկացեք... ամեն գնով տոկացեք...»*:

Արձակված ռումբերից ճեղքվում է Մայր եկեղեցու պատը, որտեղ ապաստանել էին կանայք և երեխաներ... Նրանք բոլորն արդեն գիտեին, որ մեռնելու էին... Նրանք ոչնչացրին, կրակի բերան տվեցին իրենց տները, ունեցվածքը:

Հոկտեմբերի 23-ին թուրքերն ու գերմանացիները խուժեցին հայկական թաղամաս: Կենդանի մնացած երեխաներին և կանանց դուրս քշեցին թաքստոցներից և գազանաբար սպանեցին:

Երբ Օսման բեյի մոտ բերեցին տղամարդու հագուստով մարտիկ հայուհիներին, բեյը հրամայեց մերկացնել նրանց... Սակայն նրանցից մեկը հանեց թաքցրած ատրճանակը, դիմահար կրակոցով սպանեց Օսմանին... հետո իր մարտական քույրերին՝ ազատելով նրանց անպատվությունից և վերջին փամփուշտով՝ ինքն իրեն...

Թաղամասերից մեկում մի թաքստոց թուրքերը չէին կարողանում երկար ժամանակ վերցնել: Երբ վերջապես գերմանացիները թնդանոթներով քարուքանդ արին՝ տեսան ընդամե-

նը մի ջահել աղջկա դի, թևի մեկը պոկված, մյուս թևով հրացանը կրծքին սեղմած...

Թուրքերը կարողացան գերի վերցնել վիրավոր, այլևս անկարող պաշտպանվելու 120 տղամարդ... Նրանց կախեցին:

Ֆախրի փաշան ասաց. *«Ի՞նչ կլիներ մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի Ուրֆաներ մեր դեմ ծառանային...»*:

Ուրֆայի, նրա շրջակա գյուղերի բեկորների շարանները ձգվեցին աքսորի ճամփաներով...

Նրանք տեղ չհասան:

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

ՊՈԼ ԴՅՈՒ ՎԵՈՒ – Ես գրեցի *«ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՋ ԵՆ ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՎՐԱ»* գիրքը: Աշխարհի շատ գրադարաններում կգտնեք այդ գիրքը, որ ես՝ ֆրանսիացի պատմաբանս, գրեցի ճշմարտության պարտադրանքով...

Հալեպի վիլայեթի Անտիոք գավառի *Մուսա Լեռան* փեշերին տարածված գյուղաքաղաքներից է *Սվեդիան*: Նրա շուրջը ընդամենը հայկական վեց գյուղ կար վեց հազար բնակչությամբ: Խաղաղ, բայց քաջարի երկրագործ ժողովուրդ, որը սիրում էր զբաղվել շերամապահությամբ և մեղվաբուծությամբ, ուներ դպրոցներ և եկեղեցիներ... Գյուղախմբի հայությունը կղզիացած էր համատարած մահմեդական բնակչության մեջ ու թեև հեռու չէր Քեսաբի հայոց շրջանից, բայց ճանապարհների բացակայության պատճառով կապը կտրված էր: Սվեդիայի հայությունը, ինչպես իր ազգային բնավորությունն է՝ իշխանության դավերից հեռու մնալու համար, բարեխղճորեն միշտ կատարել էր իր քաղաքացիական ծանր պարտքը: Բայց նա երբեք չէր խոնարհվել թուրքերի առջև և քաջաբար ընդվզել

էր: 1895թ. սուլթան Համիդի ջարդերին մի մարդու նման այդ մի բուռ հայերը կանգնեցին ջարդարարների կանոնավոր զորքերին դեմ հանդիման և չկոտրվեցին: Ադանայի կոտորածի ժամանակ էլ 1909թ., երբ թուրք խուժանը կանոնավոր զորքերի հետ հարձակվեց *Մուսա Լեռան* գյուղերի վրա, խուճապահար փախուստի դիմեց: Եվ, ահա, հիմա եկել էր ավելի զարհուրելի փորձություն, քան մինչ այդ եղածները: Մուսալեռցիներն էլ ենթարկվեցին զորահավաքի, պատերազմական տուրքերի, կամայականությունների, բռնությունների: Իսկ երբ սկսվեց բռնագաղթը, երբ մուսալեռցիները լսեցին նույնիսկ քաջ և անպարտելի զեյթունցիների տեղահանության ու կոտորածների մասին, որոշեցին, որ կենդանի չպետք է հանձնվեն թուրքերին: Պիտի բարձրանան *Մուսա Լեռ* և պիտի պայքարեն՝ կամ մինչև փրկություն, կամ մինչև մահ...

Նրանք լեռ բարձրացան հուլիսի 30-ին: Կռվողներն ընդամենը 600 հոգի էին, որոնք բազմաթիվ անգամ կռվեցին ու, ծանր կորուստներ տալով թշնամուն, ետ շպրտեցին նրա հինգհազարանոց, թնդանոթներով զինված բանակը:

Այդ մարտերից մեկի ժամանակ, որը տևեց 12 ժամ հորդ անձրևի տակ, զոհվեց մարտը ղեկավարող քաջորդիներից մեկը, և երբ նրան փորձեցին դուրս բերել կռվից՝ գոչեց. *«Աղաչում եմ, ինձնով մի զբաղվեք... Ես արդեն ինչ-որ պիտի լինեի եղա... Դուք թշնամուն դիմադրեցեք: Մանավանդ մի տարակուսեք վերջնական հաղթանակի վրա: Մերը պիտի լինի հաղթանակը».*

Այս մարտը օգոստոսի 10-ին էր: Իսկ օգոստոսի 19-ին թշնամին, պարտության կատաղությունից ավելի գազազած, այս անգամ ինը հազարանոց կանոնավոր զորքով ու հրոսակախմբերով հարձակվեց: Ընդհանուր հրամանատարը Ֆախրի փաշան էր, որն հետո դարձավ Ուրֆայի դահիճը: Երկու օր անընդհատ ահեղ մարտեր տեղի ունեցան: Թուրքերին հաջողվեց նույնիսկ մի քանի կետերում ճեղքել հայերի պաշտպանական գիծը, բայց, այնուամենայնիվ, հազար հոգուց ավելի զոհ տալով՝ նահանջեցին... Հայերը կարողացան փախած թուրքերի թողած ռազմավարը վերցնել:

Թուրքերը հրաժարվեցին հարձակումներից: Նրանք որոշեցին հայերին կոտորել սովահարությամբ և 15 հազարանոց զորքով պատնեշեցին *Մուսա Լեռը*:

Իսկ մուսալեռցիները որոշեցին ազդանշան տալ՝ լեռան ծովահայաց եզրին բարձրացնելով երկու լայնատարած ճերմակ սավաններ, որոնց վրա նկարված էին կարմիր խաչեր և գրված. *«Քրիստոնյաները վտանգի մեջ են»*: Օր ու գիշեր դրանց շուրջը խարույկներ էին վառվում անցնող նավերի ուշադրությունը գրավելու համար: Այնտեղ հաստատվել էր նաև մշտական հերթապահություն, որպեսզի որևէ մարտանավի երևալու դեպքում օգնության ավելի հստակ ազդանշաններ տրվեն: Պահակներից մեկը, որը լավ լողորդ էր, պետք է լողար դեպի նավը և իր հետ տաներ մետաղյա տուփի մեջ դրված անգլերեն լեզվով դիմում-աղերսագիրը. *«Մենք այստեղ ապաստանել ենք թուրքական բարբարոսություններից, խժդժություններից, կոտորածներից և մահից... Դիմում ենք հանուն քաղաքակրթության՝ ընդդեմ բարբարոսության այս ոտխի և խնդրում ազատել մեր կյանքն ու պատիվը... Եթե դա հնարավոր չէ, խնդրում ենք փոխադրել մեր կանանց, ծերերին, երեխաներին և պարենավորել մեզ զենք-զինամթերքով, պարենով, որ շարունակենք կռվել թուրքերի դեմ: Խնդրում ենք, մի թողեք, որ ոչնչանանք, ազատեցեք մեր կյանքը, ազատեցեք մեր պատիվը, քանի դեռ ուշ չէ...»*:

Սեպտեմբերի 5-ին երևաց ֆրանսիական նավը, որը, նկատելով ճերմակ պաստառների գիրը, մակույկ ուղարկեց ափ:

Ռազմանավը հեռացավ՝ խոստանալով օգնություն ուղարկել: Թուրքերը քնած չէին: Նրանք նորից կատաղի հարձակման անցան: Սակայն այս անգամ ևս հայերը այնպիսի ջախջախիչ հարված տվեցին թուրքերի առաջապահ զորքերին, որ ստիպեցին մյուսներին խուճապահար փախչել:

Սեպտեմբերի 10-ին ֆրանսիական երկու ռազմանավ սկսեցին գնդակոծել թուրքական դիրքերը, ապա նույն ամսի 13-ից 15-ը ֆրանսիական *«Ժաննա դ' Արկ»* նավը իր տախտակամածի վրա վերցրեց կենդանի մնացած չորս հազար մուսալեռցիներին: Ի դեպ ֆրանսիական նավատորմում էր ծառայում

ծովային սպա, հայորդի ՏԻՐԱՆ ԹԵՔԵՅԱՆԸ: Մուսալեռցիները իրենց փրկության համար նրա ջանքերին էին պարտական:

Փրկված մուսալեռցի քաջ երիտասարդները ձեռքերը ծալած չնստեցին: Նրանք մտան Արևելյան լեգեոնի մեջ և ֆրանսիական զորքերի կազմում կռվեցին թուրքերի դեմ:

ԹԱԼԵԱԹ – «9 սեպտեմբերի 1915 թվական: Թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը լիովին վերացված է: Դրան համապատասխան՝ կառավարությունը իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել անգամ օրորոցի երեխաներին: Մի քանի նահանգներում այս հրամանի իրագործումը արդեն տվել է իր արդյունքները: Թալեաթ, ներքին գործերի նախարար»:

ԼԵՓՍԻՈՒՍ – Ես կարող եմ առանձին-առանձին նկարագրել Թալեաթի նշած *«արդյունքները»*: Նկարագրել բոլոր գավառներից, քաղաքներից ու գյուղերից հանված հայերի տառապանքները, բայց դրանք կլինեն նույն դաժան ոճրի պատմությունները շատ քիչ տարբերակներով... Նույն ճակատագրին ենթակա *Կարինը, Երզնկան, Բաբերդը, Մեբաստիան, Մարզվանը, Խարբերդը, Կեմերեկը, Մալաթիան, Տիգրանակերտը, Ալաշկերտը*... Նույն ահեղամռունչ վկաները՝ *Եփրատն ու Տիգրիսը* ... Տիգրիսը, որը կուլ տվեց Բաղեշի ողջ հայությանը:

Կրկնում եմ. ինչ-որ գրում եմ թուրքերի կատարած բոլոր անգթությունների փոքր մասն է միայն: Ես կարող եմ բոլոր պատմած իրողությունների համար տալ թվականներ և անձանց անուններ, որոնք ականատես վկաներ են... Առաջիններից, ահա, Էրզրումի գերմանական գինվորական միսիայում ծառայած երկու գթության քույրերի վկայության պատառիկները, որոնք *«բախտ են ունեցել»* անցնել *կամախ Բողազ* կիրճով տարաբախտ ժողովրդի հետ: Մայիսի վերջերին, հունիսի սկզբներին այստեղ քշվեցին 20–25 հազար հայեր, առավելապես կանայք ու երեխաներ, որոնք տեղահանվել էին Երզնկայից: Մի քանի օրում նրանք բոլորը բարբարոսաբար ոչընչացվեցին: Ի տարբերություն այլ վայրերի, որտեղ տեղահան-

ված հայերի կոտորածը իրականացնում էին նրանց ուղեկցող ժանդարմները և զինված ավազակախմբերը, այստեղ ոճիրն ի կատար ածեցին թուրքական 86-րդ հեծելազորային բրիգադի զինվորները:

ԳԹՈՒԹՅԱՆ ՔՈՒՅՐԵՐ – Հետևյալ առավոտյան մահվան դատապարտվածների քարավանները, որոնք եկել հասել էին *Երզնկա Կարինից, Բաբերդից*, այդ գավառների հարյուրավոր գյուղերից, ճանապարհ ընկան: Անասելի թախիծ էր տիրում... Գնում էր մեծ ամբոխը, ընդամենը մի քանի տղամարդ, մնացածները կանայք ու երեխաներ... Կանանցից շատերը խելագարված էին... Շատերը, մեզ տեսնելով, բղավում էին. *«Խնայեցեք մեզ, մենք կդառնանք մուսուլմաններ, գերմանացիներ կամ ինչ-որ ուզում եք... միայն թե խղճացեք մեզ... Մեզ տանում են Կամախ Բողազ, որ մեր վիզը կտրեն...»:* Մյուսները լռում էին և համբերատար գնում՝ շալակած իրենց երեխաներին... Մի քանիսն էլ աղերսում էին մեզ փրկել իրենց երեխաներին...

Երզնկայից քիչ հեռու քարավանները, Կամախի ճամփան բռնելուց առաջ, կանգնում էին: Բազմաթիվ թուրք ձիավորներ էին ընդառաջ գալիս՝ մանուկներ և երիտասարդ աղջիկներ ջոկելու: Այստեղ գերիների շուկա էր: Այստեղ գնածի փոխարեն որևէ բան չէր վճարվում:

Մենք անընդհատ նոր քարավանների էինք հանդիպում: Նորից՝ շատ քիչ այրեր, մնացածները կանայք և մանուկներ: Շատերը խարտյաշ, խոշոր, կապույտ աչքերով, որոնք մահվան լրջությանն անգիտակից պայծառությամբ այնպես էին նայում, որ թվում էին երկնային հրեշտակներ... Գնում էին, որպեսզի բոլորն էլ ժայռերի բարձունքներից գահավիժեն *Կամախի Բողազ* անիծյալ անդունդը...

Դա անպաշտպան կանանց, երեխաների ու ծերունիների հանդեպ գործադրած գազանային հաշվեհարդար էր, անողոք նախճիր...

Մեզ ուղեկցող թուրք ժանդարմը պատմեց, որ Կամախ մտնող քարավանները այլևս այնտեղից դուրս չեն գալիս: Մենք այդ ժանդարմին ասացինք. *«Եթե սպանելու եք, ինչո՞ւ իրենց գյուղերում չեք սպանում, ինչո՞ւ եք նրանց մատնում այս տասկալի թշվառությանը... այս տառապանքին»:* Նա մեզ պատաս-

խանեց. *«Ի՞նչ պիտի աննինք նրանց դիակները: Նրանք պիտի գնշ հոտեին»*:

Արյունակզակ ջարդարարների գոռում-գոչյունով կիսամեռ ու մեռած հայերի դիակները նետվեցին հորանջող անդունդն ի վար... Մարդկային մարմինների ջախջախումը վիհերի մեջ արձագանքվում էր՝ մոտալուտ մահվան զարհուրանքից գալարվող զոհերի խելացնոր կանչերին, ողբ ու կոծին խառնըված... Մայրերն ու հայրերը տեսան իրենց զավակների բզկտումն ու փեռեկտումը, որոնց դիակները մնում էին կախված ժայռերի ցցվածքների վրա... Մայրերը, մահվան դժոխային ուրվականից խելագարված, զավակների ու ամուսինների ետևից անդունդն էին նետվում... Հուսակտուր մարդկային արարածները՝ արյունռուշտ գազանների առաջ ծնրադիր, խնդրում էին, որ շուտ մեռնեն... Ոմանք գութ էին հայցում, ոմանք իրենց զավակներին անձամբ գետն էին նետում, որի ափերին դիակներից կազմված ամբարտակներ էին բարձրանում: Դիակների հարվածների տակ ահեղացող գետի ջրերի ճողփյունն էր լսվում: Միայն մեկ ժամվա հրեշային գործ չէր սա, ոչ: Երեք օր անընդհատ շարունակվեց ջարդը: Ապառաժների ցցվածքների վրա՝ ցանցնված ուռած դիակներ, որոնք ժանտախտի անտանելի շնչով էին լցրել օդը...

Մնաս բարով, *Կամախի Բողազ*:

ԱՆԻ ԲԱՐԲԻ – Մահվան քարավաններ... տարագրյալների ողբալի հոտեր, որոնք դեռ չէին կոտորվել և հիմա գնում էին կողոպտված, ուժասպառ դեպի աքսոր և դեպի ջարդ: Լլկանքի մղձավանջից խելահեղ տասնյակ հազարավոր կանայք և երեխաներ Հայոց Աշխարհի ողջ տարածքից հավաքված... Սոսկումից խելահեղ անհուն քարավաններ, որոնք դանդաղորեն դեպի անապատ էին գնում՝ ճանապարհի ողջ երկարությամբ խիտ շարքերով դիակներ թողնելով...

Ամեն անգամ, երբ մոտենում էին քրդական գյուղերին, նրանց կանայք ու տղամարդիկ շրջապատում էին այդ բզկըտված քարավանները, քաշկոտելով պոկում զգեստները վրաներից... Եվ քիչ անց, դեպի մահ էին գնում մերկ քարավանները...

Նրանք, որոնք ամենից առաջ ջարդվեցին, երջանիկ էին: Ամեն երեկո, հայրերի, մայրերի, մանուկ եղբայրների, ծերերի աչքերի առջև բռնապղծվում էին նույնիսկ ութ-տասը տարեկան աղջիկները: Դիմադրողները հրացանի կոթի մի հարվածով կնքում էին իրենց մահկանացուն:

...Իսկ մնռած մայրերի որբուկները, որոնք արդեն կարող էին քայլել, գնում, կառչում էին մի ուրիշ կնոջ քղանցքից: Նրանք, որոնք դեռ քայլել չգիտեին, մնում էին ճանապարհին և մնռնում էին: Եթե կանանցից մեկը ցանկանար վերցնել ճանապարհին մնռնող որբուկին, դաժանորեն գանահարվում էր:

. Երկու օրը մեկ նրանց մի քիչ հաց էին բաժանում, որը բոլորին չէր բավարարում: Ճանապարհի երկարությամբ երբեմըն ցորենի չհնձված արտեր էին հանդիպում: Եթե կարողանում էին խուսափել թուրք պահապանների հայացքից, ցորենի հասկեր էին հավաքում կամ այրված դաշտերից վառված, խարկված հատիկներ... հազարներով մնռնում էին քաղցից ու ծարավից: Ծարավի՛ց: Առավոտից մինչև գիշեր ամառվա հասարակածային արևի տակ քայլել... Ծարավից խելագարվածների թիվը օր օրի ավելանում էր: Տևական սարսափն ու տառապանքը խելահեղության էր հասցնում հատկապես այն կանանց, որոնք մի քանի երեխա ունեին: Նրանք, որոնք կարողանում էին գոնե մի երեխա փրկել, համարվում էին երջանիկ: Ոմանց հաջողվում էր խուսափել պահապանների վայրագ հսկողությունից և պահվել ցորենի արտերի մեջ այն հույսով, որ հետո կարող են փախչել և ապաստանել լեռներում: Այսպես եղավ *Շեխյանի* ցորենի արտերում: Չեթեները շրջապատեցին արտերը, որտեղ թաքնվել էին հինգ հարյուրի չափ կանայք իրենց երեխաներով: Բռնեցին բոլորին, փակեցին գյուղի հարդանոցում և կրակ տվեցին:

Իսկ քարավանները քայլում էին:

Ճանապարհն անցնում էր գետի խորունկ հովտի միջով: Մայրերը, օգտվելով կանգառից, փորձեցին լվանալ զավակների ցավոտ ոտքերը՝ քիչ հանգիստ տալու համար: Հենց այդ ժամանակ չեթեներն ու քրդերը սկսեցին կրակել ոչխարի պես միմյանց գլխի հավաքված կանանց ու երեխաների վրա: Շատերը

գետն էին նետվում... Վարժ նշանառունները կրակում էին գետի մակերեսին երևացող գլուխներին:

Օ՜հ, ցավից ու սարսափից խելագարված ի՜նչ ոռնոց էր՝ համեմված չեթենների հրացանների բոմբյուններով, հոհոռոցով ու հայհոյանքով...

Քարավանները դանդաղ էին առաջանում: Դա ձեռնտու չէր չեթեներին: Նրանք հաճախակի լուր էին տալիս մոտակա աշիրաթների քրդերին... Հրոսակներն իջնում էին լեռներից... Հարյուրավոր հրացաններից միանգամից կրակ էր բացվում քարավանի վրա... Քարավանը փախչում էր քառարշավ, զարհուրանքով...

Գողգոթան շարունակվում էր:

Գետերն անցնելիս մայրերն իրենց զավակներով ջուրն էին նետվում, որ ջրերի մեջ գտնեն իրենց հանգիստը: Շատերը, տառապանքից խելագարված, խեղդում էին իրենց զավակներին, որ նրանք հավիտենական քնով հանգիստ առնեն... Շատերն անձնասպան էին լինում, երբ գալիս էին բռնապղծողները: Այդ անհուն տառապանքի մեջ նրանց վսեմ հոգիները չէին ուզում նշավակ լինել ամոթին:

ՍԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

ՖԱՅԵԶ ԷԼ ՂՈՍԵՅՆԻ. *«ՀԵՐՈՍԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՅՅԱԼԻՑ: ՋԱՐԴԵՐՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»:*

ՖԱՅԵԶ ԷԼ ՂՈՍԵՅՆԻ – Ես բնդվին եմ, Իլիջուում ապրող սուլթա ցեղի առաջնորդներից մեկի որդին: Ուսանել եմ Կոստանդնուպոլսում՝ աշարից ցեղի դպրոցում: Ես գրեցի 1915 թվականի հայերի կոտորածի մասին: Ես այդ ամիսներին ստիպված եմ եղել տեղից տեղ անցնել: Աշխարհի շատ գրադարաններում կգտնեք իմ գիրքը ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, հայերեն, արաբերեն լեզուներով: Երբ պատերազմը վերջանա, այս գրքի ընթերցողները կհամոզվեն, որ ես ճշմարտու-

թյունն եմ գրել, գրել եմ սակայն սոսկ աննշան մասն այն չարագործությունների, որ կատարվել են տարաբախտ հայ ժողովրդի դեմ:

...Սերուջից մենք գնում էինք Ուրֆա: Ճանապարհին տեսա հետիոտն ընթացող ամբոխներ: Հեռվից թվացին զորամասեր: Երբ մոտեցանք, տեսանք, որ հայ կանայք էին, որոնք գնում էին ստվար շարքերով, բոկոտն ու հյուծված: Նրանց առջևից ու հետևից գնում էին ժանդարմները: Եթե մեկը ուժասպառ լինելուց հետ էր մնում, ժանդարմները խզակոթով ծեծում էին, երբեմն՝ սպանելու աստիճան: Իսկ ոմանց թողնում էին մեն մենակ ճանապարհի մեջտեղում՝ հոշոտվելու վայրի գազանների կողմից, կամ էլ ժանդարմները գնդակահարում էին: Մենք անընդհատ հանդիպում էինք ճանապարհի եզրերին ընկած բազմաթիվ դիակների: Ցավս անտանելի էր... Հեկեկանքը, առանց իմ կամքը հարցնելու, դուրս էր թռչում կոկորդիցս... Ի՞նչ հանցագործություն էին կատարել այդ կանայք: Մի՞թե նրանք պատերազմել էին թուրքերի դեմ կամ սպանել էին նրանցից գրեթե մեկին... Ո՞րն էր այդ անպաշտպան էակների հանցանքը... Նրանց միակ մեղքն այն էր, որ նրանք հայուհիներ էին, որոնք գիտեին միայն իրենց գործն ու տնտեսությունը, դաստիարակում էին իրենց երեխաներին և երբեք չէին հետաքրքրվում ոչ մի բանով, բացի ամուսինների ու զավակների համար ընտանեկան բարեհարմարություն ստեղծելուց և իրենց պարտականությունները կատարելուց... Ամենուրեք դիակներ էին մինչև Ուրֆա, Ուրֆայից Դիարբեքիր: Երբ հասանք Դիարբեքիր, այնտեղ այլևս ոչ մի հայ չկար: Նրանց բոլորին իբր թե Մուսուլ գաղթեցնելու պատրվակով, լցրել էին Տիգրիս... Ո՞վ կարող է նկարագրել այն զգացումները, որ ճմլում են ականատեսի սիրտը, երբ նա մտածում է այդ դժբախտ ու հերոսական ազգի մասին, որն աշխարհին զարմացրել է իր քաջությամբ ու խիզախությամբ, որ դեռ երեկ ամենակենսունակն ու առաջավորն էր Օսմանյան կայսրությունում ապրող բոլոր ժողովուրդներից, իսկ այժմ դարձել է անցյալի հուշ: Նրա դպրոցները, որ մի ժամանակ լի էին աշակերտներով, այժմ դատարկ են...

Հայերին բնաջնջելու եղանակները տարբեր էին: Իշխանությունները Բիթլիսում հայերին լցնում էին մեծ, հարդով լի մարագները և հրկիզում: Ես ցնցվել էի, երբ ինձ պատմեցին, թե ինչպես մի ջահել ու գեղեցիկ աղջիկ գրկից բաց չի թողել իր փեսացուին և աներկյուղ մահվանն ընդառաջ է գնացել, նրա հետ մտնելով կրակով բռնված մարագը, այն դեպքում, երբ մի թուրք ցանկացել է նրան ազատել: Մուշում էլ էին հայերին հրկիզում հարդով լի մարագներում: Մեծ մասը սակայն զոհվում էին գնդակներից, դանակներով ու դագանակներով...

Իշխանությունները վարձում էին մսագործների, որոնք մարդասպանի արհեստի համար օրական մեկ ոսկի էին ստանում: Եղանակներից մեկն էլ այն էր, որ ժանդարմները կանանց ու երեխաներին կապում էին իրար և բարձրությունից ցած նետում: Այդ վայրը ես տեսա Դիարբեքիրի ու Մարդինի միջև... Այսօր էլ այնտեղ մարդկային ոսկորների մեծ բլուր կա: Դիարբեքիրում իշխանությունները հայերին բնաջնջում էին մերթ հրով, մերթ սրով... Երբ դեռ չէր սկսվել ընդհանուր ջարդը և տեղահանությունը, թուրքերը հրդեհեցին Դիարբեքիրի շուկան: Հայերը նետվել էին մարելու, բայց զինվորները շրջապատել էին շուկան և արգելել: 1600 խանութ այրվեց այն ժամանակ: Հայերը մինչև վերջին թելը կորցրին իրենց ունեցվածքը: Բայց այդ հրդեհը ի՞նչ էր, համեմատած այն կրակի հետ, որի ճարակը դարձան հենց իրենք՝ կենդանի հայերը:

Հաճախ նրանց խումբ-խումբ նետում էին ջրհորները կամ փոսերի մեջ և կենդանի-կենդանի թաղում: Հազարներով ջրահեղձ են արել Տիգրիսում և Եփրատում... Հազարավորները մահացան ծարավից, սովից ու սարսափից դեպի Տեր-Զոր ձգվող ճանապարհներին...

Շեքեթ բեյը՝ պետական ծառայողներից մեկը, որին հանձնարարված էր հայերին կոտորելու գործը, վկաների ներկայությամբ ինձ պատմեց. «Ես ուղեկցում էի աքսորված հայերի քարավանը: Երբ Դիարբեքիրի սահմաններից դուրս էինք եկել, սկսեցինք գնդակահարել նրանց, առջևս հայտնվեց մի քուրդ: Ձեռքերս համբուրելով՝ նա աղաչում էր, որ իրեն տամ իր հավանած մի տասը տարեկան աղջկա: Ես դադարեցրի հրացանազարկը, բերել տվեցի աղջկան ու ասացի՝ մենք քեզ

կիանձնենք այս մարդուն, կյանքդ կփրկվի: Բայց աղջիկը նետվեց մահվան դատապարտվածների կողմը: Ես նորից դադարեցնել տվեցի կրակը և նորից բերել տվեցի աղջկան: *«Ես քեզ խոցում եմ, ուզում եմ կյանքդ փրկել: Գնա այս մարդու հետ: Նա քեզ լավ կպահի»*: *«Ես հայ աղջիկ եմ,* – ասաց նա, – *ծնողներս ու ազգականներս նրանց մեջ են, որոնց սպանում եք: Ես չեմ ուզում նրանցից հետո ապրել նույնիսկ մեկ ժամ»*: Անհնար եղավ նրան համոզել: Ես բաց թողեցի նրան: Ես տեսա, թե ինչպես նա երջանկացած վազեց ծնողների մոտ ու նրանց հետ գնդակահարվեց»:

Սա պատմեց թուրք պետական ծառայողը: Մի ուրիշ թուրք՝ մեր կառապանը, Ուրֆայից Ղարա Ջուր ճանապարհի մի հատվածում ինձ ցույց տվեց քարերի մի կույտ՝ մի բլրի վրա և ասաց, որ այդ տեղում սպանվել են թուրք մեջլիսի ՋՈՀՐԱՊ և ՎԱՐԴԳԵՍ երկու նշանավոր հայ երեսփոխանները...

...Հրատարակելով այս գիրքը՝ նախ և առաջ նպատակ էի հետապնդում՝ հերքելու այն բոլոր մեղադրանքները, որոնք առաջ կբաշվեն իսլամի դեմ և ապացուցելու, որ հայերի դեմ գործադրված դաժանությունների պատասխանատվությունն ընկնում է *«Միություն և առաջադիմություն»* կոմիտեի անդամների վրա, որոնք առաջնորդվում էին ցեղապաշտ մոլեռանդությամբ և հայերի հանդեպ տածած նախանձով: Իսկ եվրոպական տերությունների մասին ասում եմ, որ նրանք էին թուրքական կառավարությանը ոգեշնչում ոճրագործությունների: Նրանք, իմանալով թուրքերի բազմիցս կատարած հանցագործությունների մասին, չխանգարեցին նրանց կատարելու իրենց ոճիրները:

ՄԱՐԻ ՅԱԿՈԲՍՈՆ – Արևելքում տառապող հայ ժողովրդին օգնության փութալը աշխարհի ողջ մարդկության պարտքն է: Չի կարելի, առանց խելագարվելու վտանգի, խոսել այն ահռելի ցնցումների մասին, որոնց ենթարկվում են հայերը: Այն մեծ մարտիրոսության մասին, որին դատապարտված է հարուստ կարողություններով և քրիստոնեական խորին հավատով ապրող ժողովուրդը: Այս ժողովուրդը թողնված է իր տխուր ճակա-

Հայ ժողովրդի տառապանքի օտարազգի մեծ բարեկամներ

Յոհաննես Լեփսիուս:

Հենրի Մորգենթաու:

Հայ ժողովրդի տառապանքի օտարազգի մեծ բարեկամներ

Արմին Վեգներ:

Կարեն Եփփե:

Մարիա Ֆակոբսոն:

տագրին՝ անմարդկային ջարդերի արյան ճապաղիքներին ենթակա: Այս ժողովուրդը, որը «խաղաղ» օրերին անգամ ենթարկվել է կողոպուտի, չարչարանքի, հալածանքի, սպանության... Ի՞նչ երկիր, ի՞նչ ժողովուրդ և ի՞նչ դժբախտություն: Խարբերդից, Մեզրեից, բոլոր գյուղերից տղամարդկանց կամ զինվոր են տարել, կամ լցրել են բանտերը: Տներից հավաքել են հագուստ, ցորեն, մսացու: Հավաքել են, անշուշտ, առանց հարցնելու: Կանանց և երեխաներին թողեցին դաժան ձմռան դիմաց առանց ուտելիք-հագնելիքի: Ինչպե՞ս պիտի ապրեն նրանք ձմռանը: Սա դեռ 1914 թվականի աշնանը... Սա դեռ այն ժամանակ, երբ դեռ չէր սկսվել ջարդն ու տեղահանությունը: Մի՞թե մարդկության խիղճը մեռել է... Բայց ես գիտակցում եմ. մենք ապրում ենք Թուրքիայում, ուր խիղճ ասած բանը չկա... Որքա՜ն ենք կարոտում խաղաղության և մարդկանց ներսում Աստծո ներկայության:

Քաղաքի ճանապարհները մարդիկ բանտարկված են: Նրանց հանում են բակ, ոտաբոբիկ վազեցնում բաց գետնի վրա այնքան, մինչև ոտքերից արյուն է հոսում: Հետո քաշում են մատների եղունգները, փետտում մորուքները, ձեռքերը և գլխները սեղմիչի մեջ դնում և ճնշում, քաշում են ոտքերը, ճզմում... Երբ տեսնվում ենք հայ բարեկամների հետ, հույս չունենք, թե նորից կհանդիպենք: Գյուղերում ահավոր ջարդեր են եղել: Այրերին բանտարկել են եկեղեցիների մեջ և այրել, փոքրերին չարչարել, կանանց բռնաբարել...

Ես բառեր չեմ գտնում նկարագրելու համար այս ժողովրդի ցավերը, տառապանքներն ու սարսափները: Թուրքերը պարզապես գազաթնակետին են հասցրել հայ ազգը տանջահարելու իրենց սատանայական հնարամտությունը: Չնայած սատանայի համար էլ անկարելի է այս արարքները հանդուրժել... Ո՞վ կարող է փրկել դժբախտ ժողովրդին և ազատել այս դժոխքից:

Խարբերդում ոչ մի հայ չի մնացել: Թուրք ամբոխը լցվել է նրանց տները և կողոպտել: Ամեն ինչ տանում էին: Կարի մեքենա, դաշնամուր, գորգ, արժեքավոր այլ իրեր, հագուստներ... Նրանց կանայք անմիջապես իրենց կեղտոտ մարմիններ վրա հագնում էին հայ կանանց մետաքսե հագուստները և

որովհետև նվագել չգիտեին, բռունցքներով հարվածում էին դաշնամուրի ստեղներին և հաճույքից բղավում ու քրքջում: Թուրքերը դուրս էին գալիս իրենց գետնափոր կեղտոտ որջերից և տեղավորվում հայերի գեղեցիկ, լուսավոր, հարմարավետ տներում:

Թուրքերը հետզհետե ավելի ու ավելի էին արյունատենչ դառնում: Նրանք պարզապես հարբել էին արյունից: Մենք Եփրատի այս ափին կանգնած տեսնում էինք, թե ինչպես էին այրվում *Զմշկածագի* բոլոր գյուղերը, ընդարձակ դաշտը, պարտեզները... Մենք տեսանք, թե ինչպես այդ ամբողջ հսկա, գեղեցիկ դաշտը միանգամից բռնկվեց: Մենք գիտեինք, որ Եփրատը արգելք կհանդիսանա կրակի տարածմանը դեպի Խարբերդի դաշտ: Բայց ի՜նչ կարևոր էր... Օտարերկրացիներս ապահով էինք... բայց այնտեղ այրվում էին մեր հայ բարեկամները... Ո՞վ կարող է պատկերացնել հրեշավոր այս տառապանքը:

...Հիմա էլ գաղթականներն են անցնում Խարբերդով: Նրանց պատմությունները մեկը մյուսից սոսկալի են: Հետագայում այս մասին կարդալ շատ դժվար պիտի լինի... բայց ես զգում եմ, որ պարտավոր եմ այս բոլորը գրի առնել, որպեսզի մեր բարեկամները, որոնք Դանեմարքայում են, իմանան, թե մեր խեղճ հայ քույրերն ու եղբայրները ինչ տառապանքների միջով են անցել...

Գաղթական հայերին տանում են լեռները... Խարբերդը դարձել է հայերի գերեզմանոցը: Գիշերը մենք՝ դանիացի միսիոներներս բարձրանում ենք լեռները, որտեղ տեղի էր ունենում սպանդը... Մենք տեսնում էինք լուսնի լույսի տակ սփռված մերկ դիակներ... Մենք կանչում էինք. *«Ողջե՞ր, ձայն տվե՞ք...»*: Երբեմն դիակների տակից հայտնվում էին վիրավոր, կիսակենդան մնացածներ: Մենք նրանց զգուշորեն իջեցնում էինք լեռներից և տանում մեր հիվանդանոցի մեջ գաղտնի պահելու և խնամելու:

Ահա, այդպիսի մի եղերական գիշեր լուսնի լույսի տակ, մեռելադաշտի համատարած լռության մեջ, մենք տեսանք հազիվ վեց տարու աղջնակի, որը նստած էր քարին, բոլորովին մերկ, ցրտից կափկափող ատամներով: Երբ մենք մոտեցանք,

սարսափահար երեխան երկու փոքրիկ ափերը մեկնեց մեզ և ասաց. *«Ես էլ դրամ չունեմ...»*: Մենք, նրան փաթաթելով տաք թիկնոցի մեջ, իջեցրինք մահվան կատարներից ներքև և պատրաստվեցինք... Քիչ սթափվելով և տեսնելով, որ բարեկամների մեջ է, պատմեց, թե ինչպես՝ երբ կոտորածը սկսվել է, մայրը նրան տվել է մի ոսկի և ասել, որ տա այն թուրքին, որ պիտի սպանի իրեն... Գուցե թուրքը վերցնի ոսկին և չսպանի երեխային... Այդպես էլ լինում է. թուրքը ստանում է աղջկանից ոսկին և հղանում այս ոճիրը. մերկացնում է մանկանը և թողնում մեռելների մեջ, որպեսզի նա նախքան մեռնելը իր մանուկ սարսափահար հոգով ապրի դժոխք երկրի վրա... Եթե մենք այդ գիշեր չբարձրանայինք լեռները...

...Դուք՝ մայրեր... մայրեր Դանեմարքայի, եթե սրանք ձեր զավակները լինեին... Գետինը նրանց ոտքերի տակ վառվում է, կամ ձյուն ու սառույց է կտրել... Նրանց փոքրիկ, քընքուշ ոտքերը՝ կարմրած ու կապույտ... հոշոտված... Երևակայել, թե նրանք ինչ սարսափի ու չարչարանքի միջով են անցել... Ո՛չ մայր ունեն, ո՛չ հայր, որ գթա նրանց... Նրանց մայրերն ու հայրերը վաղուց սպանված են... Արդյո՞ք ձեզանից յուրաքանչյուրը չպետք է ասի. *«Ես կիոգամ նրանցից մեկի կյանքը....»*:

Տեր, եթե իմ գլուխը արցունքի աղբյուր լիներ, այս ժողովրդի տառապանքի վրա պիտի անընդհատ լայի...:

ՊԱՄԵՏ -- Ես ուղտապան եմ, պարսիկ ՔԵՐՊԵԼՈՒ ԱԼԻ ՄԱՄԵՏԸ: Ես ռազմամթերք էի փոխադրում Երզնկայից Կարին: 1915թ. հունիսին, երբ եկա *Խոթուրի* կամրջի մոտ, մի ահռելի տեսարան բացվեց իմ աչքերի առջև: Անթիվ, անհամար մարդկանց դիակներ էին լցված մեծ կամուրջի 12 կամարների անցքերը... Ջուրն, իր ընթացքը փոխած, կամուրջից այն կողմ էր հորդում... Բացի կամրջից, մինչև *Ճինիս*, ամբողջ ճանապարհը լցված էր դիակներով. ծերեր, կանայք, երեխաներ նեխած, հոտած, ուռած... Այնպիսի ահավոր գարշահոտություն էր, որ անցնել այդ ճանապարհով անհնար էր: Իմ երկու ուղտապանները հոտից մեռան... Ուղտերը հրաժարվեցին

անցնել դիակների վրայով... Ես ստիպված եղա, ճանապարհս երկարացնելով, փոխել: Ամենուր նույնն էր... Ամենուր զարհուրելի ոճրագործության զոհեր՝ հայե՛ր: Թշվառ հայեր... Շներն ու անգղները խժռում էին նրանց դիակները...

...Իմ պատանի բարեկամ, դու այլևս չես ուզում լսել ականատես-վկաների պատմությունները: Չե՛ս ուզում լսել: Ես տեսնում եմ սարսափից ծանրացած քո հայացքը և լսում եմ քո էության ներսում ահագնացող աղաղակը՝ բավակա՛ն է:

Ներիր, բայց ես պիտի շարունակեմ Հիշողության բարձրագույն ատյան կանչել ականատեսներին, որոնց պատմությունները Աշխարհի Ոճրի և Հայոց Աղետի մասին է:

Ոճիրը՝ ոճիր է, թեկուզ անբացատրելի: Սակայն ոճիրն ունի որոշակի գույն, համ, հոտ, զարհուրանք: Հայոց ձորերը լցվեցին ոճրի գույնով, համով ու հոտով... Լսեցիր, չէ՞, գետերը դարձան ելման, խելագար, երբ կորցրին իրենց ճանապարհները դիակների առատությունից: Սրանք գալիս էին այնքան շատ, առատ, որ խցանեցին Եփրատի քարե հզոր կամուրջների բոլոր անցքերը... Հովիտները, որ կանաչ էին կամ դաշտերը հացի, առան մահվան գույնն ու համը, մահվան պիղծ հոտից թունավորվեցին... Լեռների լանջերը, քարանձավները, անտառների խոր թավուտները, անապատի ավազների խոր ընդերքները, երեք ծովերի փոթորկուն դարձած ջրերը: Նույնիսկ Պարսից ծոցի, Հնդկաց օվկիանոսի բանից անտեղյակ վրդովված ալիքներին հասավ *Եփրատ-Տիգրիսով* ներքև սլացող ՈՃԻՐ-ԵՂԵՌՆԸ իր գույն ու համով, իր նեխահոտով... Շնաձկները բարի գործ կատարեցին... Մեծ դժվարությամբ, սակայն մաքրեցին ծովերի ու օվկիանոսների ջրերը... Ցամաքի վրա շները նույնպես խրախճանում էին... Խժռում էին անթաղ դիակները և կատաղելով դառնում գորշ գայլեր... Դու չե՛ս ճանաչում ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐ կոչվող բորենիներին...

Գիտե՛մ... գիտե՛մ... դու ուզում ես, որ ես այլևս չխոսեմ ոճրի մասին, այլ պատմեմ միայն ՔԱՋԵՐԻ մասին, որ կարողանաս հասկանալ, թե ինչ է քաջության բուն էությունը... Բայց

մինչև չիմանաս ոճրի բուն էությունը, չես կարող գնահատել քաջությունը:

Ես քեզ պատմել ու էլի կպատմեմ քաջերի մասին, բայց լսիր, խնդրում եմ, նախ այս թուրքի անկեղծ պատմությունը, որը գրի է առել նրա զրուցակիցը՝ ԳՐԻԳՈՐԻՍ ՊԱԼԱՔՅԱՆ վարդապետը, երբ իր տանջահար ժողովրդի հետ բարձրանում էր *«ՀԱՅԻ ԳՈՂԳՈԹԱՆ»*՝ ոտքերի տակ անսահման տարածությամբ փռված ոսկորները տրորելով...

ՇՅՈՒՔՐԻ ԲԵՅ – Հայերի ոսկորներ են: Թուրք գյուղացիներից ջարդվածների ոսկորներ: Հապա ի՞նչ գիտես: Պոլսից եկած բարձր հրամանի համաձայն կոտորվեցին: Ներքին գործոց նախարարի հրամանով կոտորվածների հետքը կորցնելու համար, մեծ փոսեր փորելով, հավաքեցինք ու թաղեցինք: Բայց, տեսա որ, գարնան հեղեղները, փոսերը բանալով, ոսկորներն ու նեխած դիակներն արևի երես հանեցին: Այս ճամփից ոչ մի քարավան դեռ ողջ չի անցել: Ես, որպես *Յոզգատի* ոստիկանզինվորների հարյուրապետ, հաստատ կարող եմ ասել, որ մեր գավառում 86 հազար հայ ջարդեցինք: Մենք էլ զարմացանք, որ մեր գավառում այդքան հոծ հայություն կար: 86 հազա՛ր:

Բայց այս ճանապարհով ուրիշ գավառներից էլ քարավաններ անցան: Նրանք էլ մաքրվեցին: Սկզբում տղամարդկանց կոտորեցինք, հետո կանանց ու երեխաներին: Մենք մարգարեի գլխի վրա երդվել էինք, որ մեր Յոզգատի գավառի մեջ ոչ մի հայ չպիտի կենդանի մնա: Սկզբից պատմեմ: Քաղաքի բոլոր այրերին, իրենց ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱՆԻԵԼՅԱՆ առաջնորդով, քահանաներով ու աղաներով բերեցինք այս ձորերի մեջ ջարդեցինք: Տղամարդկանց ջարդելուց երկու ամիս հետո քաղաքի մեր կառավարիչ Քեմալը մունետիկ կանչել տվեց հայ կանանց համար, թե՝ ձեր այրերը ողջմամբ ժամանել են Հալեպ և տեղի կուսակալին խնդրագիր են տվել, որ իրենց ընտանիքներին էլ Հալեպ բերեն: Քեմալը երեք օր պայմանաժամ տվեց, որ երկար ճանապարհից առաջ կարողանան պատրաստվել: Ով ինչ ուզում էր, կարող էր վերցնել հետը: Իսկ ով

կարող էր վճարել կառքի ու սայլի համար՝ կառավարությունը կիոգա (ծիծաղում է): Կանայք հավատալով սկսեցին ճամփի պատրաստություն տեսնել: Կարծես Երուսաղեմ ուխտի պիտի գնային: Անուշեղեններ, գաթա, փախլավա, ուրիշ խմորեղեններ եփելով՝ թիթեղյա տուփերի մեջ շարեցին՝ Հալեպ գտնվող իրենց ամուսիններին նվեր տանելու համար: Քարավանները առաջնորդելու պաշտոնը միշտ ինձ էր հանձնվում, որովհետև այս վայրերին շատ լավ եմ ծանոթ: Կանանց այս քարավանն էլ ինձ հանձնեցին: Զեռքիս տակ ընդամենը 80 զինվոր ոստիկան ունեի: Երբ հասանք այս ձորերին 830-ից ավելի սայլապաններին ու կառապաններին ետ դարձրինք քաղաք: Ապրանքով լեցուն սայլերն ու կառքերը քաշեցինք մի կողմ ու մեր հետևից հասած թրքուհիների հետ, նրանց կառավարությունն էր ուղարկել մեզ օգնելու. ուրեմն սրանց հետ, սկսեցինք մանրամասն խուզարկություն: Մինչև ներքնազգեստները խուզարկեցինք: Հավաքեցինք բոլոր ոսկեղենը, արծաթեղենը, ադամանդեղեն զարդերը, զգեստների երիզների մեջ ճարտարորեն կարած իրենց հնչուն ոսկիները: Սրանք, ախր, խաբվելով, թե իրենց տղամարդկանց մոտ են գնում՝ հետներն առել էին իրենց բոլոր արժեքավոր ու դյուրատար ունեցվածքը. թանկագին գորգեր, կարպետներ... Մի խոսքով, կարճ ժամանակ հետո զատ-զատ ոսկու ու զարդեղենի հարյուրավոր դեզեր առաջացան: Հավաքվածը հնարավոր չեղավ հաշվել: Հասարակ ոստիկաններից մինչև պետական ամենաբարձր պաշտոնյան շահեց: Հապա, ինչպե՞ս... Բոլորին էլ լիուլի հասավ: Ես էլ մի 10 հազար ոսկի առա, զարդն ու զարդեղենն էլ իր հերթին: Ես հավատացյալ մարդ եմ: Ալլահը չի ների, որ սուտ խոսեմ: Այս վերջին տեղահանության ու ջարդերի շնորհիվ մեծ հարստություն դիզեցի: Բայց ես ծեր եմ, ի՞նչ պիտի անեմ հարստությունը: Միակ տղաս պիտի վայելե, որն հիմա Գերմանիայում զինվորական ուսում է ստանում:

Ուրեմն, չորս օր, չորս գիշեր մանրազնին խուզարկելուց հետո՝ կոտորեցինք: 80 ոստիկանով 86 հազարին ինչպե՞ս կկոտորեինք: Մեր խուզարկելու ընթացքում սարերի վրա եկել, հավաքվել էր 10–12 հազար իսլամ ժողովուրդ: Յոզգաթի տեղական կառավարությունը շրջակայքի բոլոր թուրք գյուղերի իս-

լամ ժողովրդին ոտքի էր հանել՝ կատարելու կրոնական իր սուրբ պարտականությունը՝ մասնակցելու *Ջիհադին*: Պատերազմի ժամանակ գնդակը սուր է, իսլամ ժողովուրդը այս սպանդին վազած ժամանակ բերել էր ինչ ձեռքն ընկել էր. կացին, սակր, մանգաղ, մահակ, բրիչ, բահ: Երբ սպանդն ավարտեցինք, գյուղացի իսլամ հավատացյալ ժողովրդին թողեցինք, որ մերկացնեն մեռելներին ու զգեստները տանեն իրենց հետ, որպես պարգև: Արյունոտ էին, բայց ինչ կա որ... շատ արագ մեռելները մերկացրին: Սրանից հետո ձորն իջան ուշացած կանայք... Կոտորածից ուշացածները: Շատերը գալիս էին իրենց ծծկեր կամ իմ քանի տարու երեխաների հետ: Թուրք ցեղի բնազդները հանուն սրբազան Ջիհադի մանուկ օրից պիտի վարժեցնել: Վարժեցնել արյան գույնին ու հոտին: Այս նոր եկողներին էլ ահագին բան հասավ: Մեռնող կանանցից շատերը հասցրել էին կուլ տալ իրենց զարդերը: Բայց թուրք մեր քույրերը օրերով, նեխած հազարավոր այս դիակների մեջ շրջելով, փորոտիքները պատռեցին, բավական զարդեղեն գտան, բերեցին քաղաք ծախեցին:

Ես իմ նվիրական ու սրբազան պարտականությունս կատարեցի Աստծո, Մարգարեիս ու Խալիֆիս առաջ: Որովհետև սրբազան ջիհադ էր հայտարարված: Շեյխ-ուլ-Իսլամը հայերին բնաջնջելու հրաման էր տվել: Խալիֆը հրամանը վավերացրել էր: Կառավարությունը հրամայել էր գործադրությունը: Իսկ ես էլ՝ իբրև զինվորական պաշտոնյա հրամանը կատարեցի:

Սրբազան ջիհադի ժամանակ մարդ սպանելը ոճի՞ր է:

ՄՈՐԳԵՆԹԱՈՒ – Հազարավոր հայոց գյուղերից ու քաղաքներից հուսաբեկ քարավանները ծածկեցին հարավ իջնող ճանապարհները: Եթե տնից ելնելու պահին մարդկային գեղեցիկ էակներ էին, մի քանի ժամից հետո փոշով ու ցեխով ծեփվելով, հոգնությունից և ուղեկիցների բրտությունից ահաբեկված, դառնում էին անճանաչելի: 1915 թվականի ապրիլից մինչև հոկտեմբեր Փոքր Ասիայի գրեթե բոլոր ճանապարհները լցված

էին աքսորականների այս խմբերով... Նրանք դարիվեր պտըտվում էին հովիտների շուրջը, մագլցում լեռան կողերը, իջնում ու բարձրանում ձորերը, հաղթահարում ժայռերի ոլորանները... Հեռանում էին իրենց սիրասուն *Հայրենիքից*, որտեղ հազարավոր տարիներ ապրել էին իրենց նախնիները: Նրանք ասում էին. *«Աղոթեցեք մեզ համար: Այս աշխարհում այլևս չենք հանդիպի: Բայց մի օր պիտի գտնենք միմյանց: Աղոթեցեք մեզ համար...»*:

Երկու միլիոն իր զավակներից Հայաստանը պարպվեց... Քարավանները ձգվեցին դեպի *Միրիական* անապատները... Նրանք հազարներով մեռնում էին ճանապարհներին՝ սովից, ծարավից, թուրք ու քուրդ սինլքորների դաժան հարձակումներից... Անապատի հրակեզ արևը այրում էր նրանց մերկ մարմինները, բոբիկ ոտքերը: Նրանք ընկնում էին, մեռնում կամ կմախքներ դարձած, խուժադուժ տեսարաններից խելագարված՝ դեռ քայլում էին՝ իրենց ետևից տանելով մեռած-չթաղված-ների երկար քարավանը... Երկար քարավանը ուրվականների... Գիշանգղների մեծ երամներ էին թռչում այդ թափորների գլխավերևում և դիակներից հագեցած ու ճարպակալած կատաղի շներ...

ԱՆՐԻ ԲԱՐԲԻ – Ոչ ոք այսօր չի կարող անցնել լքված Հայաստանով առանց սարսռելու նրա մինչև հորիզոնները պարզված ավերակներին, ամայացումին ու մահվանն ի տես: Չկա մի սաղարթ, չկա մամուռի մի կտոր, ապառաժ, որ տեսած չլինի մարդկային էակների խողխողումը և որոնց վրա հեղեղանման տարածված արյան ցայտեր չլինեն: Չկա ջրի մի հոսանք, լինի առու կամ գետ, որ դեպի հավիտենական մոռացում տարած չլինի հարյուրավոր, հազարավոր դիակներ: Չկա մի խորխորատ, չկա մի կիրճ, որ երկնքի տակ բաց դամբարան չլինի, որտեղ կմախքները իրար վրա կուտակված ճերմակում են... Այս ընդարձակ վայրերում, հայերի ձեռքերով ծաղկավետ դարձած այս դրախտավայրում այսօր ավեր և ամայություն է տիրում...

Կարին, Տրապիզոն, Երզնկա, Խարբերդ, Մեբաստիա... Մեբաստիայից մինչև Խարբերդ հայերի ջարդերի այն ճանապարհներից էր, որտեղից հետո անցնողները անվանեցին «նեխումի դժոխք»... Որովհետև անշիրիմ տասնյակ հազարավոր դիակներից զարհուրելի գարշահոտություն էր տարածվել: Անսահման անհանդուրժելի տարածությունների վրա այնքան խիտ էին մարդկային գանգերը, որ ճամփորդները հեռվից հասուն սեխերի անհուն դաշտերի հետ էին շփոթում:

Բաղեշ, Մուշ, Սասուն, Կեսարիա, Գարատիա, Կոնիա, Յոզգատ, Կիլիկիա...

Գեհենային չարչարանքներ ողջ բուն ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ և նաև Թուրքիայի այն գավառներում, որտեղ հայերի հոծ զանգվածներ կային: Սոսկումի տեսարաններ բացվեցին աչքերիս առջև, երբ նորից անցա այն երկրի գեհենական ճանապարհներով... Խժդժությունների ի՞նչ վայրագ ընդարձակություններով քայլեցի... Քայլեցի մինչև հեռավոր Եփրատի ափերի երկարությամբ ընկած *Միջագետքի* ու *Սիրիայի* անապատները... Մինչև շիկացած, անիծյալ դժոխք, ուր լցված էին մեծ ջարդերից ազատված դժբախտ ժողովրդի խլյակներով: Հնարավոր չէ նկարագրել նրանց գոյությունը, որովհետև չկա ՍԱՐՍԱՓՔ արտահայտող բառեր... Միայն կցկտուր խոսքեր հազվադեպ ճամփորդների ... Առանց ապաստանի, սննդի, միշտ քամիների դիմաց, ձմռան մահացու սառնամանիքների և զարհուրելի անողորմ շոգերի պատճառով մեռնում էին ահռելի քանակությամբ... Բայց նրանք, որ մեռնում էին՝ ամենաքիչ սարսափելին էր... Ավելին, տասնորդված տառապանքները հսկող ոստիկանների ամենժամյա սադայելական անգթություններն էին... Յուրաքանչյուր տարագրվածի կյանքն այստեղ զարհուրելի տեսիլների, սպանդի և չարչարանքի, դավադրությունների, բնազդների անասնականության, շղթայազերծված արյան, անզոր արցունքների մի-մի անհանդուրժելի պատմություններ էին: Տառապանքը ապուշ էր դարձրել նրանց: Շատերը մոռացել էին խոսելը... Կաշի ու ոսկոր դարձած հազարավոր դժբախտներ՝ փոս ընկած այտերով, մարած կամ չափազանց փայլուն աչքերով... Ճակատագրից լլկվածները Տեր-Զորի...

ԹԱԼԵԱԹ – «Մեզ անհայտ պատճառով հանրահայտ մարդիկ փոխանակ աքսորված լինելու ուղիղ աքսորավայր, թողնվել են Հալեպում: Դա դժվարին կացության մեջ է դնում կառավարությանը: Ուշադրության չառնելով նրանց առարկումները՝ այդտեղից հեռացրեք բոլորին, ինչպես կանանց, այնպես էլ երեխաներին, անգամ նրանց, ովքեր ի վիճակի չեն շարժվել: Մարդկանց թույլ մի տվեք պաշտպանելու նրանց, քանի որ իրենց անգիտակցության հետևանքով նրանք նյութական օգուտները հայրենասիրական զգացումներից բարձր են դասում և չեն կարողանում հասկանալ կառավարության մեծ քաղաքականությունը, որը պնդում է այդ միջոցառումների իրականացումը: Ընաջնջման զարտուղի միջոցների փոխարեն, որ կիրառում են ուրիշ վայրերում, ինչպես օրինակ, խստությունը, հալածեալ աքսորը, տեղափոխումների դժվարությունները և զանազան ձախորդություններ, կարելի է առանց վտանգի դիմել անմիջական միջոցառումների: Միայն թե գործեք ջանադրաբար: Այս առաջադրանքի կատարման համար նշանակված պատասխանատու անձանց հաղորդեք, որ իրենք պարտավոր են կենսագործել մեր բուն մտադրությունը, չվախենալով պատասխանատվությունից: Հաճեցեք ամեն շաբաթ թվական հաշվետվություն ներկայացնել Ձեր գործունեության մասին: Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ, 9 սեպտեմբերի 1915թ.»:

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆՅԱՆ. «*ՄԵԾ ՈՃԻՐ*»:

ՆԱՅԻՄ ԲԵՅ – Արամ Անտոնյանի «*ՄԵԾ ՈՃԻՐ*»-ը իմ հուշերի գիրքն է: Ես՝ թուրք պաշտոնյա *Նայիմ բեյս*, որ 1915–1917թ.թ. եղել եմ Հալեպի գաղթականների տնօրության գլխավոր քարտուղարը, հայ մտավորականն Արամ Անտոնյանին, որն

հրաշքով կենդանի էր մնացել, հանձնեցի բոլոր գաղտնի փաստաթղթերը և իմ հուշագրությունները: Ինձ հանձնարարված էր կազմակերպել կայսրության բոլոր ծայրերից Հալեպ աքսորված հայերին անապատ քշելու գործի փաստաթղթերը: Իմ ձեռքով են անցել բազմաթիվ գաղտնի փաստաթղթեր, Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի ծածկագիր հեռագրերը, պաշտոնատար անձանց հասցեագրված հրամաններն ու հրահանգները:

Արամ Անտոնյանի հրատարակած իմ հուշագրությունների *«ՄԵԾ ՈՃԻՐ»* գիրքը թարգմանված են անգլերեն, ֆրանսերեն, հայերեն: Փնտրեք և կգտնեք աշխարհի շատ գրադարաններում: Ինչո՞ւ ես՝ թուրք պաշտոնյաս, ցանկացա հրատարակել Թուրքիո խայտառակությունն հանդիսացող այդ փաստաթղթերը: Որովհետև ես կարծում եմ, որ հայերի աքսորն ու կոտորածը իրենց հավասարը չունեն անմարդկային արարքների մասին մինչև այժմ գրված պատմությունների մեջ:

Ես տեսել եմ Ռաս-Ուլ-Այնում գյուղից անդին, գետի ափին հազարավոր դժբախտ կանանց և երեխաների, որոնք ամեն առավոտ գյուղ էին գալիս՝ ողորմություն մուրալու: Նրանցից ոմանք ջուր էիր կրում՝ փորձելով գոյությունը պահպանել այդ կերպ վաստակած հացի փշրանքներով: Այդ ժամանակ դեռ ամառ էր և նրանք կարող էին ապաստան գտնել ժայռերի կամ բլուրների վաղարներում: Իսկ երբ վրա հասավ ձմեռը, գիշերվա խավարում լսվում էին ցրտից ու սովից մեռնողների թառանչները: Դրսում մոլեգնում էր փոթորիկը: Տարերքի բմայքին մատնված այդ դժբախտները մի գիշերում մեռնում էին հարյուրներով: Դա մի տխուր տեսարան էր: Բայց ավելի սարսափելի էր տեսնել, թե շներն ինչպես էին խժռում մարդկանց դեռ տաք դիակները:

Հինգ-վեց նահանգից քարավաններով աքսորվել էին մեկ միլիոնից ավելի մարդ: Յուրաքանչյուր քարավանից աքսորավայր էին հասել 100–150 կին ու երեխա: Մյուսները կոտորվել էին ճանապարհներին:

Երբ ես պաշտոնի բերումով հաստատվեցի Հալեպում և ստիպված եղա գրանցել ծածկագրված գաղտնի հրամաններ, երբ ըմբռնեցի այդ հեռագրերի իմաստն ամբողջությամբ, սոս-

կացի: Հեռագրերն հրամայում էին հայերին ոչնչացնել կարիքի ու դաժան ձմռան միջոցով: Այդպես կարելի էր ապագայի համար կանխապահովել ապացույց, թե նրանք մեռել են բնական մահով:

Գաղթականներին խմբերով Հալեպից ուղարկում էին ԲԱԲ: Հետևանքը իշխանավորների համար շատ ուրախալի էր: Ամեն օր զեկուցագրեր էին ստացվում սովից, ցրտից, հիվանդություններից հարյուրավոր մեռածների մասին: Առաջին գործն եղավ նրանց ողորմելի վրանները այրելը, որի տակ մի կերպ պատսպարվել էին գաղթականները: Բաբը լեփլեցուն էր մարդկանցով: Ամենուրեք մոլեգնում էր տիֆը:

Թալեաթի ամեն մի հեռագիրը սարսռեցնում էր ինձ. *«...Հաստատակամորեն խորհուրդ է տրվում չենթարկվել կարեկցանքի զգացումին՝ ի տես նրանց թշվառ վիճակի, այլ վերջ տալ բոլորին և ամեն կերպ ջնջել, ոչնչացնել բուն «Հայաստան» անվանումը Թուրքիայում: Հետևեցեք, որ նրանք, ում կվստահվի այդ խնդրի իրագործումը՝ հայրենասեր և հուսալի մարդիկ լինեն: Թալեաթ»:*

Հրամանները, որոնք արձակվում էին Թալեաթի ամեն մի հեռագիրը ստանալուց հետո, այն աստիճան էին անգութ, որ դժվար է բացատրել:

Բայց նախքան այս դաժան մարդկանց մասին ասելը, ուզում եմ հիշել Հալեպի նահանգապետ ՋԵԼԱԼ ԲԵՅԻՆ, որը Թալեաթի հայաջնջման հեռագրերին պատասխանեց՝ հեռագրելով Կոստանդնուպոլիս. *«Ես նահանգի նահանգապետն եմ և չեմ կարող նրա դահիճը լինել»*: Նրան անմիջապես ազատեցին իր պաշտոնից: Ջելալ բեյի փոխարեն նշանակեցին ԲԵԲԻՐ ՍԱՄԻ բեյին, որը նույնպես կոտորածի հակառակորդն էր: Սա նույնպես պաշտոնազրկվեց:

Հալեպի գեներալ-նահանգապետ նշանակվեց ՄՈՒՍՏԱՖԱ ԱԲԴՈՒԼ ՀԱԼԻԳ բեյը: Սա, և աքսորի գործերի գլխավոր կոմիտեի ներկայացուցիչ ՆՈՒՐԻ բեյը հայերի հանդեպ համակված լինելով ատելությամբ՝ նրբացված դաժանության մարմնավորում էին: Հայերի չարչարանքների, մահվան դեպքերի մասին հաճախակի զեկուցագրերը Նուրի բեյին այնպիսի ցնծություն էին պատճառում, որ նա ուրախությունից պարում էր: «Կառաս-

վարությունը չի ցանկանում, որ այդ ժողովուրդը գոյություն ունենա», – ասում էր նա: Թալեաթը նրան պաշտոնի նշանակելիս ասել է. «Մենք պետք է Թուրքիան տեսնենք այդ անիծված ժողովրդից ազատված: Դու, անշուշտ, գիտես քո անելիքը»:

Նուրի բեյի գլխավոր գործակիցը ԷՅՈՒՐ ՍԱԲԻՐ բեյն էր, մի արնախում ու կաշառակեր մարդ: Նրա կյանքի նպատակը սպանություններն ու կողոպուտն էին:

Ճամբարը, որտեղ հավաքված էին աքսորյալները, գտնվում էր չարաբաստիկ *Գարլըք* բլրակի վրա: Այդտեղից էին հայերին ուղարկում անապատ: Այս բլրից մինչև ՏԵՐ-ԶՈՐ տառապանքների ճանապարհ-գերեզմանոց էր:

Թալեաթը հեռագրեց. *«Արագացրեք աքսորը: Նրանք, ովքեր ի վիճակի չեն շարժվելու, կընկնեն կմեռնեն քաղաքից մի բանի ժամվա հեռավորության վրա, և քաղաքը կազատվի ողջերից էլ, մեռածներից էլ»:*

Երբ Տեր-Զորի նահանգապետ ՍԱՌԻԴ բեյին մեղադրեցին, որ նա չի կատարել անապատում հայերին կոտորելու հրամանը, նա պատասխանեց. *«Մենք չենք հարցնում, թե հայերն ինչո՞ւ են աքսորվում: Դա մեզ չի վերաբերվում: Մենք չենք կարող վերացնել նրանց վրա կախված դժբախտությունը, բայց կարող ենք մեղմել այն: Ես կարծում եմ, որ նրանց աշխատանքի շնորհիվ այս անապատները կարող են վերածվել ծաղկուն դաշտերի և այս հյուղակների փոխարեն կկառուցվեն գեղեցիկ շենքեր»:*

ԱԼԻ ՍԱՌԻԴ բեյը նույնպես հեռացվեց իր պաշտոնից: 1916 թվականի փետրվարին *Ռաս-Ուլ-Այն* ժամանեց հայերի կոտորածների ամենադաժան կազմակերպիչներից վատահամբավ մեկը՝ Վանի նախկին գեներալ-նահանգապետ ՋԵՎԴԵԴԸ՝ ռազմական նախարար Էնվեր փաշայի փեսան: Վանում վերջացնելով կոտորածը՝ նա գնաց Մուշ, ապա անցավ Բիթլիս, ավարտեց այնտեղ կոտորածները և նշանակվեց Ադանայի նահանգապետ: Այնտեղ մեկնելու ճանապարհին ժամանեց *Ռաս-Ուլ-Այն,* որտեղ կուտակվել էին հայերի մնացորդները: Տեսնելով սարի ստորոտին նրանց ճամբարն՝ ասաց. *«Մի՞թե այդ շները դեռ գոյություն ունեն: Ես ձեզ հրամայում եմ կոտորել բոլորին»:*

Այսպես սկսվեց *Ռաս-Ուլ-Այնի* կոտորածը, որին հաջորդեց ողջ մնացածների վերջին խմբերի տեղահանությունը: Նրանց տանում էին՝ ամենադաժան եղանակներով սպանելու:

Նրանց ոչնչացնելու Թալեաթի վերջին հրամանը մեկնաբանելու կարիք չունի: *«Ոչ ոքի մի թողեք կենդանի, մասնավորապես մինչև հինգ տարեկան երեխաներին: Այլապես նրանք կմեծանան և կձգտեն վրեժխնդիր լինել: Եթե ուզում եք ապահովել մեր վաղվա օրը, ապա սպանեք նրանց, նույնիսկ երեխաներին»:*

Ալի Սաուդ բեյի փոխարեն *Տեր-Զորի* նահանգապետ նշանակվեց ՁԵՔԻ բեյը, նույնքան արնախում, որքան Ջևդեդը:

Ռաս-Ուլ-Այնում կոտորածը ավարտվել էր: ՁԵՔԻ բեյին մնում էր բնաջնջել Տեր-Զոր աքսորված հայ մնացորդաց: Զեքի բեյը նրանց քարավանները ուղարկում էր անապատից-անապատ՝ *Տիգրիսի* միայն ձախ ափով: Դա հայերի վերջին մահավճիռն էր: Տիգրիսի ձախ ափից ձգվում էր անծայրածիր անապատը: Վերջին խմբերը պիտի անցնեին այդ անապատով սովի ու ծարավի միջով, որովհետև Հալեպից ցուցումներ էին ստացվել, որ ճանապարհին աքսորյալներին չթողնել ոչ ուտել, ոչ խմել, եթե նույնիսկ դա հնարավոր լիներ:

Հայերի վերջին խմբերը դեպի գերեզման երկարող ճանապարհներով անապատից անապատ էին գնում... Անապատում անգամ նրանք որոշակի տեղ չունեին... Նրանց քշում էին տեղից տեղ, ստիպում քայլել այնքան, մինչև ուժասպառ ընկնելն ու թաղվելը ավազների մեջ...

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔՈՎ

ԱՆՐԻ ԲԱՐԲԻ – Ես գրեցի *«ՍԱՐՍԱՓԻ ԵՐԿՐՈՒՍ»* գիրքը: Անցնելով նահատակ Հայաստանի միջով հավաքեցի սարսափի և մահվան շատ պատմություններ, գտա այրունարբու տենարաններ հետքեր երկրի երեսին, որոնք հիշեցնում էին, թե

ապրում ենք բարբարոս ժամանակներում... Ապա և հանդիպեցի զարհուրելի դրվագների, որոնք միջնադարի ամենից եղերական առասպելներն էին ոգեկոչում, երբ տակավին դողդոջուն, փոքրիկ ուրվականներ, որոնք հազիվ էին կարողանում խոսել, անցնում գնում էին մենակ, առանձին՝ հուսաբեկության և աղետի միջով:

Հայ մանուկներ... որոնք հրաշքով ազատվել էին մահից և որպես ողորմելի փոքրիկ խլյակներ, իրենց ցեղի դահիճների մեջ մնացին, որոնք նրանց արգելափակեցին իսլամ ընտանիքներում, ուր ամեն բան օտար էր, չներող ու դաժան... Նրանք դարձան նաև քրդերի ձեռքին գերյալներ, կորած վայրենի լեռների մեջ, կենդոտ վրանների տակ ծվարած...

Բայց սրանցից շատերը կարողանում էին իրենց հափշտակողներից փախչել: Անգնտ վտանգին և անհաղթահարելի դժվարություններին՝ փորձեցին վերադառնալ իրենց գյուղերը, այնտեղ իրենց երբեմնի հայրենի տունն էր... Որքա՜ն մոլորվեցին ճանապարհներին, իրենց տկար ուժերը սպառած՝ հոգնածությունից, քաղցից, ծարավից, ցրտից, վախից վախճանվեցին... Իսկ նրանք, որոնք հրաշքով հասան՝ ոչ գյուղ, ոչ տուն գտան, այլ միայն ամայի ավերակներ, պաղ մոխիրներ և ամենուր կմախքներ...

Բայց խելքից-մտքից դուրս զարմանալի բան. ավերակների մեջ, որը ժամանակին իրենց ընտանի հարկն էր եղել՝ ապրեցին այս մանուկներից ոմանք... Ապրեցին շաբաթներ, ամիսներ... մեն մենակ, սնվելով խոտով, արմատիքով, միջատներով, մերկ ու վայրենացած պահվտվելով...

Հետո նրանցից շատերին կարողացան հավաքել ռուս զինվորներն ու հայ կամավորները:

...Ռուս կոզակները հանդիպեցին նրանց: Զորս փոքրիկ երեխաներ, դողդոջ ու վտիտ, բոլորովին մերկ, ձիու նեխած դիակի շուրջը ծալապատիկ նստած ախորժակով ճաշակում էին իրենց պիղծ ճաշը: Զինվորներին տեսնելով՝ երեքը մեծ արագությամբ պացան դեպի ցորենի արտերը և անկարելի եղավ նրանց բռնել: Իսկ տասնամյա աղջիկը առանց ուշադրություն դարձնելու իրեն շրջապատողներին, շարունակում էր իր

Անապատ քայլող երեխաներ։



Մահվան տեսարան:

Անապատի ճանապարհին:

Անապատի ճանապարհին։

Մսիվան եզրին կանգնած:

խրախճանքը ձիու նեխած մսով: Զինվորները վերցրին նրան ու տարան հանձնեցին հայ կամավորներին:

Ես տեսա *Ծղուկ* գյուղի ավերակների մեջ գտնված ութ տարեկան փոքրիկ տղային՝ ուժասպառ, կմախքացած, քաղցից գրեթե մեռած, անուժ, շարժվելու անկարող... Երեք ամիս էր արդեն, որ նա լքված ու մենակ ապրում էր այնտեղ: ...*Խնուս Գելն* ամայի գյուղի մեջ տեսա տասը տարեկան տղային: Քրդերի ու ռումինների կողմից մի քանի անգամ գրավված ու լքված այս գյուղում մանուկը կարողացել էր թաքնվելով ապրել ութ ամիս... Վիրավոր էր. գնդակը ծակելով կուրծքը անցել էր, բայց վերքը բուժվել էր... Ինչպե՞ս: Մերկ, վայրագ, կաշի ու ոսկոր մանուկը, որ մոռացել էր խոսել և միայն խռպոտ ճիչեր էր արձակում, և երբ բռնեցին նրան, վայրենի գազանի պես ոռնում էր, դիմադրում, ճանկռտում, կծոտում...

Եվ որքաններն այդպես: Մանուկ այդ հոգիները, որոնք մենակ, առանձին կամ խմբերով, շաբաթներ ու ամիսներ թափառեցին:

Իսկ այս դեպքը, որ պիտի պատմեմ հիմա...

...Քրդերը միշտ մեծ ավարով էին կռվից ու ալան-թալանից վերադառնում՝ իրենց հետ գերեվարած տանելով հայ կանանց ու մանուկների բազմությունը...

Ես հայ կամավորների խմբի հետ էի, որոնք գնում էին քրդերից ազատելու գերիներին: Բայց դեռ բարձունքի ստորոտին չհասած, տեսանք՝ դեպի մեզ էր գալիս մի փոքրիկ քարավան՝ բաղկացած չորս էշերից, որոնց յուրաքանչյուրի վրա մի քանի երեխա կար նստած: Առաջին էշի վրա ութ տարեկան տղա էր, որի առջև նստած էր երկու տարեկան երեխա, իսկ երեք տարեկանը պինդ գրկել էր նրա մեջքը: Մյուս էշերի վրա չորսից վեց տարեկան տղաներ ու աղջիկներ էին... Նրանք պատմեցին, որ փախել էին քրդերի մոտից և երկու օր ու գիշեր թափառելուց հետո, երբ այլևս չափազանց հոգնած կանգ էին առել, հանդիպել էին այս էշերին:

– Ո՞ւր ես գնում, – հարցնում են կամավորները ութ տարեկան քարավանապետին:

– Գյուղիս ճամփան գիտեմ... Տիգրիսի ափին *Տուքիմ* գյուղիս ճամփան...

– Քո գյուղում ավերակներից բացի ուրիշ բան չկա...

Մանուկը թոթվում է ուսերը և մեծ մարդու վստահությամբ պատասխանում.

– Մենք միշտ էլ մի բան կարող ենք գտնել: Մեր արածը ավելի ճիշտ է, քան քրդերի մոտ մնալը: Հայրս, եղբայրներս սպանված են, մայրս, քույրերս՝ քրդերին գերի... Ես կերթամ Տուքիմ... Ես սրանց տեղ կհասցնեմ...

Այդքան արյուն ու սարսափ տեսած այս երեխան ինչպես էր այսպես հանգիստ խոսում, ինչպե՞ս էր այսքան ծանր պարտականությունը վերցրել իր նվազ ուսերին... Փոքրիկներին տեղ հասցնելու պարտականությունը...

Բայց, Աստված իմ, որտե՞ղ է այդ տեղը: Ամայության և ավերակների միջով դեպի ո՞ւր են գնում Հայոց աշխարհի որբացած մանուկները... Երբ պատմում են նրանք իրենց պատմությունները՝ անհնար է լսել... Այդ մանկական ձայները՝ ողբերգություն ապրած և գեհենից անցած, առանց զգացմունքային ելևէջների, հանգիստ, կյանքն ապրած ու իմաստնացած ծերունու նման:

– Ախ... ես շատ զարհուրելի բաներ տեսա... չեմ պատմի... նորից կտեսնեմ, – յոթ տարեկան մանուկն է ասողը:

– Երբ գրկեցի փոքր եղբորս... սպանեցին... ես կորցրի լեզուս... մայրիկիս սպանեցին... ուզեցի բղավել, չկարողացա... Շաբաթներով համր եմ եղել... Հիմա խոսում եմ... Ես Փայլունն եմ, – մի կերպ ծանր կակազելով՝ փորձում էր իր պատմությունը պատմել տասը տարեկան աղջնակը:

– Ես Վանա Լեչ գյուղի Արեգնազանն եմ... Տասներեք տարեկան եմ... Չէ, կպատմեմ, ի՞նչ կա որ... Կպատմեմ... գիշերը թուրք ժանդարմները բոլոր տներից հավաքեցին բոլոր տղամարդկանց... Տարան լեռը սպանեցին: Հետո թուրքերը գյուղ վերադարձան ու տները մեկ-մեկ թալանեցին... Մեր հացի շորերն էլ տարան... Առավոտյան մեզ մորե մերկ քշեցին լեռները՝ մեր հայրերին ու եղբայրներին տեսնելու... Նրանք մինչև ուսերը թաղված էին փոսերի մեջ: Նրանք բղավում էին, որ կամ իրենց ջուր տան կամ սպանեն: Այդ ժամանակ թուրքերն ու քրդերը մեր ձեռքը տվեցին արյունով լցված ամաններ և հրամայեցին, որ խմեցնենք նրանց... Քրդերն ու

թուրքերը հոհոում էին, մեզ մտրակում. *«Տվեք խմեն, թող զովանան...»*:

– *Բրգաշեն* գյո՞ւղը... Բրգաշենն աշխարհի ամենասիրուն գյուղն է... Ես բրգաշենցի Սաթենիկն եմ, տասնմեկ տարեկան... Իմ երկու եղբայրները պահվել էին ծխնելույզի մեջ... Ինձ քրդերը բռնեցին... Ես խփում էի, գոռում... չէի թողնում: Եղբայրներս չդիմացան, ցած իջան ծխնելույզից, որ ինձ ազատեն... Քրդերը բռնեցին նրանց: Երեքիս կապեցին իրար: Հրացանազարկով ցրեցին նրանց գանգերը... Ես չեմ իմացել հետո ինչ է եղել... Նվաղած ընկել եմ... Երբ ուշքի եկա, գիշեր էր... Գյուղում մենակ ես ու մեռելներն էին... Հիմա էլ ես ու մեռելներն ենք:

– *Միփան* գյուղը ո՞ւր մնաց... Թե հասնեմ Միփան գյուղին, կհիշեմ անունս... Հիմա ինչպես հիշեմ, որ կպնդես... Թուրքերն ու քրդերը գյուղ մտան ... Հորս ու եղբորս պահեցի թոնրի մեջ... Ես պառկեցի թոնրի վրա գցած խսրին, իբր հիվանդ եմ... Քրդերը լցվեցին տունը... Մեկը հրացանի կոթով խփեց գլխիս... Տեղնուտեղը աշխարհը խավարեց: Քրդերը բացեցին թոնիրը, տեսան հորս ու եղբորս: Քրդերը քրքջում էին ու ասում. *«Փայտի տեղ սրանց են դրել թոնրի մեջ, սրանցով էլ կվառենք թոնիրը»*: Հորս ու եղբորս իրար կապեցին, ողջ-ողջ այրեցին: Ես ուզեցի ինձ գցել թոնրի մեջ, բռնեցին, կապեցին տան այունից: Երթամ, հասնեմ Միփան գյուղ, հիշեմ անունս:

– Իմ անունը Սառա է: Արճեշից եմ: Տղամարդկանց հավաքեցին, տարան լճի եզերքը, կապեցին իրար և հրացանով սպանեցին: Երեկոյան թուրք զինվորները եկան գյուղի կանանց մոտ... ամեն մեկին նվեր բերեցին իր ամուսնու մի մասը. ձեռք, ոտք, գլուխ... Նրանք հրճվելով պատմում էին, թե ինչպես են նրանց մանրամասն սպանել: Հետո եկեղեցու հրապարակ քշեցին բոլոր կանանց ու աղջիկներին: Հրամայեցին մերկանալ: Մերժողներին սպանեցին: Մերկ կանանց անցկացրին բեյի առջևով: Քննեցին նրանց ինչպես անասունների... Զոկեցին մի քանիսին... Մյուսներին ջարդել տվեցին:

– Ես քաշում էի իմ եղբորը: Մայրս մեռել էր, եղբորս քաշող չկար: Մեր գյուղ *Հառեն* եկած 400 չեթեները սպանեցին գյուղի բոլոր տղամարդկանց, հետո ստիպեցին կանանց, որ

լծվեն սայլերին, գնան հավաքեն դիակները: Խեղճերն ուժ չունեին՝ դիակներով լիքը սայլերը քաշելու: Ձեթենները ամեն մի դիակի վզից պարան կապեցին ու մտրակահարելով ստիպեցին մեզ պարանների ծայրերից բռնած քաշել մեր հարազատներին... Ես քաշում էի եղբորս...

ՄՈՐԳԵՆԹԱՈՒ – Մենք մեր գրքի էջերում պատմել ենք զարհուրելի դեպքերի մասին, որ աշխարհն իմանա, թե ինչ է այն ազգը, որ *թուրք* է կոչվում: Սակայն մենք մեր գրքի էջերում չենք կարողացել պատմել բոլոր սոսկալի դեպքերի մասին, որովհետև այդ սադիստական խենթեշանքների մասին, որոնց զոհը դարձավ հայ ժողովուրդը, չի կարելի երբեք տպել գրքի էջերում: Չի՛ կարելի: Բայց, ահա, ասում եմ. ինչ ոճիրներ, որ մարդկային զարհուրելի միտքը, ամենախաթարված բնազդը կարող էին ծրագրել, հալածանքի և անարդարության ինչ նըրբություններ, որ ստոր երևակայությունը կարող էր հղանալ, դարձավ ողբերգությունն այս նվիրական ժողովրդի, որի ճառագող մտքի խորքերից բխել է լույսը՝ փարատելու համար վաչկատուն ցեղի էության մեջ տիրող թանձր խավարը: Նվիրական այս ժողովուրդը համբերությամբ դարեր շարունակ աշխատել էր Թուրքիո պետության զարգացման համար... Այս նվիրական ժողովուրդը, որ կարող էր աշխարհի առաջ իր բողոքի, իր գայրույթի խոսքն առաջ տանել և պահանջել արդարություն, ելավ ԳՈՂԳՈԹԱ՛...

...Դու լաց ես լինում, իմ պատանի բարեկամ: Դու այն տարիքին ես, որ պիտի կարողանաս սեղմել ատամներդ և թույլ չտալ, որ անհուսությունը տիրի քո սրտին ու կոտրի քո կամքը: Ես քեզ հիշատակ եմ թողնում այս եղերապատումը՝ հուսալով, թե նրանով պիտի ավելանա քո ուժը: Չարի՛ դեմ պայքարելու քո ուժը: Եղեռնը մերժելու քո կամքը: Բայց ես տեսնում եմ, որ հիմա ահաբեկված ես: Դու իրավունք չունես ահաբեկվելու:

Որովհետև դեռ մեր հիշողության անլույս ճանապարհներին դեգերում են ՄԱՆՈՒԿՆԵՐԸ... Հանուն նրանց՝ դու իրավունք չունես ահաբեկվելու... Նրանք՝ մեր հիշողության մանուկները, դեռ փախչում են կրակների միջով, ջրերի միջով, անապատի ավազների միջով... Նրանք մինչև հիմա փախչում են, որովհետև *կռիվը դեռ չի ավարտվել*, և երբեք չի ավարտվելու, քանի դեռ մարդիկ առիթ կգտնեն միմյանց հոշոտելու:

Գիտես, *մանուկները* փախչում են նորից նոր հոշոտվելու ահից... Փախչում են՝ իրենց հետ տանելով իրենց ոսկորները... Ինչո՞ւ են տանում: Թաղելո՛ւ: Երբ նրանք տեղ հասնեն, անմիջապես հողին կհանձնեն հավերժորեն թափառող իրենց ուրվականները... Բայց նրանք դեռ տեղ չեն հասել... Իսկ դարն արդեն ավարտվել է: 20-րդ դարը:

20-րդ դարը, դեռ ուրիշ, գալիք դարերի մեջ չի ավարտվելու... քանի դեռ...

Լա՛վ: Լռում եմ: Ես կնստեմ քո դիմաց և կլսեմ հոգնած պտտվող ԵՐԿՐԱԳՆԴԻ ծանր, եղերական ճռռոցը... Թվում է, հիմա կտոր-կտոր է լինելու խարխլված ու կոտրտված մի սայլի հանգույն, որը բեռնված է չափից ավելի... ՍԱՐՍԱՓՈ՛Վ:

Կոտորակի՛ր քո սարսափը, իմ պատանի բարեկամ, և մերժի՛ր:

Հոշոտված ԵՐԿՐԱԳՆԴԻ հույսը նաև դու ես:

Քիչ հանգստանանք մեր հուզումներից, որ կարողանամ շարունակել պատմությունս:

Զ.

ՍԱՀՎԱՆ ՈՒ ԿՅԱՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ

Այսպե՛ս: Արևմտահայությունը կոտորված ու բնաջնջված էր: Ավերված ու ամայի երկիրը բաց գերեզմանոցի էր վերածվել: Բայց դեռ ապրում էր Արևելահայաստանը և իր ժողովուրդը, որը հպատակ էր Ռուսական կայսրությանը և նրա անծայրածիր տարածքների մի չնչին, աննշան մասն էր ընդամենը: Երբ Հայոց գլխին թափվեց աշխարհում երբեք չտեսնված ու չլսված անընմբռնելի աղետը՝ արևելահայության լավագույն զավակները համախմբվեցին ռուսական բանակում՝ կռվելու համար մարդկային նկարագիրը կորցրած, հայրենակիցների չարչարանքի արյունով հարբած բարբարոսի դեմ:

Իմ պատանի բարեկամ, ես քեզ կպատմեմ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ մասին:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Կովկասյան ռազմաճակատում գործող ռուսական բանակի ներսում ստեղծվեցին ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ զինված ջոկատներ Արևմտյան Հայաստանը թուրքական լծից ազատագրելու նպատակով: Երբ կազմակերպվում էին կամավորական ջոկատները, ռուս զինվորական բարձրագույն ղեկավարությունը, իր կառավարությունից թելադրված՝ հայերին մշուշապատ խոստումներ էր տալիս Արևմտյան Հայաստանի ազատագրման վերաբերյալ:

Ռուսական կայսրության հպատակությամբ ապրող *երկու միլիոն հինգ հարյուր չորս հազար* հայերից ցարական բանակ էր զորակոչվել 250 հազար հայ զինվոր:

Ցարական կառավարությունը համոզված էր հայ ժողովրդի դեպի Ռուսաստան ունեցած նվիրվածության և հավատարմության մեջ: Նա իր խնդիրներն ու շահերն ուներ Մերձավոր Արևելքում և հայերն անգնահատելի ծառայություն կարող էին մատուցել, եթե նրանց այդ ծառայության դիմաց գերի հայրենիքի ազատությունը խոստանային:

Եվ խոստացան:

Հայ Կամավորական շարժմանը մեծ օգնություն ցույց տվեցին Մոսկվայի, Պետերբուրգի, Բաքվի, Թիֆլիսի, Փարիզի, Լոնդոնի, Նյու-Յորքի հայկական կոմիտեները և ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆ իր ենթաբաժինների հետ միասին:

Այսպես կազմակերպվեց կամավորական չորս ջոկատ, որոնց հրամանատարներն էին Անդրանիկ Օզանյանը, Դրաստամատ Կանայանը, Համազասպ Սրվանձտյանը և Քեռին՝ Արշակ Գավաֆյանը: Քիչ ավելի ուշ ստեղծվեցին ևս երեք ջոկատներ, որոնց հրամանատարները եղան Գրիգոր Ավշարյանը, Հայկ Բժշկյանը, Հովսեփ Արղությանը: Ընդամենը 10 հազար մարդ:

Կամավորական այս ջոկատները ռուսական բանակի շարքերում կռվում էին Խոյ-Դիլման-Վան, Իգդիր-Բայազետ-Բերկրի-Վան, Կաղզվան-Ալաշկերտ-Մանազկերտ-Բաղեշ, Սարիղամիշ-Էրզրում ուղղություններով:

Կամավորներից շատերը ծանոթ էին տեղանքին, գիտեին լեզուն և կարողանում էին արագ տեղեկություններ հավաքել հակառակորդի թիկունքում կատարվածի մասին:

Նրանք քաջեր էին. ամեն մի զինվոր առանձին-առանձին և միասին մի սիրտ ու մի մտածում: Նրանք գնում էին ավերված, ջարդի երախը նետված երկրի միջով՝ պրկված նյարդերով, վրեժի ծանր երդումը հոգիներում, Հայոց լկված ճակատագրի դառնահամը իրենց էության անպարփակ խորքերում, Աստծո աշխարհում տիրող ստոր անարդարության դեմ զորացած ըմբոստացումով:

Զինվո՛ր և զորավա՛ր:

Շապին-Գարահիսարցի ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆՅԱՆԸ, որը սուլթան Համիդի կոտորածների ժամանակ ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲԻ խմբում, Տարոնում ու Սասունում կռվել էր թուրքական զորքերի դեմ և հայոց մեջ հերոսի համբավ ձեռք բերել Մշո Առաքելոց վանքի և Գոմեր գյուղի մոտ իր մի բուռ քաջերով թուրքական և քրդական զորքերի դեմ տարած հաղթանակների համար, հիմա ողջ կամավորականության ընտրելի առաջնորդն էր:

Եվ, եթե դու, իմ պատանի բարեկամ, այս հերոսի կյանքի անցած ճանապարհին հետևելով, փորձես ճանաչել նրան,

պիտի ապրես հպարտության բացառիկ զգացում: Հետևենք նրա կամավորական բանակի պատգամին, որը, հասնելով Սալմաստ գավառի *Դիլման* քաղաքի մատույցները, այնպիսի ջարդ տվեց Խալիլ բեյի 12 հազարանոց բանակին, որ կասեցրեց թուրքերի ներխուժումը Անդրկովկաս:

Հետապնդելով Խալիլ բեյին՝ նրա ջոկատը նորից պարտության մատնեց թուրքերին *Խանասորի* լեռնանցքում և մտավ *Բաշկալե*՝ խափանելով Վանի վրա գրոհող Ջևդեդ բեյի զորամասին օգնության հասնելու թուրքական պլանը:

1915 թվականի մայիսի 6-ին կամավորականների Արարատյան չորս զորախմբերի միասնական գունդը ռուսական զորքի հետ մտավ Վան: Վանի ազատագրումից հետո, կյանքի ու մահու կռիվ մղելով Վանա լճի հարավում, հաղթահարելով թուրքերի դիմադրությունը՝ նրանք շարժվեցին *Մուշի* ու *Բաղեշի* ուղղությամբ:

Թուրքերը տասնմեկ դիվիզիա միավորեցին և հարձակման անցան ռուսական Կովկասյան 4-րդ կորպուսի դեմ: Նրանց հաջողվեց ճեղքել ռուսների պաշտպանությունը՝ լուրջ վտանգ ստեղծելով ՎԱՆԻ համար:

Սկսվեց Վասպուրականի հայերի խուճապահար գաղթը Անդրկովկաս: Հիշո՞ւմ ես, ես քեզ պատմել եմ այս դեպքերի մասին: Կամավորները, որոնք եկել էին ազատագրելու իրենց արյունաշաղախ հայրենիքը, ստիպված ենթարկվելով ռուսական բանակի հրամանատարությանը, իրենց քաջարի ընկերների կյանքով ազատագրված Վասպուրական աշխարհը թողնելով թուրքերի անզսպելի կատաղությանը, իր հայրենի տունը սրտի կսկիծով լքող 200 հազար գաղթական ժողովրդին պաշտպանելով, կարողացան նրանց անփորձանք հասցնել ռուս-թուրքական սահման:

Հայ կամավորները չպարտվեցին: Պարտվեց ցարական քաղաքականությունը: Արևմտյան Հայաստանի գավառների մեծ մասն ազատագրելուց հետո՝ նա թույլ տվեց իր սեփական բանակի նահանջը:

Ռուսական բանակի հրամանատարությունը չափազանց բարձր էր գնահատում քաջարի ու հավատարիմ հայ կամավորներին. նրանց անձնազոհությունն ու նվիրվածությունը:

Բայց Ռուսական կայսրության քաղաքական գործիչներին դուր չէր գալիս հայ կամավորների Արևմտյան Հայաստանն ազատագրելու բուռն ձգտումը: Նրանք նույնիսկ թույլ չտվեցին, որ կամավորական խմբերը միասնական զորամիավորում կազմեն՝ այլ մասնատելով տարածեցին ռուսական զորքերի ներսում: Ցարիզմին ձեռնտու չէր հայկական զինված ջոկատների երկարատև գոյությունը, որոնք դարձել էին ընդհանրապե՛ս ազգային կյանքը պաշտպանող մեծ ուժ:

Անդրանիկ Օզանյանը գրել է. «Ցարը մեզ հետ է և թաթարին հետ է: Անոր և անոր ճորտերու նպատակն է մեզ իրար կոտորել տալ... Եթե ցարը չուզեր, որ մենք զիրար կոտորեինք, իր ցուցամատը կշարժեր և հայ ըլլա թե թաթար, կը դադարեցնեին անմիջապես իրենց կռիվը, և ատիկա կտևեր ոչ մեկ ամիս, այլ ոչ ավելի, քան մեկ րոպե»:

Մարտադաշտերում ռուսական զորքերի կողմից հայերը բացառիկ վերաբերմունքի էին արժանանում: Ռուսները տեսնում էին, որ հայերը միշտ առաջինն են մարտի նետվում և երբեք չեն նահանջում: Նրանք գիտեին, որ քանի դեռ հայերն ապրում են տանելի պայմաններում՝ խաղաղ իրենց աշխատանքին տրված մարդիկ են, բայց անարդարության, բարբարոսության և իրենց արժանապատվության ոտնահարման դեմ նրանք ելնում են կռվի այնպիսի քաջարի վճռականությամբ, որ նույնիսկ ամենասակավ ուժերով կարողանում են հաղթել թշնամու ահռելի բանակները:

Եվ հիմա էլ կամավորները հաղթում էին, բայց նրանց ստիպում էին նահանջել: Նրանք ապրում էին վիրավորանքի խորին զգացում և դժգոհություն: Սակայն ինչ էլ լիներ, նրանք հավատում էին ռուսական զենքի ուժին և նորից հավատարմորեն ծառայում նրա բանակի կազմում:

Եվ, ահա, այս խառը ժամանակների ամենախառը պահերից մեկը 1917 թվականի փետրվարն էր, երբ տապալվեց Ցարական Ռուսաստանի կառավարությունը և ստեղծվեց բուրժուական ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ:

Հայության պաշտոնական մարմինները հեռագրով հայտնեցին Պետերբուրգ, որ Հայաստանը չի անջատվում Ռուսաստանից՝ օգտվելով հեղափոխության պատճառով առաջա-

ցած խառնաշփոթից, այլ պիտի աշխատի ժամանակավոր կառավարության օգտին, մինչև Սահմանադիր ժողովը կորոշի նախկին կայսրության մեջ մտնող ժողովուրդների կարգավիճակը:

Սակայն Ժամանակավոր կառավարությունը մի քանի ամսվա կյանք ունեցավ: Նոր հեղափոխությունը նորից ցնցեց Ռուսաստանը: Բանվորագյուղացիական խորհուրդները բոլշևիկների ղեկավարությամբ պատերազմը դադարեցնելու կոչով դիմեցին ժողովրդին և շահելով նրա համակրանքը՝ կարողացան նրա անմիջական օգնությամբ բռնագրավել իշխանությունը, 1917 թվականի նոյեմբերի 7-ին հռչակել երկիրը Խորհրդային և հաշտության պայմանագիր կնքել Գերմանաթուրքական ռազմաճակատում:

Հայկական հարցը կարևոր չի եղել Ցարական Ռուսաստանի համար: Այն անկարևոր էր նաև Հեղափոխական Ռուսաստանի համար: Ռուսաստանը երբեք հաշվի չի առել ոչ հայ ժողովրդի բազմադարյան կողմնորոշումը, ոչ էլ կովկասահայերի անդավաճան օգնությունը ռուս-թուրքական բոլոր պատերազմների ու ընդհարումների ժամանակ: Բայց ինչ էլ մտածենք, ցարական բանակը այն զսպիչ ուժն էր, որի հետ հաշվի չէին կարող չնստել թուրքերը:

Իսկ հիմա, Ռուսաստանը, դեռ պատերազմը չավարտած՝ դուրս էր գալիս պատերազմից:

Նոյեմբերյան հեղափոխությունից հետո, Կովկասի փոխարքայության փոխարեն Թիֆլիսում 1918 թվականի փետրվարին ստեղծվեց ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍԵՅՄ իր Սահմանադրական ժողովով, որի պատգամավորները Կովկասում ապրող ժողովուրդների ազգային կուսակցությունների ներկայացուցիչներն էին. վրացի մենշևիկները, ադրբեջանցի մուսավաթականները, հայ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ, Ռուսաստանի մուսուլմանական կազմակերպության անդամները, էսեռները և կադետները:

Այս Սեյմը կազմակերպվեց, որ իբր միասնաբար պաշտպանի Անդրկովկասի ժողովուրդների իրավունքները: Սակայն իրականում, պատերազմի և հեղափոխությունների այս թոհուբոհում, Սեյմում գործող յուրաքանչյուր ազգի պատգամավորական խումբ ձգտում էր, հատկապես օտար երկրների հետ

բանակցությունների ժամանակ, բարձրացնել և պաշտպանել միմիայն իր շահերը: Փաստորեն, երբեք Սեյմի պատգամավորները չկարողացան, ավելի ճիշտ չցանկացան, միասնաբար գործել:

Պատկերացրու մի Օրենսդիր ժողով, որի պատգամավորներից առավել ձայն ուներ մուսուլման մուսավաթականների կուսակցությունը, որի քաղաքական գաղափարախոսությունը պանթուրքիզմի և պանիսլամիզմի ծրագիրն էր. Թուրքիայի գլխավորությամբ ստեղծել թուրք-մահմեդական միասնական Թուրանի պետություն, որտեղ իր պատվավոր տեղը պիտի գրավեր Ադրբեջանը:

Սեյմում գործում էին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐ:

Նորընծա բոլշևիկյան կառավարության կոչով զորքերը լքեցին ռազմաճակատի գիծը Հայկական բարձրավանդակում և հեռացան: Հայ ժողովրդի Արևելյան հատվածը նույնպես մնաց թուրքական կանոնավոր զորաբանակների առջև բոլորովին անզեն ու անպաշտպան:

Եվ Սեյմ կոչված Կովկասյան Համադաշնությունը, որը պիտի պաշտպաներ Կովկասի բոլոր ազգերի քաղաքական և ֆիզիկական կյանքն իբրև միասնական պետական միավոր՝ չկատարեց իր ստանձնած խնդիրը հայերի հարցում: Սեյմի ղեկավար ԺՈՐԴԱՆԻԱՆ հայտարարեց. *«Հայաստանը դատապարտված երկիր է: Այդ խորասուզվող նավին մոտենալ, նշանակում է խորտակել ինքն իրեն».*

Եվ այսպես. կյանքը եկավ ապացուցելու, թե այդ Սեյմը նույնպես դավադիր է հայ ժողովրդի մնացորդների ու մի բուռ ազատ մնացած երկրի դեմ:

Հայերի հարևան վրացիներն ու թաթարները, որոնք հետո կոչվեցին ադրբեջանցիներ, Թուրքիայի հետ վեճեր չունեին և նրա հետ դյուրությամբ կարող էին համաձայնության գալ՝ կռվելով ռուսների դեմ:

Իսկ հայության թշվառ մնացո՞րդը... Նա մի՞թե պիտի հաշտվեր եղեռնի արյան շմոլքից չսթափված թուրքի հետ, որը

երազում էր նրա վերջնական կործանումը, և պիտի կռվեր ռուսների դեմ:

Գրեթե առանց դիմադրության թուրքական զորքերը նորից վերագրավեցին Արևմտյան Հայաստանն ամբողջությամբ և գրեթե առանց դիմադրության ետ բերելով պատերազմում կորցրած տարածքները՝ ամբողջ ճակատով ներխուժեցին Անդրկովկաս:

Եվ հասան Բաքու: Թուրքերին միացան տեղացի թաթարները՝ ադրբեջանցիները: Սկսվեց կոտորածը, թալանը, բռնաբարությունն ու տանջամահությունը: 1915 թվականից չընդհատվող գեհենական չարչարանքները, արևմտահայության երկու միլիոնանոց ժողովրդին տանջահարելով կոտորելու արվեստը գերազանց գիտության հասցրած թուրքերի անզսպելի վայրագությունը, որը տարավ Բաքու քաղաքը կառուցած, բարգավաճման ու հարստության հասցրած 30 հազար հայի կյանք: Երեք օր տևեց կոտորածը: Քաղաքով մեկ փռված 30 հազար հայերի դիակների մեջ գտնվեց մի ծերունի հրեայի դիակ: Հրապարակներում ճոճվում էին կախաղանները:

Գիտես... ես նորից ու նորից մտովի գնում եմ այնտեղ, ուր ճոճվում են կախաղանները... Միևնույն է, թե որտեղ... միևնույն է... Ես գնում եմ այնտեղ, ուր մանուկը ծծում է վաղուց չարչարանքներով մեռած մոր կուրծքը... միևնույն է, թե աշխարհի ո՛ր հորիզոնականում: Ես գնում եմ այնտեղ, ուր երեխան ճչում է տանջահարումի զարհուրելի ցավից... Ուր աղջնակը ձեռքից ձեռք է նետվում պղծումի սոսկումների մեջ...

Ես ուզում եմ ԵՂԵՌՆԻ պատմությունը քեզ պատմել այնպես, կարծես այն իմ սրտի հետ բնավ կապ չունի: Բայց, ինչպես տեսնում եմ, անհնար է անտարբեր պատմողի դերն ստանձնել... Ներիր, որ համառում եմ... Ինչ էլ որ լինի. ես պիտի պատմեմ այս արյունալի պատմությունը մինչև վերջ: Ների՛ր և լսի՛ր:

Բաքուն գրավելուց հետո, թուրքերը Անդրկովկասի հայության հետ, լիներ բուն հայրենիքում թե մի այլ տեղ, ինչպես այս դեպքում՝ այստե՛ղ, վարվում էին այնպե՛ս, ինչպես արդեն վարվել էին Արևմտյան Հայաստանում: Անդրկովկասյան Սեյմը չէր կարողանում հայությանը պաշտպանել բնաջնջումից: Սեյ-

մը պարզապես չէր ցանկանում պաշտպանել: Երիտթուրքերի սկսած կոտորածներն ու ավերածությունները շարունակեցին մուսավաթականները ու ամեն կարգի թաթար ոճրագործները: Մուսավաթի քաղաքական նպատակների բուն ծրագիրն է. *«Վերին Ադրբեջանը նախ պիտի ապահովի իր անկախությունը, իսկ հետո դաշնակցի Թուրքիայի հետ»*: Այսպես էր ամեն առիթով բարբաջում Սեյմի ներկայացուցիչ Ռասուլ Զադեն: Իսկ մուսավաթական բանակի շտաբի հրահանգում ասվում էր. *«Զանգեզուրի միացումը տեղի կունենա առանց զինված պայքարի, քանի որ հայերը Նախիջևանի ջախջախումից հետո գտնվում են երկու կրակի արանքում և հազիվ թե համարձակվեն մեզ հակահարված տալ: Ներկա պայմաններում Հայաստանը մեզ համար վտանգավոր չէ: Բայց հայերը չեն կարող հաշտվել Ղարաբաղը կորցնելու մտքի հետ»*.

Առանց դիմադրության թուրքերը առաջանում էին:

Նորից շտապ կազմվում էին հայկական կամավորական ջոկատներ՝ տեղացիներից և նաև Արևմտյան Հայաստանից փրկված և այստեղ հասած նրանցից, որոնք ընդունակ էին զենք բռնելու:

Հայության թշվառ մնացորդները:

Զորավար ԱՆԴՐԱՆԻԿԸ Թիֆլիսում կոչով դիմում է ժողովրդին.

«Հասած է ժամը վերջին մարտնչումի: Իմ խոսքս կուղղեմ այն բոլոր մարդոց, որոնք խոր գիտակցումն ունին հայ ժողովրդի լայնածավալ տառապանքներին, որոնք ունին մարդասիրություն, ամեն ազգե, ըլլա անոնք հույն, եզդի, ասորի, քյուրդ, իսլամ կամ ոչ իսլամ, որոնք ենթական եղած են օսմանյան բռնակալ կառավարության անմարդասեր սարսափներուն:

Կոչ կընեմ բոլոր զենքի տղամարդկանց առանց դասակարգելու խտրության, գյուղացիեն, արհեստավորեն մինչև բարձր դասու մտավորականությանն ու հարուստը:

Կոչ կընեմ բոլոր չափահաս դպրոցականներուն, որոնք կբաղձան ծաղկավետ տեսնել վաղվան մշակույթին դաշտը, թող դիմեն զենքի, թող գան դեպի ճակատ»:

...Իմ պատանի բարեկամ, գիտեմ անշուշտ, որ օրհասական պահերին ավելի են ընդգծվում մարդկային բնավորու-

թյան վեհ կամ նսեմ գծերը: Ինչ խավի էլ պատկանելիս լինի մարդը՝ ինքն իր արարքների բացահայտ, թափանցիկ անհրաժեշտության առջև է հայտնվում: Վեհն ավելի է վեհանում և նսեմը ավելի նսեմանում:

Ես հիմա ցանկություն ունեմ վեհության օրինակներ բերել միայն: Այդ օրինակները ինձ մխիթարում են և հույսով լցնում սիրտս:

Զորավար Անդրանիկի կոչը կարդալով՝ մեծ հայրենասեր, բանաստեղծ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ գրում է.

«Սիրելի Անդրանիկ, ահավոր պահի առջև ամեն մարդ պետք է ընդհանուր սեղանին բերի՝ ինչ որ ունի և կարող է՝ թե վտանգը կանխելու և թե՛ բաղձալի խաղաղության հասնելու համար:

Ես չորս տղա ունեմ, չորսն էլ երկրի Կառավարության, Ազգային Խորհրդի և Քո տրամադրության տակ են, իսկ չորս աղջիկս էլ պատրաստակամ գնում են թիկունքի աշխատանքներին, ինչի որ ընդունակ կլինեն...

Ես էլ, անշուշտ, սրանից թանկ ոչինչ չունեմ, հետևաբար ոչինչ չեմ խնայել, միայն թե կարողանանք բոլոր ազնիվ ժողովուրդների և ազատասեր հոգիների հետ միասին ետ մղել վերահաս վտանգը և պաշտպանել ամենքիս սրբազան իրավունքներն ու ազատությունը: Ես անսահման հավատարիմ Քո՝ շատ փոթորիկների մեջ ձեռք բերած փորձառությանը, վառ հայրենասիրությանն ու ազատասիրությանը, այլև բնական մարդասիրությանն ու զինվորական բարձր տաղանդին և պատրաստ գալու, երբ որ կկոչի Քո եղբայրական ձայնը. համբուրում են հերոսական ճակատդ»:

Հայ ժողովրդի մնացորդ այն ուժերը, որ կարող էին զենք վերցնել՝ համախմբվում են Անդրանիկի շուրջը:

Աներևակայելի դժվարություններ հաղթահարելով՝ զորավարին հաջողվում է կազմակերպել ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՍԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԶՈՐԱԽՈՒՄԲ, որը կոչվում էր նաև ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՐՎԱԾՈՂ ԶՈՐԱՄԱՍ:

Երբ զորամասը պատրաստ էր ռազմաճակատ մեկնելու, կայարանում իր հրաժեշտի խոսքի ժամանակ Անդրանիկը, զինվորների միջից դուրս հանելով 14 տարեկան մի կամավորի,

Զորավար Անդրանիկ։

Կամավորներ:

Կամավորներ։

Աջից երրորդը՝ կամավորական 16-ամյա
Գ-րիգոր Պետրոսյանը, հեղինակի հայրը:

նստեցնում է զինվորի ուսերին և ասում. *«Երբ ցեղը կրնա այսպիսի մանուկներ որկել դեպի կռիվ, դեպի ճակատ, վստահ եղեք, որ իսկապես մոտ է մեր բաղձալի ազատությունը: Բավական է մեր նահատակներու բարոյական ուժը, մենք կհաղթենք և ձեռք կբերենք մեր ազատությունը: Մեզի ձգված է մեր բախտը, աշխարհի մեջ մեն-մենակ ենք: Բավական է այդ մենակությունը, որ մեր թուլությունը զրահ և պողպատ հագնի: Ռուսը գնաց և մեր հայրենիքը մեզ թողեց: Թուրքերը կսպառնան գալ և մեր ձեռքեն խլել մեր հողը, դիմադրենք և չթողնենք, որ թուրքը մտնի մեր արյունով ոռոգված դաշտերը: Ով է, որ այստեղ պիտի սպասե և չպիտի գա ճակատ: Մենք տեր չունենք, տուն չունենք, բոլորս որբ ենք, ստեղծենք մեր Հայրենիքը և տեր ըլլանք մեր ընտանիքներուն, մեր հողին, ջրին, տունին և տեղին: Կեցցե՜ հայ բանակը, որ կկռվի իր սրբազան ազատության համար: Կեցցե՜ մեր նահատակությունը... Մենք մինակ ենք, բայց հավատքով և հույսով լեցուն...».*

... Հույսո՛վ և հավատքո՛վ լեցուն: Սրանք դատարկ խոսքեր չէին: Հավատա, Հայոց բանակը գնում էր՝ միայն ու միայն իր հույսին թողնված Հայրենիքն ազատագրելու: Նրանք վստահ էին իրենց ուժին ու կամքին, իրենց անընկճելի ոգուն...

Այդ ժամանակ ո՛չ զորավարը և ո՛չ զինվորները ծանոթ չէին արդեն կայացած *Բրեստ-Լիտովսկի* պայմանագրին, որը կնքվել էր *Խորհրդային Ռուսաստանի* և *Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի և Թուրքիայի* միջև 1918 թվականի մարտի 3-ին:

Հիշո՞ւմ ես, սրանք այն երկրներն էին, որոնց դեմ պատերազմի մտավ Ռուսաստանը իր դաշնակիցներ Անգլիայի և Ֆրանսիայի հետ: Այս եռյակ միությունը կոչվում էր նաև ԱՆՏԱՆՏ, որը թարգմանությամբ նշանակում է սրտագին համաձայնություն:

Անտանտի մյուս սրտագին ընկերները հրաժարվեցին բանակցություններից, որովհետև իրենց պարտավորված չէին զգում բանվորագյուղացիական իշխանության մոտ, և, առավել ևս, իրենց՝ ավելի հաղթող, քան պարտված էին համարում: Իսկ պատերազմից և երկու հեղափոխությունից ծայրահեղ քայքայված Ռուսաստանի բոլշևիկ տերերը ժողովրդին խոստացել

էին դադարեցնել պատերազմը՝ դրանով շահելով նրանց կարևոր օգնությունը: Նրանք պիտի կատարեին այդ խոստումը, ապա թե ոչ՝ գուցեև հնարավոր դառնար մի հեղափոխություն ևս:

Բրեստի հաշտության պայմանագիրը Ռուսաստանից անջատեց Լեհաստանը, Լիտվան, Լատվիան, Էստոնիան: Գերմանիան դառնում էր Ռիգայի ծոցի և Մոնզունդյան կղզիների տերը: Ռուսաստանից անջատվում էին նաև Ուկրաինան, Ֆինլանդիան, Ալամդական կղզիները:

Այս պայմանագրի պահանջով Արդահանի, Կարսի և Բաթումիի մարզերը տրվեցին Թուրքիային:

Երբ կնքվեց հաշտությունը նախկին դարավոր թշնամիների միջև, Վեհիբ փաշան նամակ-վերջնագիր ուղարկեց Անդրանիկին և Կարինի հայ գործիչներին:

«Օսմանյան բանակի հաղթական Գոլ Օրտուները բոլորը շարժման մեջ են դրված գրավելու համար մեր հայրենիքի սահմանները: Ռուսական դեմոկրատիկ հանրապետության ներկայացուցիչները Բրեստ-Լիտովսկի մեջ մեզի հանձնած են մեր իսկ հողամասը Բաթում, Կարս, Արդահան, Օլթո և Արդվինը: Ես ձեզի կառաջարկեմ անմիջապես հեռանալ մեր սահմաններեն, եթե ոչ օրենքի համաձայն պիտի պատժվեք խստիվ. Արդեն ապ հանված է մեր բանակի մեկ մասը Բաթումի մեջ, որոնք կքալեն Կարսի վրա»:

Անդրանիկի պատասխանը Վեհիբ փաշային:

«Այն միևնույն ռուսական դեմոկրատիկ հանրապետությանը, որ Բրեստ-Լիտովսկի մեջ ձեզի կուտա Բաթում և Կարս, մեզի տված է զենք, ռազմամթերք և ամեն տեսակի միջոցներ պաշտպանելու համար մեր անժխտելի հայրենիքը եղող Կարս, Կարին, Վան և մնացյալ այն չորս նահանգներ, որոնք տակավին կհեծեն ձեր բռնակալության տակ: Ռուսաստանի դեմոկրատիկ հանրապետությունը մեզ տված է ինքնորոշվելու պատեհություն և մենք այստեղ եկած ենք զենք ձեռքներիս ինքնորոշվելու... Քեզի պես փաշաներ շատ եմ տեսել, լավ առիթ է, որ քեզ հետ ալ չափվիմ, հրամմեցեք»:

Փետրվարի 16-ին Անդրանիկ Օզանյանը իր կամավորական բանակով մտնում է *Էրզրում*:

Քաղաքի ժողովուրդը սարսափելի լքված էր ու հուսահատված: Անդրանիկի մուտքը քաղաք քիչ հանգստացրեց նրանց: Զորավարը, սակայն, չտեսավ այն ոգին, որ պետք է ունենար ժողովուրդը իր ազատության նախօրյակին:

Էրզրումում մոտ 25 հազար հայ կար, որոնք վերադարձել էին ջարդերից հետո, ռուսական զորքերի հետ: Ռուսական զորքը հեռացել էր, և Էրզրումը պաշարված էր բազմահազար թուրք զինվորներով:

Անիրական ջանքերով Անդրանիկը դիմադրում է թուրքական գերազանց ուժերին: Բայց քայքայված և բախտի քմահաճույքին թողնված ռազմաճակատը, ռուսների՝ թուրքերի հետ կնքած հաշտության պայմանագրի պատճառով, ընդհանրապես անհնար էր միասնության բերել:

25 հազար հայի ճակատագիր էր դրված զորավարի ափի մեջ: Նա կամ պիտի կռվեր բազմահազարանոց թուրքական բանակի դեմ և իր վերջին զինվորի հետ զոհվեր Էրզրումի պատերի տակ, և 25 հազար հայը հրեշավոր չարչարանքներով պիտի տրվեր կոտորածի, կամ...

Մինչև վերջ դիմադրելով թշնամուն նրան՝ Անդրանիկ Օզանյանին, հաջողվում է ապահովել հայերի նոր գաղթը Էրզրումից և կռվելով նահանջել...

* * *

...Այսպես, իմ պատանի բարեկամ, Կովկասյան ռազմաճակատի մերկացումից հետո, Բրեստի անբարո հաշտությունից հետո, Էնվեր փաշան նոր ոգևորություն էր ապրում: Հասել էր ժամանակը իրականացնելու համար պատերազմի սկզբին ձախողված իր երազանքը՝ ոտքի հանել Ռուսական կայսրության մահմեդական ազգաբնակչությանը և ճանապարհ հարթել դեպի Մեծ Թուրան:

Ուրեմն, թուրքական զորքերը, ավարտելով Արևմտյան Հայաստանի վերանվաճումը, անցան նվաճելու Արևելյան Հայաստանը վերջնականապես բնաջնջելու համար ողջ մնացած հայությանը:

1917 թվականի դեկտեմբերի 5-ին Անդրկովկասյան Սեյմի հետ կնքված զինադադարը հաշվի չառնելով՝ փետրվարի 10-ին հարձակման անցնելով, երկու ամսվա ընթացքում Երզնկան, Էրզրումը, Սարիղամիշը, Կարսը, Ալեքսանդրապոլը գրավելով՝ փորձեցին *Սարդարապատի* և *Բաշ-Ապարանի* վրայով հասնել Երևան:

Այնտե՛ղ պետք է վերջնականապես փակվեր ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ: Պետք է աշխարհի երեսից անհետանար հայությունը: Պատմության կեղծարարների գրիչների տակ հազարամյակների նրա ստեղծած քաղաքակրթությունը կասկածանքի պիտի ենթարկվեր: Կա՛ր և չկա՛: Ո՛չ. ընդհանրապես չի՛ եղել:

Դու հավատո՞ւմ ես հրաշքի: Ասենք. ինչպես Հիսուս Քրիստոս Աստծո Որդին հարություն տվեց Ավետարանի Ղազարոսին: Ուրեմն, լսի՛ր. ազգի տանջահար մնացորդով Ղազարոս դարձավ հայությունը: Առանց աստվածային և առանց մարդկային օգնության նա որոշեց հարություն առնել և ապրել ամեն գնով:

Ես կցանկանայի մանրամասն նկարագրել, թե ինչպես նորից կազմակերպվեց Հայոց Բանակը: Նկարագրել Երևանյան գնդի, զեյթունցիների հեծյալ գնդի, իգդիրցի աշխարհազորայինների, կամավորական երկու վաշտերի, հետևակային բրիգադի, Երզնկայի հետևակային գնդի, Մակվի գումարտակի, Խնուսի գնդի, մշեցիների ջոկատի, արցախցի զինվորների կռիվները Յաղուբ Բեյի և Մյուրսել փաշաների բազմաթիվ անգամ ավել դիվիզիաների դեմ:

Նկարագրել օր օրի, առանձին-առանձին, դրվագ առ դրվագ մարտի նետվող Հայոց բանակի և աշխարհազորի, նրանց հրամանատարներ գեներալներ՝ *Միլիկյանի* և *Նազարբեկյանի*, գնդապետներ՝ *Դ. Փիրումյանի, Պ. Փիրումյանի, Սարիբեկյանի*, կապիտաններ՝ *Իզիթխանյանի, Ամիրխանյանի, Հովսեփիմյանի, Ջսհինյանի, Օհանջանյանի*, մյուս հրամանատարների, *արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանի* սխրանքները:

Նկարագրել *Գարեգին Նժդեհի՝ Ղարաքիլիսայում* և *Անդրանիկ Օզանյանի* Լոռիում կազմակերպված պաշտպանությունը: Անդրանիկ Օզանյանը, թուրքական զորքերի շղթան

ճեղքելով, հասել էր Լոռի և պաշտպանում էր երկաթգիծը և ամբողջ շրջանը՝ դրանով իսկ պաշտպանելով Սարդարապատի անցքերից մեկը:

Նկարագրել *Դրաստամատ Կանայանի՝ Դրոյի* հրամանատարությամբ Բաշ-Ապարանում տարած հաղթանակը:

Նկարագրել յուրաքանչյուր հասարակ զինվորի և աշխարհազորայինի քաջությունը, որոնք նետվում էին կռվի՝ Հայոց հինավուրց հավատամքը իրենց էության ներսում. *«Մահ իմացյալ անմահություն է»:*

«Բայց քանի որ պիտի ոչնչանանք, ավելի լավ չէ՞, կռվով բերենք ապրելու իրավունք», – սա գեներալ Սիլիկյանի կոչից մի տող է ընդամենը:

Այս կոչից հետո գեներալը դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս ԳԵՎՈՐԳ 5-ՐԴԻՆ և առաջարկում նրան տեղափոխվել առավել անվտանգ վայր: *«Եթե հայկական ուժերը ի վիճակի չեն պաշտպանելու այս սրբազան վայրը, ապա ես ինքս կանեմ այդ, հոգ չէ, թե կզոհվեմ հազարամյա Մայր տաճարի շեմին»:* Այսպես պատասխանում է Հայոց հովվապետը Հայոց գեներալին, որը ղեկավարելու էր Կյանքի՛ գոտեմարտը:

Հասարակության բոլոր խավերը, բոլոր քաղաքական կուսակցությունները, մտավորականները, հոգևորականները զենք էին վերցրել հանուն կյանքի:

Սարդարապատը պատվի ու ազատության համար մղված պայքարի խորհրդանիշն էր, որը պահանջում էր ինքնահրաժարում ու գերմարդկային զոհաբերություն:

Փա՛ռք Սարդարապատի և Բաշ-Ապարանի կռիվների բոլոր մասնակիցների խնկելի հիշատակին... Նրանք գնացել են, չկան, բայց նրանց կատարած գործի հիշատակը, անկասկած, մեր ժողովրդի հետ է լինելու այնքան, քանի դեռ ապրելու է նա: Իսկ նա ապրելո՛ւ է: Հավատո՛վ եմ ասում: Իմ հավատի վկաները իմ ժողովրդի պատմության սրբազան էջերն են:

Սարդարապատի հաղթանակից հետո, Սեյմում գործող *«Հայոց Ազգային խորհուրդը»* Հայաստանը հռչակեց անկախ հանրապետություն, որի նախագահ ընտրվեց *Քաջազնունին*:

Հայաստանից առաջ անկախ էին հռչակվել Վրաստանը և Ադրբեջանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ: Թվում էր ավելի երազային վիճակ հնարավոր չէր պատկերացնել Հայոց համար: Եվ բանակը, որը հաղթել էր Սարդարապատում, իրեն ամբողջությամբ դրեց սեփական հանրապետության տրամադրության տակ՝ պատրաստ շարունակելու կյանքի համար սկսած իր դժվարին գոտեմարտը: Նա հաղթել էր միայնակ, առանց որևէ օտարի օգնության: Որովհետև միշտ այդպես է եղել: Երբ հայը հույսը միայն իր վրա է դրել՝ հաղթել է, իսկ երբ աչքը հառել է դաշնակիցներին՝ պարտվել է: Որովհետև այդ դաշնակիցները երբեք բարեկամներ չեն եղել: Այդ դաշնակիցները դաշնակից են դարձել միմիայն իրենց շահի և օգուտի համար:

Ինչևէ: Հիմա Հայոց ամեն մի զինվոր մահապարտ էր: Հայոց ամեն մի զորավար նույնպես մահապարտ էր՝ հանուն կյանքի՛: Մահ իմացյա՛լ: Նրանց, Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի, Լոռվա կռիվների հերոսները պատրաստ էին միացյալ կամքով նետվելու առաջ՝ շարունակելու համար Հայրենիքի ազատագրումը:

Բայց նրանց սլացքը կանգնեցրին:

Ինչո՞ւ:

1918 թվականի հունիսի 4-ին, այսինքն Սարդարապատի փայլուն հաղթանակից ընդամենը մի շաբաթ հետո *Բաթում* քաղաքում, Օսմանյան կայսերական կառավարության և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության միջև *«խաղաղության և բարեկամության»* պայմանագիր կնքվեց: Թուրքիայի կառավարության կողմից պայմանագիրը ստորագրեցին Վեհիբ-Մահմեդ փաշան և Խալիլ բեյը, Հայաստանի Հանրապետության կողմից Քաջազնունին և Խատիսյանը:

Թուրքերը պարտվել էին:

Թուրքերը իրենց պարտությունից մեկ շաբաթ հետո թելադրում էին իրենց կամքը հաղթողին: Այդ պայմանագրով հռչակվում էր *«խաղաղություն և հարատև բարեկամություն»* Օսմանյան կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև: Այդ պայմանագրով Հայաստանի սահմանները պարփակվում էին Երևանով և նրան կից մի քանի շրջաններով:

Սուրմալուի գավառը, որը գտնվում էր Երևանի նահանգում, անցնում էր Թուրքիային Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Շարուր-Դարալագյազի գավառների մեծ մասի հետ: Հայաստանին մնում էր ընդամենը 10 հազար կմ^2:

Բաթումի բանակցությունների ժամանակ Վեհիբ փաշան ասաց. *«Ճակատագիրը Թուրքիային արևմուտքից արևելք է քշում: Մենք պետք է ճանապարհ ունենանք այնտեղ: Դուք՝ հայերդ, կանգնած եք մեր ճանապարհին: Պահանջելով Վանը դուք կփակեք մեր ճանապարհը դեպի Պարսկաստան: Պահանջելով Նախիջևանը և Զանգեզուրը՝ դուք մեզ արգելք կհանդիսանաք իջնելու Քուռի հովիտը և Բաքու: Կարսն ու Արդահանը կփակեն մեր ճանապարհը դեպի Ղազախ ու Գանձակ: Դուք պետք է մի կողմ քաշվեք և ճանապարհ տաք».*

Մեկ ուրիշը լկտիաբար հայտարարեց. *«Հայաստանի մայրաքաղաք կարող է լինել Էջմիածնի վանքը՝ հոգեհանգիստ կատարելու համար Արևմտյան և Արևելյան հայության վրա»:*

Պարտված Թուրքիան կռվում էր ազգայնական ոգու նոր թափով, կրոնական, ցեղային բարձունքներով մեկ ամփոփ մեծամասնություն էր կազմում և ուներ իր ազգային «ուխտը» իրականացնելու առաքելություն:

Իսկ հայե՞րը:

Կծկված մի ափ հողի վրա, որպես երկու միլիոնի արյան տապանագիր՝ ներումի ու եղբայրության հանգերգը սկսեցին կրկնել նրանք, որոնք չգիտես առաքինության և բարոյականության ո՞ր դիրքերից յուրացրել էին Անգլիայի քաղաքական դավանանքը. չկան մշտական բարեկամներ ու մշտական թշնամիներ, կան մշտական շահեր: *«Գիտակցենք, վերջապես, հանուն հալածված ու պայքարող Արևելքի իրական ազատագրության, հանուն Թուրքիո ճշմարիտ վերածնունդի, հանուն հայ և թուրք ժողովուրդների լուսավոր ապագայի՝ վարժվենք մեր սիրտը տեղափոխել մեր ուղեղի մեջ».*

Լսեցի՞ր:

Պայմանագրով Հայաստանի կառավարությունը պարտավորվում էր թույլ չտալ հակաթուրքական զինված խմբերի կազմակերպում, հակառակ դեպքում թուրքական կառավարությունը խոստանում էր Հայաստանի Հանրապետությանը

«ռազմական օգնություն՝ երկրի ներսում վերահաստատելու կարգը և ապահովելու անդորրությունը»:

Թուրքերն իրավունք էին ստանում Հայաստանում նշանակելու իրենց կոմիսարներին, որպեսզի նրանք հետևեն Հայաստանի ճանապարհներով թուրք զորքերի կանոնավոր փոխադրումներին:

Հայաստանը պարտավորվում էր նաև արտոնություններ տրամադրել Թուրքիայի դաշնակիցներին:

Պայմանագիրն ուներ հատուկ հոդված, որով սահմանվում էր մուսուլմանական բնակչության իրավունքների պաշտպանությունը Հայաստանում:

Բայց որևէ խոսք չկար այն մասին, որ Հայաստանի բռնագրաված գավառներում, թուրքերը պիտի պաշտպանեն հայերի իրավունքները:

Եվ որովհետև չկար այդ հոդվածը *«խաղաղության և բարեկամության»* պայմանագրի մեջ, նրանք հավաքում, տանում էին ոչ միայն հաց ու անասուն, այլև պետական հասարակական կամ մասնավոր ամեն բան. պատրաստի վառելիք, պահեստների ու խանութների ապրանքներ, տների կահկարասի, պատուհանների փեղկեր, վառարաններ, երկաթուղու սեմաֆորներ, լապտերներ, հեռագրաթելեր, հեռագրասյուներ, այսինքն այն ամենը, ինչ որ արժեք էր ներկայացնում ժողովրդի ու պետության համար: Նա ոչ թե հետզհետե էր քամում բռնագրաված երկրի հյութը, կաթիլ-կաթիլ ծծում ժողովրդի արյունը ոչ... նա իր ցեղի նախճիրի ոգուն հարազատ նորից թալանի, ավերածության, ջարդի ու կոտորածի էր մատնում երկիրը հենց առաջին վարկյանից:

Արևելյան Հայաստանի հողը նորից ոռոգվում էր արյունով, դաշտերն ու ձորերը ծածկվում՝ դիակներով:

Ժողովուրդը, թուրք-հայ բարեկամությունից ահաբեկված, խելահեղ, թողնելով իր ոտքի տակ մի ափ հարազատ հողը, ելել էր *«փախեփախի»*: Գաղթականության ծայրը հասել էր Վլադիկավկազ ու Արմավիր, ապա ձգվել, հեռացել Կովկասից և դեգերում էր Ռուսաստանի հեռավոր անդաստաններում:

... Իմ պատանի բարեկամ, գաղթականությունը դեգերում էր նաև իր փոքրիկ-փոքրիկ, թուրքերից դեռ ազատ մնացած երկրի ներսում: Տեսնելու բան էր. անակնկալ նահանջից ահաբեկված խեղճ վերապրողների խելակորույս վազքը բանակների ետևից... Մի պահ պատկերացրու զորավար Անդրանիկ Օզանյանի փոքրաթիվ բանակը, որի ետևից քարշ էր գալիս բազմահազարանոց գաղթականությունը:

Մահից մազապուրծ, խեղճ ժողովրդի ահաբեկված խլյակներ, որոնք սարսափով մտածում էին, թե զորավարը նույնպես կարող է լքել իրենց ու թողնել թուրքերին ի կեր... Կամ, եթե ոչ նրանց, ապա սովին, ծարավին, մերկությանը, ցրտին, հիվանդությանը...

Ի՞նչ պիտի լիներ սրա վերջը:

Բացի բանակի ետևից քարշ եկող գաղթականության անսկիզբ ու անվերջ շարանին՝ ուրիշ 600 հազար գաղթականներ օթևանից զուրկ թաքնվում էին լեռներում և անտառներում, ենթարկվելով նոր զրկանքների, անվերջանալի վտանգների՝ աննպաստ եղանակի հարվածներին, ամենազարհուրելի տարափոխիկ հիվանդությունների:

Արևմտահայ մեռնող-վերապրողները:

Հիմա նաև արևելահայ փախստականները:

Բայց թերևս անելանելի վիճակը Անդրանիկ Օզանյանի և իր բանակի վիճակն էր:

Ի՞նչ պիտի աներ այդ բանակը, եթե իր ետևից քարշ էր տալիս այդ բեռը, որի համար պատասխանատու էր իր սեփական խղճով ու կյանքով: Բաթումի կատակերգությունը ոչ միայն ստորացուցիչ էր հայ ժողովրդի համար, այլև մահացու էր: Եվ Հայոց Բանակը Հանրապետության ղեկավարներին *«Աշխատանք»* թերթի միջոցով տվեց իր գնահատականը. *«Հաշտության պայմանները կատարելապես ամոթալի և ստորացուցիչ էին հայերի համար: Ինչ եզրակացության էլ որ հանգեն այս կամ այն ազգային կազմակերպությունները, քանի դեռ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը սպառնա ահավոր վտանգը, մենք զենքը չենք թողնի, կկռվենք մինչև այդան վերջին կաթիլը».*

Բաթումի պայմանագրի կապակցությամբ Անդրանիկ Օզանյանը հեռագրում է Հայաստանի կառավարությանը. *«Վեց հարյուր տարվա ստրկության շղթան դարձյալ ձեր վիզն ու ոտքը կանցընեք ձեր ձեռքով: Չեմ կրնար այս պայմաններում հանդուրժել՝ մոռանալով մեր երեսուն տարվա զոհերը և երկու միլիոն նահատակները»:*

Իսկ գնդապետ Դանիելբեկ Փիրումյանը, որ Սարդարապատի հերոսներից էր՝ համոզում էր Հանրապետության ղեկավարներին շարունակել հարձակումը թուրքերի դեմ. *«Ես չեմ կարող հաղթական զորքին հայտնել այդ խայտառակ լուրը, նրան հետ դարձնել իր արյունով նվաճած դիրքերից: Նահանջը կազմալուծիչ կլիներ իմ զորքի համար».*

Բայց մի՞թե թուրքերի նպատակը ա՛յդ չէր:

... Իմ պատանի բարեկամ, ես տեսնում եմ բարկությամբ լի քո հայացքը, զայրույթով սեղմված քո շուրթերը և լսում եմ վիրավորանքից թպրտացող քո սրտի զարկերի մեջ պապանձված հարցը. *«Իսկ այդքան տենչալի նորաստեղծ Հայոց Հանրապետության ղեկավարների նպատակն ի՞նչ էր: Նրանք ի՞նչ էին ուզում».*

Չգիտեմ: Երևի ուզում էին խուսափել նոր զոհերից՝ չափից ավելի թանկ վճարելով: Չգիտե՛մ: Ես չեմ կարող դատել: Ես դրա իրավունքը չունեմ: Թող դատեն քաղաքագետները, դիվանագետները, պատմագիրները... իմաստունն՛երը: Ես ընդամենը պատմող եմ: Ես ընդամենը ուզում եմ, որ դու իմանաս՝ թե ի՞նչ պատահեց, ի՞նչ եղավ... Իսկ թե ինչո՞ւ պատահեց և ինչո՞ւ եղավ... չգիտեմ, ների՛ր:

Երբ դու երբևէ զգաս, որ քո հասուն միտքը պատրաստ է վերլուծելու այս ողբերգական Կյանքի գաղտնիքը, ինքդ փորձիր քանդել Հայոց խճճված կծիկը: Իսկ հիմա միայն մի բան կարող եմ ասել. Հայաստանի մի սեղմված բռունցքի չափ հողում հավաքված ապրողների կեսից ավելին անտեր, մերկ, քաղցած, հիվանդ, խելագարված, սարսափահար գաղթականներ էին: Անհնար էր գյուղերում կազմակերպել վար ու ցանք սերմացուի, գյուղատնտեսական հասարակ գործիքների բացակայության պատճառով: Ոչնչացված կամ թալանված էին անասունները: Սովը իր անխնա, անտեսանելի մանգաղով տա-

ռափոխիկ անբուժելի հիվանդությունների հետ հնձում էր հազարներով: *«Դիակները,* – գրում է ականատեսը, – *հաճախ, ամենեն բանուկ հրապարակներուն վրա, գիշերով, ոտքիդ կկառչեն և ամբողջ քաղաքին մեջ,ամեն ժամ լսելի կըլլա մեռնողներու աղաղակը... Ոչ մեկ իշխանություն ունենք, ոչ մեկ աշխատանք, ոչ մեկ բարեկամ. սով-արքան է միակ իշխանությունը, որ կոչնչացնե ահա մեր ցեղը՝ անընդունակ դարձնելով մեզ ոչ միայն աշխատելու, այլև ապրելու: Հայաստանը ազգովի դատապարտված է անօրինակ ողբերգական մահվան... Թուրքական հրոսակները ծանր օղակումի մեջ կձգտին խեղդամահ անել ժողովրդին, որը կգալարվի սովի ու թշվառության ճիրաններում...».*

Սա մի կողմից: Իսկ մյուսը այն, որ երկրում բացակայում էր տարրական կարգ ու կանոնը: Անարխիա, ծեծ, կողոպուտ, անիշխանություն, պաշտոնական մարմինների կողմից անգործության և անօրինականությունների խրախուսում, կյանքի և ունեցվածքի անապահովություն հենց բուն Երևանում... Անոթիներն ու սովյալները չեն, որ խռովում են հանրային անդորրությունը: Նրանք՝ պարանոցները ծռած, սրճարանների ապակե փեղկերի առջև կամ փռի դիմաց խաղաղորեն սպասում էին մահվան: Չարիքը գալիս էր չարագործության, գողության և հափշտակության մոլուցքով բռնված ստահակներից, որոնք ազգությամբ... Լա՛վ: Վերջ այս մասին: Գուցե իսկապես կարելի էր սարսափել այս ամենից և պայմանագիր կնքել նույնիսկ... սատանայի հետ: Ինչը և արեցին նորաստեղծ Հանրապետության կառավարիչները 1918թ. հունիսի 4-ին Բաքում քաղաքում:

Մերժելով Բաքումի պայմանագիրը՝ միևնույն է, Անդրանիկ Օզանյանի զորախումբը չէր կարող մատնվել անգործության: *«Մենք պիտի կռվենք մինչև մեր արյան վերջին կաթիլը մեր նպատակներին հասնելու համար».* Այս երդումով նրանք ճանապարհ ընկան դեպի Խոյ՝ նպատակ ունենալով ապահովել այնտեղ կուտակված 60 հազար հայերի կյանքը թուրքերի հետապնդումից:

Խոյից քիչ հեռու Անդրանիկի զորախումբը ջախջախում է թուրքերի բազմաթիվ անգամ գերակշռող ուժերը, ապա շրջապատում և գրավում է Խոյը:

Անդրանիկ Օզանյանի զորախումբը շարունակում է իր ռազմերթը՝ իր հետ տանելով 20 հազար գաղթական, որը հասկանալի է, թե ինչ դժվարություններ էր ստեղծում կռվող զորքի համար: Վերջապես նա կարողացավ գաղթականությանը հասցնել Նախիջևան:

Երկու ամիս կռիվներ մղելով և կարողանալով կասեցնել թուրքական կանոնավոր զորքերի հարձակումը դեպի *Շատախ-Նախիջևան-Խոյ՝* Անդրանիկը վերջապես հասնում է *Զանգեզուր*:

Նա կարողացավ կասեցնել նաև թուրքական և թաթարական՝ ադրբեջանական միասնական զորամասերը, որոնք սպառնում էին Զանգեզուրին, մաքրել այն գյուղերը, ուր կենտրոնացել էին թշնամի ուժերը: Սակայն նա կռվում էր ոչ միայն թշնամական բանակների դեմ՝ ապահովելով հաղթանակ և կյանք, այլ նաև դիվանագիտական նենգ խաղերի դեմ էր ստիպված պայքարում, որոնք այնքան հաճախ ի չիք էին դարձնում նրա ամենափայլուն հանդիպանակներն անգամ:

Գերմանական օկուպացիոն զորքերի գլխավոր հրամանատար Ֆոն Կրեսը Խալիլ փաշայի հետ այցելում է Երևան և Հայաստանի Հանրապետության ղեկավարներից պահանջում, որ նրանք պաշտոնապես հայտարարեն, թե Հայաստանի կառավարությունը ոչ մի կապ չունի Անդրանիկ Օզանյանի հետ:

Քաջազնունին վստահեցնում է, որ Անդրանիկը չի հնազանդվել ռազմական հրամանին և Զանգեզուր է գնացել ինքնագլուխ և այն էլ ոչ թե Հայաստանից, այլ Նախիջևանից, որը գտնվում է թուրքերի տիրապետության տակ: Որ եթե Անդրանիկը ոտք դնի Հայաստան, կզինաթափվի և կհանձնվի զինվորական դատի:

Այդ բանակցության ժամանակ Խալիլ փաշան հայտարարում է. *«Մենք՝ թուրքերս, չենք մտածում, որևէ ժողովուրդ ստրկացնելու մասին. սակայն մենք մի իդեալ ունենք և ուզում ենք այն իրագործել: Մենք ցանկանում ենք վերականգնել մեր կապը մեր հայրենիքի՝ Թուրանի հետ և դրա համար ուզում ենք,*

որ մեր երկու հայրենիքները իրար միացնող ճանապարհը ուրիշների տիրապետության տակ չլինի»:

Ուրեմն թուրքական այդ «կարևոր» գաղափարի իրականացման մի մասը Զանգեզուրի և Արցախի նվաճումն էր, որով պիտի բացվեր դեպի Բաքու գնացող ճանապարհը: Թուրքական զորքերը, ավերելով Արցախի գյուղերը, հայ-աղրբեջանական ընդհարումներ կազմակերպելով՝ առաջանում էին դեպի Զանգեզուր, որը պաշտպանում էր «հանցագործ» հռչակված Անդրանիկ զորավարը:

Թուրքերը գրավում են Շուշին, բայց ղարաբաղցիները շարունակում են իրենց պարտիզանական կռիվները: Ապա նրանք ծերունի սուրհանդակ Ալեքսան Առաքելյանին ուղարկում են Զանգեզուր: Ծեր սուրհանդակը, ճեղքելով թշնամու շղթան, անցնելով լեռներով ու ձորերով, հասնում է Կոռնիձոր՝ Անդրանիկի մոտ, և հայտնում, որ ղարաբաղցիները մինչև մահ պիտի պաշտպանեն Արցախը, միայն թե Անդրանիկը հասնի և օգնի իրենց:

Այս դեպքի մասին Անդրանիկ Օզանյանը գրել է. *«Պարզ, միամիտ, հեզահամբույր ծերունի մըն է, ոսկրոտ, մազերն առատ և անխնամ: Եվ երբ ակնածանքով իր փափախը կհանե իր գլխեն, նվիրական մեկը կը դառնա այդ հրաշալի ծերուկը: Ո՞վ, ո՞ր երիտասարդն էր, որ պիտի համարձակեր մեն մինակ Դիզակի շրջանեն, Խժաբերդեն ելներ ու ձորերով, լեռներով, թուրք շրջաններե անցներ գիշերով և հասներ հայկական շրջան՝ Կոռնիձոր».*

Իսկ թուրքական զորքերը, ներխուժելով Լեռնային Ղարաբաղի՝ Արցախի մայրաքաղաք Շուշի, շարժվում էին դեպի Զանգեզուր:

Սակայն հենց այդ պահին ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմը գերմանա-թուրքական դաշինքի պարտությամբ և 1918թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում կնքված պայմանագիրը ստիպեց թուրքական զորքերին թողնել Անդրկովկասը, նաև Նախիջևանը և Արցախը:

Թուրքական զորքերի տեղը գրավեցին անգլիական զորքերը: Արցախի վերջնական ազատագրման համար պայմանները ավելի քան նպաստավոր էին:

Անդրանիկ Օզանյանի զորախումբը 30 հազար արևմտահայ գաղթականների հետ շարժվեց դեպի Արցախ: Զորավարը որոշել էր նրանց բնակեցնել Արցախում:

Սովահար ու հոգնած, չորս տարի անընդհատ թափառելով ճանապարհների վրա, խուսափելով թուրքերի հալածանքներից՝ նրանք դանդաղ քարշ էին գալիս իրենց միակ պաշտպանի զորախմբի ետևից՝ անասելի դժվարացնելով նրա ռազմերթը: Բայց այդ տանջահար ամբոխը գիտեր, որ եթե Անդրանիկ Օզանյանը պաշտելի զորավար է իր զինվորների համար, ապա գաղթականության համար հայր է, որ երբեք չի թողնի նրանց ճակատագրի քմահաճույքին: Եվ հիմա նորից ու նորից, լեռներ ու ձորեր հաղթահարելով՝ զինվոր ու գաղթական, վերջապես բարձրացան Զանգեզուրի սարերից մեկի գագաթը, որտեղից երևում էր Արցախը իր հիասքանչ բնությամբ:

Թաթար-ադրբեջանցիների զորքը եկել, կուտակվել էր Զաբուղի անդնդախոր ձորերում: Առաջին իսկ գրոհով հայերը գրավեցին առաջին ձորը և ետ շպրտեցին դեպի Արցախ ճանապարհը փակած թշնամուն: Քիչ հետո գրավեցին երկրորդ ձորը և պատրաստվեցին մտնել Արցախ, երբ անգլիական հրամանատարության ներկայացուցիչը՝ սպիտակ դրոշակ պարզած, ավտոմեքենայով գալիս էր՝ հաշտություն կնքելու: Եվ երբ արդեն հաղթահարվել էին բազմաթիվ արգելքներ, պարտվել էին թուրքերը, որ նաև թաթար էին ու ադրբեջանցի, երբ Անդրանիկը հաղթական իր զորախմբով և հուսավառված գաղթականներով մոտենում էր Շուշիին, դաշնակիցների զորքերի ընդհանուր հրամանատար, անգլիական գեներալ Թոմսոնից և Անդրբեջանի մուսավաթական կառավարության նախագահ խան Խոյսկուց հեռագիր է ստացվում՝ դադարեցնել առաջխաղացումը, ապա թե ոչ անձնական պատասխանատվություն կկրի հետագա արյունահեղության համար:

Անդրանիկը, հավատալով, որ պարտված Թուրքիան իր զորքերը ետ կքաշի Հայաստանից, դադարեցրեց կռիվները:

Բայց անգլիական զինվորական իշխանությունները և Ադրբեջանի կառավարությունը, օգտվելով այդ դադարից՝ Ղարաբաղը և Զանգեզուրը հայտարարեցին Ադրբեջանի նահանգ՝

Խանքենդ մտցնելով ադրբեջանական հեծյալ «վայրի դիվիզիան»:

Ղարաբաղի հայությունը որոշել էր չենթարկվել ադրբեջանական կառավարությանը, եթե նույնիսկ նորից կռվի մեջ մտնեն թուրքական կանոնավոր զորքերը:

Հայաստանի Հանրապետությունը ամեն միջոցի պիտի դիմեր, կասեցնելու համար Ադրբեջանի առաջխաղացումը, որ կատարվում էր անգլիացիների հովանավորությամբ:

Անգլիացիները խնամում էին ադրբեջանական զորքը, այն չէր տառապում սովից: Անդրանիկի զորախումբը իրեն հասանելիք մի կտոր հացը կիսում-կիսկսում էր գաղթականության հետ, որն այդպես էլ չկարողացավ պատսպարվել Արցախում:

1919 թվականի մարտի 25-ին Անդրանիկը 1350 զինվորով թողնում է Զանգեզուրն ու Սիսիանը, հաղթահարելով նորից դեռ ձյունածածկ լեռներ ու ձորեր, շարժվում դեպի Էջմիածին: Նրան ուղեկցում էր անգլիական հրամանատարության ներկայացուցիչ Գիպոնսը:

Երեսուն տարի պայքարել էր ճշմարիտ ու հերոսական մարդը թուրքական ջարդարարների դեմ հանուն իր ժողովրդի, որի հանդեպ պաշտամունքը անչափելի խորություն ուներ: Եվ հիմա ծայրահեղ ծանր հոգեվիճակով, հիասթափված, հիվանդ իր սեփական ապրումներից, հայդուկ-ֆիդայու կարգավիճակից գեներալ-մայորի աստիճանի հասած 50-ամյա զորավարը գնում էր Էջմիածին Ամենայն Հայոց կաթողիկոսի ոտքերի մոտ դնելու իր փառապանծ զինվորների վենքերը: *«Պարոն*, – ասում է նա Գիպոնսին, – *գացեք անգլիացիներու ըսեք, որ այսօրվնե սկսյալ, Դաշնակիցներուն հետ որևէ գործ չունիմ այլևս: Ինչ դրամ որ ստացած եմ իրենցմե, պիտի վերադարձնեմ, ձիերս ծախելով, երբ Երևան հասնիմ: Մեզի ըսիք, որ այլևս չկռվինք, և մեզի համար եղած անիրավությանց համար սպասենք խաղաղության համաժողովին: Ձեզի վստահելով՝ հանդարտ կեցանք և համբերությամբ սպասեցինք մեր փրկության: Կըսեք, թե Թուրքիայեն անկախ Հայաստան մը պիտի ունենանք: Մոտ ատենեն այդ Հայաստանը լեցնող հայ պիտի չմնա այլևս: Կը մերժեք, որ մեր երկրին և մեր կյանքին համար կռվելով մեռ-*

նինք, և մեզ կդատապարտեք սովամահ մեռնելու անպատվության»:

Անդրանիկ Օզանյանի Հայկական առանձին հարվածող զորամասի երթը տևում է երեք շաբաթ:

Էջմիածնի ճանապարհին նրան հանդիպում է Երևանի պարետ Շահխաթունին, որն ուղեկցում էր *«Թայմս»* թերթի խմբագիր Կեներդուն:

Պատմում է Շահխաթունին.

«... Հանկարծ մենք տեսանք մի զորաբանակ, որը շարժվում էր դեպի Էջմիածին: Զորքի առջև մոխրագույն ոտքերով սպիտակ ձիուն հեծած Անդրանիկն էր: «Ո՞վ է սա», – հարցրեց միստր Կեներդին: «Հայաստանը.., – պատասխանեցի ես, – ահա տեսեք՝ Արարատը, Արաքսը, ս. Էջմիածինը և... Անդրանիկը...»: Երբ մենք մոտեցանք հերոսին, նա կանգնեցրեց իր ձին և յուր բանակը: Ես համբուրվեցի նրա հետ, իսկ սառը Ալբիոնի զավակ Կեներդին հանեց իր գլխարկը, և ես նրա աչքերի մեջ տեսա արցունքներ...»:

Նա հասավ Էջմիածին: Ամբողջ արևմտահայ գաղթականությունը կուտակվել էր այնտեղ: Անդրանիկի հետ եկած գաղթականությունը նույնպես տեղավորվեց սուրբ քաղաքի պատերի տակ... Նրանք անձկությամբ սպասում էին, որ բացվելու են գերված ու չարչարված իրենց Հայրենիքի դռները և նրանք վերադառնալու են... տուն: Եվ նրանց ուղեկցելու է իրենց պաշտելի զորավարը, մարտերի մեջ թրծված ու կոփված իր զինվորների հետ:

Սակայն դաշնակիցները Մուդրոսի զինադադարի պայմանները քննելիս մոռացան խոսել Հայաստանի մասին:

Անդրանիկ Օզանյանը, իր զորամասի զենքերը հանձնելով կաթողիկոսին, հրաժեշտ է տալիս իր բոլոր մարտական ընկերներին, իր քաջարի զինվորներին...

Եվ հեռանում է:

Նա իր կյանքում երբեք չէր ձգտել անձնական երջանկության և բարօրության: Նա միայն մշտապես պայքարել է իր հարազատ ժողովրդի ազատության և բարեկեցության համար: Նա երբեք չի ձգտել իր ծառայությունների ճանաչմանը: Նա միայն մի երազանք է ունեցել. տեսնել իր ժողովրդին ազատ:

Անդրանիկ Օզանյանը՝ մեր հոգիներում ապրող կենդանի առասպելը:

Երբ 1919 թվականի մարտի 12-ին հավատալով անգլիացիների խոստումներին՝ Անդրանիկ Օզանյանը իր զորախմբով և գաղթականների հոծ բազմությամբ հեռացավ Զանգեզուրից, այնտեղ ճգնաժամային վիճակ ստեղծվեց, որովհետև անմիջապես դեպի Զանգեզուր առաջացան արևմուտքից թուրքերը, արևելքից՝ անդրբեջանցիները:

Փրկելու համար Զանգեզուրը՝ շտապ այնտեղ հասավ Գարեգին Նժդեհը, որին հաջողվեց կազմակերպել գավառի ինքնապաշտպանությունը: Թուրքերը և ադրբեջանցիները չկարողացան մտնել Զանգեզուր:

1920 թվականի մարտին, այս դեպքերից ճիշտ մեկ տարի հետո 11-րդ կարմիր բանակը առանց դիմադրության գրավեց Բաքուն: Մեկ գիշերվա ընթացքում մուսավաթականները դառնալով բոլշևիկ՝ Բաքվի վրա բարձրացրին խորհրդային դրոշակը:

Բոլշևիկյան Ադրբեջանը մենշևիկյան Վրաստանից, նույն 11-րդ բանակի աջակցությամբ, Զաքարբալայի շրջանը խլելով միացրեց իր տարածքին: Հետո գրավեց Ղարաբաղը:

Հերթը Զանգեզուրինն էր: Այն նույնպես պետք է միացվեր բոլշևիկյան Ադրբեջանին:

Զանգեզուրի համար կռիվները համառ էին և արյունալի: Հայաստանի դաշնակցական կառավարությունը չէր կարող այլևս թույլ տալ կարմիր բանակի առաջխաղացումը:

* * *

Բայց միայն կարմիր բանակը չէր առաջանում Հայաստան, այլ նաև թուրքական զորքը, որը պարտվել էր Առաջին Աշխարհամարտում և ամեն կերպ փորձում էր շահել նախկին իր թշնամիների համակրանքը: Սկզբում անգլիացիների, իսկ հիմա՝ բոլշևիկյան Ռուսաստանի: Եվ նրան դա հաջողվում է:

Թուրքերը նոր առաջնորդ ունեին. ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵՄԱԼ փաշան, որն արշավում էր Արևելյան Հայաստան՝ ավարտելու համար պարտված երիտթուրքերի սկսած գործը. վերջին հարվածը տալով՝ իրականացնել հայության բնաջնջումը:

Ո՞վ էր սա: Որտեղի՞ց հայտնվեց:

Ըստ Մուդրոսի զինադադարի պայմանների՝ Օսմանյան կառավարությունը անմիջապես պատերազմին վերջ պիտի տար: Պիտի արձակեր զինվորներին և ողջ պատերազմական զինանոցը, զենքերով հանդերձ, պիտի դներ հաղթողների հսկողության տակ:

Ահա այս, Թուրքիո համար տագնապալի օրերին էր, որ սուլթան Մուհամեդ Վահիտեդտի խան Զ-ն իր թիկնապահների գնդապետ Մուստաֆա Քեմալ փաշային ցուցմունք տվեց՝ Անատոլիայի մեջ ազգային նոր բանակ կազմավորելու:

Մուստաֆա Քեմալ փաշան այդ ժամանակ Պոլսում գաղտնի հիմնված *«Մահիկ և Աստղ»* զինվորական կազմակերպության նախագահն էր... նաև Մասոնական Արևելյան Օթյակի նորընտիր ղեկավարը:

Քեմալ փաշան *«Իթթիհատ վե թերաքգը»* անպաշտոն մնացած սպաներին հրավիրել էր անդամագրվելու *«Մահիկ և Աստղ»* գաղտնի միությանը:

Նախկին երիտթուրք սպաների ոգևորությունն անսահման էր: Նրանք նորից գործի մեջ էին մտնում:

Եվ այսպես Թուրքիո արևելյան նահանգներում Քեմալի հրամանատարությամբ կազմավորվեց նոր բանակ, որն առանց հապաղելու արշավեց Հայաստան:

Հայոց համար միակ հույսը մնում էր նորից Ռուսաստանը, այս անգամ արդեն Խորհրդային: Նա խոստացել էր միջնորդ լինել Հայաստանի և Թուրքիո միջև, եթե թույլ տրվի 11-րդ բանակին մտնել Հայաստան:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, հասկանալով դրության անելանելիությունը, որոշում կայացրեց առանց դիմադրության իշխանությունը հանձնել բոլշևիկներին՝ ընտրելով երկու չարյաց փոքրագույնը:

1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանը հայտարարվեց Խորհրդային:

Բայց Ադրբեջանը հավակնում էր իր կամքը թելադրել Ռուսաստանին, որը, խորհրդային կարգերն ընդունելով հանդերձ, վերածնունդ էր ապրում իր մեծ բարեկամ Մուստաֆա Քեմալի գաղափարներով:

Թուրքիան Հայաստանից ինչ կլանել էր՝ իր բաժինն էր: Ադրբեջանը պիտի իրենով աներ Ղարաբաղից բացի Զանգեզուրը, Շարուր-Դարալագյազի գավառը, Նախիջևանը, Օրդուբադը, Ջուլֆան:

Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործոց նախարար ՉԻՉԵՐԻՆԸ գտնում էր, որ *«Խորհրդային Ռուսաստանը պիտի կոտրի Հայաստանը խեղդող այդ շղթան: Արևելյան նահանգներում գոնե ամենանահամեստ տարածքի հստակացում պետք է լինի Հայաստանին՝ Հայաստանի Խորհրդային Հանրապետությունում ապաստան գտած կես միլիոնանոց փախստական զանգվածի տեղաբնակեցման համար: Նրանք արդեն վեց տարի է սպասում են, որ կբացվեն իրենց տանջահար հայրենիքի դռները».*

Այսպես գրում էր Չիչերինը: Իսկ ՍՏԱԼԻՆԸ ԼԵՆԻՆԻՆ ուղարկած նամակով զգուշացնում է. *«Ես երեկ իմացա, որ Չիչերինը թուրքերին մի հիմար և սրիկայական պահանջ է ուղարկել Վանը, Մուշը, Բիթլիսը՝ թուրքերի վիթխարի գերակշռություն ունեցող թուրքական նահանգները, Հայաստանի օգտին մաքրելու մասին: Պետք է Չիչերինին արգելել նացիոնալիստորեն տրամադրված հայերի թելադրանքով նոտաներ ուղարկել թուրքերին: Ստալին».*

Ադրբեջանի պանթուրքիստ կոմունիստները, վրացի Ջուղաշվիլի Ստալինը... և քեմալական թուրքերը...

Այդ նույն ժամանակ ՕՐՋՈՆԻԿԻՁԵՆ, նույնպես վրացի, նամակ է գրում Լենինին և պատճեններն ուղարկում Չիչերինին, Տրոցկուն, Ստալինին. *«Խորհրդային պետության շահերի օգտին է բարեկամություն պահպանել քեմալականների հետ, ուստի առաջարկում եմ դիմել ամեն տեսակի զիջումների».*

Իսկ Ադրբեջանի տեր ու տնօրեն ՆԱՐԻՄԱՆՈՎԻ նամակը Լենինին՝ ուղղակի սպառնալիք էր. *«Հայկական Հարցի պատճառով Մոսկվան չպետք է վանի Անգլիայի կառավարությանը, հակառակ դեպքում մենք կկորցնենք Թուրքիայի բարեկա-*

մությունը և միաժամանակ վնաս կհասցնենք մեր ԱՐԵՎԵԼՅԱՆ քաղաքականությանը: Ես ձեզ պետք է զգուշացնեմ. ընկեր Չիչերինը շփոթում է Արևելյան հարցը: Նա չափից ավելի է հրապուրվում Հայկական Հարցով և հաշվի չի առնում, որ անգորացիների հետ խզումը կարող է տեղի ունենալ հենց Հայկական Հարցի պատճառով: Ես կտրականապես հայտարարում եմ՝ Կովկասում ստեղծված դրության մեջ, եթե ուզում եք Ադրբեջանը մեզ հետ պահպանել, մենք պետք է ամեն գնով ամուր դաշինք կնքենք անգորացիների հետ: Թուրքական պատվիրակության հետ տեղի ունեցող բանակցություններում Հայկական Հարցը չպետք է դեր խաղա: Նարիմանով»:

Նարիմանովը գիտեր, որ ռուսական հեղափոխության բոլշևիկ առաջնորդները կլսեն իր խոսքը: Քեմալականները եկել, հասել էին Երևանի դռներին և սպասում էին հարմար րոպեի, որպեսզի վերջին գերեզմանաքարը դնեին հայության և Հայաստանի վրա: Որովհետև թուրքը ինչ ցեղի էլ պատկանելիս լինի՝ իսլամական, օսմանական, օղուզական, թաթարական, թուրանական, ունե՞ր և հիմա էլ ունի՝ մեկ նշանաբան. *«Մահ հայությանը և Հայաստանին»*.

Սկզբում երիտթուրքական, իսկ հիմա քեմալական բանակներն էին հրով ու սրով անցնում Ալեքսանդրապոլի, Ախալքալակի, Փամբակի, Նոր Բայազետի, Լոռու, Կարսի, Ելիզավետպոլի, Շամախի, Գյոկչայի, Նուխիի, Արեշի, Օրդուբադի, Ագուլիսի, Նախիջևանի, Ղարսբաղի, Շուշիի գավառներով ու քաղաքներով, շեներով ու գյուղերով:

Պարտված Թուրքիայի վերածնված բանակը:

Հայոց բաց երակից հոսում էին նրա արյան վերջին կաթիլները:

1921 թվականի փետրվարին, վերջապես սկսվեցին թուրք-ռուսական բանակցությունները Մոսկվայում: Թուրքամետ ճակատը այնքան ազդեցիկ էր, որ բանակցություններին չհրավիրվեց Խորհրդային Հայաստանը: Առանց Հայաստանի ստորագրվեց *«Բարեկամություն և եղբայրություն»* պայմանագիրը, որով թուրքական կողմն ստացավ ավելին... քան պահանջում էր: Թուրքիային էր անցնում Կարսի նահանգը, Արդահանը, Սուրմալի գավառը: Պայմանագրում ասվում էր նաև.

«Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը, պայմանագրի հավելվածում նշված սահմաններում, կազմում է ինքնավար տարածք Ադրբեջանի պրոտեկտորատի ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն պրոտեկտորատը չի զիջի երրորդ պետությանն»:

Երրորդ պետությունը Հայաստանն էր:

Բայց, այնուամենայնիվ, Հայկական Հարցը շոշափվել է: Ստալինի և թուրքական պատվիրակ Յուսուֆ Քեմալի միջև հետաքրքիր զրույց է տեղի ունեցել: *«Մեր այն հարցին,* – պատմում է Յուսուֆ Քեմալը, – *թե Հայաստանի Հարցի մասին խոսակցություն լինելո՞ւ է արդյոք, Ստալինը պատասխանեց. «Հայաստանի Հարցը դուք ինքներդ արդեն լուծել եք: Եթե ձեզ մոտ դեռ ինչ-որ բան մնում է չլուծված, դա էլ լուծեցեք, բայց ճիշտ ժամանակի մասին մեզ տեղյակ պահեք»: Ընկեր Ստալինի այդ վճռական, շնորհակալության արժանի հայտարարությունից հետո, մենք հրաժեշտ տվեցինք նրան»:*

Պատերազմն ավարտվեց: Թուրքական *«Թևհիդի էֆքյալ»* թերթն ամփոփեց. *«Մեր արևելյան սահմանները գծված են մեր սրով»:*

Բայց պատերազմը դեռ չէր ավարտվել: Բաց էր մնում Զանգեզուրի խնդիրը: Զանգեզուրը չէր հնազանդվում: Նա իր մեծ զորավար Գարեգին Նժդեհի առաջնորդությամբ կյանքի ու մահու գոտեմարտի էր ելել հանուն իր անկախության:

Մի քանի ժլատ խոսքեր միայն Հայոց ամենապայծառ ու ամենաազնիվ զավակներից մեկի մասին, որն իր հավատամքի կենդանի ուժով մինչև այսօր էլ մեր կողքին է և դեռ կլինի բազում սերունդների հետ իր կարևոր խրատի բացարձակ ճշմարտությամբ, որն Հայրենիքինն ու ազգինն է, նրա ազատությանն ու արժանապատվությանը... Եվ նա էր՝ Գարեգին Նժդեհը, որն այդ անագորույն ժամանակներում կարողացավ նոր ավիշ ներարկել հուսահատ ժողովրդի ցամաքող երակին,

բարձրացնել նրա պայքարի ոգին և փրկել Զանգեզուրը Նախիջևանի և Արցախի ճակատագիրը կրկնելու վտանգից:

Ծնվել է 1886թ. հունվարի 1-ին Նախիջևանի գավառի Կզնութ գյուղում, հոգևորականի ընտանիքում: Սովորել է Նախիջևանի, Թիֆլիսի դպրոցներում, Պետերբուրգի համալսարանի իրավաբանական բաժնում, Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայի թագավորական զինվորական ուսումնարանում: 1907թ. ուսումն ավարտված համարելով՝ վերադառնում է Կովկաս, որ դառնա Հայ Դատի երդվյալ զինվոր և իր կյանքն առանց մնացորդի նվիրաբերի իր ժողովրդի ազատագրության պայքարին: Նա իր Տեր-Հարությունյան ազգանունը փոխել էր Նժդեհով, որովհետև Նժդեհ նշանակում է հայրենիքից հեռացած, պանդուխտ թափառական, որի հայացքը սակայն դեպի ետ, դեպի իր երկիրն է ուղղված: Ճակատագրական կանխատեսում էր սա իր ապրած կյանքի հետագա ողջ ընթացքի համար: Մինչև 1919թ. այստեղ ու այնտեղ կամավորների շարքերում կռվելիս ենք հանդիպում նրան, կամավորներին կազմակերպելիս ու առաջնորդելիս, զենք հայթայթելիս: Բազմաթիվ օրինակներից հիշենք միայն նրա գործուն մասնակցությամբ կազմակերպված Ղարաքիլիսայի ճակատամարտը, որն ապահովեց Սարդարապատի թիկունքը:

11-րդ կարմիր բանակի ղեկավարությունը Նժդեհի գլխի համար խոստացել էր երեք միլիոն ռուբլի:

Կարմիր հրամանատարությունը Նժդեհի դեմ է ուղարկում Բաքվից նոր ժամանած Զավալ փաշայի գունդը, Կուրոչկինի հեծյալ զորախումբը:

Տաթևի և Գորիսի միջև տեղի ունեցած ճակատամարտում թշնամին խայտառակ պարտություն է կրում: Զավալը գերի է ընկնում:

Նժդեհը անցնում է Գորիս, որն ապստամբելով քշել էր բոլշևիկներին: Բոլշևիկները շրջակա լեռներում ամրանալով թնդանոթներով գնդակոծում էին քաղաքը: Նժդեհը շատ արագ նրանց նույնպես դուրս մղեց և ազատեց քաղաքը քարուքանդ լինելուց:

Նժդեհ։

Կարմիր բանակի հրամանատարությունը պահանջում է Նժդեհից, որ նա Զանգեզուրի վրայով ճանապարհ բացի իրենց զորամասերի համար դեպի Երևան:

Նժդեհի պատասխանը քիչ կրճատումներով.

«...Արյան ու երկաթի սիստեմը, որով դուք կառավարել եք և շարունակում եք կառավարել հեղափոխական դեմոկրատիայի և պատմության կողմից քքված ու դատապարտված այդ սիստեմը՝ ձեզ շատ հեռուն, բնական է, տանել չի կարող: ... Ղափանին տիրելու համար դուք, ավանգարդ ունենալով դարեր շարունակ հայի քրտինքով ապրող ռեակցիոն քրքությունը, հրի ու սրի եք մատնում շրջանիս գյուղերից ամենաբարեկեցիկը Զեյվան և ձեր այդ վանդալական ակտը համարում եք հեղափոխական...

... Ձեր հարձակումները Արծվանիկի վրա և սանձարձակ արարքներով՝ կին ու երեխաների կոտորածով, բռնաբարություններով մեզ հիշեցնում եք տիրահռչակ ենիչերիների բարբարոսությունները: Քառասուն օր շարունակ ոմբակոծում եք Շվանիձորը և երբ երկու դավաճանների դավադրությամբ ձեզ հաջողվում է մտնել այդ չարաբախտ գյուղը, այդտեղ քարը քարի վրա չեք թողնում. սովորական սպանություններ, կին ու աղջիկների բռնաբարում, ալան-թալան և այլ ենիչերական ակտեր...

...Դուք տաճիկ ասկյարներով պաշարում եք Յայջին. տեղահանում ժողովրդին ու թալանում: Ժողովրդի մի մասը կոտորվում է գյուղի պատերի տակ, մի մասը թափվում է գետն ու խեղդվում, իսկ մնացածները, գյուղի գրավումից հետո, իրենց ավերված տներում, մերկ ու քաղցած, անիծում են իրենց օրն ու արևը...

Այդ բոլորից հետո, առանց խղճի խայթի շարունակում եք ճառել աշխատավորության շահերից.

...Այլևս գաղտնիք չէ, որ ձեր դրոշի տակ գործում են արևելքի ամոթն ու անեծքը կազմող օսմանյան հայակեր, ջարդարար փաշաները: Տաճկաստանի վեց վիլայեթներում մահվան թագավորություն ստեղծող Խալիլ և Էնվեր մարդակերներն այսօր ձեր քաղաքական և զինվորական խորհրդատուներն են հանդիսանում: Դուք չվարանեցիք Քեմալի հայաջինջ հորդա-

ները Հայաստան քաշելու և նորից հրին ու սրին մատնելու հայ աշխատավորության ֆիզիկական գոյությունն ու նրա դարավոր քրտինքի արգասիքը...

... Դուք զինաթափում եք հայ աշխատավորությանը, երբ մինչև ատամները զինված մուսավաթական Ադրբեջանը հարմար առիթի է սպասում Զանգեզուրն առանց հույի թողնելու: Ռեակցիոն, հայահալած մուսավաթական Ադրբեջանը, որի գոյության տարին դեռ չլրացած, փորձեց հրի ու սրի մատնել Զանգեզուրը, սակայն ջարդվելով ետ շպրտվեց...».

Երբ 1920 թվականի սեպտեմբերի 15-ին Հայաստան արշավեց Կարաբեքիրի զորքը, հյուսիսից Հայաստան մտավ 11-րդ կարմիր բանակը:

Հայաստանի Հանրապետության ղեկավարները առանց դիմադրության իշխանությունը հանձնեցին բոլշևիկներին: Բզկտված երկիրը պարզապես անկարող էր այլևս դիմադրելու:

1920 թվականի դեկտեմբերի 16-ին, Հայաստանի խորհրդային կառավարությունը Գարեգին Նժդեհին զենքերը վայր դնելու ուղերձ է հղում:

Սակայն Սյունիքը, Վայոց Ձորը, Զանգեզուրը Նժդեհի գլխավորությամբ հայտարարվեց Լեռնահայաստանի ինքնավար կառավարություն:

Ինչո՞ւ Գարեգին Նժդեհը այդպես վարվեց: Որովհետև, գիտեր, որ Մոսկվայի կողմից Զանգեզուրը պարգև պիտի տրվեր Ադրբեջանին, ինչպես Նախիջևանը և Արցախը:

Նժդեհը համաձայն էր ենթարկվել Խորհրդային Հայաստանի կառավարության կոչին, թողնել Զանգեզուրը, եթե այն դառնար Հայաստանի անբաժան մասը և ոչ թե կցվեր Ադրբեջանին:

Հայաստանի բոլշևիկյան կառավարությունը հավաստիացնում է, որ կկատարվի Նժդեհի պահանջը:

1921թ. հունիսի 13-ին Լեռնահայաստանը դարձավ Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասը:

Գարեգին Նժդեհը հեռանում է իր Հայրենիքից դեպի օտար ափեր...

Ես բաց եմ թողնում 1921-1954թ.թ.-ը՝ մինչև իր եղերական մահը ընկած Գարեգին Նժդեհի կյանքի ժամանակը, նրա թափառումները և այն գործերը, որ նա արեց: Դու ինքդ այն կլրացնես, որպեսզի նրան ճանաչելու, հասկանալու, գնահատելու հաճույքն ապրես: Նրա գաղափարները քոնը դարձնելու ցանկությունն ունենաս:

Այսօրվա համար մի խոսք միայն քեզ՝ մեծ հայրենասերի ասույթներից.

«Ուժեղը նա՛չէ, որի հաղթությունները ռազմական լինելով բարոյական չեն...

...Մենք շատ անգամ երգով ենք հաղթում».

Թողնելով Արևելահայաստանը՝ մենք նորից պիտի վերադառնանք Արևմտահայաստան և ժամանակը հետ կծկելով՝ պիտի հասնենք այն պահին, երբ ավարտվեց Առաջին համաշխարհային պատերազմը:

Է.

ԱՌՃԱԿԱՏՈՒՄ

(1918)

Չորս տարի, երեք ամիս, տասը օր տևած ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ավարտվեց թուրքերի պարտությամբ: *«Իթթիհաթ վե Թերաքզիի»* պարագլուխները զինադադար խնդրեցին հաղթողներից, որը մեծահոգաբար շնորհվեց: Ապա, գերմանական մի ռազմանավով նեղուցի և Սև ծովի ճանապարհով իրենց այդքան պաշտած հայրենիքից գաղտագողի փախուստ տվեցին Թալեաթը, Էնվերը, Ջեմալը՝ Թուրքիո հզոր եռապետ փաշաները, ոստիկանապետեր Պետրին ու Ազիմը, բժիշկ անվանված Նազըմը և Շաքիրը: Պատեհապաշտ, երկչոտ հանցագործներ, որոնք, երկիրը անդունդի եզրին հասցնելով, փախչում էին՝ տանելով իրենց հետ ահռելի հարստություն, որ կորզել էին ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ արյունաշաղախ սպանդի պահոցից: Խմեցին ժողովրդի արյունը և հեռացան: Սրանցից ամեն մեկը, որն իր մեջ կրում էր երկու միլիոն Կայենի ոճրագործ հանցանքը՝ իրենց կյանքի մնացած օրերը պիտի ապրեին հանգիստ ու խաղաղ՝ օրորվելով անծայրածիր Թուրանի մասին հին օրերի երազների մեջ:

Ոճրագործների պարագլուխների փախուստը մեծ ջղայնությամբ լցրեց թուրք հրապարակախոս ԹԵՖԻԳ ԽԱԼԻՏ բեյի նրա հայրենիքի անփառունակ պարտությունից խոցված սիրտը՝ դրդելով նրան գրել իր հայտնի *«ՊԱՐՈՆՆԵՐ, ԴԵՊԻ ՈՒ՞Ր...»* հոդվածը:

ԹԵՖԻԳ ԽԱԼԻՏ – Պարոններ, դեպի ո՞ւր: Խնջույքն ավարտվե՞ց: Բայց բերանները չարբած, ձեռքները չլվացած, չվայելած մի գավաթ դառը սուրճը, պարոններ, դեպի ո՞ւր... Նիհարած, չոր կմախք դարձած փայտոջիլները գիշերը դուրս են սողում իրենց թաքստոցներից, կպչում մեր մարմիններին, ծծում մեր արյունը, այրում խայթոցներով, պարարտանում, գիրանում, որ արշալույսին ծակուծուկերի մեջ խցկվեն, որովհետև տանել չեն կարող արևի լույսը: Փայտոջիլներ, դեպի ո՞ւր:

Լեռների վրա վառվող աչքերով, սուր ժանիքներով, կատաղությունից փշաքաղված մարմնով անոթի գայլեր են շրջում, պահապան շուն ու հովիվ չունեցող հոտերի վրա են հարձակվում, ոչխարներ բզկտում, արյուն լափում, ամենուր ոսկոր դիզում, որ կենդոտ աղիքները լցնելով՝ կշտանան ու նորից սողան դեպի իրենց որջերը, որովհետև տեսան արդեն գալիս են հովիվները, և սկսել են հաչել շները: Կշտացած գայլեր, դեպի ո՞ւր: Տներում, որտեղ կատուներ չկան, մկները մառաններն են մտնում, ամեն բան կրծելով ու ծակելով, աջ ու ձախ են վազվզում, տան ամենապատվավոր անկյուններն են խցկվում և մի շշուկ լսելիս, անհետանում են ճեղքերի մեջ, որովհետև հոտն առել են. կատուն է գալիս: Մկներ, դեպի ո՞ւր: Երբեմն այրի կանայք անառակ զավակներ են ունենում, որոնք կողպեքներ բացելիս դրամ են գողանում, հագուստներ հավաքում փակ դռների ետևից՝ հրեաներին ծախում: Հետո, երբ գողությունը հայտնի է դառնում, վախեցած փողոցից-փողոց են փախչում, որ օձիքներն ազատեն դատաստանից: Անառակ որդիներ, դեպի ո՞ւր: Զարկեցին, կոտրեցին, քանդեցին, սպանեցին, այրեցին և երբ թշնամին մեր տունը մտավ, մեր դիակների միջով օձերի պես սողալով անհետացան: Աչքներդ արյունով լցված, մինչև ատամներդ զինված օձ փաշաներ, դեպի ո՞ւր: Հրամայում էիք՝ արի՛, և պարանոցները ծռած, աչքերն ու շուրթերը փակ ժողովուրդը, գետնաքարշ սողալով, հասնում էր ձեր ոտքերի տակ դողդողալու: Հրամայում էիք՝ գնա, հազիվ դուռը բացած, աստիճաններից գլորվելով էր իջնում, որ կարողանար շուտ հոգին ազատել ձեզանից: Դուք ոչ թե նախարար, այլ ավազակապետ ու ելուզակ էիք, դուք ոչ թե կուսակալ, այլ ապստամբապետ էիք: Ասում էիք ՄԱՀ, և կախաղանների անտառներ էին բարձրանում: Ասում էիք ԱՅՐԵՑԵ՛Ք, և բոցերը երկինք էին հասնում: Ասում էիք ՀԱՐՁԱԿՎԵ՛Ք, և ոստիկանների գնդերը առաջ էին նետվում: Ձեռքներիդ՝ բանտերի բանալիներ, մեջքներիդ՝ կախաղանի պարաններ, թիկունքներիդ՝ կախաղաններ նահանգից նահանգ անցաք, սպանեցի՛ք, կախեցի՛ք, այրեցի՛ք, խանձեցի՛ք: Հինգ տարի շարունակ ագռավների ու արծիվների համար դիակներով խրախճանք սարքեցիք, նրանց երեխաների մսով կերակրեցիք, մարդկային արյամբ նրանց հարբեցրիք:

Ընդդիմադի՞ր է՝ ոչնչացրե՛ք, հրապարակագի՞ր է՝ զարկե՛ք գլխին, թո՞ւրք է՝ դեպի մահ առաջնորդե՛ք, հո՞ւյն է՝ դրամը խլեք, արա՞ք է՝ կախաղան հանեցե՛ք, հա՞յ է՝ գլուխը կտրեցե՛ք, կի՞ն է տունս բերե՛ք, ավազա՞կ է՝ թող վերև բարձրանա, սրիկա՞ է՝ թող բազմի կողքիս, հրեա՞ է՝ հարցրեք ի՞նչ է ուզում, մնացածների գրպանները դատարկեցե՛ք ու գավազանի հարվածներով քշե՛ք:

Ահավասիկ, այս էր ձեր ծրագիրը, ահավասիկ, այս էր ձեր գործը: Նեղուցները փակեցիք, որ ներսում ձեր ուզածն անեք: Եվ մեզ վրա ուսուցչապետի փոխարեն՝ դահճապետ նշանակեցիք: Խմբերով հայերին լեռները տանելով՝ սրի անցկացրիք: Անմեղ հայրերին ու զավակներին սպանեցիք և Անատոլիայի մեջ այրի կանայք ու որբեր անգամ չթողեցիք: Այս արյունոտ գործերը, այս բարբարոս արարքները, այս քաղաքականությունը ի՞նչ օգուտ պիտի բերեր ձեզ, ի՞նչ պիտի շահեիք: Աշխա՞րհը պիտի գրավեիք, Եգիպտոսի՞, թե՞ Հնդկաստանի թագավոր պիտի լինեիք: Վարչապետությունը, ընդհանուր հրամանատարությունը, նախարարությունը ձեր ծակ աչքերը չէի՞ն կարող կշտացնել, ո՛վ թագավորություն երազողներ: Քիչ մնաց, որ Դամասկոսում և Հալեպում ձեզ համար աղոթք անել տալով՝ ձեր անուններով դրամներ հատեիք: Քաջը դո՛ւք էիք, հերոսը դո՛ւք էիք, հրամայողը դո՛ւք էիք: Հիմա մկների պես առաստաղից առաստաղ՝ դեպի ո՞ւր: Թաղային սրճարանի անկյուններից՝ մեկ անգամից վարչապետություն, գինետան ցածրիկ աթոռներից՝ նախարարություն, հրշեջների շարքերից՝ կուսակցություն բարձրացած նորելուկներ, դեպի ո՞ւր: Դուք մուշտակների մեջ փաթաթվեցիք՝ ժողովրդի կաշին քերթեցիք, դուք ձեր սնդուկներում ոսկի դիզեցիք, ժողովրդի գրպանները թուղթ խոթեցիք: Ժողովուրդը մերկ ու թշվառ՝ մզկիթների բակերի մեջ լցված, դուք ագարակներ գնեցիք, ապարանքներ շինեցիք, քաղցից մեռնողների բերաններից վերջին պատառը խլելով՝ բոզերի հետ խնջույքի նստեցիք: Օջախներ մարեցիք, քաղաքներ քանդեցիք, ո՛չ ծերունու խնայեցիք, ո՛չ մանուկի: Մայրեր անարգեցիք, հայրեր ոչնչացրիք: Ո՛չ թագավոր ճանաչեցիք, ո՛չ օրենք, ո՛չ գութ ունեցաք և ո՛չ խիղճ: Այս կայսրության ոտքերից բռնելով՝ գետին զարկեցիք, քուրջի վերածեցիք: Վստահ եղեք, ազգը սպանեցիք: Որովհետև, եթե մեր երակներում մի կաթիլ արյուն

և մեր բազուկներում մի քիչ ուժ մնացած լինեն, ձեր օձիքը բռնելով՝ մեր վրեժը պիտի լուծենք: Մինչ դուք, ազատ, համարձակ, թևերդ թափ տալով և մեր երեսին էլ թքելով, հեռացաք: Ապրեք, ձին էլ է ձեզ վայելում, զենքն էլ: Մենք թմրած ենք, իսկ դուք՝ անամոթ: Ուրեմն վստահ եղեք, մի օր ետ կգաք և ձեր վեճերը նորից մեզ համբուրել կտաք: Մենք, միևնույն է, ձեզ չենք հարցնելու, թե էլի քանի տասնյակ ջարդ ենք ուզում կազմակերպել: Ուրեմն ձեր իրավունքն է՝ վաղը մեզ ասելու. *«Ձեր մահվան տեսակը ընտրեցեք»:*

Մեզ արժանի փաշաներ, դեպի ո՞ւր...

Այսպես, իմ պատանի բարեկամ: Ի՞նչ է, արդյոք, քո կարծիքը – Հայոց արյունը, որ ծանրացել էր մարդկության խղճին և լերդացել այնտեղ, կցանկանա՞ր ազատվել այդ ծանրությունից՝ խոստովանելով...

Ես լսում եմ քո պատասխանը ու տեսնում եմ քո տարակուսանքը, որն իմն է նաև... Այդ ե՞րբ է հաղթողը խոստովանել: Մեծ պատերազմում Թուրքիան պարտվեց, բայց մի՞թե Հայաստանը հաղթանակ տարավ: Մի՞թե երկու միլիոն մարդկային զոհն է միայն խնդիրը և ոչ թե նաև Հայոց ա՛յն Հայրենիքը, որը դեռ գերի է Թուրքիո աշխարհին, առանց սեփական իր զավակների...

Գիտես. 1918 թվականի նոյեմբերի 4-ին եղավ *առճակատում.* Պատերազմից հետո առաջին Երեսփոխանական ժողովը Թուրքիայի պառլամենտի... Եվ վերջին, որտեղ յոթ հայ պատգամավորներ փորձեցին պաշտպանել Հայոց ողջակիզված իրավունքը:

Պատկերացնո՞ւմ ես. Երեսփոխանական այս մեծ ժողովում պիտի պաշտպանվեր *արդարությունը,* որի նախագահն էր նախկին Արտաքին գործոց նախարար, քթու իքթիհաթական, Թալեաթի մտերիմ բարեկամ ՀԱԼԻԼ ՄԵՆԹԵԼԵՆ, իսկ փոխնախագահը՝ նշանավոր խմբագիր, հրապարակագիր և, որոշ իմաստով, բարեխառն իքթիհաթական ՀՅՈՒՍԵԻՆ ՋԱՀԻՏ ԵԱԼՉՈՆԸ:

Այդ ժողովի սղագրությունը ներկայացնում եմ առանց մեկնաբանության, այնպես, ինչպես եղել է: Ես չեմ նկարագրի ժողովի սրահը, մասնակիցներին, թեև մանրամասները կարող են նյութը դարձնել ավելի հավաստի: Բայց ես գտնում եմ, որ կարևորը խոսքն է, մնացածի պատկերացումը թողնում եմ քո երևակայությանը:

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԹՈՒՐՔԻՈ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ՝ 1918 ԹՎԱԿԱՆ, ՆՈՅԵՄԲԵՐԻ 4

ՆԱԽԱԳԱՀ (Բացելով ժողովը) – Ժողովի դիվանին են հղվել մի քանի պաշտոնական դիտողագրեր հայ, հույն, արաբ և թուրք երեսփոխանների կողմից: Օրակարգի նյութ դարձնելու նպատակով նախագահությունը ըստ այնմ դասավորեց դրանք: Առաջինը *Զմյուռնիա* նահանգի հույն երեսփոխան, պատգամավոր ԷՄՄԱՆՈՒԵԼԻՏԻԵԻՆՆ է:

ԷՄՄԱՆՈՒԵԼԻՏԻԵ (Ելնելով տեղից) – Նախքան դիտողագրին անդրադառնալը առաջարկում եմ ժողովի քննարկման նյութը դարձնել նախորդ կառավարության վարքագիծը պատերազմի ժամանակ:

ՆԱԽԱԳԱՀ (Դժգոհ) – Այսօր ժողովի քննության նյութը դիտողագրերն են:

ԷՄՄԱՆՈՒԵԼԻՏԻԵ – Լավ: Սակայն պատերազմը նոր է ավարտվել, և անհնար է պատկերացնել դիտողագրեր առանց անդրադարձի: Ահա, օրինակ, իմ դիտողագրի առաջին կետը. «*Հայ ազգին պատկանելուց զատ ուրիշ որևէ հանցանք չունեցող երկու միլիոն կին և երեխա, առանց բացատրության սպանվեցին և կոտորվեցին*»: Երկրորդ կետն էլ այս է. «*Քառասուն դարերից ի վեր երկրի քաղաքակրթության հիմնաքարը հանդիսացող հույներից 55 հազար մարդ Սև ծովի, Զանաքքալեի, Մարմարա ծովի ափերից ու կղզիներից, Օսմանյան կայսրության սահմաններից արտաքսվեցին, կողոպտվեցին, շատերը կոտորվեցին*»: Երրորդ կետը. «*Երեսփոխաններ Զոհրապի և Վարդ-*

գնի սպանությունը»: Այս են իմ դիտողագրի հիմնական կետերը: Մի՞թե սրանց մեջ կա մեկը, որը կարելի է դուրս հանել նախորդ կառավարության վարքագծից: (Նստում է):

ՆԱԽԱԳԱՀ – Զայնը ԴԻՎԱՆԻԵԻ երեսփոխան ՖՈՒԱՏԻՆՆ է: Թող ներկայացնի իր դիտողագիրը:

ՖՈՒԱՏ (Ոտքի կանգնելով) – Պարոնայք, իմ դիտողագիրը շոշափում է ոչ միայն հայկական ջարդերը, այլ նաև կառավարության շատ ուրիշ ապօրինի արարքները, ինչպես պատերազմին մասնակցելը, հաշտության առաջարկների ժխտումը, անճարակ մարդկանց քրեական որոշումները, գնդարարությունները և այլն: Սակայն ոճրագործությունների դուռը բացողը, մարդկային և իրավական կանոնների դեմ մեղանչողը և հատկապես մեր Սահմանադրության ոգին և բացահայտ նկարագիրը ոտնակոխ անողը «Ժամանակավոր օրենքներն» էին, որոնց թույլտվությամբ նախկին կառավարությունը երկիրը վերածեց ողբերգական բեմի: Այս «Ժամանակավոր օրենքը» անմիջական աղերս ունի «Տեղահանության օրենքի» հետ, որն ընդունվեց 1915 թվականի մայիսի 14-ին և հորջորջվեց «Ժամանակավոր օրենք»: Իթթիհաթը ստիպեց սուլթանին ցրել Երեսփոխանական ժողովը, որ հետո այդ օրենքով ազատ գործելու ասպարեզ ելնի: Այսինքն, գործի առանց Օրենսդիր իշխանության հետ վեճերի, կամ նրա կողմից չենթարկվի կաշկանդումների: «Ժամանակավոր օրենք» կառավարությունը կարող է ընդունել, երբ ընդհանուր ապահովությունը գտնվում է ապառնալիքի տակ: Սակայն նման ապառնալիք կամ վտանգ չկար: Եվ զավեշտն այն էր, որ նախքան այս ժամանակավոր կոչված օրենքի ընդունումը՝ Թալեաթն արդեն ձեռնարկել էր տեղահանության գործը Զեյթունում, Մարաշում, Պոլսում... Այդ գործողությունները ի կատար ածեցին ներքին գործերի նախարարությունը և նրան ենթակա բոլոր մյուս իշխանությունները. նահանգային ոստիկանությունը, գաղտնի ոստիկանությունը, կուսակալների վարչությունների համակարգը, բանտերից դուրս թողնված հանցագործների ոհմակները, որոնք «ՀԱՏՈՒԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» պիտակի տակ գլխավոր ջարդարարներն հանդիսացան: Կրկնում եմ. Խորհրդարանում «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕՐԵՆՔԸ» քննության բովով չանցավ և չվավերացվեց:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ (Հալեպի երեսփոխան) – Հիմա՞ է օրենքը քննարկման դրվում խորհրդարանում, երբ հայերը բնաջնջված են, թուրքերը պարտվա՞ծ...

ՖՈՒԱՏ – Երկրի ներսում քաոս և խառնակություն ստեղծելով՝ Իթթիհաթ կուսակցության Կառավարությունը, «Ժամանակավոր օրենքը» ընդունելով, բացեց աղետալի ոճրագործությունների դուռը:

ՖԵԹՀԻ ՕՔԵՍՏ – Ես՝ որպես այժմյան, ետպատերազմյան Կառավարության ներքին գործոց նախարար, հայտարարում եմ. «Ժամանակավոր օրենքը» մեր ներկա՛ ժամանակի համար բոլորովին ավելորդ օրենք է: Ես այս բարձր ժողովից խնդրում եմ, որ իբրև ստիպողական խնդիր, այս օրենքը ժամ առաջ ջնջվի:

ՖՈՒԱՏ – Կառավարության այս օրենքը վերացնելու առաջարկի համար՝ շնորհակալություն: Սակայն նրա նման հոռի և մեր դարի ոգուն հակոտնյա ուրիշ շատ օրենքներ ևս կան, խնդրում եմ, որ դրանք վերացնելու հարցը ևս քննվի:

ՄԱԹԵՎՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ (Զսպված զայրույթով) – Սակայն այդ օրենքների պատճառած ողբերգության, մարած ամենթիվ հայ օջախների, ոտնակոխ արված պատիվների, բռնագրավված անհամար ինչք ու հարստության, ստվար թվով հայ որբերի ու այրիների, հարեմներ տարված մատաղ աղջիկների մասին ի՞նչ է մտածում կառավարությունը:

ՖԵԹՀԻ – Մաթևոս Նալբանդյան էֆենդին՝ Սսի և Գոգանի մեր հարգարժան երեսփոխանը, չափազանցնում է: Խնդրո առարկա զոհերը միայն հայերը չեն, հույները չեն, արաբները չեն: Այլ թուրքե՛րն են նաև: Կառավարությունը իր ուժերի ներածի չափով մինչև այժմ եղած անիրավությունները պիտի դարմանի: Աքսորյալներին իրենց տեղերը պիտի վերադարձնի, նյութական վնասները կարելվույն չափ պիտի հատուցի: Սա Կառավարության գլխավոր նպատակն է: Նույնպես թույլ չպետք է տանք պայմաններ ստեղծվեն, որ որևէ մեկը կրկին համարձակվի այդպիսի՛ պայմաններ ստեղծել, և եթե համարձակվի, մենք նրան դատաստանի պիտի ենթարկենք:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Ներքին գործոց նախարարը հայտնեց, որ Կառավարությունը գործի է անցել՝ Կառավարու-

թյունից շնորհակալ ենք: Ձեռնարկը լուրջ է, բայց դրա հաջողության համար ժամանակ է պետք: Եթե նույնիսկ այս վերքերը բոլորովին չբուժվեն, մաղթենք, որ Կառավարությունը որոշ չափով ջանք թափի այս ուղղությամբ: Եթե ես Կառավարություն լինեի, ես էլ միայն այդչափ կարող էի անել:

(Թուրք պատգամավորները բուռն ծափահարում են):

ՍԱԹԵՎՈՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Հալեպի երեսփոխան հարգարժան Արթին էֆենդի Պոշկեզենյանի հայրենասիրական զգացումները բաժանում եմ: Բայց խնդիրը իր պարզամիտ կերպով բացատրածի նման չէ: Հայ յոթ երեսփոխաններս մեր դիտողագիրը օսմանյան ազգի անունով ենք հղել: Ավելորդ եմ համարում անդրադառնալ, թե ինչպես ժողովուրդը ենթարկվեց «ժամանակավոր օրենքների» գործադրությանը: Ուրեմն հարկ չկա Թուրքիո մեջ կատարված ոճիրները մոլեռանդության վերագրել: Ես ձեր խղճին եմ դիմում: Զարդերը մարել են, բայց կրակի ծուխը դեռ բարձրանում է: Այսօր մեծ թվով որբեր և կանայք ճանապարհներին թափառական են դարձել: Խնդրում եմ, նկատի ունենալով այս պարագայի չափից ավելի լրջությունը, Կառավարությունը, թող կարևոր ծրագրով սկսի գործը: Ես գիտեմ, որ օսմանցու անունը մրոտող այս իրադարձությունների մեջ, թե՛ պատմականորեն, թե՛ ներկայիս, թե՛ ապագայի ընթացքում, հանցագործությանն անմաս մնացողները պիտի քավեն հանցանքը և ազգը մաքրագործեն արատից: Մենք գործնական քայլեր ենք ուզում տեսնել Կառավարությունից: Սակայն, երբ մենք արդարության համար որոշակի քայլեր ենք պահանջում, այն դիտվում է որպես Կառավարության և այս ժողովի դեմ ուղղված հարձակում: Ես մաղթում եմ, որ ներկա բոլոր գավառների պատգամավորները մաքուր խնդրով զորակցեն մեր խնդրին: Թող Կառավարությունը բացահայտ և իրական ծրագրով սկսի գործել և շուտափույթ դրական ապացույց տա: Համայն քաղաքակիրթ աշխարհը, մարդկությունը և նույնիսկ մեր բոլորի տիրակալ Բարձրյալն Աստված՝ մեզանից այս են պահանջում:

ՖԵԹՀԻ – Թույլ տվեք մի քանի խոսքով բացատրեմ: Արթին էֆենդու հայտարարության համար շնորհակալությունս եմ հայտնում: Նալբանդյան էֆենդու տածած զգացումների հա-

մար էլ պարտ եմ շնորհակալ լինել: Մեկից և վերջնական ծրագրով ենք ուզում, որ հրապարակ իջնենք: Ներկա պայմանների մեջ վճռական ծրագիրը տարագրյալներին իրենց տեղերը վերադարձնելուց բացի՝ ուրիշ բան չի նշանակում: Սա ձեր կարծածի չափ դյուրին գործ չէ: Տարագրվածները վերադառնալիս պիտի օթևան ունենան, կամ պիտի կարողանան մի ամսան տաք ապուր խմել: Քանդված գյուղերը նորոգելը և նրանք կրկին բնակելի դարձնելը ո՛չ Կառավարության, ո՛չ էլ որևէ մեկի կարողության սահմանների մեջ գտնվող բան է: Այս պատճառով հարցը ժամանակին պիտի թողնել: Գալով անիրավություններին, բռնարարքներին և զուլումին՝ որևէ մեկը, որ հանցապարտ է, դատի պիտի տրվի: Ուրեմն, եթե կան մեղապարտներ, որոնց մասին Կառավարությունն անտեղյակ է՝ գանգատի ուղին բաց է բոլորի համար: Գանգատվել ցանկացողները թող դիմեն մեզ, մենք քննություն կձեռնարկենք: Եթե կասկածելիների հանցանքները հաստատվեն, անմիջապես դատի կտրվեն: Ա՛յս է: Ուրիշ անելիք չեմ տեսնում:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ (Պնդումով) – Ես առաջարկում եմ, որ Կառավարությունը պարտավորված զգա՝ այս ուղղությամբ քննություն սկսելու:

ՖԵԹՀԻ – Այդ պարտականությունն արդեն Կառավարությունը ստանձնել է: Սակայն ձեր առաջարկը մեկից չի կարելի իրագործել: Թեև մեկ անգամից ամեն ինչ բանդելը դյուրին է, բայց վերահաստատելը դյուրին գործ չէ: Աստիճանաբար պիտի բոլորի իրավունքները վերահաստատենք: Չպիտի թողնենք, որ զուլումի և բռնության պաշտոնյաները օրենքի ճիրաններից ազատվեն:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ (Թերահավատորեն) – Մենք ակնկալություններով մեր շնորհակալությունն ենք հայտնում:

ՆԱՍԱԳԱՀ – Այս հարցի քննությունը բավարար համարողները թող ձեռք բարձրացնեն:

(Հույները, արաբները, հայերը ձեռք չեն բարձրացնում):

ՆԱՍԱԳԱՀ – Ընդունվեց: Հաջորդ քննվող խնդիրը. պատերազմի ժամանակ գործադիր իշխանության գործողությունների դեմ առարկողների հանդեպ զինվորական մարմինների

պատժամիջոցներ կիրառելու իրավունքներին առնչվող օրենքն է:

ՖԵԹՀԻ – Այս էլ տարագրությանը վերաբերվող *«Ժամանակավոր օրենքի»* մի մասն է: Ես այս բարձր Ժողովից խնդրում եմ, որ այս օրենքը ևս ժամ առաջ ջնջենք առանց ավելորդ խոսակցության:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵՋԵՆՅԱՆ – Այս օրենքը միայն ժխտելով բավական չէ: Պատճառաբանելով և փաստացիորեն պիտի մերժվի: Սա փաստորեն «Տարագրության Օրենքի» Բ կետն էր, որով զինվորական հրամանատարները լիազորվում էին աքսորել կամ տեղահանել անհատներ, համայնքների, գյուղերի, քաղաքների բնակիչներ, որոնք իբր հակապետական միտումներ ունեին: Այս օրենքը թույլ էր տալիս որևէ հրամանատարի, պարզապես իրենց սեփական «նախազգացումի» հիման վրա, զանգվածային տեղահանության հրաման տալ: Այսինքն, ոչ թե մեկ անձ երկրից աքսորելու, այլ գյուղեր, գյուղաքաղաքներ, քաղաքներ արմատախիլ անելու, մի տեղից վերցնելու և մյուս տեղը քշելու իրավասություն էր տրված: Եվ ո՞ւմ որոշումի. հրամանատարի՛, որը կարող էր պարզապես մի հարյուրապետ կամ հազարապետ լինել, կամ մի նորելուկ, որը հանկարծակի դիրքի բարձրացում էր ստացել: Այս մեկ հոդվածով ողջ գավառներ էին ենթարկվում մի ապայի վիթխարի լիազորության: Այս օրենքից բացի գույքերի վերաբերող օրենքն էլ կա, որի ժխտումով գործը չի ավարտվի: Սա դանակ է, կացին է, որ մեծ չարիքների պատճառ է եղել: Մենք այս դանակը, այս կացինը մերժելով նրանց բռնարարքների հասցրած վնասները չենք կարող դարմանել: Սա սոսկալի մի դանակ է, որի վրա անմեղների արյունն է լեռդացած: Սա սոսկալի մի կացին է, որի քանդած, ավերած տների հաշիվը չկա: Այս երեք տողանոց հոդվածը ահավոր բան է: Ուրեմն, եթե պիտի ժխտենք այս ապօրինի օրենքը, պիտի նոր օրենք ընդունենք, որով պիտի հնարավոր լինի պարզել բոլոր նրանց, ովքեր, ապավինելով *«Ժամանակավոր օրենքի»* Ա, Բ, Գ կետերին, կործանեցին երկիրը: Սա մեր պահանջն է: Պետք է պատժել նաև այն մարդկանց, որոնք ոճրային դիտումնավորությամբ հղացան այդ օրենքը և գործադրեցին այն: Արդա-

ությունը չի վերականգնվի՝ միայն ոճրագործության զենքը մեջտեղից վերացնելով:

(Այս ու այն կողմից ձայներ՝ համաձայն ենք ձեզ հետ):

ՄԵՀՄԵՏ – Զայն եմ խնդրում:

ՆԱԽԱԳԱՀ – Զայնը տրվում է Տրապիզոնի երեսփոխան ՄԵՀՄԵՏ ԷՄԻՆ էֆենդիին:

ՄԵՀՄԵՏ – Այս օրենքի կիրարկումի ընթացքին երկրում մի շարք ոճիրներ գործվեցին և դեռ ժողովի սկզբին Էմմանուելիտիեի հղած դիտողագիրը այս իրողությունից էր բխում: Այո, իրոք երկրի մեջ գործված բոլոր ոճիրների հետաքննությունը, նրանց պատասխանատուներին պատժելը օրինավոր արդարության պահանջմունքն է: Բոլորս էլ համաձայն ենք այդ պահանջին: Բայց հարցը քննարկելիս, խնդրում եմ, եղած անիրավությունը իր չափից ու աստիճանից ավել ցույց մի տվեք: Արդարև, երբ որևէ անիրավություն չափազանցված է ցույց տրվում, նոր անիրավություն է կատարվում: Անիրավությունը ինչ տարողություն որ ունի, այդ պետք է հաստատել և այդտեղ պետք է կանգ առնել: Մեկ անարդարություն ուրիշ անարդարությամբ բառնալու փորձը անընդունելի է: Ես այստեղ Էմմանուելիտիեն էֆենդիին տեսնում եմ չափազանցնողի դերի մեջ: Էֆենդիի հայտարարությունը, թե հայերը պարզապես հայ լինելու համար ջարդվեցին, ես չեմ կարող ընդունել և կարծում եմ հայ պաշտոնակիցներս էլ չեն ընդունի:

ԱՐԹԻՆ ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ (Տեղից, հուզված) Հապա ինչո՞ւ ջարդվեցին...

ՄԵՀՄԵՏ - Կոտորվելու պատճառը նրանց հայ լինելը չէր: Իմ բուն նպատակը հույն երեսփոխանի հարցը չափազանցված կերպով ներկայացված լինելը բացահայտելն էր: Նա նույնիսկ չհիշեց արաբների դեմ արձակած մահվան դատավճիռների և թուրքերի դեմ եղած անիրավությունների մասին:

ՆԱԽԱԳԱՀ – Նրանք, որ «Ժամանակավոր օրենքի» մասին եղած խորհրդակցությունը բավարար են համարում, ձեռք բարձրացնեն: (Ձեռքեր են բարձրանում): Բավարար է համարվում: Հիմա խնդրո առարկա այդ օրենքը ընդունել կամ մերժելն է: Նախ քննարկենք ընդունելի լինելու հարցը: (Ոչ մի ձեռք չի բարձրանում): Չի ընդունված: Հետևաբար «Ժամանա-

կավոր օրենքը» քվեարկությամբ մերժվում է, որով և օրենքի մյուս բաղադրյալ մասերի համար առանձին խորհրդակցության կարիք չկա:

ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Բայց փաստարկումներում հիմնավորված չի մերժվել:

ՆԱԽԱԳԱՀ (Դժգոհ) – Օրենքը կա՛մ ընդունվում է, կա՛մ մերժվում: Պարոնայք, թույլ տվեք նշել հաջորդ նիստի օրակարգը: (Կարդում է ձեռքի թուղթը) *«Զինվորականների գործած ոճիրների քննություն և դատաստանի համար վերահասու իշխանության մասին օրենսդրական առաջարկ»*: Երկրորդ. *«Պատերազմի ժամանակ եղած ապօրինությունները քննելու կոչված մարմնի ընտրության մասին դիտողագիր»*: Երրորդ. *«Օրենսդրային ծրագրի քննություն»*: Պարոնայք, հաջորդ նիստը նշանակված է 1918 թվականի նոյեմբերի 18-ին:

1918 ԹՎԱԿԱՆ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 18
ԹՈՒՐՔԻՈ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ
(ԱՌՃԱԿԱՏՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է)

ՆԱԽԱԳԱՀ – Պարոնայք, մեր գերագույն խնդիրն առայժմ երկուսն են. Օրենսդրության վերականգնումը և հաշտություն կնքելու հարկադրված անհրաժեշտության մասին ընդհանուր գաղափարի գալն է: Խնդրում եմ ձեր ելույթներում մնաք այդ շրջանակի մեջ: Զայնը Հալեպի երեսփոխան Արթին Պոշկեզենյանինն է: Հուսով ենք, որ նա նույնպես պիտի մնա քննվող հարցերի շրջանակում: (Նստում է):

ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ (Բացում է իր առջև դրված թղթապանակը, դնում ակնոցները, գաղտնի մի հայացք է նետում այն կողմ, որտեղ նստած են հայ պատգամավորները) - Պարոնայք, զինադադարը կնքվեց, հաշտության արևն էլ հորիզոնի վրա իր գլուխը բարձրացրեց: Շուտով բոլոր ազգերը՝ հաղթողները և պարտվողները, պիտի բոլորին նույն սեղանի շուրջը հավաքեն: Թուրքիան ևս այդ սեղանի մոտ պիտի նստի: Սակայն նա պիտի դատարկ ձեռքերով չգնա այնտեղ: Եվ որպեսզի և Թուրքիո իրավունքները ներկայացնելու համար այնտեղ հայտնված

ներկայացուցիչները զինված լինեն ճշմարտությամբ և կուռ դատողությամբ, այսօր մենք պետք է ազատ և բաց խոսենք: Որովհետև թուրք ազգը այսօր քաղաքական ասպարեզում, քաղաքակիրթ աշխարհի առջև գտնվում է ամբաստանյալի վիճակում: (Բողոքի ձայներ այս ու այն կողմից): Այսօր մենք դեմ-հանդիման գտնվում ենք մի մեծ ՈՃՐԻ դիմաց, որ Օսմանյան պատմության ամենաարյունալի էջերից մեկն է: Այս վիթխարի Ոճիրը Հայոց կոտորածը, Հայոց ողբերգությունն է: Այսօր, ա՛յդ պատճառով է թուրք ազգը մեղադրվում և ամբաստանվում: Բայց բուն ամբաստանյալը թուրք ազգը չէ, այլ թուրք Կառավարությո՛ւնը, նախորդ վարչակազմը: Բայց ազգն ու Կառավարությունը նո՛ւյն բանն են: Սա միայն մենք չենք ասում: Եվրոպայի ամենաակնառոր մարդիկ նույն կարծիքին են: Սակայն ես պնդում եմ, որ թուրք ազգին ամբաստանելու պատճառը նախկին վարչակազմի հսկա ոճիրն է: Կենտրոնը *«Հատուկ Կազմակերպության»՝ «Թեշքիլաթը մահսուսեի»* միավորների գործակցությամբ, գավառային ատորադաս պաշտոնեությանը ոտքի հանեց գլուխ բերելու այս ոճիրը, որի գործադրման համար լծվեցին կուսակալներ, փոխկուսակալներ, շրջանային կառավարիչներ, գավառային ոստիկանության հրամանատարներ, ոստիկանական տնօրեններ և հասարակ ոստիկաններ: Ես ճանաչում եմ շատ ազնիվ, աստվածավախ թուրքեր, որոնք ելան առ ի վրկություն դժբախտ հայ հայրենակիցների, որոնք ենթարկվում էին տեղահանության զոլումին: Սակայն անկարող եղան վերևից եկած դաժան հրամանի ետկոչումը իրականացնել և ստիպված ենթարկվեցին Կառավարության հրամանին, քանի որ այդ Կառավարությունը ապառնաց, որ իր սեփական դռան առջև կախաղան հանել կտա այն մահմեդականին, որ կհակառակվի իր հրամանին: Նույնիսկ եղան քաղաքներ, որոնք պատսպարեցին ոչ միայն իրենց հայ համաքաղաքացիներին, այլև այնտեղ հասած կիսամեռ ու կեղեքված հայ բնակիչներին: Ահա, օրինակ, Կոնիան: Կոնիայի բարեմիտ, ճշմարիտ, կրոնասեր թուրքը՝ ԱԼԻ ՀԱՅՏԱՐԸ, որ վարվեց մարդասիրաբար...

ԱԼԻ ՀԱՅՏԱՐ (Կոնիայի երեսփոխան: Թաշկինակը տանելով աչքերին, հուզված) Ծնորհակալ եմ, Արթին էֆենդի...

ՊՈՇԿԵՉԵՆՅԱՆ – Եղբայր, ասածս շնորհակալության արժանի մի բան չէ: Պարզապես պարտավոր եմ ճշմարտությունն ասել: Մի քանի հրեշների և ճիվաղների կազմակերպած ոճրի համար մի ամբողջ ազգ ամբաստանելը ճիշտ վարմունք չէ... Բայց, այնուամենայնիվ, ուզում եմ հարցնել. մի՞թե ժողովրդից ոչ մեկը չմասնակցեց այս չարագործություններին: Մի՞թե խուժանը և ցածր գոնեը կառավարության ուղարկած չեթեների ոճրային արարքներին չմասնակցեցին: Սրանք անշուշտ, իրենց արարքների հետևանքները կշռելու և չափելու անկարող մահկանացուներ էին: Երբ ոչխարի հոտը ընկնում է ճահիճը, հանցավորը ոչխարնե՞րն էին, թե՞ նրանց առաջնորդ հովիվը: Նույնիսկ ամենաքաղաքակիրթ երկրներում գոնեի սրտի խորքում հրեշավոր մոլուցքներ են նիրհում: Այդ մոլուցքները թմբիրի մեջ են: Եթե ազդեցիկ մեկը չգա և չգրգռի, նրա կատաղությունը թմբիրի մեջ էլ կմնա: Բայց, երբ անպատիվ մարդիկ գան և հրահրեն ու վայրագ բնազդներն արթնանան, այդ ժամանակ խառնակություններն ու սադրանքները պիտի թափ առնեն, և պիտի պայթի անզսպելի փոթորիկը: Բայց ինչո՞ւ են մարդիկ պատճառ դառնում նման գրգռումների: Որովհետև բնականոն պայմաններում չեն կարողանում, անընդունակ են ոչինչ շահելու ազնիվ աշխատանքով: Խաղաղ պայմաններում շահելը պատվավոր մարդկանց գործն է: Անպատիվ մարդիկ խառնակություն են փնտրում, ջուր են պղտորում, որպեսզի ձուկ որսան: Գայլը միշտ էլ մառախլապատ օր է սիրում: Խուժանին ու գոնեին ոտքի հանողներն, ահա, այդ գայլերն են: Աշխարհում դավանանքների, կրոնների, լեզուների այլազանություն է տիրում: Մինչև որ խուժանը չհասկանա, թե այս այլազանությունը չպետք է արգելք հանդիսանա մարդկանց մեջ եղբայրության զգացմունքների ամրապնդմանը, կամ մինչև որ մարդիկ ի վիճակի չլինեն ասելու, թե՝ *«Իմ ազգը մարդկությունն է»*, մարդկությունը հրեշային մոլուցքների թիրախ լինելուն է դատապարտված: Մինչև որ սադրիչները գոնեը չգրգռեն, խուժանը ի վիճակի չէ բռնարարքներ և հարձակումներ կատարելու: Ուրեմն. թուրքի անպարտ արձակվելը՝ ոճրագործների պատժարկումով պիտի պայմանավորվի: Այս է իմ դիմումագրի գլխավոր կետը: (Հուզմունքը մի կերպ զսպելով) Պարոնայք, չէ

որ բոլորդ էլ գիտեք. իսկական հայ բնօրրան և հայրենիք եղած նահանգներում այսօր ոչ հայ կա, ոչ նույնիսկ ուրիշ քրիստոնյա բնակիչներ՝ հույն, ասորի, քաղդեացի... (Ձայնը կերկերում է) Իմ փափկասուն և անուշ հայրենիքիս մեջ... Ես Հալեպի երեսփոխանն եմ և հիմա պիտի խոսեմ Հալեպի մասին: Պիտի խոսեմ Հալեպի ու Բաղդադի միջև գտնվող *Տեր-Զոր* անապատի մասին... Պիտի հիշեմ *Տեր-Զորի* սկզբնական կառավարչի մասին, որը հույժ պահպանիչ անձ էր այնտեղ առաքվող հայրենազուրկ, չարչրկված հայերի հանդեպ: Բայց հայերի հանդեպ այդ հոգածու վերաբերմունքի մասին մայրաքաղաք տեղեկացրեց այդ կողմերը «զբոսաշրջիկության» եկած Վանի գավառի կուսակալ, Վանի դահիճ Զևդեդը: Տեր-Զորի բարի կառավարչին անմիջապես հանեցին իր պաշտոնից և նրա տեղը նշանակեցին չափից ավելի չարաշուք մի արարածի, որը մարդ կոչվելու բացարձակ իրավունք չուներ: Առաջինի անունը, որը պաշտոնազրկվեց՝ ԱԼԻ ՍՈՒԱՏ է: Երկրորդը, որ պաշտոնավորվեց, Հայոց Եղեռնի ամենավայրագ և ամենաքստմնելի դահիճներից մեկն է, անունը՝ ՍԱԼԻՀ ՋԵՔԻ: Ատելությունը, որ տածում էր նա հայերի հանդեպ, չափ ու սահման չունեցավ: Նա էր, որ խոստովանեց՝ պարծենալով. «Յոթանասուն-ութսուն հազար հայ եմ կոտորել՝ կաթնակեր երեխաներից, մինչև յոթանասուն-ութսուն տարեկան հայեր»: Եվ սա հաստա՛տ է: Վկա Տեր-Զորի և Ռաս-Ուլ-Այնի միջև գտնվող գայլերից ու գիշակեր թռչուններից հոշոտված հայ նահատակների ոսկորների բլուրները... Եվ հիմա, այնտեղից անցնող մեկը, ինչ ազգի ու կրոնի էլ, որ պատկանելիս լինի, թախծի ու անձկության արցունքներ պիտի թափի: Ուրե՛մն. չգնանք հաշտության սեղանի մոտ անապատրաստ: Որպեսզի կարողանանք ասել, թե օտար չէ մեզ արդարության գաղափարը: Իսկ խոսքը, որպեսզի վերածվի գործի, պետք է բռնել ոճրագործներին և շուտափույթ դատավարության արդարության վրա հենված՝ պատժել նրանց: Նրանք տակավին ազատության մեջ են: (Քիչ լռելուց հետո) Մինչև խոսքս ավարտելը, պիտի անդրադառնամ երեսփոխաններ Զոհրապի և Վարդգեսի սպանության տխուր պարագային, որի համար երեք երեսփոխաններ դիտողագիր են տվել՝ ստուգելու համար ոճրի պայմանները: Պարզվել է, որ չերքեզ ԱՀՄԵԴՆ ու իր ընկեր չեթեների

ղեկավար հիսնապետ ՀԱԼԻԼՆ են գործել այս ոճիրը: Չերքեզ Ահմեդը վատահամբավ ոճրագործի մարմնացում էր, որ իթթիհաթական դառնալուց հետո, այդ կուսակցության գլխավոր ահաբեկիչներից մեկն է եղել: Մասնակցել է իթթիհաթի երկու գլխավոր հակառակորդ լրագրողների 1910 և 1911 թվականներին կատարած սպանություններին: Սակայն դրանից առաջ էլ Ահմեդ չերքեզը յաթաղանով և ատրճանակով մի քանի հոգի էր սպանել, տեղի իթթիհաթ վարիչների կարգադրությամբ: Հայոց սպանդի մեջ ահավոր դեր է խաղացել այս ոճրագործը: Վանի կոտորածների գլխավոր հեղինակն էր... Ուրֆայում, նրա շրջակա գյուղերում, հատկապես ծանր աշխատանքի ուղարկված, զինաթափված հայ զինվորների ոչնչացումների հերոսը... Տիգրանակերտի կուսակալ դոկտոր Ռեշիդի հետ գործակցելով՝ չերքեզ Ահմեդը գլուխ հանեց այդտեղի կոտորածների մեծ մասը: Զոհրապի և Վարդգեսի սպանությունն էլ ինքն էր ստանձնել: Ահա իր սենեկական խոսքերը. *«Ոչ միայն Վանն ու նրա շրջակայքը քարուքանդ արեցի, այնքան որ մեկ հայ չեք կարող գտնել այնտեղ, այլև սպանեցի հայ երեսփոխաններ Զոհրապին ու Վարդգեսին: Բռնեցի Զոհրապին, գետին տապալեցի, ոտքերիս տակ առա ու մի մեծ քարի կտորով ջախջախեցի իր գլուխը... ջախջախեցի ու ջախջախեցի, մինչև որ սպանեցի»:*

ՆԱԽԱԳԱՀ – Չերքեզ Ահմեդը կախաղան է հանված:

ՊՈՇԿԵՉԵՆՅԱՆ – Այո: Չերքեզ Ահմեդը ինը անգամ կախվելիք սրիկա էր: Սակայն Թալեաթը ոչ թե նրա սրիկա լինելու համար կախել տվեց Պոլսո հրապարակում, այլ որովհետև ըստ իր՝ Թալեաթի խոսքերի. *«Ամեն պարագայի՝ իր բնաջնջումը անհրաժեշտ է: Ավելի հետո շատ փորձանք պիտի լինի»*: Այո՛: Որովհետև չերքեզ Ահմեդը իթթիհաթի ահավոր գաղտնիքների տերն էր: Եվ կարող էր, անշուշտ իր տերերի գլխին փորձանք դառնալ: Ուրեմն, կրկնում եմ. Կառավարությունը պարտավոր է ՈՃԻՐԸ պատվիրողներին գտնել և դատի տալ: Անհրաժեշտ է, որ Հայոց ՈՃՐԻՆ մասնակցած բոլոր պաշտոնյաները պատժվեն: Հաշտության ժողովն է շուտով սկսվելու, ինչպես սկզբում ասացի. դատարկ ձեռքերով չգնանք այնտեղ:

ՕՍՄԱՆ ՍԱՅԻԲ ԲԵՅ (Հանկարծ բռունցքը կատաղությամբ խփելով սեղանին՝ սպառնալից բղավում է) – Դե, հերիք է: Այդ ժողովին Վանից եկող մահմեդականներն էլ պիտի մասնակցեն... Հերի՛ք է...

ՆԱԽԱԳԱՀ (Արագ ոտքի կանգնելով՝ փորձում է լռեցնել հանկարծակի Սայիբ բեյի խոսքերից հետո սկսված աղմուկն ու իրարանցումը) – Լռե՛ք, պարոնայք, լռե՛ք...

ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ (Ուժգին) – Կրկնում եմ: Նորից ու նորի՛ց: Միայն չերքեզ Ահմեդի նման հրեշները պատժելով՝ չենք հասնի արդարության: Պիտի պատժվեն նրանց հրահրող, նրանց թիկունքին կանգնած մարդիկ: Վնաս կրողները հատուցում պիտի ստանան... Ողջերը շատ քիչ են մնացել, բայց պիտի հատուցում ստանան... Այստեղ, այնտեղ բաշխված անապատ ու գեղեցիկ կույսերին պիտի ազատել հարեմների ստրկությունից: (Նայելով մի քանի թուրք պատգամավորի, ծանր հայացքով, կարծես խոսքը ուղղելով հատկապես նրանց) Այստեղ, Պոլսո մեջ նույնպես, շատերի տներում կարելի է գտնել հայ ստրուկներ... Այդ անմեղ երեխաները... որոնք նույնիսկ դեռ չեն հասցրել մեծանալ...

(Նորից աղմուկ և իրարանցում):

ԻՀՍԱՆ ԲԵՅ (Կատաղի) – Ինչո՞ւ ես աչքդ տնկել երեսիս: Ամոթ քեզ...

ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Նրանք, որոնք կույս աղջիկներ են պահում իրենց մոտ, անամոթաբար վայելում են նոր Կառավարության պաշտպանությունը... Ես ձեր բոլորի մարդասիրության և արդարամտության ոգուն եմ կոչ անում...

(Աղմուկ և իրարանցում նոր ուժով):

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ (Ճերմակ փաթթոցավոր: Հոջա) – Օրակարգից դուրս ես խոսում: Պիտի լռե՞ս, թե՞ չէ...

ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ (Հիմա էլ Իլյասին նայելով համառ հայացքով) – Այստեղ երեսփոխանական ժողովի պատվանդանն է... Այստեղ ոչ Մուշն է և ոչ Բիթլիսը, *«Հարգելի»* հոջա... Փառք Աստծո, արդարության արևը ծագելու վրա է: Պոլսո *«Հոմ սքուլ»* անգլիական վսեմ դպրոցի շրջանավարտ, կրթված աղջիկները այսօր դեռ քրդերի կեղտոտ վրանների տակ և խուժանի գրկե-

ղում են պառկում, որպես ստորացված զոհեր նրանց հաճույքների... Մի՞թե նրանց համար չարժե արցունք թափել...

ՉԱՅՆԵՐ – Բայց նրանց ո՞վ է պաշտպանում:

– Ոչ ոք... ոչ ոք... ճշմարիտ...

– Հերիք է... Օրակարգից դուրս է խոսում...

– Ամբաստանում է մեզ Արթին էֆենդին...

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ – Իրականությունը մի՛ ծածկիր, թե ճշմարտախոս ես: Ովքե՞ր էին, որ սկիզբ դրեցին ազգիս թշվառությանը:

ՊՈՇԿԵՉԵՆՅԱՆ – Դեռ մինչև հիմա չիմացա՞ք:

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ – Քո իմացածը չէ... (Բղավում է) Լսեցի՛ր... քո իմացածը չէ... Այսօր իմ հայրենիքն արյան և թշվառության մեջ խեղդել տվող քո ընկերները չէի՞ն... Վանի երեսփոխան ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶՅԱՆ կոչվածը... որ ոգևորեց Վանի կռիվը...

ՊՈՇԿԵՉԵՆՅԱՆ (Հանգիստ) – Ինչո՞ւ նրան դատի չտվեցիք, եթե հանցավոր էր...

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ – Ես Մուշի երեսփոխանն եմ և շատ լավ գիտեմ, թե Մուշում ինչ կատարվեց: Ինչո՞ւ այդ էլ չես բացահայտում... Թե չէ քրդերի վրանների տակ (ծաղրով) ուլայալ, կրթյալ աղջիկները... (Մեծ ջղայնությամբ) Զինյալ վիճակով Ռուսիո զորքերին օգնություն հասնողը նորից քո ընկեր երեսփոխաններից չէ՞ր Էրզրումի երեսփոխան ԱՐՄԵՆ ԳԱՐՕ կոչեցյալը...

ՊՈՇԿԵՉԵՆՅԱՆ (Հանգիստ շարունակելով) Ահա և հայտնի դարձան վեց հարյուր տարվա հսկա կայսրությունը քարուքանդ անող ոճրագործները... (Ծաղրը շատ բացահայտ էր և ժխորը նորից տիրապետող է դառնում):

ՆԱԽԱԳԱՀ (Համբերությունը կորցրած) – Եթե աղմուկը շարունակվի, ստիպված եմ նիստը փակել...

ՊՈՇԿԵՉԵՆՅԱՆ (Չսպասելով ձայների հանդարտվելուն, բարձր և հատուկ) – Իմ դիմումագիրը հետապնդում է այս նպատակները.

Ա. Հանցապարտ պաշտոնյաների և անհատների պատժարկումի եղանակների հաստատումը:

Բ. Այստեղ, այնտեղ գտնվող ստրկացած կանանց և որբերի հավաքագրումը:

Գ. Նրանց ապրանքներն ու ունեցվածքը վերադարձնելը:

Դ. Իրենց կրած վնասների հատուցումը: (Դիտողագիրը փոխանցում է նախագահին) Ահավասիկ, պարոն Նախագահ: (Առանձին-առանձին նայելով երեսփոխաններին) Ինչպես որ մեկ մարդու, մեկ անհատի գլխին է գալիս փորձանքը, դժբախտությունը, այնպես էլ ազգերը կարող են դառնալ մեծ աղետների զոհ: Արդարև, մի մեծ ազգի գլխին շատ աղետներ պայթեցին... Մի մեծ ազգ հոշոտվեց աղետի մագիլների մեջ՝ բայց չպարտվեց, որովհետև հույսին ապավինեց... Չվիատվե՛ց:

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ – Այդ ի՞նչ մեծ ազգ է...

ՊՈՇԿԵԶԵՆՅԱՆ – Հայ ազգը, հոջա, որը մեծ է իր արտով... Իր ՍՐՏՈՎ ու իր ՏԱՂԱՆԴՈՎ... Խորհրդարանը, պարոնայք, պարտավոր է Կառավարության խոստացած ծրագրին համապատասխան՝ օրինապահության նոր շրջան հաստատել: Եթե ուղղամտությունն ընդունենք մեզ ուղեցույց՝ խաղաղություն կգտնենք Բարձրյալ Աստծո օգնությամբ... Աստված ուղղամիտների աջակիցն է: (Նստում է):

(Ծափահարություններ):

ՆԱԽԱԳԱՀ – Վերադառնանք մեր բուն օրակարգին, այն է. ԹԵՎՖԻՔ փաշայի նորընտիր կառավարությանը և նրա ծրագրերին վստահության քվե տալ և զորակցել խորհրդարանի կողմից:

ԷՄՄԱՆՈՒԵԼ ԷՖԵՆԴԻ – Պարոնայք, իմ հարգարժան պաշտոնակիցը՝ Հալեպի երեսփոխան Արթին Պոշկեզենյան էֆենդին, այս բարձր մարմնի առջև շատ հարցերի մասին արտահայտվեց: Իթթիհաթականները որպես Օսմանյան կայսրության Կառավարություն, իրենց կարգադրություններով խոստումնադրուժ եղան և խախտեցին իրենց իսկ ընդունած Կառավարական ծրագիրը: Եվ հիմա, հակառակ ԹԵՎՖԻՔ փաշայի հանդեպ տածած իմ վստահությանը և հարգանքին, վստահության քվե չպիտի տամ նոր կազմված Կառավարության դահլիճին: Իմ պատճառաբանությունը աղերս ունի *Հայկական Հարցի* հետ և նրանից բխած *Հայկական Ցեղասպանության* հետ: Նոր Կառավարության ծրագրի մեջ ազգությունների իրավունքների, իրական դրության մասին խոսք չկա: Հին բռնատիրական

վարչակարգից մնացած պարապ խոսքը ինձ չի գոհացնում: Կառավարությունը վնասը հատուցելու մասին է խոսում, մինչդեռ ոչ միայն հատուցում չկա, այլ կողոպտված գույքերը Կառավարության աչքի առջև տակավին մնում են բռնագրավված: Ես վստահության քվե տալ չեմ կարող, քանի որ դարմանումի այս խնդրի գործունեությունը դեռ սկսված էլ չէ:

ՌԻԶԱ ԹԵՎՖԻՔ – Մենք կմտածենք «Ազգությունների հարցի» օրենքը ավելի լայն ներկայացնելու համար: Ազգությունների հարցի լուծման մասին կցանկանայի լսել Պետական խորհրդի նախագահ ՇԵՐԻՖ փաշայի կարծիքը:

ՇԵՐԻՖ (Թախծոտ) – Մեր երկրի ամենավոթորկոտ ու ծանր ժամանակ մենք ստիպված եղանք ստանձնել Կառավարության ղեկը: Հիմա մենք զինադադարը խաղաղության դաշինքի հասցնելու գործով ենք զբաղված: Պիտի ջանանք այդ անել՝ ազգի պատիվը և արժանապատվությունը կարելի եղածի չափ անբասիր պահելով: Հետո պիտի ջանանք երկրին պատկանող տարբեր ազգությունների իրավունքները ապահովել: Երեսփոխաններից մեկը քիչ առաջ խոսեց մի շարք պետական պաշտոնյաների ապօրինի գործերի մասին: Այս գործերը քննելու համար Ներքին Գործոց նախարարությունում արդեն կազմել ենք «Քննիչ Հանձնախումբ»: Մեղավորների հանցանքները ստուգելուց հետո, Կառավարությունը պիտի տնօրինի համապատասխան պատիժ: Մենք կառավարության ղեկը ստանձնել ենք հանուն արդարության և իրավունքի սկզբունքների և մեր նպատակն է այն պահպանել: Այսքա՛նը: (Նստում է):

ՍԵՀՍԵՏ ԷՍԻՆ – Մեր հայ և հույն պաշտոնակիցները, ինչպես տեսնում եմ, մեծ տարողությամբ արդարություն և իրավունք են պահանջում: Եթե պահանջում են, քննենք իրենց պահանջները առանց հետամնացություն ցուցաբերելու: Արևմուտքը միշտ մեր դեմ է եղել: Նրանք հիմա զբաղված են նոր իրավակարգով լուծելու ազգությունների հարցը: Մենք էլ պիտի հետևենք արևմուտքին՝ հետամնաց ազգերի շարքը չդասվելու համար... Այնպես որ, Կառավարության մի քանի անդամների հանդեպ խորին հարգանք տածելով հանդերձ՝ պետք է հայտնեմ, որ եթե այս Ժողովը Կառավարությանը վստահության քվե

տա, իր վայելած արժանիքներից շատ բան պիտի կորցնի: Որովհետև հարցը ազգային հանգամանք ունի:

ՀԱՍԱՆ ՖԵՀՄԻ (Ատամների տակից) – Խոսքերդ ետ առ...

ՄԵՀՄԵՏ ԷՄԻՆ – Ես խոսքերս ետ չեմ առնի... Իմ խոսքերը իմ անձնական կարծիքն են:

ՆԱԽԱԳԱՀ (Շտապելով ընդհատել վիճողներին) – Խոսք ունի Մեքաստիո երեսփոխան ՏԻԳՐԱՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ էֆենդին:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Հարգելի պաշտոնակիցներ, քիչ առաջ մեր եղբայր Արթին էֆենդին շատ բաներ ասաց և շեշտեց, որ իր խոսքերի թելադրանքը բխում է արդարությունը վերականգնելու ցանկությունից: Սրից փրկված մի քանի հազար հայեր դեռ սպասում են այդ արդարությանը: Մեծ մասը կանայք և երեխաներ են, և նրանց վիճակը սոսկ թշվառությունն է: Նրանք իրոք դեռ շղթայված են այսինչի տանը, այնինչի անկյունին և որպես ստրուկ ու սպասավոր քարշ են տալիս իրենց սոսկալի գոյությունը: Սրա ճարը, պարոնայք, պիտի գտնել: Հարցը հրամաններով չի լուծվի: Կլուծվի միայն այն ժամանակ, երբ մեծ հատկացումներ լինեն և խիստ հրամաններ արձակելով՝ նրանց վերադարձնեն իրենց նախկին տեղերը: Հատկապես այս ձմռան շրջանին ուտեստեղենի և բնակարանի համար անհրաժեշտ հատկացումներ պետք է արվեն... Արդարև, Արթին էֆենդին ճիշտ մատնանշեց, հաշտության սեղանի մոտ թուրքերը պիտի մաքրված երթան... (Քիչ դադար) Ուզում եմ մի քանի խոսք ասել մեր ընկեր երեսփոխանների մասին, որոնք, ավաղ, այլևս մեզ հետ չեն: Մենք գիտենք, թե ինչպես են կնքել իրենց մահկանացուն Զոհրապը և Վարդգեսը: Դժբախտաբար հայտնի է, որ սպանված է նաև Վանի ազնիվ երեսփոխան ՎՌԱՄՅԱՆԸ: Իսկ նրա հանցանքը, ինչպես այստեղ մատնանշվեց բնավ էլ հանցանք չէ: Նա, որպես ազնիվ և ժողովրդասեր մարդ, հայ ազգի բարօրության համար է ջանացել: Նրա և մյուսների հիշատակը միշտ կմնա մեր սրտերում: Վռամյանը ձերբակալվել է Վանի նահանգի կուսակալ ՋԵՎԴԵԴԻ կողմից: Իսկ ո՞ւմ հայտնի չէ, թե Զեվդեդը իսկական ճիվաղ է մարդկային կերպարանքով:

ԻԼՅԱՍ ՍԱՄԻ (Զայրացած ոտքի թռչելով) – Զևդեդ փաշան իսկական հայրենասեր է... Բոլորս գիտենք...

ՆԱԽԱԳԱՀ – Խնդրում եմ չընդմիջել միմյանց: Դուք ձեր ասելիքը, հարգելի հոջա, ձեր խոսքի մեջ լիուլի կարտահայտեք:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Վռամյանը ձերբակալվելուց հետո հիսուն գավառային ոստիկանների ուղեկցությամբ տարվում է Բիթլիս և նետվում այնտեղի՝ բոլորին հայտնի սարսափելի զնդաններից մեկը: Մերկ, մարմնի վրա բազմաթիվ վերքեր, աչքերը վտիտ ու հիվանդ, գրկված սնունդից և զորանոցի բակի մեջ ծանր գավազանից ստացած հիսուն հարվածից ուշաթափ, քիթ ու բերանից արյուն հոսելով... Երկու շաբաթ հետո, նորից գավառային հիսուն ոստիկանի ուղեկցությամբ, ծանր շղթաներով շղթայված, նրան անընդհատ ծեծելով, քարշ են տալիս դեպի Արաբական կամուրջի կիրճը... Տանջահար, չարչրկված մարդը վերջապես կնքում է մահկանացուն ջարդարար ավազակների աչքերի առաջ Բաթմանա Սու կամուրջի մոտ:

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ (Նորից ոտքի թռչելով) – Ո՞ւմ ես ջարդարար ավազակ անվանում... Ո՞ւմ...

ՊԱՐՍԱՄՅԱՆ (Հանգիստ) – Ջարդարար ավազակներին...

(Նորից սարսափելի աղմուկ, աղաղակ է բարձրանում: Շատերը վեր են թռչում տեղերից: Ոմանք կուտակվում են Պարսամյանի մոտ՝ նրա դեմքի մոտ թափահարելով ձեռքերը: Ոմանք բռունցքներով խփում են սեղանին: Հանգիստ նստած են միայն հայ երեսփոխանները, որոնք սարսափի ու նողկանքի արտահայտությամբ նայում են տեսարանին):

... Քանի դեռ Նախագահը չի կարողանում խաղաղեցնել վրդովված երեսփոխաններին, իմ պատանի բարեկամ, ուզում եմ հիշել չարչարանքով նահատակված Վռամյանի խոսքերը, որը Զոհրապի և Վարդգեսի նման, հայ պատգամավորներից էր Թուրքիո խորհրդարանում:

«Դուք խոսում եք Կառավարության դավադրության մասին: Այո՛, ես գիտեմ, որ մի օր իմ դիակը պիտի փռված մնա... Գիտեմ, որ մի օր ես այլևս չեմ վերադառնալու ձեզ մոտ... Գիտեմ, որ Վան քաղաքը պաշարված է... և մի օր թնդանոթներով հիմնահատակ պիտի քանդեն ու պիտի կոտորեն

մեզ... Սակայն մենք առաջինը չպիտի սկսենք, մենք առաջինը չպիտի տանք կռվի ազդանշանը, որովհետև մենք ապստամբներ չենք, որովհետև ապստամբությունն ինքնին բավական է, որ ամբողջ Հայոց բարձրավանդակը վերածվի հսկա գերեզմանոցի: Եվ վերջապես, մենք ձեզ հետ համոզված ենք, որ հակառակ մեր բոլոր զիջումների՝ մի օր ահարկու փոթորիկ պիտի պայթի մեր գլխին: Այդ օրերը մոտեցել են: Բայց մեր նպատակն է քիչ զոհերով ազատվել այս վիթխարի հարվածից: Թող մի Վռամյան չլինի, թող մի Իշխան սպանվի, թող ամբողջ մի գավառ հրի ու սրի տակ ոչնչանա, բայց թող փրկվի մեծամասնությունը, թող կարողանա ապրել հայությունը, իբրև ազգային հավաքականություն: Ուրեմն, միայն վերջին րուպեին, երբ այլևս ոչ մի ճանապարհ չի մնա և ամբողջ հայ ազգի պարանոցին կերկարի թշնամու սուրն առհասարակ՝ այն ժամանակ ոչ ոք մեզ չի մեղադրի, եթե դիմենք ինքնապաշպանության զենքին և պաշտպանենք ինքներս մեզ և մեր ժողովրդին».

Առանց մեկնաբանելու Վռամյանի այս խոսքերը, նրա վերլուծությունը թողնելով քո առողջ ու պայծառ գիտակցությանը՝ վերադառնանք պատերազմում պարտված Թուրքիո Խորհրդարան, որտեղ Նախագահին հաջողվել է արդեն քիչ հանդարտեցնել վրդովված երեսփոխաններին:

ՆԱԽԱԳԱՀ – Զայնը տրվում է Մուշի երեսփոխան ամենահարգելի հոջա ԻԼՅԱՍ ՍԱՄԻ էֆենդիին: Խնդրեմ, հոջա էֆենդի:

ԻԼՅԱՍ ՍԱՄԻ (Գրավելով ճառասացների համապատասխան տեղը) – Պարոններ, հինգ-վեց տարիներից ի վեր տեղի ունեցող պատերազմի խոլ արշավի ընթացքում մարդկությունը, խելագարության մեջ տապլտկվելով, ականատես եղավ մեծ ողբերգություններին: Հիմա մենք նրա արդյունքի դիմաց ենք և գիտակցում ենք, որ վիճակը հուսահատական է: Ներկա մեր կառավարությունը, որն հետամուտ է հայրենիքի և նրա բարությունը ապահովելուն, այս ժողովի առջև պատմում է իր ծրա-

գրերը: Յուրաքանչյուր բանիմաց անհատ, իր խղճի ձայնին անսալով, ճանապարհ է ելում՝ ճշմարտություն որոնելու: Ես էլ՝ իբրև այս ճշմարտության հարցին հետամուտ մեկը, փափագում եմ անդրադառնալ մի խնդրի, որի վրայից ներկա ճառողները դժբախտաբար լռությամբ անցան: Դարեր ի վեր մեզ հետ գոյակցող հայ ազգի ներկայացուցիչ երեսփոխան մեր ընկերները, ամեն առիթից օգտվելով, տեղահանության հարցն են արծարծում: (Զայրանալով) Ես էլ եմ իմ ամենամեծ պարտականությունը համարում այս հարցի իրականությունը բացատրել նախ ներկա կառավարությանը, հետո ձեր Բարձր Ժողովին և հետո համայն մարդկությանը, որպեսզի վերջապես, խղճի հանգիստ ունենամ: Տեղահանության հետ աղերս ունեցող մանրամասները, բացատրությունները և այդ աղետի պատասխանատուների գլխավոր հարցն են ներկայացնում Արթին էֆենդին և մյուսները ա՛յն ժամանակ, երբ մենք ամեն կողմից շրջապատված ենք թշնամիներով: Սրտիցս ժայթքող ճշմարտության ձայնն աղաղակում է. մեր հայրենիքի գլխին թափված կսկծալի թշվառությունը կրկին Հայկական Հարցին առնչվող փաստարկումներով բացատրելը՝ անիրավություն է: Այո՛: Աչքերովս եմ տեսել զինյալ հայերի, որոնք բարձրացան Մուշի ետևի բարձունքները: Սրանք նրանք էին, որ դեռ Ռուսաստան չէին հասցրել փախչել և մենք հազիվ կարողացանք զսպել և պատժել նրանց տասը վաշտ զինվորով: Հույն երեսփոխան էֆենդին ասաց, որ իր կրծքի մեջ կոտացող վերք կա: Իմ կրծքի մեջ էլ այդ վերքն է, և ես պիտի բացեմ այսօր: Հույն երեսփոխանն ասաց, թե Օսմանյան Կառավարությունը, օգտվելով արտաքին պատերազմից, հռչակեց նաև ներքին պատերազմ: Սո՛տ է: Եթե հռչակած լիներ ներքին պատերազմ, հույներին մի՞թե կտար խոսքի այս ազատությունը, որ նրանք հիմա ունեն: Չէ՛ տա: Ուրեմն այս բոլորը գրպարտություն է, որը գործադրվում է անմեղ օսմանցիներին, անմեղ մահմեդականներին նվաստացնելու համար... Բայց սրանով մարդկությունը չի խաբվի...

(Բուռն, երկարատև ծափահարություններ: Բղավոցներ: Ձայների քաոս: Բռունցքների ճոճում: Ոտքերի դոփում):

ՉԱՅՆԵՐ – Այդպես է... Ապրես հոջա էֆենդի... Մարդկությունը չի խաբվի... Օսմանցին արդար է... Թուրքը անմեղ է... Մահմեդականը ճիշտ է... անմեղ է... անմե՞ղ է...

... Նորից մի պահ հեռանանք Խորհրդարանի այս վայրենի աղաղակներից, որպեսզի քեզ ծանոթացնեմ ՀՈՋԱ ԻԼՅԱՍԻ հետ:

Սա Մշո դաշտի 70–80 հազար հայերի բնաջնջեց՝ քուրդ աշիրաթների հետ գործակցելով:

Սա իսկական ողջակիզումներով հազարավոր հայ կանանց, երեխաների և ծերերի ախոռների, մարագների, շտեմարանների մեջ ողջ-ողջ հրկիզեց:

Սա իբրև երեսփոխան և Իթթիհաթ կուսակցության շրջանային քննիչ՝ գրգռեց դահիճներին, կազմակերպեց և Ջիհադ հայտարարելով՝ նրանց խոստացավ աստվածային վարձատրություն:

Սա նախճիրն ավարտելուց հետո իր հետ Պոլիս բերեց դեռատի հայ աղջիկների՝ իբրև ընծա իր իթթիհաթական մեծավորներին: Բուլանխի նախկին կառավարիչ Շեֆիքը հոջա Իլյասի մասին, ամեն տեղ ծիծաղելով, ասում էր, թե՝ *«Հոջա Իլյասը քրիստոնյա աղջիկներ բռնաբարելու բուռն մարմաջ ունի... Եվ դա շատ ոգևորիչ է մահմեդականների համար... մանավանդ, որ գլխին փաթթոց ունի...»*.

Սա էր, որ Տարոնի քրդերին *«քաղաքական»* հրահանգներ էր տալիս:

Սա էր քուրդ մոլեռանդ *«Քոթանենց»* տան գլխավորի՝ արյունռուշտ Հաջի Մուսայի ժառանգներից մեկը... Նենգ, հայատյաց, քսու, գարշելի դևերից մեկը այդ տան, որ հայտարարել էր, թե *«Մուշի համայն հայ ժողովուրդը արմատախիլ արեցի»*:

Տեսա՞ր. այս գարշելի դահիճը հիմա արդարության անունից է հոխորտում... Ո՞ր արդարության: Իր կողմից բռնաբարված ու չարչրկված Արդարությա՞ն...

Բայց վերադառնանք նորից դեպի այս պատմական *«կարևոր»* ժողովը, ուր նորից փրփուրը բերանին Արդարու-

թյունն է պաշտպանում կեղտոտ հոջան, որը քուրդ էր ու թուրք միաժամանակ:

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ – Նորից եմ կրկնում. ջարդի հարց չկա: Արյունոտ բախումներ էին ու վերջ: Սրանց պատճառ դարձած նախահարձակները թե՛ հայ, թե՛ մահմեդական՝ գլխատվելու, ճզմվելու արժանի մարդիկ են: Այսպես թող արձանագրվի: Արդարությունը այսպես կլինի: Կառավարությունը այսպես թող կշռադատե և ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, մարդկությունը թող իմանան, որ աշխարհի համայն ճակատագիրը տնօրինող Անգլիան, եթե իր ներքին սահմանների մեջ դեմ հանդիման գար ապստամբ տարրի հետ, որ հակառակ իր վայելած շատ իրավունքների, բարօրության, ապրուստի և կրթական առավելությունների և ուրիշ շատ իրավունքների՝ հանդես գար անշնորհակալ ապերախտությամբ, այդ Անգլիան պիտի քարե ու երկաթե գնդակներով պատժեր ու ոչնչացներ նրանց... ինչպես անում են Իռլանդիայում: Բայց օսմանցիների ազգային դյուցազնությունը իր հողերի վրա իրավատեր հայ, հույն, արաբ, քուրդ ազգերի հանդեպ այդպիսի վարվելակերպ երբե՛ք թույլ չի տվել և թույլ չի՛ տալու:

ՊԱՐՍԱՄՅԱՆ -- Ողորմի, հոջա, և 1895 թվականի ջարդերը ջարդ մի համարի...

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ – Ես դա չեմ ասում...

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ադանայի ջարդը նույնպես ջարդ չէր...

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ (Կատաղի: Ինքն իրեն բոլորովին կորցրած) – Ամփոփելով այս հանգամանքը... (Նախագահին) Արձանագրիր... արձանագրիր, որ հայերը զենք առան ձեռքները Վանում... արձանագրիր... Ջարդ չի՛ եղել... Ջիհադ չի՛ եղել:

(Թուրք երեսփոխանների կատաղությունը հասնում է գագաթնակետին: Նրանք գոռում-գոչյունով պահանջում են Նախագահից իրենց խոսքերն արձանագրելու):

ՉԱՅՆԵՐ – Արձանագրի՛ր... Հայերը... Ռուսները... Հայերը... Վանը... Սասունը զենքով... Արձանագրիր, խեղճ թուրքը... միամիտ, բարի... Հոջա էֆենդին ճիշտ է, ջարդ չի եղել...

Հայերն են սպանել թուրքերին... իր ասածը ճիշտ է... ջարդ չի եղել... Ջիհադ չի եղել...

ՊԱՐՍԱՄՅԱՆ (Խլացնելով բոլոր ձայներն՝ աղաղակում է) – Ահա... Ահա, տեսեք իր ոգին, ջարդի՛, սպանդի՛ ոգին, արյան ու նախճիրի՛ ոգին... (Ցույց տալով Իլյասին) Եղեռն սանձազերծողը այսպիսի ոգով է տոգորված լինում... Ահա, տեսեք...

ԷՍՄԱՆՈՒԵԼԻՏԻԵ (Զայրագին) – Իլյաս Սամի հոջային պիտի պատասխան տանք, ձայն տվեք...

ՊՈՇԿԵՋԵՆՅԱՆ – Ձայն տվեք, պիտի պատասխաննենք... Երկու խոսք միայն...

ՆԱԽԱԳԱՀ – Ոչ, ոչ... Խոսքն իրենն է... Իլյաս Սամի հոջա էֆենդիինն է...

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Թույլ տվեք խնդրեմ, խոսք եմ ուզում, ասելիք ունեմ...

ՀԱԼԵԹ ԲԵՅ – Իլյաս Սամի էֆենդին շատ ողջամիտ կերպով հանդես եկավ... Նրա խոսքից հետո մենք ուրիշ խոսք լսելու տրամադիր չենք...

ՉԱՅՆԵՐ – Ապրի Հալեթ բեյը... Իլյաս Սամի էֆենդիի ճշմարիտ ու ազնիվ խոսքերից հետո ասելիք խոսք չմնաց...

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Խնդրում եմ, չորս տարվա մեջ, երկրորդ անգամն է, որ ձայն եմ ուզում:

ՆԱԽԱԳԱՀ (Կատաղի կերպով խփելով զանգը) – Լռեցեք վերջապես, խոսք տալը իմ իրավունքը չէ, այլ ժողովականների իրավունքն է... Ժողովի՛ իրավունքը:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Ոչ, պարոն, այդպես չէ. Ժողովը խոսք է տալիս արտահայտվել ցանկացողներին Ձե՛ր միջոցով: Ժողովը վաղուց է վավերացրել երեսփոխանի խոսքի իրավունքը:

(Հիմա էլ հույների, արաբների և հայերի ձայներն են տիրապետող աղմկոտ Խորհրդարանում):

ՉԱՅՆԵՐ (Հայեր, հույներ, արաբներ) - Այդպես է, այո՛: Թույլ տվեք խոսենք... Ինչո՞ւ ենք զրկում ինքնապաշտպանության իրավունքից: Մենք բոլորս խոսել ենք ուզում և պիտի ստանանք...

ՆԱԽԱԳԱՀ (Ճարահատյալ) Նալբանդյան էֆենդի, հրամմեցեք՝ խոսեք...

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Պարոններ, Իլյաս Սամի էֆենդին այստեղ շատ կարևոր հարց շոշափեց: Եվ լիուլի իր գաղափարները ներկայացրեց: Նա մեր երկրի մեջ սրընթաց կերպով սփռվող գլխավոր վշտերից մեկը համարեց քրիստոնյա ազգերի և այս առնչությամբ նաև Հայկական Հարցի վերաբերյալ խնդիրը: Այս հարցով Եվրոպան շատ է զբաղվել, և այն դեռ մտահոգիչ է նաև օսմանցիների համար: Սակայն հակառակ այս իրողությանը, որքան խնդրո առարկա հարցը առաջ է քաշվում, այստեղ առարկություններ են լսվում առ այն, թե չարժե զբաղվել աննշան հարցերով, քանի որ նրանք մանր-մունր բաներ են... Ձեր ներողամտությունը խնդրելով՝ պիտի օգտագործեմ թուրքական մի ասացվածք. «Նիզակը պարկի մեջ կարելի չէ թաքցնել»: Այս հարցը բոլորովին էլ մանր-մունր ներքին խնդիր չէ: Արդարև, այն հույժ մահացու խնդիր է, որ այսօր իր ահավորությամբ և աղետալիությամբ ահաբեկել ու ցնցել է աշխարհը: Դրա մասին չխոսել՝ նշանակում է չընդունել Օսմանյան պետության վարչական խնդիրները, որն անհաշտ է պետության այսօրվա և վաղվա քաղաքականության շահերին:

ՍՈՒՍՏԱՖԱ ՖԵՀՄԻ – Անկարևոր է՝ ասող չեղավ:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Ասող եղավ: Իլյաս Սամի հոջա էֆենդին էր ասողը: Ըստ նրա, հայկական տեղահանությունը և դրան առնչվող նախճիրը մեկ պատճառաբանություն ունի. Թուրքիայի մահու և կենաց պայքարի մեջ եղած ժամանակ՝ թիկունքից հարված ստացավ հայ հեղափոխականներից: Ես Իլյաս Սամի հոջա էֆենդիին հարց եմ տալիս, մի՞թե ազգը տեղահանվում և ոչնչացվում է մի քանի հեղափոխականների պատճառով: Այսօր այստեղ պոռչտուքներով պնդում են, թե չնչին փոքրամասնություն կազմող մարդիկ և ոչ թե օսմանցիներն ու օսմանցիների Կառավարությունը օսմանցիներին բերին հասցրին անդունդի եզրին: Տեղահանությունը, սպանդը, ինչքերի գրավումը, կողոպուտը օրենսդրության ո՞ր տրամաբանության հետ է հաշտ: Իսկ հոջա Իլյասն աղաղակում է, մենք այս գործի մեջ մեղսակից չենք... Սակայն փոքրաթիվ խմբակի դեմ ցասումով գործելով՝ մի ողջ ժողովուրդ չպետք է բնաջնջվեր: Ես Իլյաս հոջա էֆենդիից սպասում էի, որ գոնե, երբ «զգայացունց ու կերկերաձայն» իր պատմությունը հայերի մեղավորության մասին

ավարտեր՝ հետո բողոքի և պարսավանքի խոսք ասեր հայ ազգի բնաջնջումի համար... Պարոնայք, մի՞թե Կառավարությո՛ւն չի նշանակում իրավունքի գերիշխանությունը, իրավունքի արդարությունը պահպանելու օրինակելի և կարող ուժ: Երկրի ժողովրդի վարչության ղեկը ստանձնող Կառավարությունը իր ներսում և իր ժողովրդի ներսում ամեն տեսակ մարդիկ ունի. և՛ լավը, և՛ գեշը, դավաճանը և հավատարի՛մը: Նրան, որ ոճրագործ է՝ պիտի պատժի և նրան, որ ազնվորեն ծառայում է, պիտի վարձատրի: Սա ընդհանուր կանոն է: Մի՞թե Կառավարության կողմից ազնիվ բան է, որ մի խումբ հեղափոխականների համար ողջ հայությունը հանցագործ նկատելով՝ տեղահանության ու ջարդի որոշում ընդունի: Անհատ անձինք կարող են բարկության հուզումին ենթարկվել, բայց Կառավարության վարքին օրինաչափ պիտի լինի արդար և զուսպ կառավարում: Մենք՝ հայերս, մեր նախնիներով՝ թուրք ազգին ընծայած ծառայությունները կարող ենք ցույց տալ Իլյաս Սամի հոջա էֆենդիին... Այս երկրի հանդեպ տածած մեր ինքնազոհ հավատարմությունները կարող ենք ապացուցել ոչ թե խոսքերով, այլ գործով... Իսկ Կառավարությունը հիմա լվանում է ձեռքերը, թե իբր մենք փորձեցինք ոճրի առաջն առնել՝ չկարողացանք, որովհետև անկարող էինք... Մի՞թե ընդունելի է, որ աշխարհի երկրների հետ բանակցությունների սեղանի մոտ գնացող մի Կառավարություն այսպիսի մտայնությամբ գնա: Ազգի և խորհրդարանի շահերից ելնելով՝ խիզախորեն անցյալի սխալներն ու աղետները խոստովանենք և քննենք... Բողոքի ձայն բարձրացնենք հանուն նրանց, որ անիրավորեն բնաջնջվեցին, երբ այս երկրի մեջ ապրելու իրավունքի անվերապահ տերերն էին: Այսօրվա քաղաքական կացությունը ա՛յս է պահանջում և ոչ թե կրոնական զգացումներից ելնելով...

ԻԼՅԱՍ ՍԱՄԻ - Դուք ակնարկում եք Մահմեդական Միությո՞ւնը... Ղուրանի հավատավորները նույնիսկ մեկ հայի քիթ չեն արյունել: Իսլամի զանգվածների տածած կրոնական զգացմունքները թույլ չէին տա...

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ (Ընդհատելով նրան) - Հոջան տեղյակ չէ՞, թե ինչ է Ջիհադը... Ամեն ոչխար իր ոտքից է կախվում. սա էլ թուրքերի շատ հետաքրքիր առածներից է: Հայերն են այս

բոլորի պատճառն ասելով՝ երբեք հեղինակություն չպետք է շահեք... Մենք ասելու ենք և պահանջելու ենք, որ հանցագործները պատժվեն... Հետամուտ պիտի լինենք, որ խոսքը գործի վերածվի հանուն Թուրքիո բարոյականության... Հոջա Սամի, հանուն Թուրքիո՝: (Նստում է):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսք ունի Տիգրան Պարսամյանը:

ՊԱՐՍԱՄՅԱՆ – Ես միայն մի փոքրիկ հավելում կավելացնեմ պարոն Մաթևոս Նալբանդյանի խոսքին: Պարոններ, մեր մեծարգո ընկերներից ոմանք իրենց դիտողագրերի մեջ հայերի կոտորածը ցույց են տալիս՝ մի մասը մեկ միլիոն, մյուս մասը՝ երկու միլիոն, իսկ հարգարժան մահմեդական ընկերները իրենց գրավոր և բանավոր խոսքերի մեջ պնդում են, որ նահատակների թիվը 100 հազարի է հասնում ընդամենը: Փաստելով կարող եմ ապացուցել, որ Սամսունի, Գարահիսարի, Տրապիզոնի, Կիրասոնի մեջ ջարդված հայերն արդեն 100 հազարից անցնում են: Մուշի, Բիթլիսի և դրանց հարևակից գավառներում ցարդ չարձանագրված վայրագություններ և բռնություններ գործադրվեցին: Մուշ քաղաքում թե՛ տեղացի, թե՛ դրսից՝ շրջակայքից, բերված անմեղ հայեր թնդանոթային ռմբակոծման ենթարկվեցին: Մնացածները լցվեցին եկեղեցիների մեջ և ողջ-ողջ այրվեցին: Այս ընդհանուր ջարդի հետևանքով այդ շրջանների բոլոր անշարժ և շարժական գույքը և ազգային ու կրոնական տեսակետից նվիրական նկատված վանքերի, եկեղեցիների մեջ պահված շատ հնավանդ առարկաներ, արժեքավոր իրեր կողոպտված են, բոլոր վանականները սպանված և բնաջնջված են: Այս ահավոր բռնարարքներից հետո, այստեղ-այնտեղ ցրված, կոտորակված բեկորները բռնի կերպով կրոնափոխ են եղել: Նրանց ինչ աստիճանի թշվառության մեջ գտնվելը՝ բոլորիս է հայտնի: (Թղթապանակից մի ուրիշ թուղթ վերցնելով) Արևելքից գաղթածների համար հատկացված միլիոնները ոչ միայն հայ մնացորդներին բաժին չեն հասել, այլ հայ բնակավայրերում թուրք գաղթականների բնակեցնելով, հայերին զրկում են իրենց գյուղերը վերադառնալու հնարավորությունից: Դարեր ի վեր հայերին պատկանող և օսմանյան սուլթանների կողմից հրովարտակային առանձնաշնորհումներով վավերացված իր նվիրական Հայրենիքը հանդիսացող Արևելյան նա-

հանգներում, կալվածքներում և հողերի վրա Կառավարական պաշտոնյաների կողմից ուրիշ մարդիկ են տեղավորվել: Իրենց հարազատ Հայրենիքում կատարված, ընդհանուր ջարդից ճողոպրած և ամենն տեսակ թշվառության մեջ իրենց գոյությունը քարշ տվող հայ ազգի մնացորդներին և հայ անհատներին պատկանող կալվածքներն ու հողերը իրենց հին տերերից խլելու և կողոպտելու հետամուտ բոլոր ձեռնարկումների դեմ բողոքում եմ և հարցնում Կառավարությանը. ի՞նչ է մտածում այս հարցի կապակցությամբ:

ՍՈՒՍՏԱՖԱ ԱՐԻՖ – Ես, որպես ներկա Կառավարության ներքին գործոց նախարար, պատասխանում եմ: Թե՛ Արևելյան նահանգներում և թե՛ խնդրո առարկա մյուս նահանգներում տեղական Արդարադատության Հանձնախմբեր են կազմված, որոնք պիտի քննեն խնդիրը: Գործը դյուրացնելու համար այդ վայրեր պիտի ուղարկվեն նաև հանձնախմբեր, որոնք բաղկացած պիտի լինեն մեկ դատախազից, նախադատական հարցաքննողից, Արդարադատության նախարարության պատկանող մեկ քննիչից, ինչպես նաև մեկ քաղաքական քննիչից:

ՆԱԽԱԳԱՀ – Զայնը տրված է Ռոդոսթոյի երեսփոխան Տիմիսթոքլի Էֆքալիտիսին:

ԷՖՔԱԼԻՏԻՍ – Պիտի հետապնդվի և քննվի այն հարցը նաև, թե ինչպես, որպեսզի հայ, այնպես էլ հույն բնակչության թվաքանակը և խտությունը նվազագույնի իջեցվի՝ համեմատած թուրք բնակչությանը, կիրառվեց արտաքսումի քաղաքականությունը: Որևէ երկրի որևէ վարչակարգ երբեք նման բան չի ձեռնարկել: Այս քաղաքականությունը ընդհանուր հանգամանք ստացավ՝ բացելով երեք տեսակ վերքեր այս երկրի մարմնի վրա: Ա. Երկրին այնքան ծառայություններ մատուցելուն հակառակ՝ հույներին ոչ միայն կողոպտեցին, այլև 500 հազար մարդ վտարեցին՝ զրկելով երկիրը 500 հազար մարդու արդյունավետ ու քաղաքակիրթ ծառայությունից: Ռ. Կառավարության կողմից չեթեները դիմեցին ավարառության, մարդասպանության, բռնաբարության, առհասարակ Քրեական Օրենսգրքի մեջ հիշված ամենն տեսակ ոճրագործ խայտառակությունների այն աստիճան, որ համայն մարդկության քաղաքակրթության դիմաց մեր երկիրը մատնվեց մի կացության, երբ դժվար է

պաշտպանվելը: Գ. Ընաջնջումի այն նպատակադրությունը իրականացնելու համար Կառավարությունը իր շուրջն հավաքեց նման ոճիրներ կատարող իրեն ձեռնտու տարրեր և նրանց միջոցով իրագործել տվեց իր մտահղացումը: Այսպիսով՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԴԵՊԻ ԱՆՊԱՐԿԵՏՈՒԹՅԱՆ ՄՂԵՑ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՋԳԱՑՈՒՄԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ ԵՂԱՎ: Հանրահայտ բան է, որ կառավարությունը հետապնդում է չեթեներին, այսինքն ավազակներին, նրանց ոճիրները արգելում է, կանխում և պատժարկման ենթարկում նրանց... Սակայն մեր Կառավարությունը չեթեներ կազմելով...

ՄԵՀՍԵՏ ԷՍԵՆ (Ընդհատելով) – Բուլղարիայում և Հունաստանում էլ նույնն են անում:

ԷՄՄԱՆՈՒԵԼԻՏԻՆ (Զայրացած) – Հունաստանում չեթեներ չկան:

ՀԱՍԱՆ ՌԻՋԱ – Ամեն պարագայում մի մահմեդական երեսփոխան Հունաստանում այսպես չէր կարող խոսել Խորհրդարանում: Անմիջապես դուրս կվռնդեին:

ԷՍՄԱՆՈՒԵԼԻՏԻՆ – Ախալ եք, փաշա: Ամբաստանում եք հույներիս:

(Աղմուկ: Ձայներ):

ԷՖԵՔԱԼԻՏԻՍ (Աշխատելով խլացնել աղմուկը) – Արտագաղթի, տեղահանության անվան տակ այս քանդելու և բնաջնջելու քաղաքականությունը գործադրվեց գյուղաբնակ հույների դեմ: Բայց, որովհետև մեր Ժողովը այս գործին միջամուխ պիտի լինի ներկայացված դիտողագրերի հիման վրա՝ Խորհրդարանին հղվեց նաև իբր թե *Լքյալ Գույքերի և Տեղահանվածների* մասին մի ենթագաղտնի օրինագիծ, որը պաշտպանում են հոջա Սամի Իլյաս էֆենդին, Ռիզա փաշան և այլ թուրք երեսփոխաններից շատերը: Դուք շատ լավ գիտեք, որ այս օրենքը արդարության սկզբունքը ոտնակոխ անող օրենք է: Եվ սակայն փորձում եք պաշտպանել: Էնվեր փաշան, երեք միլիոն հայրենիքի զավակներ զինվոր դարձնելով, չկարողացավ հաղթել թշնամուն, բայց հինգ-տասը չեթեներով երկու միլիոնանոց հայ ժողովրդին սպանդի ենթարկած, ոչնչացրած լինելու համար, իր պահված թաքստոցից պարծենում է... Իրականությունն այն է, որ ՄԵԾ ԱՂԵՏԸ արդեն տեղի է ունեցել և կառա-

վարությանը իր նոր կարևոր ծրագիրը մշակելիս պետք է հինը վերջնական սնանկացած հռչակի, ապա և արդարությանը հետևի, ոչ թե սուտ խոսքերով փորձի արդարացում շահել: (Ստում է):

ՆԱԽԱԳԱՀ – Խոսք ունի ակնավոր բանաստեղծ, միշտ թուրք պետական կյանքի մեջ իր մեծ դերն ունեցած Մուսուլի երեսփոխան Մեհմետ Էմին բեյը:

(Թուրք երեսփոխանները ծափահարում են):

ՄԵՀՄԵՏ ԷՄԻՆ (Դանդաղ, հանդիսավոր ելնելով նստած տեղից) – Ինչպես ցույց է տալիս թուրք ժողովրդի հերոսական դրվագներով և առաքինություններով առլեցուն իր վեցհարյուրամյա պատմությունը, այս ազգը ոչ թե օգնեց բռնակալներին, այլ տեր և պաշտպան կանգնեց հալածվածներին: Կենտրոնական Ասիայի թուրքական Թյանշան լեռնաշղթաներից հեռանալուց ի վեր, Անատոլու և Իստամբուլի նեղուցների ափերին գահեր բարձրացրած ժամանակներից ի վեր, Արևելքի ու Արևմուտքի մեջ իրավունք և ճակատագիր տնօրինելու վեհաշուք օրերից մինչև այս վերջին աղետի և դժբախտության օրերը թուրք ազգը իր ազգային նկարագիրը չի կորցրել: Ո՛չ: Թուրքերի Թուրֆանի, Սամարղանդի, Հնդկաստանի, Չինաստանի, Բուրսայի, Կոնիայի, Իստամբուլի և առհասարակ հայկական Արևելքի մեջ ստեղծած արվեստի և քաղաքակրթության կոթողները, մզկիթները, գրադարանները, դպրոցները, աղբյուրները, իջևանները, ճանապարհները, նաև բարեպաշտական խոհանոցները ցույց են տալիս, որ թուրքերը միշտ խղճացել են տուն ու տեղ չունեցած պանդուխտներին, նույնիսկ հալածված ազգերին, որոնց տեղ է տվել իմ Թուրքիո երկրի մեջ ապաստան ապահովելով: Ահա, հայերը և հրեաները այս ազգերից են, որոնց թուրքերը *Թուրքական Հայրենիքում* տեղ են տվել: Արդյոք թուրքի այս հնամյա առաքինությունը անգո՞ է: Ո՛չ, պարոններ, թուրքը այսօր էլ նո՛յնն է: Անգութ ձեռքերը նրա ոսկորները ջախջախել են, միսը պոկոտել, յուղը հալեցրել, մարմինը տկարացրել են, սակայն իր ազգի մեջ ապրող աստվածային և նվիրական ոգուն չեն կարողացել դիպչել...

ԹՈՒՐՔ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐԻ ՁԱՅՆԵՐ Բրավո՞... Բրավո... ապրե՞ս...

ՍԵՀՄԵՏ ԷՄԻՆ – Թուրքն այսօր էլ, ցուլի նման հուժկու լինելով հանդերձ, ոչխարի չափ անմեղ և խաղաղ է: Իր հարազատ եղբայրների հետ սիրով կապված լինելով հանդերձ՝ օտարների հանդեպ անսահման գթասիրտ է: Նրա՝ ստորության անընդունակ սիրտը, նրա՝ չարագործություններ հղացող անընդունակ գլուխը, իր ուղղամտությունը անկարող են իր ճակատի քրտինքով շաղախած հացը այլամբ եղծել: Որով իբրև եզրակացություն պնդում եմ, որ բռնություններն ու հարստահարությունները անհարիր են թուրքերի նկարագրին: Չարագործությունները թուրք ազգի ոգուց, թուրք ազգի սրտից, թուրք ազգի խղճից, թուրք ազգի գաղափարներից բխող չարագործություններ չեն:

ԹՈՒՐՔԵՐԻ ՁԱՅՆԵՐ – Բրավո... Ճիշտ է... Ապրես...

ՍԵՀՄԵՏ ԷՄԻՆ – Գալով թուրք ազգայնականությանը (ժպտում է միամիտ, անմեղ)... Ո՞ւմ շնորհիվ դարձան նրանք ազգայնական... մեր հույն հայրենակիցները իրենց հին վանքերի մեջ գործող քարոզիչներից և դպրոցների ուսուցիչներից իրենց ներշնչումներն առան Հոմերոսի «Իլիականից», որոնք երգել էին տալիս իրենց տղաներին և աղջիկներին Մարմարա և Էգեյան ծովերի ափերին: Մեր հայ հայրենակիցները իրենց Խրիմյաններով, Ներսեսներով, Գամառ Քաթիպաներով, Աբովյաններով ու Նալբանդյաններով միշտ հրահրել են իրենց մանուկների մեջ ազգայնականության կրակը: Երազային հայացքներով Հայկի որդիների մտածումները Արարատ լեռան կողմն են շրջվել: Արաբ եղբայրները տգիտության իրենց շրջանի Մեքքայի տաճարից կախված բանաստեղծություններով գրգռեցին իրենց ազգային ոգին: Բեդվիններն այս ոգին անապատից անապատ էին տեղափոխում: Ալբանայի եղբայրները՝ Շեմշեդին Սամիներով, Թիմուրի լեռնականները իրենց Իսքենդեր-Նամն դյուցազներգությամբ նույնպես ազգայնամոլ ոգին են բարձրացրել: Այս բոլորին ի տես թուրքը անմաս չէր կարող մնալ: Եվ չմնաց էլ... Վերջապես նա էլ իր սրտի մեջ դող զգաց, իր մտքի փայլակը լուսավորեց, նա էլ իր անցյալի մութ ծալքերի ավերակների մեջ, գիտնականների պեղումներից հանված գանձերի իր պատմությունը որոնեց և իրագեկ եղավ իր կյանքին, իր ցեղի սերը և երազները երգող բանաստեղծների տաղերի

մեջ գտավ իր ոգին և տեսավ ապագան: Հո՞ւր և երկա՞թ: Ո՛չ, պարոններ, ինչպես ամեն ազգ, թուրք ազգն էլ խիղճ ունի, բարոյականություն ունի, արդարամտություն ունի, կարեկցություն ունի, պատմություն ունի, մարդկություն ունի: Աստված ունի: Մենք գիտենք, աշխարհում տիրական հանդիսացող ուժը՝ իրավունքն է: Բայց աշխարհը սրով նվաճելու փոխարեն խղճով պետք է նվաճել, սիրով ներգրավել. սա ավելի մեծ ու հավիտենական հաղթանակ է: Հապա, ես էլ ձեզ նման հարց եմ տալիս. այս չարագործությունները անողներն ովքե՞ր են: Թերևս նրանց մեջ թուրքի անուն կրողներ կան... Սակայն այդպիսի մի քանիսը չեն կարող թուրք ազգը վարկաբեկել:

ԹՈՒՐՔԵՐԻ ՁԱՅՆԵՐ – Բրավո... Ապրես... Ճիշտ է...

ՄԵՀՄԵՏ ԷՄԻՆ Ահա, հայտարարում եմ. այդ չարագործները ովքեր էլ որ լինեն, թեկուզ իմ հարազատ զավակը, ես այս Ժողովի մեջ նրանց դատախազի դերը պիտի կատարեմ: Ուրեմն, հալածվածները միայն մեր հույն, արաբ, հայ եղբայրները չեն, նրանց կողքին թուրք շատ կեղեքվածներ կան:

ԹՈՒՐՔԵՐԻ ՁԱՅՆԵՐ – Ավելի շատ... Մենիմետ, փաշա, ավելի շատ... Թուրքերն ավելի շատ...

ՄԵՀՄԵՏ ԷՄԻՆ – Եվ եթե թուրքի արյունը վարդի ջուր չէ, եթե Բարձրյալ Աստծո շնորհած կյանքին որևէ մեկը դիպչելու իրավունք չունի, եթե թուրք աղջիկները մատակներ չեն, եթե բոլոր թափված արցունքների, արյունների հաշիվը պահանջող մարդկությունը քաղաքակիրթ է և իրավախոհ, ուրեմն արդարության կշեռքի նժարի վրա դրվելիք թուրքի կրած կեղեքումները, թուրքի տված հարցերը, թուրքի պահանջները և թուրքի իրավունքները ծանր են լինելու:

(Թուրքերի փոթորկային ծափահարություններ):

ԹՈՒՐՔԵՐԻ ՁԱՅՆԵՐ – Բրավո... Բրավո...

ՄԵՀՄԵՏ ԷՄԻՆ – Ես այս պահին տեսնում եմ հերոսաբար ընկած զինվորներին, նրանց անտերացած ազգականներին... Տեսնում եմ կտրված գլուխների, ջարդված իրանների վերակենդանանալը... Շրջած աչքերով, կողպված բերաններով նրանք նայում են ինձ... Տեսնո՞ւմ և նրանց աղաղակն եմ լսո՞ւմ. արդարությո՞ւն... արդարությո՞ւն... հայ հայրենակիցներ, դուք էլ, ի տես այս արյունոտ ցույցի և երկյուղալի աղա-

դակների, ինձ նման չե՞ք դողում այս մարդկանց դեմ կատարված վայրագությունների հեղինակ հայերի՛ գործերից և ինձ նման չպիտի պահանջեք նրանց պատիժը: (Ծաղրով) Արդարև հայ ազգի քարոզիչները կարեկցության և գթասրտության մարգարե մեծապատիվ Հիսուսի ներկայացուցիչներն են: Այս ազգի բանաստեղծները իրենց ոսկյա նվագարաններով արդարության գովքը հյուսող երգիչներ են: Ես այս ազգը ճանաչում եմ: Սա մի ազգ է, որ արյան, արցունքի, կեղեքումի ինչ լինելը գիտե, որով, պարոններ, հանուն այս հարգարժան, կեղեքված, տառապանքների ներկայացրած դատի կողքին՝ դնում եմ նաև հալածված թուրքերի դատը և մեծապատիվ Կառավարությանը հարց եմ տալիս. ի՞նչ է ձեռնարկում այս ուղղությամբ:

(Թուրք երեսփոխանների խելահեղ ծափահարություններ):

ՀԱՍԱՆ ՌԻԶԱ (Արցունքները սրբելով) – Պարոն նախագահ, ժողովի կանոնագրի առնչությամբ առաջարկ ունեմ: Մեր սիրելի բանաստեղծ, մեծարգո Մեհմետ Էմին էֆենդիի արտասանած ճառը վաղը հրատարակելու և հրապարակելու խնդիրը քվեի դրվի:

ԷՍՍԱՆՈՒԵԼԻՏԻԵ – Արդարև ինչ դառնակսկիծ ճառ... Որքան գեղեցկորեն նկարագրվեց Օսմանյան ազգի թշվառ վիճակը... Բայց կարծեմ, բանաստեղծ էֆենդին ստիպված պիտի լինի ուսումնասիրել այն հարցը, թե խեղճ, թշվառ թուրք ազգը ինչպե՞ս հասավ այդ վիճակին...

ՊԱՐՍԱՄՅԱՆ (Գրեթե շշուկով, կարծես սոսկալի ստի առջև ծայրաստիճան անզոր գտնվելու պատճառով) - Քանի որ մեծարգո բանաստեղծ էֆենդին Տրապիզոնի երեսփոխանն էր նաև պատերազմի ընթացքին և պատերազմից առաջ, արդյոք չի՞ պարզաբանի այն հարցը, թե Սև ծովի ջրերի մեջ 10 հազար հայ, երբ ջրամույն արվեց սառնասրտորեն, առանց աչք թարթելու, ովքե՞ր այդպես արեցին և ո՞ւմ արեցին... Արդյոք 10 հազար մարդը թուրքե՞ր էին, որ կեր դարձան Սև ծովի շնաձկներին և այդ 10 հազար խեղճ թուրքերին մայր ու մանուկով հայ հեղափոխականները ջրահեղձ արին:

(Ծանր լռություն):

ՊԱՐՍԱՄՅԱՆ (Հազիվ արցունքները զսպելով) -- Մեծարգո բանաստեղծ էֆենդին ինչո՞ւ չի պատասխանում...

ՊՈՇԿԵՋԵՆՅԱՆ – Որովհետև գիտե Տրապիզոնի երեսփոխան մեծարգո բանաստեղծ էֆենդին, որ Տրապիզոնի նահանգի կուսակալ ՋԵՄԱԼ ԱԶՄԻՆԻ հրամանի համաձայն Սև ծովի ափին Սամսուն և Տրապիզոն քաղաքների միջև գտնվող Օրտու Գազայի նավահանգստից հայերը լցվեցին նավակների մեջ և, տարվելով ծովի բացերը, թափվեցին այնտեղ... մայր ու մանուկ, ջահել ու ահել... Թուրքերն՝ հայերին, բանաստեղծ էֆենդի... Ոչխարի չափ անմեղ ու խաղաղ թուրքը, ինչպես կերկերաձայն արտահայտվեցիր... Առաքինի թուրքը, որի սրտի մեջ աստվածային ոգին և խիղճն են ապրում, 10 հազար հայ... մայր ու մանուկ... ջահել ու ահել... Սև ծովի խոր ջրերի մեջ... 10 հազար անմեղ... (Որպեսզի հանկարծ չհեկեկա՝ դադարում է խոսել):

ՍՆՀՍՆԵՏ ԷՍԻՆ (Զայրացած) – Ջեմալ Ազմինը մեկն է իր երեք-հինգ ավազակներով... Թուրք ազգը չէ... Ի՞նչ է, հիմա այդ մի քանի հոգու համար ամբողջ աշխարհի առջև Տրապիզոնի համայն թուրքերին մեղավոր համարե՞նք... Պարոն նախագահ, ես կարծում եմ, որ մեր հայ հայրենակիցները չափազանցված հայտարարություններ են անում...

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Հայտարարությունը դեռ չի եղել: Հաջորդ նիստին կլինի դիտողագրի ձևով, որպես վավերացված փաստաթուղթ... Ոչ միայն տրապիզոնյան չարագործության վերաբերյալ, այլ Հայաստանյան բոլոր գավառների մեջ տեղի ունեցած ոճիրների մասին, որին ենթարկվեց հայ ժողովուրդը: (Հանկարծ կորցնելով հավասարակշռությունը) Երեք-հինգ հոգով տասը հազար մարդ ծովի խորքերը թափել կլինի՞, մարդ Աստծո... Իրո՞ք, հավատում եք ձեր ճառի բովանդակությանը, որն այստեղ զգայացունց կերպով ներկայացրիք...

(Նորից սարսափելի իրարանցում է տիրում: Աղմուկ, աղաղակ, ձեռքերի թափահարում, ոտքերի դոփում...):

... Թող դեռ հիստերիկ ու տգեղ աղաղակեն Թուրքիո Խորհրդարանի ա՛յս Ժողովի թուրք երեսփոխանները: Թող դեռ

արաբ, հույն, հայ երեսփոխանները միմյանց շուրջ հավաքված խորհեն իրենց հետագա քայլերը՝ ճշմարտությունը հաստատելու համար... Իսկ ես ու դու, իմ պատանի բարեկամ, փորձենք հասկանալ մեծ, ահռելի ՍՏԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Ոճրագործը, սահմռկած ոչ թե իր ոճրի ահավորությունից, այլ գիտակցելով, որ մատնված է անել վիճակի, մասամբ էլ գիտակցելով զոհի անզորությունը, փորձում է ՁՈՀԻՆ դարձնել ԴԱՀԻՃ: Այս բանաստեղծ կոչված մարդը, անշուշտ դերասանության հմայքին տրված ուզեց, բոլորի աչքերին թոզ փչելով, հաղթել... Այս մարդը Հայոց Եղեռնի զոհերից փոխհատուցում պահանջեց... Պատժե՛լ պահանջեց զոհերին... Անիրականը, կեղծը շպարել որպես իրականություն... Հայոց ցեղասպանության ողբերգությունը պատերազմի ժամանակամիջոցին թուրքերի կրած տառապանքների կորուստների հետ զուգակցել... Արտառոց, եթե ոչ՝ նենգապատիր մտածելակերպի եզակի նմուշ... Այս մարդու արտակարգ համարումը թուրք ազգի հանդեպ և նրա առաքինությունների հաճախակի նշումը իր ճառում, մտածել է տալիս, թե սա արդյոք գիտե՞ իր ազգի պատմությունը: Այս բանաստեղծը արդյոք լրջորեն քննարկե՞լ է Թուրքիայի անկումի պատճառները, նրա ներքին ապականության ազդակները, արյունռուշտ կառավարիչների ու գահակալների սայթաքումները: Որքա՞ն ծիծաղելի են թրքության հանդեպ իր պատրանքները... Եվ հանուն այդ զգացումների հայտարարել, թե հայերի դեմ չարագործություն անողները իրենք՝ հայերն են...

1918 թվականի նոյեմբերին կայացած պատերազմում պարտված Թուրքիայի Խորհրդարանի այս ժողովը հայ պատգամավորների վերջին մասնակցությունն էր Խորհրդարանի աշխատանքներին: Ես ուզում եմ Մաքնոս Նալբանդյանի վերջին խոսքն ամբողջությամբ շարադրել, չնայած պիտի լսես այն, ինչ գիտես արդեն: Բայց դու փորձիր պատկերացնել Խորհրդարանում տիրող մթնոլորտը, այն ծանր հակամարտությունը, որ կար մի կողմից թուրք և մյուս կողմից հայ, հույն, արաբ պատգամավորների միջև: Շուտով Թուրքիան եվրոպական երկրների հետ նստելու էր բանակցությունների սեղանի մոտ և անշուշտ կցանկանար այնտեղ հանդես գալ, որպես ան-

մեղ զոհ... Իսկ, ահա, հայ երեսփոխանները, որ չգիտես ինչ տրամաբանությամբ են ողջ պրծել ջարդից, փորձում են Թուրքիո Խորհրդարանին և Կառավարությանը դնել անելանելի վիճակի մեջ: Պիտի հաջողվե՞ր արդյոք սրանց՝ այս հայերին, աշխարհի առջև Թուրքիային խոստովանել տալ իր ՈՃԻՐԸ:

Երբ վերջապես Նախագահին հաջողվում է խաղաղեցնել ժողովականներին Մաքսոս Նալբանդյանը ոտքի է կանգնում:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Պարոններ, խնդրո առարկա նյութը այսօր համայն մարդկությանը զբաղեցնող նյութերից ամենից կարևորն է: Այս պատճառով խնդրում եմ Ժողովից, որ այստեղ ասված խոսքերը զգուշությամբ և շրջահայացորեն ձևավորվեն: Ազգությունների հարցը այս երկիրը երկար ժամանակ է զբաղեցրել: Եվ պատճառ է դարձել շատ սոսկալի դեպքերի: Ես՝ իբրև Հայ ազգին պատկանող մեկը, պիտի արտահայտվեմ ոճիրների շղթայի մի շարք փուլերի մասին: Այն պահին, երբ հորինվեց «Տեղահանության օրենքը, ջարդի օրենքը»՝ նույն պահին Հայ Ազգի բոլոր մտավորականները Անատոլուի խորքերը քշվեցին և ոչնչացվեցին: Անատոլուի նահանգների մեջ բնակվող հայերը դեպի հարավ ուղարկելու պատրվակի տակ՝ բոլոր ճանապարհներին կոտորվեցին: Որտեղից անցան հայ բռնագաղթվածների քարավանները, այնտեղ վերածվեց գերեզմանոցի: Հայ ժողովուրդը իր մեծով ու փոքրով, իր կաթնակեր ձագուկներով Սև ծովի բացերը, Եփրատ ու Տիգրիս գետերի հոսանքների մեջ թափվեցին... Պարոնայք, բոլոր ժամանակների Ներոնների գործած բոլոր ոճիրներն ու չարագործությունները ոչինչ, անմեղ բաներ են այս վայրագությունների հանդեպ: Հայոց ազգի հնադարյան կրոնաշունչ հաստատությունները և նրանց պարունակությունները քանդվեցին, փշրվեցին և ավերի տրվեցին: Ազգային առաքինությունների հետ ազգային հարստությունը կործանվեց, թալանվեց... Իմ աքսորի մահավճիռը նույնպես եկել էր և ես բոլորի հետ ճամփա ընկա դեպի... Ինչե՞ր տեսա ես այդ ճանապարհներին. մահերի այլազան տեսակներ, խելքից մտքից դուրս չարչարանքների բաց գերեզման-

ներ... Ազգի մեռած Ոգի, ազգի հանգած բարոյականություն... Ինձ հաջողվեց ապրել. ինչպե՞ս... ինչո՞ւ... չգիտեմ... Բայց մի ազգ բնաջնջելու տարողություն ունեցող այս ոճիրը կատարվեց: Հանցապարտները ովքե՞ր են. շա՞տ են, քի՞չ են, ես նրանց քանակ և սահման չեմ կարող որոշել... Բայց ամեն ազգ, որ գտնվում է ուրիշ ազգի տիրապետության տակ, ինչպես հայ, հույն, արաբ, քուրդ, որ գտնվում ենք թուրք տիրապետության տակ՝ Ազգային մարմին ենք հիմնում, որն իրավունք է ստանում տվյալ ազգի անունից խոսել Կենտրոնական իշխանության, այսինքն տիրող իշխանության հետ: Այս երկրի մեջ թուրքական իշխանությունն է: Ուրեմն իրագործված գոյումները թրքության անունով թուրք իշխանության կատարած գոյումներն են: Նա՛ էր երկրի անպարփակ տերը: Էմին էֆենդի, ասում եք, որ չարագործները երեքից հինգն են... Բայց ինչպե՞ս երկու միլիոնանոց ժողովուրդ սպանդի ենթարկողները կարող էին երեք ու հինգ լինել... Եղեռնին մասնակցած բոլոր գավառների կառավարիչները պարծանքով կոկորդ էին պատռում, թե իրենց մեծ իրավունքներ է տրված... Որ իրենք գործում են թուրք հզոր տիրապետության վրա հենված, որ իրենց ուժը բխում է թուրք ավիններից: Սա չեք կարող ուրանալ: Չեք կարող ուրանալ և այն, որ թուրք ազգին պատկանողները կատարեցին ազգասպանությունը: Ահա, ասում եմ. հանրային կարծիքը և զոհյալ ազգի կենդանի մնացորդները այս բոլորի հաշիվը պիտի թուրքերից պահանջեն և թուրքերը այդ հաշիվը պիտի տան: Բանաստեղծ էֆենդի, ասում եք, որ դուք՝ թուրքերդ եք զոհերը: Անշուշտ թուրքերն էլ են զոհվել, սա իրողություն է: Բայց թուրքերը իրենց սահմանները պաշտպանելիս զոհվեցին: Հայերը անասունների պես քշվեցին և սպանվեցին: Այս երկրի մեջ Օսմանյան թուրք Մահիկի դրոշն է ծածանվում: Այդ դրոշի փառքը ընդունել՝ չի նշանակում այս կսկծալի արարքների պատասխանատվությունը թոթափել:

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ (Զայրացած վեր թռչելով տեղից) – Հերիք է, վերջապես: Սրանք մեզ արտնեղության են պատճառում: Փոխանակ թողնելու, որ ագանք մեր փառապանծ հայրենիքի մեծ թախիծը, մեր սեփական նահատակների կորուստը և մտածենք նրա ապաքինումի մասին, քանդիչ քայլերի են դիմում՝ իրենց

դիակների մասին խոսելով: Հերիք է, այս ազգերի հետ կապված հարցերը պիտի հետաձգել մինչև մեր հայրենիքի այսօրվա աղեխարշ վիճակը բարելավվի և վերքերը ամոքվեն:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Ոճի՛րն ենք ուզում պարտակել:

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ – Կխնդրեմ, պարոն, խոսքս մի կտրիր... Նույնիսկ Մահմեդական միությունը, իսլամի սրբազան կրոնը փորձեցիք մեղադրել: Ինչո՞ւ Կառավարությունը ստիպված տեղահանության գործընթացը կատարեց... Պատճառը հայտնի է... Որովհետև հայերը աջակցում էին ռուսներին, որոնց դեմ կռվում էր փառապանծ հայրենիքը: Հայ կամավոր չեթեճիները չէի՞ն ռուսաց զորքերի մեջ: Նրանք լափեցին մեր թուրք եղբայրներին, լափեցին: Եվ հիմա փոխհատուցումը թուրքը պիտի պահանջի և ոչ թե հայը կամ հույնը:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ – Ժամանակները խառնում ես, հոջա էֆենդի, և դեպքերն ես խառնում: Լավողները հայ կամավորները չէին, որ գենք էին առել պաշտպանելու համար սպանդի տրվող հայրենակիցներին... Նորից թուրքական առածն ասում է. մահվան ուղարկվող մեկը անշուշտ թևերը պիտի թափահարի:

ԻԼՅԱՍ ՍԱՍԻ (Հիստերիկ, ինքն իրենից վերջնականապես ելած) – Հերիք է... Չեմ ուզում խոսել... Երկու օր է վիճաբանում ենք, օգուտը ինչ է...

ՆԱԽԱԳԱՀ – Հանգստացեք, վերջապես, պարոններ, ժամանակն է, որ վերադառնանք մեր գլխավոր նյութին: Ներկա երկու նախարարները՝ Պետական Խորհրդից, և Արտաքին Գործերի նախարարը այսօր չեն եկել Խորհրդարան, որ լսեն երեսփոխանների փոխադարձ մեղադրանքները: Եկել են Խորհրդարանից խնդրելու, որ Կառավարությանը վստահության քվե տրվելու հարցը քննվի և ոչ թե Հայկական Հարցը դառնա վիճաբանության առարկա: Խնդրեմ, ով կողմ է նոր կազմված Կառավարությանը և նրա գործունեության օրինագծին վստահության քվե տալուն, թող բարձրացնի ձեռքը:

(Թուրք երեսփոխանները ձեռքերը բարձրացնում են, հայ և հույն երեսփոխանները՝ ոչ):

...Ի՞նչ է ՈՃԻՐԸ, երբ այն դառնում է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ... Երեսփոխանական Ժողովի այս նիստերը պիտի՞ պատասխանեին այս հարցին, որ հարց լինելուց առաջ էության մեջ պատեպատ զարնվող ճիչ է: Ո՞չ... երեսփոխանական այս ժողովը Թուրքական Խորհրդարանում միայն մի կարևոր հանգամանք ուներ: Առաջին անգամ թուրք երեսփոխանները և նախարարները ստիպված էին դիմադրել ուղղակի կերպով իրենց դեմ եղած տեղահանության և ջարդի մեղադրանքներին... Սակայն, միաժամանակ, դերասանի վատ արվեստով, փորձեցին անմեղություն խաղալ: Ուրիշ ինչպե՞ս. երեսփոխանական ժողովին նստածներն ովքե՞ր էին. իթթիհաթական կուսակցության նվիրյալ անդամները և նրա արյունալի ջատագովները: Ո՛չ բոլորը, սակայն՝ մեծամասնությունը: Իսկ նրանք, որոնք անդամ չէին այդ կուսակցության, համակիրներ էին, քանզի թուրք էին: Եվ եթե չլիներ Թուրքիո պարտությունը, չլիներ հաշտության ծանր պայմանների ուրվականը, Ժողովը երբեք չէր հանդուրժի հույն, արաբ և հայ երեսփոխանների նման պահվածքը:

1918 թվական: Թուրքերը պարտվել էին, հայերը՝ ջարդվել: Բայց ոճիրներով և հատուցումներով լի ժամանակը դեռ լի էր անսպասելի շրջադարձերով, ինչպես համոզվեցիր նաև ինքդ, իմ պատանի բարեկամ...

Ես անընդհատ ետուառաջ եմ քայլում 1915–1922 թվականները ընկած ժամանակահատվածի միջև՝ չկարողանալով տեղաբաշխել դեպքերը ըստ հաջորդականության, որովհետև այդ դեպքերը, որ կատարվում էին, կարծես բնավ կապ չունեին ժամանակի և տարածության հետ:

Ես հասա 1922 թվականի դռներին, նորից ետ եկա պատմելու համար առճակատումի մասին, որը տեղի ունեցավ 1918թ. նոյեմբերին, պատերազմից հետո առաջին անգամ հրավիրված թուրքական Խորհրդարանում՝ հայ և թուրք պատգամավորների միջև:

Հիմա մի քանի խոսքով պիտի պատմեմ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ մասին, որն հետևեց Խորհրդարանի այդ ժողովին:

Սկզբում եվրոպական պետություններին ձեռնտու էր Կովկասում տիրող վիճակը և թուրքերի այնտեղ ծավալած ռազ-

մական գործողությունները: Նրանք պատերազմում հաղթելու դեպքում Կովկասն ստանալու էին առանց որևէ դժվարության:

Բայց հաղթել էր Ռուսական հեղափոխությունը և նրա դաշնակիցները հայտնվել էին հակառակ կողմում: Եվրոպական պետություններին անցանկալի էր Ռուսական հեղափոխության ծավալումը Կովկասում: Այս դեպքում թուրքական բանակի խժդժությունները նպաստում էին հեղափոխության հաղթանակին նաև այստեղ: Կովկասի ժողովուրդներին բոլշևիկյան Ռուսաստանը խաղաղություն էր խոստանում, և անշուշտ այդ ժողովուրդները պիտի ցանկանային ձեռք բերել այդ խաղաղությունը:

Բայց, միևնույն է, անկախ այն բանից, որ քեմալականները դեռ շարունակում էին Արևելյան Հայաստանում կռվել հայերի դեմ՝ թուրքերը պարտվել էին: Նրանք շուտով պիտի հաղթողների հետ նստեին բանակցությունների սեղանի մոտ:

Երկերեսանի ու կեղծավոր եվրոպական պետությունների ղեկավարները, այնուամենայնիվ չէին կարող չլսել իրենց երկրների առաջադեմ խավի ձայնը, որը պահանջում էր Թուրքիայի հետ խաղաղության պայմանները քննելիս, չմոռանալ, որ թուրքերը երկու միլիոն հայերի սպանդի են ենթարկել: 1918թ. թուրքական Խորհրդարանի նոյեմբերյան ժողովներում ներկայացված հույն, արաբ և հայ երեսփոխանների դիտողագրերը նույնպես պնդում էին հայաջինջ ճիվաղներին պատասխանատվության կանչելու անհրաժեշտությունը:

Թուրքիան ցանկանում էր հաղթողների առջև անմեղ և անտեղյակ երևալ բոլոր այն ոճիրներից, որոնք նա կատարել էր:

Նրա նոր Կառավարությունը որոշեց. Օսմանյան կայսրությանը պատերազմի մեջ ներքաշելու և հայերին բնաջնջելու համար դատական պատասխանատվության ենթարկել մեղավորներին: Եվ 1919 թվականի մարտի 8-ին Նորին մեծության սուլթանի կայսերական հրամանով կազմվեց Ռազմական Արտակարգ ատյան:

Այդ հրամանից քիչ առաջ նույն այդ սուլթանի կամքով, Մուստաֆա Քեմալը կազմավորել էր թուրքական նոր հաղթական բանակ և արշավել Կովկաս: Եվ այնտեղ, մուսավաթական

Ադրբեջանի ու Խորհրդային Ռուսաստանի հետ համատեղ՝ նորից նոր բզկտում էին Արևելյան Հայաստանը:

... Թուրքիո դատավորները նստեցին իրենց բարձր գահերին, որպեսզի պատասխանատվության կանչեն և դատեն *«Միություն և Առաջադիմություն»* կուսակցության կենտրոնական կոմիտեին և մեջլիսի գլխավոր Խորհրդի՝ փախուստի մեջ գտնվող անդամներից նախկին մեծ վեզիր Թալեաթ փաշային, զինվորական շարքերից վտարված նախկին ռազմական նախարար Էնվեր էֆենդիին, նախկին ծովային նախարար Ջեմալ էֆենդիին, հանրակրթական նախկին նախարար դոկտոր Նազըմ բեյին, դոկտոր Բեհաէդդին Շաքիր բեյին, դոկտոր Ռուզուի բեյին, նախկին հասարակական անվտանգության տեսուչ Ազիզ բեյին՝ երկիրը պատերազմի մեջ ներքաշելու, ապա *«Հատուկ կազմակերպության»* հետ սերտ առնչություն ունենալու և այլ հանցագործություններ կատարելու համար:

Սրանց դատեցին հեռակա կարգով, քանի որ գտնվելով փախուստի մեջ՝ չներկայացան դատարան: Դատարան չներկայացան նաև *«Միություն և Առաջադիմություն»* կուսակցության նախագահ Սայիդ Հալիմ փաշան, որը նաև Թուրքիո նախկին վարչապետն էր, Մեջլիսի՝ խորհրդարանի գլխավոր անդամներ Իբրահիմը, Ծյուքրին, Խալիլը, Զիա Գյոք Ալփը... և այլք... և այլք...

Կային նաև դատավարությանը ներկա հանցագործներ:

Մանրամասն քննարկվեցին հարցաքննությանը վերաբերող փաստաթղթերը, որոնք վկայում են, որ *«Միություն և Առաջադիմություն»* կուսակցության կենտրոնական կոմիտեն իր գաղտնի ծրագրերը իրագործելու համար, հանցագործներին բանտերից ազատ արձակելով, ստեղծեց *«Հատուկ կազմակերպությունը»*, որն իր գաղտնի հրահանգներն ու հրամանները ստանում էր Ստամբուլում ստեղծված հատուկ կոմիտեից:

Հետաքննությունից կարևոր գրությունների միջոցով պարզվեց, որ *«տեղահանման հիմնական նպատակը հայերի ոչնչացումն էր»*:

Փաստաթղթերից և վկաների տված ցուցմունքներից պարզվեց, որ...

Բայց ինչո՞ւ կրկնել այս ամենը նորից: Ինչո՞ւ մեկ-մեկ մատնանշել ժողովուրդ սպանած ճիվաղների հանցանքները: Բավարարվենք՝ ասելով միայն, որ անմիջական իրենց հեղինակությամբ կատարած ոճրագործությունների համար մեղադրվող Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Նազիմը, Բեհաէդդին Շաքիրը, Տրապիզոնի դահիճներ Ջեմալ Ազմին, Նայիլին Կայսերական քաղաքական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին կետով, 170 և 171 հոդվածների հիման վրա հեռակա կարգով դատապարտվեցին մահվան:

Բայց դեռ կային մյուսները. Հալիմ փաշան՝ վախկոտ ու ստոր մեծ վեզիրը, որն իր ձայնը միացրեց Հայոց եղեռնը իրագործողների ձայներին: Սրա հետ նաև նախկին նախարարներ, Խորհրդարանի երեսփոխաններ, կուսակալներ... Դեռ կային Աբբաս փաշան, շեյխ-ուլ-իսլամ Հայրի էֆենդին, Ահմեդ Նեսիմին, Խալիլ բեյը, Ալի Մյունիֆ բեյը, Շյուքրի բեյը, Քեմալ բեյը, Իսմայիլ Ջամփոլադ բեյը, նաև կալանքի տակ գտնվող ուրիշ յոթանասունյոթ մեղադրյալներ, որոնք չգիտես ինչպես, ի՞նչ հնարով անհետացան, երբ ապացուցվել էր նրանց հանցագործ լինելը...

Այդ օրը դատական նիստին քարտուղարը ընթերցեց մի փաստաթուղթ, ըստ որի *«... դատաքննության համար պահանջվող անձերը մայիս ամսի 28-ին, չորեքշաբթի օրը, ժամը 2ն-ին հանձնվել են անգլիական հրամանատարության կողմից ուղարկված մի մայորի տրամադրության»*: Գրությունը ստորագրել էր Ստամբուլի կալանատան տեսուչ Սայիդը:

Բանտում կալանքի տակ գտնվող Սայիդ Հալիմ փաշան և նրա մյուս գործընկերները Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ներկայացուցչության կողմից տարվել էին անհայտ ուղղությամբ: Եվ նկատի ունենալով, որ Հալիմ փաշան և մյուս վերոհիշյալները անկախ իրենց կամքից չեն կարող ներկայանալ դատարան, նրանց հանդեպ հարուցված դատաքննությունը... կարճվե՛ց:

Ոչ... Բրիտանացիները նրանց անհայտ ուղղությամբ չէին տարել: Ստամբուլի կալանատնից նրանց տեղափոխել էին Մալթա կղզին: Դաշնակիցները չուզեցին հանցագործներին դատարանով պատժել... Երկերեսանի անգլիացիները յո-

թանասունյոթ նախարար ու բարձր պաշտոնյա դահիճներին առոք-փառոք տեղավորեցին Մալթա կղզում, իբրև *«աքսորյալներ»*, բայց որոնք կերան, խմեցին, հղփացան և մեկ-մեկ գործիքներ դարձան Անգլիայի ձեռքին՝ նրա քաղաքական և տնտեսական շահերը Թուրքիո տարածքում ապահովելու համար...

Բայց դեռ էլի կային... Մյուսները: Որոնց հաջողվեց բերել Դատական Ատյան:

Նախկին շեյխ-ուլ-իսլամ Մուսա Քյազիմը, որը Ջիհադի՝ սրբազան պատերազմի կոչ արեց հայերի դեմ, դատապարտվեց 15 տարվա բանտարկության:

Հարկային տեսուչ Մահմեդ Ալին, ոստիկանապետ Նուրին, գաղտնի ոստիկանության գործակալ Մուստաֆան, իրենց պաշտոնավարության ժամանակ կանանց նկատմամբ գործադրված պղծությունների և բռնությունների, ինչպես նաև հայերի ունեցվածքի թալանի և հափշտակության համար, բոլոր տեսակի չարաշահումների և դաժանության համար դատապարտվեցին 10 տարվա բանտարկության:

«Միություն և Առաջադիմություն» կուսակցության Էդիրնեի քննիչ Աբդուլ Ղանին, ինչպես հատուկ նշվեց դատարանում, լինելով մարդկային առաքինություններից զուրկ մի անձնավորություն, մեծ ազդեցություն է գործել տեղահանության խնդրում, անձամբ զինված չեթեների հետ շրջագայել է ամենուր և դիզել մեծ հարստություն: Հայերին, որոնք պաշտպանել են թուրքերին նրանց թշնամիներից, քշել է տվել Թեյֆուր լեռը: Իսկ երկու այլ քարավաններ իր իսկ հավաքագրած չեթեներով ուղարկել էր Տեր-Զոր: Աբդուլ Ղանին դատապարտվեց 15 տարվա բանտարկության:

15 տարվա բանտարկության դատապարտվեցին, նույն ոճիրների համար, *«Միություն և Առաջադիմություն»* կուսակցության Էսկիշեհիի պատասխանատու քարտուղար դոկտոր Բեսիմ Զահիդ բեյը, Բրուսայի պատասխանատու քարտուղար դոկտոր Միհրդատ բեյը, Կաստամոնուի պատասխանատու քարտուղար Հասան Ֆեհմի էֆենդին, որի սիրելի կարգախոսն է եղել՝ հայերի դեմ մահմեդականներին հրահրելիս. *«Նա, ով հայերի տեղահանությանը արգելք հանդիսանա. անիծվելու է*

պատմության և ապագա սերնդի կողմից»:

Այսպես. նրանք, ովքեր մահվան էին դատապարտվել, չներկայացան դատարան: Նրանք ժամանակին կարողացել էին ճողոպրել:

Միայն մեկին չէր հաջողվել ճողոպրել. Յոզղատի մարզի կառավարչի տեղակալ և Բողազլյանի գավառի կառավարիչ Քեմալ բեյին... Նրա կատարած ոճրագործությունների ցուցակն այնքան երկար էր ու ահարկու, որ նրան դատապարտեցին մահվան, իսկ նրա անմիջական գործակից ոստիկանապետ Թևֆիք բեյին 15 տարվա տաժանակիր աքսորի:

Թուրքիո դատարանը դատապարտեց ոճրագործներին և մաքրված ու անմեղ կանգնեց աշխարհի հզորների դիմաց, թե՝ տեսեք՝ որքան արդարադատ ու արդարամիտ եմ...

Բայց ասա խնդրեմ, պատանի բարեկամ, որ համբերությամբ լսում ես ցավի այս պատմությունը, դյուրի՞ն է առնել ոճրի վրեժը, ոճրագործին դատարան տանել և դատապարտելով վրիժառու լինել: Ասա, խնդրեմ, այդ ի՞նչ հնարով պիտի քավվեր երկու միլիոն հայի նախքան մեռնելն ապրած մեծ զարհուրանքը, մարմինը հոշոտող դժոխային չարչարանքները, մորթազերծության խելագարեցնող եղկելի ցավը, բռնաբարումը, անմեղ մանուկների տանջամահությամբ նահատակվելը... Նահատակվելը մի ամբողջ ազգի... Նահատակվելը սուրբ իր Հայրենիքի... Հոգու կսկիծը խեղճ վերապրողների, որոնց կորուստը սեփական երկիրն էր և անհուն, տիեզերածավալ, անպարագրելի, անփարատելի, անդարմանելի կորստի ցավն էր:

Դատավորները, որ դատում էին, երբևէ լրջորեն խորհեցի՞ն, թե երկու միլիոն նահատակների արյան գոչումը, մի քանի տասնյակ ոճրագործների դատի կանչելով, պիտի խլանա՞... Պիտի մոռացվի՞ կատարված ոճրի գույնը, համը, հոտը... Պիտի հիշողությունը այնքան բթանա, որ վերապրողների սրտում իսպառ չքանա սրբասուն ՍԵԾ ՀԱՅՐԵՆԻՔԻ կորստի ցա՞վը... Հայրենիքի, որը հայինն էր ճիշտ այն պահից, երբ Աստծո կամեցողությամբ լույսը բաժանվեց խավարի՞ց...

Դու հասկանո՞ւմ ես, որն է համայն Աշխարհի ճշմարտությունը: Եթե կա ոճիր գործելու ջիղ, կարողություն և ուժ՝ աշ-

խարիը ծայրից ծայր կարող են առնել իրենց պիղծ ներքաններ-ի տակ և խավարից անջատած լույսի դիմաց աշխարիը արյան լերդացած գույնով նկարել...

... Որ հետո նստեն դատավորները իրենց սեղանների մոտ, իբր թե դատեն մեղավորներին և հետո... Հետո, զարմանալի բան. մոռանան ի կատար ածել նրանց պատիժը:

Ոճրագործները թաքնվեցին աշխարհի ինչ-որ անկյուններում՝ սպասելով, թե երբ է նորից գալու իրենց ժամանակը: Նրանք գիտեին, որ եթե հաջողվի իրենց կենդանի մնալ, կհնչեն նորից հաղթանակի ծնծղաները... Չէ որ նրանք իրենց թաքստոցներից տեսնում էին Քեմալի գովելի ջանադրությունը Կովկասում հայերին ջարդերի երախը նետելիս:

1919–1922 թվականներին ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵՄԱԼԻ զորքերը ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլ նաև Արևմտյան Հայաստանում, Թուրքիայի կենտրոնական գավառներում, Կիլիկիայում, Իզմիրում կոտորածների երախը նորից նետեցին նրանց, որոնք 15–16 թվականների ջարդերից հետո համարձակվել էին ապրել... Ապրելուց բացի՝ վերադառնալ հայրենի իրենց շենները... Վերադառնալուց բացի՝ վերականգնել նորից քանդուքարափ եղած իրենց տունուտեղը:

Ինչպիսի աներեսություն: Օրինակ, բանից պարզվում է, որ Տրապիզոնի կոտորածից հետո, դեռ աշխարհի երեսին ապրում էին տրապիզոնցի հայեր, որոնք, նույնիսկ պատերազմը չվերջացած, 1916 թվականի ապրիլին, երբ ռուսները գրավեցին Տրապիզոնը, վերադարձան քաղաք և սկսեցին կառուցել, աշխատել, ապրել... Ապրել մինչև 1918 թվականի փետրվարի 24-ը, երբ թուրքական զորքերը նորից գրավեցին Տրապիզոնը և մնացորդ հայերի թարմ դիակների վրա խրախճանեցին: Դիակների մեջ մանուկներ չկային...Մանուկները պարկերի մեջ հուսալի կապված նետվել էին ծովը...

1918 թվականի հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարից հետո, դաշնակից տերությունների քաղաքական ու զինվորական պատասխանատու անձինք շռայլ խոստումներ էին տալիս մնացորդ հայությանը: Հատկապես կիլիկիահայերին,

որոնք վստահ, թե Կիլիկիան գրաված ֆրանսիական զորքերը պիտի ապահովեն իրենց անվտանգությունը, վերադարձան:

1919 թվականի վերջերին Հաճնում վերահաստատվել էին վեց հազար հայեր: Երեսունհինգ հազար հաճնցիներից միայն այդքանն էին վերապրողները: Գիտես ի՞նչ եղավ: Հաճնը պաշարվեց Քեմալի զորքերով և նոր կազմակերպված չեթեական խմբերով: Ութ ամիս հաճնցիները կյանքի ու մահու կռիվ տվեցին: Երբ կրակեցին վերջին փամփուշտները՝ պարտվեցին:

Ութ ամիս նրանք պաշարված քաղաքում դիմացան ու կռվեցին, իսկ ֆրանսիացիները չպաշտպանեցին: Ինչո՞ւ: Ի՞նչ խաղ էր, որ նրանք խաղացին՝ մնալով միայն դիտողի դերում:

Ամերիկյան միսիոներ Դ. ԻՐՒԻՆ, որ Հաճնի վերջին հերոսամարտի ականատես վկան է եղել, գրում է. *«Օ՜, արշավող զորքերի դաժանություն... Մարդկային խիղճը խորթ է նրանց... Ներխուժելով քաղաք՝ թուրքերը մահվան գոտեմարտի մեջ մտան խիզախ պաշտպանների հետ... Կոտորածը սարսափելի էր... Ինչո՞ւ հիշել նրա ահավոր ու նողկալի մանրամասնները...»*:

Թուրքական դատարանը նոր էր ավարտել ամիսներ ձգվող դատավարությունը, որ սկսել էր 1919թ. մարտի 8-ին: Թուրքական դատարանը մահվան էր դատապարտել, երկար տարիների բանտ ու աքսորի էր դատապարտել Հայոց դահիճներին, որ, ահա, գան նոր դահիճներ և ավարտեն դատապարտված դահիճների գործը՝ քրքջալով իրենց իսկ արդարադատության երեսին:

ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵՄԱԼԸ ավարտեց երիտթուրքերի, իսկ նրանցից առաջ սուլթան Համիդի սկսած գործը. ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Հայ ժողովուրդը ապրում էր ծանր հոգեվարք: Հայաստանը քայքայված էր տնտեսապես և հոգեպես: Հայաստանը սովի և ողբի երկիր էր: Նրա մահվան ջղաձգումները անտանելի էին: ... Դու չես ուզում այլևս լսել ինձ, իմ պատանի բարեկամ... Քեզ հետաքրքիր չեն իմ ապրումները... Քեզ չոր փաստե՞ր են պետք... Բայց ես ի՞նչ կարող եմ անել, եթե 20-րդ դարի Հայոց փաստագրությունը, ամբողջ խորությամբ, ազգի կուտակված ապրումի և զգացումի փաստագրություն է:

Ոչ, ոչ... մի՛ զայրանա այդպես: Ես բնավ էլ չեմ ուզում ասել, թե Հայոց փաստագրությունը պարտությունների փաստագրություն է: Իհարկե, եղել են հաղթանակներ: Եվ այն էլ ինչպիսի՞... Բայց ցավն այն է, որ... Լա՛վ: Ես հիմա այդ մասին կլռեմ: Երբ ավարտեմ իմ պատմությունը, դու ինքդ կհասկանաս, թե խոսքն ինչ ցավի մասին է...

Գիտես, ոչ միայն այս խորհրդարանում հայերը խոսեցին հատուցման մասին, այլև 1918 թվականից սկսած նրանք ամենուր պահանջում էին երկու միլիոն նահատակվածների արյան գինը, որը կորցրած ՀԱՅՐԵՆԻՔՆ էր: Այդ ՀԱՅՐԵՆԻՔԸ ետ տրվեց հայերին. *Սևրի* պայմանագրով:

Եղեռնից փրկված, այս ու այն երկրներում ծվարած հայերին թույլ տրվեց վերադառնալ Հայրենիք: Բայց երկու տարի հետո Հայաստանը առուծախի հանվեց *Լոզանում*, Բրիտանիայի և Ֆրանսիայի շահերի շուկայում: Լոզանի պայմանագրում հիշատակություն անգամ չկար հայերի ու Հայաստանի մասին: Խոշոր պետությունները թույլ տվեցին, որ Թուրքիան նորից բանակցությունների սեղանի մոտ կուլ տա Կիլիկիան ու Արևմտյան Հայաստանը, նրանց աչքերի առջև, նրանց թույլտվությամբ մերժվեց բազմահազար տարագիր հայերի վերադարձը հարազատ երկիր... Իսկ նրանք, որոնք այնուամենայնիվ, հասցրել էին վերադառնալ մինչև Լոզանի այդ ստոր պայմանագիրը, ոչնչացվեցին Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի հրամանով... 300 հազար հայեր, որոնք հրաշքով փրկվել էին երիտթուրքերի յաթաղանից, ընկան քեմալականների սրերի վրա...

Ես քեզ այդ մասին պատմել եմ արդեն...

Ը.

ՀԱՏՈՒՑՈՒՄ

... Ազգի ահավոր մորմոքը մեղմելու համար հարկավոր էր ինչ-որ բան անել... որովհետև մեծ, անդարմանելի կորուստներից բացի վտանգված էր նրա ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ: Ազգը պարզապես չէր կարող ապրել իր ժողովրդի, հայրենիքի կորստի ահռելի, անմխիթար ցավի կուտակումները հոգում, ապա և նսեմացած Արժանապատվության հետ ներս ներսի: Նա ամեն կերպ պիտի իր գիտակցությունից, իր մտածումներից, իր սրտից, իր զգացումներից դուրս կորզեր նրանց, որոնք կարող էին սպեղանի դնել իր վիրավոր հիշողության վրա:

Թալեաթ փաշային սպանելու համար ամբաստանված ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԻՐՅԱՆԻ դատավարությունը տեղի ունեցավ Բեռլինում:

Ես քեզ կներկայացնեմ այդ դատավարության սղագրությունը անփոփոխ, միայն տեղ-տեղ կրճատելով ու սեղմելով այնպես, որ ընդհանուր բովանդակությունը չաղճատվի: Դու նորից կլսես պատմություններ, որոնք արդեն գիտես, բայց դատավարության ընթացքը չխախտելու համար՝ ստիպված եմ նույնությամբ բացել սղագրությունը:

Զինվի՛ր համբերությամբ և լսիր:

Դու ինքդ պատկերացրու, թե ինչպիսին կարող էր լինել այդ դատասրահը: Ի վերջո, դա բոլորովին կարևոր չէ:

Դատարանում ներկա էին դատարանի հինգ անդամները. նախագահը, երկու դատավորները, դատախազը, երեք դատապաշտպաններ, ատենադպիրը, տասներկու երդվյալները: Դատասրահում նստած են լրագրողներ, պարզ հետաքրքրասերներ, եկող-գնացող վկաներ, ոստիկաններ:

Բաց թողնելով բոլոր դատարանների համար նույն դատական սկզբի ծիսական հարց ու պատասխանը, ապա և այն, թե ի՞նչ է տեղի ունեցել և ինչո՞ւ է տեղի ունեցել, դատարանը

ինչո՞ւ է հավաքվել, անցնում են բուն նյութին, որն սկսվեց ՆԱԽԱԳԱՀԻ հարցից:

ՆԱԽԱԳԱՀ – ...Ցանկանում ենք ամբաստանյալից լսել, թե ինչպես տեղի ունեցան ջարդերը և թե ինչ պատահեց իր հարազատների, ընտանիքի, ծնողների հետ:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Տարագրյալներիս քարավանը դուրս եկավ Երզնկայից զինված ոստիկանների ուղեկցությամբ: Երկուերեք ժամ դեռ չէինք անցել, երբ քարավանի առջևից մեզ վրա կրակեցին: Քարավանը կանգ առավ... Սկսվեց կողոպուտը... Ոստիկաններից բացի մեզ վրա հարձակվեցին նաև Երզնկայից մեզ հասած զինված թուրքերը... Այդ միջոցին ոստիկաններից մեկը փոքր քրոջս քաշեց, տարավ... մայրս սկսեց բղավել. *«Աչքերս կուրանան...»* ... Ես չեմ ուզում հիշել... ես... չեմ կարող... ավելի լավ է մեռնեմ... քան այդ սև օրը նկարագրեմ...

ՆԱԽԱԳԱՀ – Ատյանի համար շատ կարևոր է, որ դուք անձամբ պատմեք այդ դեպքերի մասին...

ԹԵՀԼԻՐՅԱՆ (Խոսում է երբեմն դանդաղ, բառերը հազիվ շշնջալով, երբեմն արագ, շուտասելուկի նման) – Քրոջս առևանգեցին, եղբորս գլուխը կացնով ճեղքեցին, ինձ հարվածեցին... գլխիս... գետին ընկա... Նախքան ընկնելս վիրավորվեցի ոտքից... Երբ սթափվեցի, շուրջս դիակներ էին... Տեսա, ամբողջ քարավանը սպանված, մորթված, հոշոտված... Չհասկացա՝ ո՞ւր եմ... Հետո հասկացա... Ես մի քանի օր մնացել էի դիակների տակ... Ես դա հասկացա... որովհետև դիակները սկսել էին հոտել... Եղբորս դիակն ինձ վրա էր ընկած... Մորս դիակը երեսնիվայր փռված էր կողքիս... Ես չգիտեի՝ քանի օր եմ մնացել դիակների տակ... Բայց հետո... (Լռում է):

ՆԱԽԱԳԱՀ (Մեղմ) – Հետո՞:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Դիահոտ էր... (Լռում է):

ՆԱԽԱԳԱՀ – Այո... հետո՞:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Ես ելա ու վիրավոր ոտքս քարշ տալով՝ գնացի դեպի լեռները... Գնացի... գնացի... ծուխ տեսա... Հասա Դերսիմի քրդերի մոտ... Մի պառավ քուրդ գլխիս ու ոտքիս վերքերը բուժեց... Քրդական հին հագուստ տվեցին... Իմն արյունոտ էր, այրեցին... Հետո, գիշերը քայլելով, թաքնվելով, լեռներ, ձորեր կտրելով՝ հասա Պարսկաստան... Սալմաստ... Հի-

վանդացա... տենդով... Երբ լավացա, նորից լեռներ և ձորեր իջնելով ու բարձրանալով, խոտ ու բանջար ուտելով... չգիտեմ քանի շաբաթ... քանի ամիս... Վերջը հասա Թիֆլիս... հայկական եկեղեցի... Ինձ խնամեցին, հագցրին, ուտելիք ու դրամ տվեցին... Երբ ես մտա եկեղեցի... քահանան գրկեց ինձ ու լաց եղավ... ասաց... զավակս... ասաց... Հետո երբ քիչ սթափվել էի, ինձ հանձնեցին մի հայ վաճառականի... Ես նրան, երբ կարողանում էի, քիչ-քիչ օգնում էի իր խանութում... հետո լուր առա, որ ռուսները գրավել են Երզնկան... Ես գնացի Երզնկա... (Լռում է):

ՆԱԽԱԳԱՀ – Ինչո՞ւ գնացիք Երզնկա:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Ես գնացի տուն... Երզնկա... Իմ տունը քանդված կործանված էր... Ես իմ տան ավերակների վրա ուշաթափ ընկա:

ՆԱԽԱԳԱՀ – Դա ուշաթափության առաջի՞ն նոպան էր... Հետո ուշաթափությունը շա՞տ անգամ կրկնվեց:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Այո... Երբ իմ տան ավերակներում սթափվեցի և գիտակցեցի, թե ուր եմ գտնվում, հիշեցի, որ հայրս դրամ էր թաքցրել տան ծածուկ մի անկյունում... Ես փնտրեցի, գտա 4800 թրքական ոսկի... Հետո Երզնկայում փնտրեցի հայերի... Ես հույս ունեի, որ կգտնեմ հարազատներիցս մեկնումեկին... Բայց ես հանդիպեցի երկու իսլամացած հայ ընտանիքի և էլի մի քանիսին... բոլորը միասին 20 հոգի... 20 հազարից՝ 20 մարդ: Ես հեռացա Երզնկայից... Ես նորից գնացի Թիֆլիս... Մտա Ներսիսյան հայկական դպրոց, որ ռուսերեն ու ֆրանսերեն սովորեմ... Գաղթականների համար հատուկ բաժին էին բացել...

ՆԱԽԱԳԱՀ – Սովորեցի՞ք ռուսերեն ու ֆրանսերեն:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Որքան որ հինգ ամսում կարողացա... Խելքս գլուխս չէր, միշտ ցրված էի...

ՆԱԽԱԳԱՀ – Թիֆլիսից ե՞րբ հեռացաք և ո՞ւր գնացիք:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Հեռացա 1919թ. փետրվարին... Գնացի հարազատներիս փնտրելու... Գուցե մեկնումեկը ողջ էր... գուցե մեկնումեկը փրկվել էր... Գնացի Ստամբուլ, Սալոնիկ, Սերբիա, Փարիզ, Ժնև, Բեռլին... գուցե մեկնումեկը...

ՆԱԽԱԳԱՀ – Դուք գիտեի՞ք, թե ով էր ջարդերի հեղինակը:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Այո, Ստամբուլում լրագրերում կարդացի...

ՆԱԽԱԳԱՀ – Արդյոք գիտեի՞ք, որ Թալեաթ փաշան այդ խժդժությունների համար զինվորական ատյանի կողմից մահվան է դատապարտվել:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Այո: Երբ Ստամբուլում էի, Յոզդատի 60 հազար հայերի ջարդի կազմակերպիչ Քեմալը կախաղան հանվեց... Լրագրերը գրեցին, թե Թալեաթն ու Էնվերը... Բեհաեդդին Շաքիրը... էլի մի երկուսը... Քեմալը... մահվան են դատապարտվել... Բայց միայն Յոզդատի դահիճը իր պատիժն առավ... Ստամբուլում նրան կախելուց հետո՝ թուրքերը նրան նահատակ ու ազգային հերոս հռչակեցին... (Լռում է):

ՆԱԽԱԳԱՀ (Ատենադպիրին) – Կարդացեք ամբաստանագիրը:

ԱՏԵՆԱԴՊԻՐ (Կարդում է) – *«Թրքահպատակ, հայ քրիստոնյա, մեքենագիտության ուսանող ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԻՐՅԱՆԸ ծնված 2 ապրիլի 1897 թվականին Բագատիգում, որ բնակվում էր Բեռլին, Շարլոտենբուրգ, Հանդենբերգ 37 հասցեում, 1921 թվականի մարտի 16-ից գտնվում է բանտում: Ամբաստանվում է 1921 թվականի մարտի 15-ին Շարլոտենբուրգում թրքական նախկին մեծ վեզիր՝ նախարբոս Թալեաթ փաշային կանխամտածված սպանելու համար: Կատարվել է ոճրագործություն՝ ըստ օրենսգրքի 211-րդ հոդվածի: Բանտարկությունը շարունակվում է: Բեռլին, 16 ապրիլի 1920 թվական, նահանգային 3-րդ դատարան, պատժական 6-րդ ատյան»:*

ՆԱԽԱԳԱՀ – Դուք ձեզ հանցավոր ճանաչո՞ւմ եք:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Ոչ:

ՆԱԽԱԳԱՀ – Ինչպե՞ս:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Որովհետև խիղճս հանգիստ է: Ես սպանել եմ մեկին, բայց ես մարդասպան չեմ: Այդ պատճառով խիղճս հանգիստ է: Ո՛չ: Ես մարդասպան չեմ:

ՆԱԽԱԳԱՀ – Արդյոք, Թալեաթ փաշային ցանկացե՞լ եք սպանել:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Հարցը չեմ հասկանում. ես նրան արդեն սպանել եմ:

ՆԱԽԱԳԱՀ – Ուզում եմ ասել, ե՞րբ արթնացավ ձեր մեջ նրան սպանելու գաղափարը:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Դեպքից երկու շաբաթ առաջ... Ես ինձ դարձյալ շատ վատ էի զգում... Զարդերի պատկերները անընդհատ աչքիս առջև էին... Մորս դիակը տեսա երևնիվայր ընկած... Նա ոտքի ելավ, կանգնեց իմ դիմաց ու ասաց. *«Դու տեսար, որ Թալեաթն այստեղ է, և անտարբեր ես մնում... Դու այլևս իմ զավակը չես...»*...

ՆԱԽԱԳԱՀ – Փարիզում արդեն որոշե՞լ էիք սպանել Թալեաթին, և եկաք Բեռլին, որովհետև գիտեիք, որ այստե՞ղ է:

ԹԵՀԼԻՐՅԱՆ Ես եկա Բեռլին, որ ուսումս շարունակեմ և մեքենագետ դառնամ:

ՆԱԽԱԳԱՀ - Ինչպե՞ս իմացաք, որ Թալեաթ փաշան Բեռլինում է:

ԹԵՀԼԻՐՅԱՆ -- Դեպքից հինգ շաբաթ առաջ նրան տեսա Կենդանաբանական այգու մոտ, ուրիշ երկու մարդկանց հետ: Նրանք թուրքերեն էին խոսում և մեկին փաշա էին կոչում ու շատ հարգալից էին... Ես տեսա, որ դա Թալեաթն է... Ես նրան ճանաչեցի թերթերում տպված լուսանկարներից, որ տեսել էի Ստամբուլում... Ես նրանց ետևից գնացի և տեսա, թե Թալեաթը որ տունը մտավ: Հեռանալիս մյուսները կոչացան և շատ հարգալից համբուրեցին նրա ձեռքը: Հետո երևաց մայրս... նույն այդ գիշեր և կշտամբեց ինձ... Ես փոխեցի բնակարանս և սենյակ վարձեցի նրա տան դիմաց...

ՊԱՇՏՊԱՆ ՆԻՍԱՅԵՐ – Պարոն նախագահ, թույլ կտա՞ք ինձ ամբաստանյալին դիմել հարցով:

ՆԱԽԱԳԱՀ Այո, պարոն պաշտպան:

ՆԻՍԱՅԵՐ Դուք գիտեի՞ք, որ Թուրքիան Հայաստանի Հանրապետության հետ պատերազմի մեջ է: Դուք գիտեի՞ք, որ այդ կռիվները բարձրակետի հասան մարտի 1-ին: Բոլշևիկները և թուրքերը ուս-ուսի տված Հայաստանի Հանրապետության դեմ էին կռվում, անկախ այն բանից, որ Հայաստանում հաղթել էին բոլշևիկները: Գիտեի՞ք:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Այո, գիտեի... թերթերից... Սկզբում երիտթուրքական զորքերն էին... հետո քեմալական զորքերը... Իրականում նրանց միջև տարբերություն չկա...

ՆԻՍԱՅԵՐ – Իսկ դուք գիտե՞ք, որ Հայաստանի դեմ այդ բոլշևիկյան-թրքական արշավանքը Մոսկվայից ղեկավարում է Էնվեր փաշան:

ԹԵՀԼԻՐՅԱՆ (Երկար լռելուց հետո) – Այո: Գիտեի:

ՊԱՇՏՊԱՆ ՖՈՆ ԳՈՐԴՈՆ – Թույլ տվեք, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ – Այո, պարոն պաշտպան:

ԳՈՐԴՈՆ – Ամբաստանյալը Թալեաթին մոտիկ լինելու համար Հարդենբերգ փողոց տեղափոխվեց, սակայն երկար ժամանակ չէր իրագործում իր որոշումը, ինչո՞ւ:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Տատամսումներ էի ունենում... Երբ ինձ շատ վատ էի զգում, երբ ջարդի պատկերները հայածում էին ինձ, երբ դիահոտը նորից լցվում էր ռունգներիս մեջ, երբ մայրս երևում էր ու խստությամբ կշտամբում էր ինձ, որոշում էի, որ պետք է սպանեմ... Բայց երբ քիչ լավ էի զգում, մտածում էի, որ չեմ կարող մարդ սպանել... Բայց մարտի 15-ին, իմ սենյակի պատուհանից տեսա Թալեաթին... Մայրս նորից երևաց ինձ...

ՆԻՍԱՅԵՐ – Հենց այդ օրը թուրքերն ու բոլշևիկները Մոսկվայում, նույն սենյակի շուրջ նստած, որոշում էին հայ մնացորդ ժողովրդի ապրել-չապրելու հարցը:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Ոչ... մայրս այդ պահին չերևաց... Նա ամբողջ գիշեր ինձ հետ էր... Մյուսները՝ նույնպես... Մայրս ինձ ասում էր. տես այն տիկնոջը, Թալեաթի կինն է... Գերտրուդ Գոլտը... Տես, ասում է, ինչ գեղեցիկ է ու նազելի... Բայց ավելի գեղեցիկ ու նազելի չէ... քան իմ բռնաբարված, խոշտանգված, մորթված, խելագարված բյուրավոր դուստրերս.. Գերտրուդ Գոլտը՝ իր ամուսնու բոլոր գաղափարների ոգևորիչն ու խրախուսողը... Գերտրուդ Գոլտը, որ Ստամբուլի փողոցներում կարող էր հայտնվել երեսը բաց, առանց քողի...

ՆԱԽԱԳԱՀ - Դուք ճանաչո՞ւմ էիք Թալեաթ փաշայի տիկնոջը:

ԹԵՀԼԻՐՅԱՆ Ո՛չ: Ես նրա մասին լսեցի Ստամբուլում: Ես նրա նկարը տեսա Ստամբուլի թերթերում... երբ կարդացի

Թալեաթին մահվան դատապարտելու մասին... Հետո տեսա Կենդանաբանական այգում... Կենդանաբանական այգին հրեշների հավաքատեղին է... Նրանք գալիս են մեկ-մեկ, առանձին... Իրարից քիչ հեռու կանգնած նայում են վանդակների մեջ փակված գիշատիչներին... հետո.. հպանցիկ, ի միջի այլոց, մոտենում են բորենուն աչքը հառած տիրոջը... և ինչ-որ բան ասելով հեռանում են... Դու իմ որդին չես, ասում էր մայրս... որ ապրի Թալեաթը... հրեշը... դու իմ որդին չես... (Լռում է):

ՆԱԽԱԳԱՀ – Շարունակե՛ք:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Ես Թալեաթին տեսա իր տնից փողոց ելնելիս... Սառը դատողությունն ինձ ասում էր, որ նա չպետք է ազատվի իմ ձեռքից: Ես վերցրի սպիտակեղենիս սնդուկի մեջ պահած լցված ատրճանակս, որ գնել էի Թիֆլիսում 1919 թվականին, երբ թուրքերը նորից կոտորում էին հայերին և դուրս եկա փողոց: Բայց ես վերջին անգամ ուզում էի համոզվել, որ գնում եմ Թալեաթի ետևից: Դիմացի մայթով հավասարվեցի նրան... Ետ դարձա... Մոտենում էինք իրար... Նա գալիս էր ճեմելով, ձեռնափայտը անփույթ ճոճելով... Երբ հավասարվեցինք, Թալեաթը շեշտակի նայեց ինձ... Ինձ թվաց, թե աչքերի մեջ առկայծեց մահվան սարսուռը... Վերջին քայլը կարծես բեկվեց: Ես նրանից անցա և կրակեցի գլխին: Նրա հզոր մարմինը պրկվեց, ապա երերաց և կտրված կաղնու պես երեսնիվայր թնդյունով տապալվեց: Ես նետեցի ատրճանակը: Ես չպետք է փախչեի... ես այդպես էի որոշել... Բայց ջղերս տեղի տվին և ես փախա: Ինձ բռնեցին...ծեծեցին... գանահարեցին մինչև ոստիկանների գալը... Ես աղաղակում էի, բայց ինձ լսող չեղավ...

ՆԱԽԱԳԱՀ – Ի՞նչ էիք աղաղակում, երբ ձեզ արյունոտելու չափ ծեծել էին...

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Ի՞նչ եք ուզում, ասացի, ես՝ հայ, նա թուրք... ձեզ ի՞նչ... Գերմանացիների ինչ գործն է խառնվել...

ՆԱԽԱԳԱՀ – Գերմանիայում կատարված որևէ հանցագործություն դատվում է գերմանական օրենքներով:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Ես սպանեցի, բայց ես մարդասպան հանցագործ չեմ... Ո՛չ... Ես սպանեցի՛... բայց մարդասպա՛ն չեմ...

Նախքան դատարանը կանցնի վկաների հարցաքննությանը, ասեմ, որ հայասպան հրեշների հատուցման ժամը քիչ առաջ էր սկսել, քան Բեռլինում Սողոմոն Թեհլիրյանի գնդակից շանսատակ կլիներ Մեծ Եղեռնի «հանճարեղ» կազմակերպիչ Թալեաթ փաշան:

Նրանք՝ մի խումբ վրիժառուներ, չմտածելով իրենց կյանքի ապահովության մասին, թափառում էին աշխարհի ապահով անկյուններում պատսպարված ոճրագործներին հայտնաբերելու և արդար վրեժի ցասումով պատուհասելու համար:

Նրանք՝ հպարտ ու գեղեցիկ մահապարտ վրիժառուները, որոնք ոչինչ չունեին ազգի ողջակիզումի սրբազան խորանի առջև զոհաբերելու՝ եթե ոչ միայն իրենց երիտասարդ կյանքերը... Որովհետև նրանք բնավ էլ վստահ չէին, որ կվերադառնան կենդանի:

Հիշի՛ր նրանց անունները, իմ պատանի բարեկամ...

1920 թվականի մայիսին ԱՐԱՄ ԵՐԿԱՆՅԱՆԻ և ՄԻՍԱՔ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ձեռքով պատուհասվեց Ադրբեջանի վարչապետ և արտաքին գործոց նախարար Խան-Խոյսկին, որի կեղտոտ հոգին լողում էր կովկասահայերի ու Բաքվի հայերի կոտորածների արյան ծովում...

Սա սկիզբն էր:

Հետո ԹԵՀԼԻՐՅԱՆԻ ձեռքով սպանվեց Թալեաթը 1921թ. մարտի 15-ին, որին հետևեցին վրիժառուների մյուս գործերը:

Նույն 1921թ. հունիսի 19-ին Ստամբուլում, գրեթե պատանի, ՍԻՍԱՔ ԹՈՌԼԱՔՅԱՆԻ վրիժառու գնդակով սպանվեց Բաքվի ջարդարար Ջիվանշիրը:

1921թ. դեկտեմբերի 6-ին, Հռոմում, նույնպես գրեթե պատանի, ԱՐՇԱՎԻՐ ՇԻՐԱԿՅԱՆԻ ձեռքով սպանվեց Թուրքիո նախկին վարչապետ Սայիդ Հալիմ փաշան:

1922թ. ապրիլի 17-ին Բեռլինում նույն ԱՐՇԱՎԻՐ ՇԻՐԱԿՅԱՆԻ և ԱՐԱՄ ԵՐԿԱՆՅԱՆԻ ձեռքով իրենց վերջը գտան Բեհաեդդին Շաքիրը և Ջեմալ Ազմի կատարյալ բորենիները:

Վրիժառուներ

Սողոմոն Թեհլերյան:

Արամ Երկանյան:

Արշավիր Շիրակյան:

Վրիժառուներ

Միսակ Թոդլաքյան:

Պետրոս Տեր-Պողոսյան և
Ստեփան Ծաղիկյան:

Երեք ամիս հետո, Թիֆլիսում, ՍՏԵՓԱՆ ԾԱՂԻԿՅԱՆԻ, ՊԵՏՐՈՍ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆԻ և ԱՐՏԱՇԵՍ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ բացառիկ հանդգնությամբ, Չեկայի շենքի մոտ սպանվեց Ջեմալ փաշան:

Ապա և քիչ ժամանակ անց Միջին Ասիայում հայ երիտասարդ զինվորական ՀԱԿՈԲ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ձեռքով իր կյանքի անփառունակ ուղեծիրն ավարտեց Էնվեր փաշան:

Բոլոր վրիժառուների, բոլոր այս գործողությունները իրենց ցնցող արձագանքներն ունեցան ամենուր, բայց Թալեաթի սպանությունը և ԹԵՀԼԻՐՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ աշխարհին պատմեց բոլոր ժամանակներում երբևէ կատարված ոճիրներից ամենաահեղի մասին... Եվ պատճառը սա է, որ ուզում եմ մանրամասն քեզ ներկայացնել դատավարության սղագրությունը, որտեղ ամփոփված է պաշտպանների, մեղադրողի, վկաների, երդվյալների կարծիքներն ու վերաբերմունքը:

Վերադառնանք, ուրեմն, նորից ԴԱՏԱՐԱՆ, որտեղ սկսվել է գլխավոր և երկրորդական վկաների հարցաքննությունը նոր պարզաբանումների և մանրամասների համար:

Յուրաքանչյուր կանչված վկա, նախ իր աջ ձեռքը դնելով *«Աստվածաշունչ»* գրքի վրա, երդվում էր. *«Խոստանում եմ ասել ճշմարտությունը, միայն և միայն ճմարտությունը...»*, ապա տալիս էր իր վկայությունը:

ԱՏԵՆԱԴՊԻՐ - Վկա տիկին Էլիզաբեթ Շթելբաուում՝ ամբաստանյալ Թեհլիրյանի առաջին տանտիրուհին, 63 տարեկան:

ԷԼԻԶԱԲԵԹ – Ես նրա մասին միայն լավը կարող եմ վկայել: Չափազանց համեստ ու պարկեշտ մարդ է: Նա գիշերները չէր քնում և երբ կարողանում էր մի կերպ քնել, քունն անհանգիստ էր: Իմ սենյակը կից էր իր սենյակին, և ես ակամա ամեն բան լսում էի: Երբ երեկոները մենակ էր լինում, լույսն հանգցնում էր, մանդոլին էր նվագում և տխուր երգեր երգում... ու սենյակի մի անկյունից մյուսը քայլում: Շատ անգամ եմ զարմացել, թե ինչո՞ւ է այդքան ընկճված, լուրջ... Երբեք իր ծիծաղը չլսեցի... Բայց իմ բնակարանից մեկնելուց առաջ պատմեց,

թե ինչպես, երբ վերադարձել է հայրենի քաղաք, իր տունը ավերակված է տեսել, և ասաց նաև, որ քույրերը, եղբայրները, ծնողները սպանված են... միայն ինքն է կենդանի մնացել:

ԱՏԵՆԱԴՊԻՐ – Վկա տիկին Իրթման՝ ամբաստանյալի երկրորդ տանտիրուհին: Շարլոտենբուրգ, Հարտենբերգ փողոց, թիվ 37: Տունը գտնվում է սպանվածի տան դիմաց:

ԻՐԹՄԱՆ – Համեստ, ազնվաբարո, մաքրասեր երիտասարդ է: Սակայն հալածվածի երևույթ ունի: Շատ հազվադեպ էր տանից դուրս գալիս և այցելություններ էլ չուներ: Տառապանքի, ընկճվածի տպավորություն էր թողնում:

ԱՏԵՆԱԴՊԻՐ – Վկա Լոլա Պայլընսոն՝ ուսուցչուհի, Բեռլին, 21 տարեկան:

ԼՈԼԱ – Ես ամբաստանյալին գերմաներեն լեզվի դասեր էի տալիս հունվարի 18-ից սկսած: Սկզբում շատ լավ էր պարապում, բայց վերջերս ցրված էր: Հետո ասաց, որ հիվանդ է: Գնացել է պրոֆեսոր Քասիրելի մոտ և նա մի դեղ է տվել, որն ավելի է դժվարացրել նրա պարապելը: Ես ինքս էլ տեսնում էի, որ նա վիշտ ուներ, միշտ տխրադեմ էր: Մի անգամ, երբ հարցրի որտե՞ղ է իր հայրենիքը, պատասխանեց, թե ինքն այլևս հայրենիք չունի... Տառապանքն այնքան բացահայտ էր նրա պատասխանում, որ ավելին չկարողացա հարցնել...

ԱՏԵՆԱԴՊԻՐ – Վկա Երվանդ Աբեղյան՝ քարտուղար Հայկական ընդհանուր հյուպատոսարանի, Բեռլին, 23 տարեկան, լուսավորչական:

ԵՐՎԱՆԴ – Ինձ դիմեցին Բեռլինում ապրող իմ հայրենակիցները սենյակ վարձել Թեհլիրյանի համար, որը եկել էր Բեռլին մեքենագիտության ուսանող դառնալու համար: Սակայն գերմաներեն չիմանալու պատճառով, սկսեց դասեր առնել օրիորդ Պայլընսոնի մոտ: Ես այդ ժամանակ Լևոն Էֆթեյանի հետ պարի դասերի էի հաճախում: Մենք համոզեցինք Սողոմոնին մեզ հետ միասին գնալ այդ պարի դասերին: Դա ավելորդ հնարավորություն էր տալիս վարժեցնելու իր խոսակցական գերմաներենը: Երկար համոզեցինք, մինչև համաձայնվեց միանալ մեզ: Բայց պարի հենց առաջին դասի ժամանակ գետին ընկավ ուշաթափ.. Սթափվելով ուզեց անմիջապես տուն գնալ:

ՆԱԽԱԳԱՀ (Թեհլիրյանին) - Կարո՞ղ եք հիշել, թե ինչու վատ զգացիք:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Ես նայում էի պարոն Ֆրիդրխենի հրամանների տակ պտտվող զույգերին ու մտածում, ինչ լավ կլիներ, եթե հանկարծ հրամայեր *«գնոնդ»* պարել, կամ... *«Դատաստանիս դաշտը»*... որն այն երազ օրերին առաջնորդում էր Իրիցանց Զոռոն՝ կարմիր թաշկինակը ճոճելով շուրջպարի գլուխն անցած: Հիշում եմ, թե ինչպես, հակառակ անցած տարիներին, ցատկոտում էր կապկի ճկունությամբ՝ դաշտից իբր կալ քաշելով, կալից սար հանելով շուրջպարի մեջ պտտվող հարսներին ու աղջիկներին, որոնց վզկալները պարի ընթացքում խուլ մրմնջում էին ծնծղաների պես... Իսկ նրանց զուսպ ծիծաղը... նրանց հրավառ աչքերը... Տեր Աստված, ես լսում էի Զոռոյի խրոխտ երգը. *«Դատաստանիս դաշտում դատը վերջացավ... հայ մանկանց սրտերը հույսով լցվեցավ...»*: Ապա Զոռոյի ձայնին հաջորդող բազմազան ձայների ներդաշնակ աղաղակը. «*Կովեցեք, հայ տղերք, վառված սրտերով... քաջ ընկերներով...*»... Տեր Աստված... Ո՞ւր է այդ ամենը... Ո՞ւր... Տեր Աստված... (Լռում է):

ՆԱԽԱԳԱՀ – Հետո ի՞նչ պատահեց:

ԹԵՀԼԻՐՅԱՆ – Չգիտեմ...

ԵՐՎԱՆԴ – Մենք նրան ուշքի բերեցինք ու տուն տարանք... Բնակարան փոխելու պատճառն էլ իր այդ հիվանդությունն էր: Նոր բնակարանն ավելի արևոտ էր: Ո՛չ: Երբեք չի խոսել Թալեաթին սպանելու մասին:

ԱՏԵՆԱԴՊԻՐ – Վկա Լևոն Էֆթեյան, Բեռլին, 21 տարեկան, կաթոլիկ:

ԼԵՎՈՆ – Ես բնակվում եմ քրոջս և փեսայիս հետ, նրանց տանը: Թերգիքաշյան է փեսայիս ազգանունը: Նա ծխախոտի խանութ ունի Բեռլինում: Թեհլիրյանը շաբաթը երկու անգամ այցելում էր քրոջս և փեսայիս: Նա միշտ տխուր էր, իր անցյալի տխուր հիշատակների, ծնողների, եղբայրների մասին բոլորովին չէր խոսում... Որովհետև մեր ծնողները և հարազատներից շատերը կոտորածների զոհեր են. քույրս երբեմն խոսք էր բացում այդ մասին, բայց Թեհլիրյանը շատ հաճախ չէր արձագանքում... Այո, իմ ծնողները զոհվել են Կարսնո ջարդերին: Այս

ժամանակ ես ուսանում էի Պոլսում... Ոչ... ես չգիտեի, որ Թալեաթը Բեռլինում էր:

ԱՏԵՆԱԴՊԻՐ – Վկա դատական գաղտնի խորհրդական Շուլցն, ամբաստանյալի առաջին քննիչը:

ՇՈՒԼՑԵ – Ամբաստանյալը առանց դժվարության խոստովանեց, որ Թալեաթին սպանել է գիտակցաբար: Իսկ երբ պատճառը հարցրեցի, ասաց Թալեաթն այն մարդն էր, որի հրամաններով Հայաստանում սպանվել են իր ազգականները, դրա համար էլ, Թալեաթին սպանելով, լուծել է նրանց վրեժը: Սպանությունից հետո ամբոխը նրան խոշտանգել էր: Գլխի վրա վերք ուներ, ինչ-որ մեկը բանալիով անընդհատ հարվածել էր գլխին: Հարցաքննության ժամանակ թարգման պարոն Զաքարյանցը անուշեղեն ու շաքարեղեն էր բերել ամբաստանյալին: Ես նրան ասացի. «Ինչո՞ւ ենք մարդասպանին անուշեղեն բերել»: Թարգմանը ինձ պատասխանեց. «Ի՞նչ մարդասպան, նա մեծ մարդ է, որով բոլորս հիանում ենք»:

ԱՏԵՆԱԴՊԻՐ – Վկա թարգման Զաքարյանց, Բեռլին, վաճառական:

ԶԱՔԱՐՅԱՆՑ – Ո՛չ: Ես չգիտեի, որ Թալեաթը Բեռլինում է: Բայց թերթերը գրում էին, որ նա Գերմանիայում է բնակվում: Որոշակի չեմ կարող ասել, թե որ թերթում եմ կարդացել: Ես մի քանի լեզուներով եմ թերթեր կարդում: Ո՛չ: Ամբաստանյալը չի պատմել, որ տեսել է Թալեաթին: Նա մտամոլոր էր և սևեռուն: Նա ջղային հիվանդ էր և ես գիտեի, որ հարազատները սպանվել էին: Ես չէի ուզում իմ զրույցներով նրան հիշեցնել իր ցավը: Նա մեծ մարդ է: Իմ ծնողները նույնպես սպանվել են... 1896 թվականին, Այնթափում, սուլթան Համիդի կոտորածների ժամանակ... Հայրս, մայրս, արալս, հորեղբայրս, եղբայրս... Ես այն ժամանակ շատ փոքր էի, բայց ամեն բան իմ աչքի առջև եղավ... Ես մինչև հիմա մանրամասն հիշում եմ... Խոստովանում եմ, որ լսելով Թեհլիրյանի արարքի մասին՝ ներքին մեծ գոհունակություն ապրեցի, որ մի ոճրագործ պակասել է աշխարհից...

ԱՏԵՆԱԴՊԻՐ – Վկա ծխախոտավաճառ Թերզիբաշյան, Բեռլին, 29 տարեկան, կաթոլիկ, ամբաստանյալի հետ ազգակցական կապ չունի:

ԹԵՐԶԻԲԱՇՅԱՆ – Ես Սողոմոն Թեհլիրյանին ճանաչում եմ 1920 թվականի դեկտեմբերի 19-ից, երբ նա Փարիզից Բեռլին եկավ: Ոչ, մենք չէինք խոսում կոտորածների մասին... Այդ մասին չի կարելի խոսել... Իմ բոլոր հարազատները նույնպես ջարդերի զոհեր են... Այո, ես գիտեի, որ Թալեաթը Բեռլինում է, բայց այդ մասին նույնպես չենք խոսել, որովհետև այդ մասին խոսել նշանակում է նորից վերապրել Եղեռնը... Ամբաստանյալի հետ հատկապես չէր կարելի խոսել այդ մասին, նա շատ հիվանդ էր... նա մեծ խնամքի և բժշկի կարիք ուներ...

ԱՏԵՆԱԴՊԻՐ – Վկա տիկին Թերզիբաշյան, պարոն Թերզիբաշյանի կինը, 26 տարեկան:

ՏԻԿԻՆ ԹԵՐԶԻԲԱՇՅԱՆ – Պատերազմի ժամանակ ես բնակվում էի Կարինում: Ես և իմ ընտանիքը, 21 հոգի: Հայերիս քաղաքից հանեցին չորս խմբով և ութ օրվա ընթացքում քաղաքը մեզանից դատարկեցին: Մեզ տանում էին Երզնկայի ճանապարհով... Ես տեսա... Ես իմ աչքերով տեսա նրանց բոլորի մորթվելը... Երդվում եմ, որ Պոլսի հրամանով եղավ ամեն բան... դեռ Կարնո բերդի մոտ զենք փնտրեցին ու վերցրին անգամ մեր հովանոցները... Երբ մենք հասանք Բաբերդ, դեզ առ դեզ կիտված դիակներ տեսանք... Ստիպեցին մեզ, դիակները կոխարտելով, անցնել... Մեր բոլորիս ոտքերը արյունով ներկվեցին: Հետո հասանք Երզնկա... Մեզ չթողեցին քաղաք մտնել... Մեզ չթողեցին աղբյուրներին մոտենալ և ջուր խմել... հետո մեզ քշեցին Կամախ, Եփրատի ամենաահարկու ձորերից մեկը... Ջոկեցին բոլոր տղամարդկանց, կապեցին իրար ու ահռելի բարձունքներից Եփրատը նետեցին... Հոսանքն այնտեղ այնքան սաստիկ էր, որ... որ գետը նետվածները արագ քշվում էին... Կանայք տեսնում էին, թե ինչպես իրենց այրերին սրախողխող անելով նետում էին Կամախի անդունդը... Շատերին կացիններով մորթեցին... հետո, երբ ազատվեցին բոլոր տղամարդկանցից, ոստիկանները ամենագեղեցիկ կանանց ու աղջիկներին ջոկեցին, տարան... Ով չէր հնազանդվում, սվիններով խոցում էին, սրունքները ջարդում... Ինձ նույնպես խոցեցին... Ես ընկա... բայց չմեռա... (Դատարանի դահլիճում աղմկում են: Տիկին Թերզիբաշյանը բարձրացնում է ձայնը) Հոգի կանանց փորը ճզում էին, երեխան հանելով՝ նետում էին

անդունդը... (Աղմուկն ավելի է սաստկանում: Տիկինն աղաղակում է) Երդումով եմ հաստատում ասածներս... երդումով... Ի՞նչ երևակայություն... Պատմածս քստմնելի իրականության շատ նվազ պատկերն է... Ամեն գործած ոճիրից հետո ոստիկանները ստիպում էին դեռ ողջերիս ծունկի գալ և աղաղակել. *«կեցցե Թալեաթ փաշան, կեցցե Էնվեր փաշան...»*... Ես Կամախի դժոխքով եմ անցել... Ես ամեն... ամեն բան տեսել եմ...

Ատյանում մարդիկ անշարժ էին ինչպես նկարում: Լռություն է: Հետո մղձավանջից սթափվողի նման դանդաղ, կարծես բառերն հազիվ ջոկելով, խոսում է դատապաշտպանը:

ՖՈՆ ԳՈՐԴՈՆ – Այո՛: Վկայի ասածներն անհավատալի են... Բայց ես պիտի խնդրեմ հրավիրել նաև մյուս ականատես վկաներին...

ԱՏԵՆԱԳՊԻՐ – Վկա հայ եկեղեցու առաջնորդական տեղապահ ԳՐԻԳՈՐԻՍ ՊԱԼԱՔՅԱՆ, որն այս դատավարության համար Մանչեստրից եկել է Բեռլին:

ՊԱԼԱՔՅԱՆ – 1915 թվականի Ապրիլի 24-ին, Պոլսում ձերբակալվեցին 280 հայ մտավորականներ և աքսորվեցին Էնկյուր: Նրանց հետ նաև ես... 280 առաջավոր հայ մտավորականներից դեպի Տեր-Զոր գնացող քարավանին խառնվեցին ընդամենը 16 մարդ, որոնցից մեկը ես էի: Մյուսները դաժանորեն սպանվեցին մի մասը Այաշում, մյուս մասը՝ Զանկրում: Եվ սա կատարվեց ներքին գործերի նախարարի հրամանի համաձայն... Մինչև մեր Էնկյուր հասնելը այնտեղ արդեն սպանվել էր 82 հազար հայ. տղամարդ, կին, երեխա... Մեր Տեր-Զոր ձգվող ճանապարհը մահվան ամենասոսկալի ուղիներից մեկն էր...

Իմ պատանի բարեկամ, Գրիգոր Պալաքյան վարդապետի *«Հայ Գողգոթա»* գրքի մասին ես քեզ պատմել եմ: Նա այդ գրքում, հիշո՞ւմ ես, գրի էր առել ոչ միայն իր տեսածն ու ապրածը, այլև իրենց քարավան ուղեկցող Շյուքրի բեյ ոստիկանապետի պատմածը... Պալաքյան սրբազանը այդ մասին նորից վկայեց և կրկնեց Գերմանական դատարանում՝ սարսափի նոր աղաղակներ կորզելով դահլիճում գտնվող ներկաներից:

ՖՈՆ ԳՈՐԴՈՆ (Պաշտպան) – Բայց այդ դժոխքից ինչպե՞ս ազատվեցիք:

ՊԱԼԱՔՅԱՆ Չգիտեմ ինչպես, բայց կարողացա փախչել և հասնել Ամանոսի լեռնաշղթային... Մինչև հիմա անիրական է թվում խելագարվածի իմ փախուստը մահվան քարավանից: Զարմանալի է, ես ուզում եմ հիշել մանրամասներ, բայց չեմ կարողանում... Ինձ փրկեցին գերմանացի ճարտարագետները, որոնք աշխատում էին լեռնանցքում... Մեծ երախտագիտությամբ եմ հիշում նրանց... Նրանք շատ սիրալիր էին, երբ մանավանդ իմացան, որ ուսանել եմ Գերմանիայում և խոսում եմ գերմաներեն... Հետո գերմանական զինվորի հագուստով Ստամբուլ հասա... որտեղից էլ անցա Եվրոպա... Այո՛, այո... Հայերս համոզված ենք, որ Թալեաթը պատասխանատու է հայերիս ջարդերի համար:

ՖՈՆ ԳՈՐԴՈՆ - Ձեզ ծանոթ է Թալեաթի այս խոսքը. *«Հայկական հարցը լուծելու համար ես մեկ օրում ավելին արեցի, քան Աբդուլ Համիդը՝ 30 տարում»*:

ՊԱԼԱՔՅԱՆ – Այո՛: Թուրք գավառապետները, թուրք կուսակալները, թուրք հրամանատարները ունեին հպարտանալու պատճառ. *«Ինչ որ նախկին սուլթանները չարեցին, մենք արեցինք: Պատմական մի ազգ երկու ամսում բնաջնջեցինք...»*: Եվ գիտեք, բնաջնջելուց հետո Թալեաթը դիմում է Միացյալ Նահանգների դեսպան Հենրի Մորգենթաուին աներևակայելի, արտառոց պահանջով. *«Ես ուզում եմ, որ Ամերիկյան կյանքի ապահովագրման ընկերություններից ստանանք նրանց մոտ ապահովագրված հայերի լրիվ անխնայանակը: Բոլոր հայերն*

արդեն մնռած են և նրանց ապահովագրությունն ու ամերիկյան բանկում պահված ժառանգությունը ստացող չկա: Անշուշտ այդ բոլոր գումարները պատկանում են Օսմանյան կայսրությանը»: Պարոն Մորգենթաուն գայրացած պատասխանում է. *«Ես՝ Միացյալ Նահանգների դեսպանս, պետք է օգնեմ թուրքերին իր բնաջնջած ժողովրդի կյանքի ապահովագինը ստանալո՞ւ...»*:

ՖՈՆ ԳՈՐԴՈՆ – Որպեսզի վկաների և ամբաստանյալի ասածները ամենաթեթև տարակուսանքի անգամ չարժանանան, պիտի խնդրեմ լսել մեծարգո Յոհաննես Լեփսիուսին, որը պատերազմի ընթացքում եղել է Թուրքիայում և կարող է վկայություն տալ:

ԼԵՓՍԻՈՒՍ – Պատերազմից առաջ հայերի մեծ մասն ապրում էր Արևելյան Անատոլիայում, Հայկական բարձրավանդակում, իրենց հայրենիքի վեց՝ Կարին, Վան, Բաղեշ, Դիարբեքիր, Սեբաստիա, Խարբերդ վիլայեթներում: Ապա և Տարոնում, Մուշում, Սասունում... Կիլիկիան Տավրոսի շրջանով և Ալեքսանդրետի ծովախորշին սահմանակից հյուսիսային Սիրիայով, նույնպես Հայոց հին հայրենիքի մի մասն էր: Մարմարա ծովի հարավային եզերքը ևս հայ բնակչության զորավոր կենտրոնացում ուներ: Այո՛: Երիտասարդ թուրքերի կոմիտեի բարձրագույն հրամանով տեղահանության և ջարդերի իրողությունն անհերքելի էր: Կատարման եղանակներն ամեն տեղ նույնն էր: Հարց է առաջանում, ինչպե՞ս կարճ ժամանակում գրեթե երկու միլիոն մարդ ոչնչացվեց: Սա հնարավոր էր միայն ամենավայրագ ձևերով, որոնց մասին հիշատակվեց նաև Կոստանդնուպոլսի պատերազմական զինվորական ատյանում և այդ պատճառով մահվան դատապարտվեցին պատերազմի գլխավոր հանցագործները, նրանց հետ նաև Թալեաթը: Սակայն, ինչպե՞ս պատմականորեն հնարավոր եղան նման դեպքեր: *«Հայկական Հարցը»* ինքնաբույս տունկ չէր, այլ եվրոպական քաղաքագիտության ծնունդ: Հայ ազգը զոհ դարձավ քաղաքական շահերին, արևելքի և արևմուտքի քաղաքագիտական ճատրակի խաղին, որտեղ հայն այն խաղաքարն էր, որը երբեմն առաջ էր քաշվում և երբեմն զոհ էր տրվում: Կարելի է մանրամասն ուսումնասիրել այդ հարցին նվիրված բազմաթիվ

փաստաթղթեր և հանգել մի եզրակացության. Թուրքիո տիրապետության տակ ապրող հայ ժողովուրդը, իր սեփական հայրենիքում ստրուկի կարգավիճակով ապրող հայ մարդը իրավունք չուներ ծպտուն անգամ հանելու իր կյանքի բարելավման համար, ապա թե ոչ, ինչպես երիտթուրքերն են արտահայտվել բացեիբաց. *«Եթե հայերդ բարենորոգումներից ձեռք չքաշեք, կպատահի մի բան, որի մոտ Սուլթան Համիդի ջարդերը տղայական խաղ պիտի թվան»*: Կամ ինչպես Թալեաթն է ասել հայ երեսփոխան Վարդգեսին. *«Հայկական բարենորոգումների հարցն առաջ քաշեցիք, լավ, մենք էլ կօգտվենք նպաստավոր պայմաններից և ձեր ազգը այնպես ցաք ու ցրիվ կանենք, որ հիսուն տարի այլևս բարենորոգումների գաղափարը ձեր մտքով չանցնի»*: Եվ, ահա, ինչպես սպառնալիքն էր, այդպես էլ գործն էր: Մանավանդ որ գործում էր նաև երիտթուրքերի, նրա ղեկավարներ Թալեաթի, Էնվերի, Զեմալի և մյուսների համաիսլամական անձայրածիր պետություն ստեղծելու երևակայական, հիվանդ գաղափարը, որտեղ քրիստոնյաները տեղ չպետք է ունենային, և առաջին հերթին հայերը, որոնք ընկած էին իրենց մեծ նվաճումների ճանապարհին:

ՖՈՆ ԳՈՐԴՈՆ – Պարոն նախագահ, խնդրում եմ, հնարավորություն տալ վկա Արամ Անտոնյանին ընթերցել Հալեպ ուղարկված Թալեաթի հեռագրերից մի քանիսը, որով կամբողջանա Թալեաթ փաշայի հայկական եղեռնի գլխավոր մեղավորը լինելու խնդիրը:

ՆԱԽԱԳԱՀ – Այո: Թող Արամ Անտոնյանը ներկայացնի մի քանի հեռագիր:

ԱՆՏՈՆՅԱՆ – Ես քաջածանոթ եմ ջարդերի պատմությանը, որովհետև երկու տարի անընդհատ ապրել և զգացել եմ այն ամբողջ սարսափները, որոնք ապրեց և զգաց իմ ժողովուրդը: Զարմանալի պատահականությամբ ողջ մնալով, ինչպես սրբազան տեր Պալաքյանը, ես որոշեցի հավաքել պաշտոնական փաստաթղթերը, որոնց միջոցով հնարավոր կլինի աշխարհի հանրությանը ներկայացնել տեղահանության և կոտորածների ճշմարիտ պատմությունը: Հայկական ջարդերի մասին պաշտոնական փաստաթղթերը գտնվում էին Հալեպի տարագրության գրասենյակի տնօրինության տակ, որով ապահով-

վում էր Պոլսից Հալեպ ուղարկված բոլոր հրահանգները և միջոցառումները, քանի որ Հալեպը կենտրոնացման այն վայրն էր, որտեղից տարագրյալների քարավանները ուղարկվում էին Սիրիայի և Միջագետքի անապատները: Հայկական ջարդերի պաշտոնական փաստաթղթերը գտնվում էին Հալեպի տարագրության գրասենյակի քարտուղար Նայիմ բեյի տնօրինության տակ: Նայիմ բեյը բարի ու անվնաս մարդ էր և բազմաթիվ հայեր զանազան առիթներով վկայել են նրա բարյացակամությունը: Ահա, այդ Նայիմ բեյն էր, որ փոխանցեց ինձ այդ փաստաթղթերը, որոնց վավերականությունը ավելի քան վստահելի է: Փաստաթղթերի քննությունը ցույց տվեց, որ զանգվածային ջարդերի, բնաջնջումի նպատակով կատարված տարագրումների և նույնիսկ մանուկների կոտորածների վերաբերյալ բոլոր հրահանգները տրվել են Թալեաթի կողմից, որն սկզբում ներքին գործերի նախարար էր, իսկ ապա նաև մեծ վեզիր՝ վարչապետ: Նա էր պաշտոնյաներին հրամայողը, դրդողը, սատարողը: Այդ փաստաթղթերում նա ազդարարում է, որ ամենն գնով, ամենայն արագությամբ, առանց պատժի ու վախի պիտի իրագործվի հայերի բնաջնջումը: Փաստաթղթերում այդ ոճրային որոշումները ներկայացված են իբրև բարձրագույն, հայրենասիրական պարտականություն, որը պարտավոր է կատարել յուրաքանչյուր պաշտոնյա: Ներկայացնում եմ Թալեաթի Հալեպ ուղարկված հեռագրերից մի քանիսը, որոնց մասին խոսեց մեծարգո պաշտպան դոկտոր Ֆոն Գորդոնը:

... 9 սեպտեմբերի, 1915 թվական, Հալեպի նահանգապետություն: *«Հայության իրավունքը, Թուրքիայի հողի վրա ապրելու և աշխատելու, վերացված է: Կառավարությունը, այս ուղղությամբ ստանձնելով բոլոր պարտավորությունները, հրահանգել է չխնայել նույնիսկ օրորոցի մանուկներին: Որոշ նահանգներում այս հրահանգները կատարվեցին: Հակառակ սրան, մեզ անծանոթ պատճառներով բացառություններ են թույլատրվում որոշ անհատների պարագայում, որոնք իրենց աքսորավայրը ուղարկվելու փոխարեն պահվում են Հալեպում կառավարությանը դնելով նոր դժվարությունների առջև: Առանց նկատի ունենալու որևէ արդարացում, կին, երեխա, նույնիսկ շարժվելու անկարողներին, պարտավոր եք բոլորին դուրս*

հանել քաղաքից: Երբեմն բնակչությունը, անգիտաբար, իր նյութական շահերը վեր է դասում հայրենասիրությունից և ի վիճակի չէ գնահատելու կառավարության այս առթիվ որդեգրած բարձր քաղաքականությունը: Նկատի ունենալով, որ բնաջնջումի համար ի գործ դրված միջոցները՝ խստություն, հետիոտն ընթացքի արագացում, ճանապարհի դժվարություններ, թշվառություն, քաղց, ծարավ կարող են շատ նպաստավոր լինել ձեզ մոտ՝ անդուլ և անվարան թվեցեք գործի առանց ժամանակ կորցնելու: Տեղեկացրեք այս գործով զբաղվող պաշտոնյաներին, որ առանց պատասխանատվությունից վախենալու պետք է իրագործել բուն նպատակը: Ամեն շաբաթ հաղորդեցեք ինձ ձեր գործունեության արդյունքները ծածկագիր տեղեկագրերով: Ներքին գործոց նախարար՝ ԹԱԼԵԱԹ»: 5 նոյեմբերի 1915 թվական, Հալեպի նահանգապետությանը. *«Լսել ենք, որ ծանոթ անձնավորությունների Սվազի Մաուրեթ-ուլ-Ազիզի, Դիարբեքիրի, Էրզրումի վիլայեթներից տարագրված և իրենց ծնողների մահվան պատճառով որբ ու անտեր մնացած երեխաներին ծառա են վերցնում մահմեդական ընտանիքները: Հրամայում եմ, գտնել նմաններին և ուղարկել իրենց աքսորավայրերը, իսկ բնակչությանը բոլոր միջոցներով տեղյակ պահել արգելքի մասին: Ներքին գործերի նախարար ԹԱԼԵԱԹ»:* 16 հունվարի 1916թ., Հալեպի նահանգապետությանը. *«Լսել եմ, որ Ինթիլլիի և Այրանի շրջաններից սկսյալ մինչև Հալեպ ճանապարհների երկարությամբ 40-50 հազար հայեր են գտնվում. մեծ մասամբ կին ու երեխա: Ամենախիստ կերպով պիտի պատժվեն այն անձինք, որոնք ռազմագիտական մեծ կարևորություն ունեցող այդ դիրքերի վրա թշվառության համախմբումի պատճառ են եղել: Հետևաբար Ադանայի նահանգապետության հետ բանակցելով՝ անմիջապես հետիոտն իրենց տարագրության վայրերը ուղարկեցեք առանց Հալեպ մտնելու: Մեկ շաբաթվա ընթացքում հաղորդեցեք գործողության արդյունքը: Ներքին գործոց նախարար ԹԱԼԵԱԹ»:* 29 դեկտեմբերի 1915 թվական, Հալեպի նահանգապետությանը. *«Լսել ենք, որ օտար սպաները, ճանապարհների երկայնքով դիզված ծանոթ անձնավորությունների դիակները տեսնելով. լուսանկարում են: Խստագույնս հանձնարարում եմ այդ դիակները անմիջապես*

թաղել: Ներքին գործոց նախարար ԹԱԼԵԱԹ»: (Անտոնյանը փակում է թղթապանակը): Նայիմ բեյի տրամադրած բոլոր փաստաթղթերին կցելով մեկնաբանություններ և լուսանկարներ, կազմելով մանրամասն տեղեկագիր՝ հրատարակել եմ Լոնդոնում անգլերեն, Փարիզում ֆրանսերեն, Բոստոնում հայերեն:

ՖՈՆ ԳՈՐԴՈՆ – Պարոն նախագահ, թույլ տվեք ներկայացնել այն լուսանկարները, որոնց մասին վերջին հեռագրում ակնարկում էր Թալեաթ փաշան: Լուսանկարները կարող է ներկայացնել ԱՐՄԻՆ ՎԵԳՆԵՐԸ:

ՆԱԽԱԳԱՀ – Համաձայն եմ:

ՎԵԳՆԵՐ – Որպես մեկը սակավաթիվ այն եվրոպացիներից, որոնք սկզբից ևեթ ականատես են եղել Անատոլիայի ծայրամաս քաղաքներում, բերքաշատ դաշտերում հայ ժողովրդի զարհուրելի բնաջնջմանը և Եփրատի ափերին, Միջագետքի անապատների քարքարոտ ավազուտներում նրա խղճուկ մնացորդների ոչնչացմանը, ես համարձակվում եմ ձեզ ներկայացնել թշվառության և սարսափների այն պատկերները, որոնք տեսել եմ իմ սեփական աչքերով երկու տարվա ընթացքում և որոնք երբեք չեն ջնջվի իմ հիշողությունից:

... Գիտես, լուսանկարները, որոնք ճիշտ ժամանակին և ճիշտ տեղին կատարել էր Գերմանական բանակում ծառայող Արմին Վեգները, անցան ձեռքից ձեռք, հասան երդվյալներին, ապա նաև դահլիճում գտնվողներին... և տարածվեց ահաբեկված մարդկանց խեղդված շշուկը: Նրանք, ովքեր անցել էին եղեռնի դժոխքով և ճակատագրի հեգնանքով ողջ էին մնացել, որպեսզի իրենց կյանքի մնացորդի մեջ անընդհատ ապրեն եղեռնի պատկերները. Անտոնյանը, Պալաքյանը, Թերզիբաշյան ամուսինները, մյուսները... ամբաստանյալը նայում էին դատասրահի սարսափահար ներկաներին ու... զարմանում. լուսանկարների՞ց միայն այդպես ահաբեկվել, այդպես սահմռկել... Իսկ եթե նրանք լինեին այնտեղ... Այնտեղ:

ՆԱԽԱԳԱՀ – Դատավարությունը շարունակվում է: Կարդում ենք այն հարցերը, որոնց պիտի պատասխանեն մեղադրողը՝ դատախազը, և ամբաստանյալի երեք դատապաշտպանները: Հարց առաջին. ամբաստանյալ Սողոմոն Թեհլիրյանը հանցավո՞ր է 1921 թվականի մարտի 15-ին Շարլոտենբուրգում Թալեաթ փաշային սպանելու համար: Հարց երկրորդ. արդյո՞ք ամբաստանյալը սպանությունը կատարել է կանխամտածված: Հարց երրորդ. կա՞ն մեղմացուցիչ հանգամանքներ: Խոսքը տրվում է ավագ դատախազ պարոն ԿՈԼՆԻՔԻՆ:

ԴԱՏԱԽԱԶ ԿՈԼՆԻՔ – Պարոնայք երդվյալներ, անանուն ամբոխից մի ձեռք է բարձրացել և գետին է տապալել մի մարդու, որը ժողովուրդների հսկայական գոտեմարտի պահին վարում էր իր հայրենիքի ճակատագիրը և իբրև գերմանական ժողովրդի հավատարիմ դաշնակից, պատմության բարձունքների վրա էր քայլում: Մարդասպանությունը պատժվում է գերմանական օրենքով՝ անկախ այն բանից, թե սպանվածը գերմանացի է թե օտարազգի: Եվ կանխամտածված սպանության համար մահապատիժ է սահմանված: Ինձ համար պարզ է, որ Թեհլիրյանը Թալեաթ փաշային սպանել է կանխամտածված: Ավելին. մենք գործ ունենք քաղաքական սպանության հետ: Ամբաստանյալի դրդապատճառը եղել է քաղաքական ատելությունը, քաղաքական քինախնդրությունը: Անկասկած սոսկալի բաներ են տեղի ունեցել հայ ժողովրդի հետ: Անվիճելի է, որ ամբաստանյալի ընտանիքը ևս զարհուրելի բաների է հանդիպել և ինքը ականատես է եղել: Բայց մի՞թե Թալեաթ փաշան այդ ոճիրների անձնական և բարոյական հեղինակն է: Թեև, իմ կարծիքով, ամբաստանյալի արարքի մասին պատժահրավական տեսակետով դատելու համար, բոլորովին անկարևոր է, թե Թալեաթ փաշան եղել է և կամ չի եղել այդ ամենի հեղինակը: Պարոններ, վկաների ցուցմունքներով հաստատվեց, որ հայերը և իրենց օտարազգի բարեկամները այն համոզումն ունեն, թե Թալեաթն է հեղինակը հայկական սարսափների: Սակայն սա կանխակալ տեսակետ է, և դյուրին է այստեղ բերել մի շարք վկաներ, որոնք տեղի ունեցած դեպքերի մասին բոլորովին ուրիշ ըմբռնում և մոտեցում ունեն: Ես խոսել եմ շատ գերմանա-

ցիների հետ, որոնք այդ ժամանակ Թուրքիայում էին և շատ մոտ էին կանգնած բուն դեպքերին: Նրանք ինձ հայտնեցին, թե խոսք անգամ չի կարող լինել, որ թուրքական կառավարությունը որոշած լինի հայերի բնաջնջումը, և որ ավելին, սխալ է հասկացված պետական ու զինվորական ինքնապահովման նկատառումները, որոնք ստիպել են կառավարությանը տեղահանության հրաման տալ: Ես մեծ արժեք եմ տալիս պարոն զորավար ԼԻՄԱՆ ՖՈՆ ՍԱՆՏԵՍԻ վկայությանը, որը Թուրքիայում վարում էր զինվորական բարձր պաշտոն, մոտիկից ծանոթ էր դեպքերին և ընդգծել է տարբերությունը հայերի տեղահանության հրամանը տվող Պոլսո կառավարության վարքագծի և տեղահանության իրագործման եղանակի միջև: Ավանդությունները Ասիայում վայրագ ու արյունալի են, իսկ այդ ժամանակ մուսուլմանական «արբազան պատերազմ» էր հայտարարված: Եվ երբ այլացեղ և այլակրոն ազգաբնակչությունը տեսավ, որ հայերը տեղահանվում են, հարձակվեցին նրանց վրա, և այստեղ էր, որ երևան եկան մարդկային բնավորության ամենագեշ բնագդները. կողոպուտ, սպանություն և այլն: Ուրեմն, իբր թե Թալեաթ փաշայի մեղավորությունը հաստատող հեռագրերը, որոնք ընթերցվեցին այստեղ, ինձ չեն կարող համոզել: Նրանք կարող են կեղծ լինել: Ինձ չի կարող թյուրիմացության մեջ գցել նույնիսկ Թալեաթ փաշայի դեմ Պոլսում կայացած դատավճիռը: Միշտ էլ հին վարչակարգի տապալումից հետո նրա գործիչները նոր վարչակարգի համար ոճրագործներ են դառնում: Այժմ վերադառնալով բուն խնդրին՝ կրկնում եմ. ամբաստանյալը սպանությունը կատարել է սառնասրտորեն, կանխավ մտածելուց և կշռադատելուց հետո: Կանխամտածված սպանության համար մեր օրենսգիրքը մահապատիժ է պարտադրում և չի ընդունում մեղմացուցիչ հանգամանքներ: Խլված է մի մարդու կյանք, որն իր լավագույն տարիքում էր, և որի մահը ողբում են իր այրին, իր հարազատները: Նա իր ազգակիցների և կրոնակիցների մոտ վայելում էր մեծ հայրենասերների ու պատվավոր մարդու հռչակ: Ուստի, պարոնայք երդվյալներ, առաջարկում եմ տալ դրական պատասխան հարցումին, ըստ որի ամբաստանյալը կանխամտածված սպանություն կատարած

լինելու համար ճանաչվում է հանցավոր և դատապարտվում է մահվան: Ես վերջացրի:

(Դատասրահում քար լռություն է տիրում):

ՆԱԽԱԳԱՀ – Ամբաստանյալի պաշտպան, իրավաբանության գաղտնի խորհրդական, դոկտոր ԱԴՈԼՖ ՖՈՆ ԳՈՐԴՈՆ:

ՖՈՆ ԳՈՐԴՈՆ – Պարոնայք երդվյալներ, դուք այստեղ լսեցիք Թեոլիրյանի կյանքի պատմությունը: Այն սոսկալի եղեռնը այնքան անհավատալի է, որ մենք տարակուսում էինք, թե արդյոք, պարոնայք երդվյալները պիտի հավատա՞ն ամբաստանյալի պատմածին: Մի քանի օր առաջ Ռեոլինում լույս տեսավ գոեթիկ և աղմկահույզ մի գրքույկ «ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ» վերնագրով: *«Երիտասարդ հայը,* ասվում է այնտեղ, *որն հանձն էր առել սպանել Թալեաթ փաշային, գործիք է մի բարբարոսական մոլեգնության, որն հատկանշում է իր ցեղը... Այդ ցեղը երբեք իրեն հաշիվ չի տալիս և չի գիտակցում, թե ինչ է անում: Իր հուզիչ պատմությունը, թե իբր թուրքերն առան-տարան իր ծնողներին՝ բնականաբար նպատակ ունի միայն արթնացնել դատավորների համակրանքը»*: Պարոնայք երդվյալներ, Թեոլիրյանը և վկաների պատմածները ճշմարտությունն ինքն է՝ և ոչ *«հուզիչ պատմությունն»*: Երբ եղերական ջարդից հետո ամբաստանյալը կարողացավ ազատվել դիակների անծայրածիր թագավորությունից և երկար ժամանակ ողբերգական թափառումներից հետո նորից հայտնվեց Երզնկայի իր որբացած ու ամայացած տան ավերակների մեջ և նորից ապրեց ջարդի բոլոր սահավոր պատկերները. նա՝ կատարելապես առողջ ընտանիքի առողջ զավակը, ունեցավ իր ուշաթափության առաջին հիվանդագին նոպան, որը հետագայում շարունակ պիտի կրկնվեր՝ պարուրելով իր բոլոր զգայարանները դիակների զարհուրելի հոտով, ջարդերի սոսկալի մտապատկերներով, նետեր հոգեկան մթագնումի մեջ, ընկղմեր ջղաձիգ դողի և ուշաթափության խորքերը: Սակայն նա աշխարհով մեկ իր ողբերգական թափառումներն ավարտեց Ռեոլինում՝ մեքենագիտություն սովորելու, խաթարված կյանքը ինչ-որ չափով շտկելու համար... Բայց նրա հոգեկան մթագնումը հետզհետե տիրապետող է դառնում և նա ստիպված դիմում է բժիշկներին... Նրան հետապնդում էր ոչ միայն դիակ-

ների հոտը, այլև մոր տենսիլքը: Նրան հետապնդում է մոր ճակատագրական խոսքը. *«Դու այլևս իմ որդին չես...»*: Հարցաքննության ժամանակ նա ասաց. *«Երբ ինձ վատ էի զգում և նորից ինձ տիրում էին սարսափելի մտապատկերները, երբ շուրջս դիակահոտ էր տարածվում, ես մտածում էի, որ անպայման պիտի սպանեմ նրան, իսկ երբ քիչ առողջանում էի, մտածում էի, որ չեմ կարող սպանություն գործել»*: Ինչո՞ւ էր մտածում, որ սպանություն չի կարող գործել. որովհետև նա քրիստոնյա է: Իսկ հայերը, պարոնայք երդվյալներ, ամենահնագույն քրիստոնյաներն են: Սարսափելի կլինի, եթե գերմանական դատարանը անօրինակ ծանր փորձություններից անցած Թեհլիրյան մարդուն ենթարկի նոր ծանր փորձության: Դուք, պարոնայք երդվյալներ, պիտի տաք անսահմանորեն դժվար վճիռ, որը միայն ու միայն ձեր խղճի վրա պիտի ծանրանա. արդյոք Թեհլիրյանը կանխամտածվա՞ծ է կատարել սպանությունը: Եվ այն կատարելու համար մեղավո՞ր է արդյոք:

ՆԱԽԱԳԱՀ – Պաշտպան, իրավագիտության խորհրդական, դոկտոր ՀՈՎԱՆՆԵՍ ՎԵՐԹԱՈՒԵՐ:

ՎԵՐԹԱՈՒԵՐ – Պարոնայք երդվյալներ, յուրաքանչյուր խղճի տեր մարդ զգում է, որ ամբաստանյալը պետք է ազատ արձակվի: Դուք լսեցիք արդեն, որ հայերը և թուրքերը նորից պատերազմի մեջ են գտնվում: Դուք լսեցիք, նաև, որ արձակված է Թալեաթի մահավճիռը: Եթե մենք չուզենանք ճանաչել օտար դատարանի դատավճիռը, այն ժամանակ չենք կարող պահանջել, որ ուրիշները ճանաչեն մեր վճիռները: Թալեաթի մահավճիռը տրված է պատերազմական ատյանի կողմից: Այդ դատավճռից դեռ առաջ Թալեաթը փախել ու թաքնվել էր կեղծ անվան տակ: Այդ վճռի արդարացի լինելու մասին ես ոչ մի տարակույս չունեմ: Դրանով հաստատվել է Թալեաթի հանցանքը հայերի նկատմամբ: Այդ վճիռն, անշուշտ, ազդեցություն է ունեցել նաև Թեհլիրյանի վրա: Նա մտածել է. *«Այդ մարդը մահվան է դատապարտվել, որեմն նա ոճրագործ է և արժանի է մահվան»*: Պարոնայք երդվյալներ, քննենք նաև ստիպողական ինքնապաշտպանության հարցը: Էնվերը և Թալեաթն ապրում էին Գերմանիայում կեղծ անվան տակ: Այստեղ խոսվեց այն մասին, որ նրանք Գերմանիայի հյուրերն էին: Ես դա

ամենայն վճռականությամբ մերժում եմ: Ես չեմ հավատում, թե գերմանական կառավարությունը թույլ է տվել, որ իրենց հայրենիքը լքած, փախած ոճրագործներն իբրև *«հյուրեր»* կեղծ անուններով թաքնվեն այստեղ: Չէ՞ որ նրանցից մեկը՝ Էնվերը, նորից փախել, գնացել է այս անգամ Ռուսաստան, բոլշևիկների հետ նոր ծրագրեր դարբնելու համար: Այդ ծրագրերի գլխավոր նպատակներից մեկը հայ ժողովրդի դեմ անընդհատ հրահրվող պատերազմն է ու նրան ոչնչացնելը: Եթե Թալեաթը հասցներ հետևել Էնվերին, ինչպես ցանկացել է, մեկ կամ երկու շաբաթ հետո նոր սարսափներ պիտի տեղային հայերի գլխին: Եթե մեկը սպանելու էր նրան, որը վտանգավոր ու ոճրային գործողություններ է ծավալում իր ժողովրդի դեմ, անտարակույս նա պիտի խորհեր, որ այդ մարդը իր ժողովրդի թշնամին է: Թեև ոչ իրավաբանորեն, սակայն մարդկայնորեն Թեհլիրյանի արարքը կարելի է դիտել որպես ինքնապաշտպանություն, որովհետև Թալեաթը պատկանում է մարդկային ցեղի այն տեսակին, որը երբեք չի հրաժարվում իր ռազմամոլական գաղափարներից: Իսկ ի՞նչ է նշանակում լինել ռազմամոլ կամ ռազմապաշտ: Ռազմապաշտը այն մարդը չէ, որ կոչումով զինվորական է: Կարելի է միշտ համազգեստ կրել, շարունակել զենքի հետ գործ ունենալ, սակայն ռազմապաշտ չլինել: Զինվորականը իր մեջ կրում է իրավունքի և արդարության սկզբունքները: Բայց մյուս կողմից անթիվ են ռազմապաշտ-ռազմամոլները, որոնք երբեք զինվորական զգեստ չեն հագել, որոնք նստած են իրենց առանձնասենյակներում, հրձիգ հոդվածներ են գրում, ելույթներ ունենում և պաշտում են բիրտ ուժի դրոշակը: Նրանք հայրենիք չունեն, ազգ չունեն, մարդկային զգացում չունեն: Ուրեմն միայն բիրտ ուժի զգացում և այդ ուժի նպատակն պարզապես ճնշել իրավունքը: Մի ողջ ժողովուրդ տեղահանելու հրեշավոր գաղափարը կարող է ծնունդ առնել միայն ռազմամոլների ուղեղների մեջ: Ես բարբաջանք եմ համարում, որ հայերի տեղահանությունը այն պատճառով եղավ, որ նրանք դաշնակցել էին ռուսների հետ: Նայեցեք Հայոց Լեռնաշխարհի քարտեզին, այդ ընդարձակ տարածությանը, որտեղ հազարավոր տարիներից ի վեր ապրում էր մի դժբախտ ժողովուրդ: Ամեն ինչով հարուստ Հայաստանը մշտապես գրգռել է նվա-

ճողոնների ախորժակը, մանավանդ, որ նրա բերրի դաշտերից ու լեռներից այն կողմ, դեպի հարավ տարածվել են սոսկալի անապատները: Ահա այս անապատներից լեռնանցքներով դեպի Հայոց աշխարհ են թափանցել նվաճողները... Եվ իր սեփական հայրենիքում ապրող Ժողովուրդը՝ երկրագործ հայը ավար է դառնում նրանց, ովքեր գալիս են աջից ու ձախից: Օտար ցեղերը մեկը մյուսի ետևից սլացել անցել են Հայաստանի վրայով: Նույն ցեղերը, որոնք ամայացրին Առաջավոր Ասիան, Հունգարիան, հասան մինչև Հռենոս, մարդիկ՝ նման Աթթիլային, ամենաքստմնելի կերպով դրսևորեցին իրենց՝ ոչնչացնելով Հայաստանում ապրող նրա բնիկ ժողովրդին: Այս դժբախտ արիենտավոր ու երկրագործ, մտավորական ու տաղանդավոր ժողովրդի դեմ էր, որ մոլեգնեց *Երիտասարդ թուրքերի* կառավարությունը: Իսկ երիտասարդ թուրք ասելով՝ իրապես պետք է հասկանալ հին թուրքին, իսկ հին թուրք ասելով՝ ռազմամոլ, ռազմապաշտ, ռազմատենչին ու նրա հին թուրքական գաղափարը, որը որոշել էր, թե այլևս հայ ժողովուրդը գոյություն չպետք է ունենա: Եվ, ահա, մենք ականատես ենք մի աշխատասեր ժողովրդի ապականությանը, նրա ոչնչացմանը, որի պատասխանատվությունն ընկնում է *Երիտասարդ հին թուրքի* և նրա ամենաազդեցիկ նախարար Թալեաթի վրա: Ամբաստանյալի մտքի և հոգու մեջ 1921 թվականի մարտի 15-ին, ժամը 11-ին տեղի է ունենում հաշվեկշիռը իր ժողովրդի հազարամյա տանջանքների, որին ավելացել էր նաև 1915 թվականի եղեռնը: Եղեռն, որից լիուլի բաժին էր ստացել նա: Կոտորածի քստմնելի տեսարանները ավերիչ ազդեցություն են ունեցել իր հոգեկանի վրա: Գրեթե երկու միլիոն նահատակների, տառապանքի բովում այրված ժողովրդի վրիժառուն է կանգնած նույն այդ ժողովրդի բնաջնջման պատասխանատու անձի, ժողովրդի բոլոր աներևակայելի տանջանքների հեղինակի դիմաց: Սա հոգեկան պարտադրանք չէ՞... *«Այլևս իմ որդին չես»*, – ասում է նրան մայրը իր մտապատկերում: *«Այլևս իմ որդին չես»*, – ասում է նրան իր նահատակված ժողովուրդը: Եվ նա գնում է այդ ձայնին ընդառաջ, որպես *արդարության ոգի* ընդդեմ բռնի ուժի տիրապետության: Նա՝ ներկայացուցիչը մարդկության, ընդդեմ հակամարդկության: Հայոց Ազգը, հազար տարուց ի

վեր, մինչև ամենափոքր երեխան կանգնած է նրա թիկունքին, և նրա ձեռքին է դրոշակը արդարության, դրոշակը մարդկության, դրոշակը վրիժառության՝ իր ազգի պատվի համար: Այս խորհելով է, որ նա ելնում է ընդդեմ նրա, որը պղծել տվեց իր ընտանիքի պատիվը, ոչնչացրեց իր ժողովրդի բարոյականությունը, կյանքը՝ ամենաբիրտ միջոցներով: Ամբաստանյալը հոգեպես հիվանդ մարդ դարձավ իր սիրասուն ժողովրդի գլխին թափված եղեռնի սոսկումներից: Պարոնայք երդվյալներ, մի՞թե հասկանալի չէ, թե ի՞նչ է տեղի ունեցել նրա հոգեկան և մտային աշխարհում սպանություն կատարելու պահին... Ասացեք, պարզապես. *«Նա հանցավոր չէ»*: Պարոնայք երդվյալներ, նա հանցավո՞ր չէ:

ՆԱԽԱԳԱՀ - Պաշտպան դոկտոր Նիմայեր, գաղտնի խորհրդական և Քիլի համալսարանի իրավագիտական բաժնի դասախոս:

ՆԻՄԱՅԵՐ – Երդվյալների դատարանը աշխարհի ամենից հին դատարանն է: Չի կարելի որևէ դատական գործի վերջնական եզրահանգում տալ արդարադատության իրագործման համար, եթե չլինի երդվյալների դատարանը: Ուրեմն, պարոնայք երդվյալներ, հիմա խոսքը ձերն է: Հայերը եղել են մի մեծ պետության տեր, մինչև սեփական հայրենիքում գերի դառնալը օտարներին: Նրանք թուրքերի տիրապետության տակ ապրել են մի մեծ համբերատար ընտանիքի նման: Եվ, ահա, այս ընտանիքը մորթվել է ամբաստանյալի աչքերի առջև... Այս ընտանիքի դիահոտն է, որ հալածում է նրան և այս ընտանիքն է, որ ծառացած իր տեսիլքներում ասում է նրան իր մոր ձայնով. *«Դու իմ որդին չես»*: Պարոնայք երդվյալներ, մենք կարող ենք դիրքորոշվել ինչպես ցանկանանք: Բայց այս դատավարությունը ուրիշ դատավարությունների նման չէ: Նա պայթեցնում է այս դատարանի նեղ շրջանակը և ստիպում է մեզ շրջելու մեր հայացքը դեպի հեռավոր պատճառներ, փորձելու հասկանալ ուրիշ ժողովուրդների, նրանց պատմական պայմանները և արդար լինել նրանց հանդեպ: Ես չեմ հավատում, որ դուք կարողանաք մահվան դատապարտել Սողոմոն Թեհլիրյանին: Բայց, եթե դուք նրան մեղապարտ ճանաչեք, նա՝ Թեհլիրյանը, ներքին հաստատակամությամբ, անսահմանորեն մաքուր

խղճով և վսեմ համոզումով պիտի հայտարարի. *«Այո, ես կմեռնեմ»*: Նա կդնի մարտիրոսի իր գլուխը կոճղի վրա, վերջին անգամ նրա մտապատկերում կհայտնվի նրա նահատակ մայրը, որի անսահման սիրող հայացքի տակ նա կմեռնի երանելի մահով... Բոլորս էլ հասկանում ենք, որ արդարացնելով այս երիտասարդին, չպետք է կարողանանք կենդանացնել ոչ իր փոքր, ոչ էլ մեծ ընտանիքը... Ոչ էլ պիտի կարողանանք նրան վերադարձնել իր առողջությունը: Բայց միևնույն է, դուք չեք կարող Թեհլիրյանին մեղապարտ համարել: Նա կատարեց այն, ինչ չէր կարող չանել: Դուք ինչպես էլ որ որակեք նրա մղումը՝ դիվական, բարոյական, վսեմ թե հիվանդագին՝ դա չէ հիմնականը: Այլ այն, թե ի՞նչ անդրադարձ պիտի ունենա դատավճիռը մեր հոգիներում, ոչ թե քաղաքական, այլ բարձրագույն արդարության ու բարոյականության այն չափանիշներով, որոնցով մենք ապրում ենք, և որոնցով կյանքը դառնում է ապրելու արժանի:

ՆԱԽԱԳԱՀ – Պարոնայք երդվյալներ, ավարտվեցին ամբաստանյալի, վկաների, փորձագետների հարցաքննությունները ու ելույթները: Իրենց խոսքն են ասել պարոն ավագ դատախազը և պարոնայք պաշտպանները: Ահա այս բոլորից ելնելով՝ դուք պետք է կայացնեք ձեր վճիռը՝ քննելով այն հարցը, թե հանցավո՞ր է, արդյոք, Սողոմոն Թեհլիրյանը Թալեաթ փաշային սպանելու համար:

Նրան անմեղ ճանաչեցին և նա ազատվեց մահապատժից: *«Պատվով ու խղճով վկայում եմ, որ հանցավո՞ր է Սողոմոն Թեհլիրյանը 1921 թվականի մարտի 15-ին Շարլոթենբուրգում դիտավորյալ կերպով Թալեաթ փաշային սպանելու համար, բոլոր տասներկու երդվյալներս պատասխանում ենք. «Ո՛չ, մեղավոր չէ»: Օտտո Ռայնիյե, երդվյալների ավագ»*.

Այսպես պատասխանեցին Գերմանական Արդարադատության երդվյալները: Այդ պատասխանով նրանք ընդունեցին, որ ոճրագործը Թալեաթ կոչված թուրքն էր:

Բայց ես միամիտ չեմ կարծելու, թե ահավոր նախճիրները, որոնք ամբողջ մի ժողովուրդ բնաջնջեցին և Հայաստանը վերածեցին ավերակների չարաշուք կույտի՝ մի մարդու, կամ մի քանիսի մտքի ծնունդն էր: Կրքից կուրացած, խելագարության հասած և արյան խնջույքների, ջարդի, թալանի ծարավի մարդկանց սև կուտակումը հրահրեց, իրականացրեց ու կյանքի կոչեց իր արյունոտ բնազդները: Նրանք չափազանց ճարպիկ եղան սարսափներ կազմակերպելու գործում: Թալեաթը և նրա գործընկերները եղան ծրագրերի ու ձեռնարկումների մղիչ ուժը, սակայն նրանք մենակ չէին: Ամբողջ թուրք ժողովուրդն էր նրանց ծափահարում ոչ միայն հրապարակներում, այլև իրենց հոգիների խորքերում: Թալեաթը և իր գործընկերները խորհրդանիշ էին կոտորածի, ավերման, կողոպուտի, որով թուրքը ապրել էր դարեր շարունակ: Նրանք իրենց ցեղի հարազատ զավակներն էին: Ահա, թե ինչո՞ւ Թալեաթի և մյուսների մահը սգազգեստ հագցրեց թուրքին, երբ առավ նրանց սպանության բոթը, չնայած գիտեին, որ հենց թուրքական զինվորական ատյանն է նրանց վաղուց մահվան դատապարտել: Թուրքը չկարողացավ իր կսկիծը զսպել և անկեղծորեն սգաց Թալեաթին, որը տապալվել էր գյավուրի գնդակից: Մեծ ոճրագործի հուղարկավորությունը կատարող խոջան իր աղոթքից հետո հարցրեց ներկաներին. «Ալլահ էքպեր: Այստեղ պառկած Թալեաթ փաշան բարձր առաքինության տեր մարդ էր, ձեր մեջ կա՞ մեկը, որ հակառակն ասի»: Եվ բոլոր ներկաները միաձայն ուռնացին՝ «ոչ»: Նույն սուգն ու կոծն էր, երբ վրիժառուների ձեռքով սատկեցին նաև մյուս հրեշները: Նրանք՝ իմ զավակները, մեկիկ-մեկիկ գտան աշխարհի ծակուծուկերում պահված ոճրագործների պարագլուխներին և ի կատար ածեցին մահվան դատավճիռը:

Ա՛յս էր եղեռնի պատմությունը, իմ պատանի բարեկամ... Այս պատմությունները ճշմարիտ են ավելի, քան աշխարհի բոլոր ճշմարտությունները միասին վերցրած... Այս պատմությունները եղերական են ավելի, քան աշխարհի բոլոր



Հայերի ցեղասպանությունը 1915-16թթ. :

Այս ճերմակ թղթի խորքում բոլոր նրանք են, որոնց պատկերները ուզում եմ մեկիկ-մեկիկ գծել, բայց որը անհնար է...այնքան շատ են նրանք. ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԶԱՎԱԿՆԵՐԸ, որոնք դաժանորեն բզկտվեցին մարդակեր գազանների ճիրաններում: Նրանց զոհաբերումը՝ հզոր մի ցավ ապրողներիս սրտերում և խորին խրատ՝ մեր մտածումներում: Նրանք՝ մշտավառ պայծառ կանթեղներ մեր ներկա և ապագա կյանքի մշուշներում:

ՀԱՅՈՑ ՈԳՈՒ, ՀԱՅՈՑ ՀԱՆՃԱՐԻ բոլոր զոհված նվիրյալներին սոսկանաչ մյուռոնով օծված խնկաբույր Պատարագի վսեմ նվիրում...

եղերական պատմությունները միասին վերցրած... Եվ ոճիրը, որ կատարվեց, ամենաահարկուն էր ամենաահարկուների մեջ, ոչ երկու միլիոն զոհերի արյան հեղումով միայն, այլ նաև այն ահռելի կորուստով, որի իմաստը ընդամենը մի կարճ բառի մեջ է ամփոփված – ՀԱՅՐԵՆԻՔ:

Մենք կորցրինք մեր հայրենիքը ամբողջությամբ՝ ծվարելով միայն այդ ամբողջության մի փոքրիկ, սրտի չափ մասում... Եվ սրտի չափ հողում ապրող, ապա մեծ աշխարհի հեռաստաններում ցրված հայ մարդու էության անհատակ վիհերում խորասուզվեց կորսված ՀԱՅՐԵՆԻՔԻ կերպարը, դառնալով մշտապես նվվացող ցավ, անբուժելի արնածորող վերք, որը ժառանգության գրված ու չգրված օրենքներով փոխանցվում է սերնդից սերունդ: Կարոտը՝ հայից դատարկված ՀԱՅՐԵՆԻՔԻ, որի հողը չափազանց բերրի էր դարձել իր ընդերքները խորասուզված երկու միլիոն չարչրկված զավակների սուրբ մարմինների ներկայությունից... Հայի ԼՈՒՅՍ ՀԱՅՐԵՆԻՔԸ:

Իսկ հայը, այնուամենայնիվ ապրե՛ց: Աշխատե՛ց: Կառուցե՛ց: Ցանե՛ց: Հնձե՛ց: Ժպտա՛ց: Նոր պատերազմներ եղան, և նա իր որդիներին նորից ճանապարհ դրեց դեպի ռազմադաշտ: Նորից հաղթեց: Սգաց զոհվածներին: Նորից սեղմեց վշտով լի իր սիրտը և պահեց, մեծացրեց իր ժառանգներին:

Նա նման է հեքիաթի այն արքայազնին, որը մեռնում է թշնամու ձեռքով և ընկղմվում խավարի ընդերքը, ապա, մշտապես կենդանի ավիշներով հարություն առնում, որ իր արքայական ցեղին տա շարունակություն...

Հարցնում ես, թե ինչո՞ւ պատմեցի այս ծանր պատմությունը և տխրությամբ շղարշեցի ուրախ օրդ...

Հայոց եղեռնից հետո, 20-րդ դարը մարդկության խաթարված ուղեղից դուրս նետեց դեռ որքան ոճիրներ... Մարդկությունը այդ ոճիրների հետ պինդ գրկախառնված քայլ է գցել արդեն 21-րդ դար... Ի՞նչ է լինելու: Չարը պիտի հաղթանա՞կ տանի՝ կործանելով արարչագործված աշխարհը վերջնական ու անվերադարձ, թե՞ պիտի հաղթի բանականության վսեմ

իրավունքը և փրկի մարդկությունը ինքն իրեն կործանելու վայրագ մոլուցքից... Պատասխանել այս հարցին ես անկարող եմ... Սրա գաղտնիքը գալիքի սրտում է, որը կարծում եմ, թե... դու պիտի գուշակես... Որովհետև 21-րդ դարը իր բոլոր խրթին հարցերով նաև քո՛ սեփականությունն է... Սակայն, իմացիր. ինչ էլ որ լինի, դու այդ ԺԱՄԱՆԱԿԻ՛ մեջ պիտի ապահովես Հայոց ավիշների, նրա արյան, նրա բանականության, նրա էության, նրա բնավորության, նրա հիշողության, նրա ժառանգության կարևոր տեղը: Նրա ՈԳՈՒ թռիչքը և ապագա հաղթանակները... Եվ թույլ չպետք է տաս, որ խամրի կորսված ՀԱՅՐԵՆԻՔԻ կերպարը... Նրան ձգտելու, նրան ժառանգելու քո և քո սերունդների անմարելի կամքը:

Օրհնություն քեզ և բարի մաղթանքներ:

Գ-նա՛:

Տերն ընդ քեզ:

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ. արձակագիր, դրամատուրգ, դերասանուհի, բեմադրիչ, լրագրող: Ավարտել է Լենինականի Հ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոցը, ապա Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտը: Որպես հաղորդավար աշխատել է Հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեում, իսկ 1966-ից որպես դերասանուհի՝ Երևանի դրամատիկական թատրոնում: Նրա աչքի ընկնող դերերից են. Մեդեա-Ժան Անույի «Մեդեա», թագուհի Եղիսաբեթ-Շեքսպիրի «Ռիչարդ Երրորդ», Ալիս-Դյուրենմաթի « աղում ենք Սթրինդբերգ»: Խաղացել է նաև իր իսկ գրած պիեսներում և ողբերգություններում. Ռոդոպիս-«Ամազոնուհի», Դուի իշխանուհի-«Եկա, որ մնամ», Մարիա Յակոբսոն-«Տիրամոր ճիչը», Խելագար կին-«Բանտախուց 7160»:

Երևանի դրամատիկական թատրոնում բեմադրվել է նրա «Ամազոնուհի» ողբերգությունը, իսկ հեռուստատեսությամբ՝ «Խոր ջրհոսներ», «Հանիր, խնդրում եմ, դիմակս», «Սիզիփոսի քարը» ժամանակակից պիեսները, «Աբգար Դպիր Թոխատեցի», «Եկա, որ մնամ», «Երկար վերադարձ» պատմական ողբերգությունները: Լենինականի տիկնիկային թատրոնում բեմադրվել է «Բյուրապատիկ» մանկական հեքիաթը: Ցեղասպանության նյութին է նվիրված Աննա Պետրոսյանի փաստագրական ողբերգությունը՝ «Բանտախուց 7160», որ Նեմեսիս բարեգործական հիմնադրամի հովանավորությամբ բեմադրվեց հեղինակի կողմից 1999թ. ապրիլի 21-ին: «Բանտախուց 7160»-ը վերածվեց նաև տեսաֆիլմի:

Հրատարակվել են Աննա Պետրոսյանի «Արևը քայլում է ինձ հետ» վիպակը, «Սովետական գրականություն» ամսագրում՝ «Որպես հացն հանապազօրյա» վեպը և «Հանիր, խնդրում եմ, դիմակս» պիեսը. «Հող և արմատ» գեղարվեստական ակնարկը՝ «Մեր հող, մեր տրտիկ» ակնարկների ժողովածուում. «Մի քիչ արև», «Բյուրապատիկ», «Ծիածանի հետ ծնված բադիկը» հեքիաթները: Լույս են տեսել նրա «Եկա, որ մնամ» պիեսների ժողովածուն և «Կումարի մեծ տիկնոջ պատմությունները» վեպ-ասքերգությունը: Նրա բազմաթիվ ակնարկները, հրապարակախոսական հոդվածները, էսսեները տպվել են հանրապետության տարբեր թերթերում ու ամսագրերում, հաղորդվել հեռուստատեսությամբ և ռադիոյով:

1985թ. Աննա Պետրոսյանը Լենինականում հիմնադրեց իր գեղագիտական խնդիրներով նախօրինակը չունեցող Առասպելի դպրաթատրոնը, որի գեղարվեստական ղեկավարն ու տնօրենն էր մինչև 1992թ.: Բացի մասնագետ դերասաններից, դպրաթատրոնն ուներ երեխաների ու պատանի սաների խմբեր: Ի թիվս թատերական արվեստին առնչվող առարկաների, Պետրոսյանը դասավանդում էր նաև Հայ ժողովրդի պատմություն, համեմատական առասպելաբանություն, հայոց լեզու և բանաստեղծություն, հին ու նոր մշակույթ:

Դպրաթատրոնի խաղացանկում էին Աննա Պետրոսյանի «Մինուա», «Ինչպես Շարան եկավ Շիրակ», «Կաղանդ է, կաղանդ» ծիսաներկայացումները, «Երբ մահն է մրցակից» ժամանակակից հերոսապատումը, «Տիրամոր ճիչը» ողբերգությունը, Էսքիլեսի «Պրոմեթևսը շղթայված» ողբերգությունը, Անտուան դը Սենթ Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը մարդկանց երկրում» հեքիաթը, Վիլյամ Սարոյանի «Հեյ, ով կա այդտեղ» դրաման: Դպրաթատրոնի ներկայացումներից էր «Զվարթնոց» հերոսապատում-ողբերգությունը՝ առաջին ինքնուրույն բացօթյա, մեծամասշտաբ բեմադրությունը, որը խաղացվեց 1990թ. մայիսի 28-ի գիշերը Զվարթնոց տաճարում:

Առասպելի դպրաթատրոնի գեղագիտական նպատակն էր իր սաների առջև հոգեբանական վերլուծումներով բացել հայ և օտար հնագույն մշակույթների, նրանց ազգային բնավորությունների առանձնահատկությունները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Հայոց կյանքը և Կարմիր սուլթանը 5
Բ. Վրիժառու քաջորդիներ 9
Գ. Նրանք, որ եկան 57
Դ. Մենք թուրք ենք 73
Ե. Թուրք երդումի գինը 99
Զ. Մահվան ու կյանքի սահմանագծում 157
Է. Առճակատում 193
Ը. Հատուցում 245

.....

ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ե Ղ Ե Ր Ա Պ Ա Տ Ո Ւ Մ

Խմբագիր՝ Սիրանուշ Բուլաթյան
Համակարգչային
ձևավորումը՝ Նաիրա Միհիթարյանի

[2500դ

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0633165

Ա 105932

ԱՐԱՄՈՒՏ